

ՍԵՂԱ Տ. ՕՀԱՆԵԱՆ

ՄԻՋԱԳԵՏՔ(ԻՐԱՔ)Ի ՀԱՅ ԳԱՂԹՕՃԱԽԸ
ՎԱՂՆՁԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԷՆ
ՄԻՆՉԵՒ XX ԴԱՐ

ԵՐԵՎԱՆ

2020

694808

ԿՐԵՆՕՐԻՆԵԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍԵՂԱ Տ. ՕԶԱՆԵԱՆ

11
A105958

ՄԻԶԱԳԵՏՔ(ԻՐԱՔ)Ի ՀԱՅ ԳԱՂԹՕՃԱԽԸ
ՎԱՂՆԶԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԷՆ
ՄԻՆԶԵԻ XX ԴԱՐ

ՄԵՄՐՈՂ ԱՐՔ. ԱՇԾԵԱՆ



ARCH. MESROB ASHJIAN

ՄԱՏԵՆԱԾԱՐ

BOOK SERIES

200

200



ԵՐԵՎԱՆ

2020

ՕՏԱՆԵԱՆ ՄԵՂԱ Տ.

Օ-451 Միջազգետք (Իրաք)ի հայ գաղթօճախը վաղնջական Ժամանակներէն
մինչէւ XX դար/- Եր.: ՀՀ ԳԱԱ Պատմութեան ինստիտուտ, 2020.- 214 էջ:

Արդէն հաստատուած իրողութիւն է, որ հայեր բնակութիւն հաստատած են Միջազգետք(Իրաք)ի տարածքին հնագոյն ժամանակներէն եւ հանգամանքներուն բերումով, երբեմն շատ կենսունակ եւ երբեմն ալ գրեթէ անհետացած են այս երկրի դարաւոր պատմութեան թատերաբեմէն:

Խնդրոյ առարկայ թեման կ'ընդգրկէ Միջազգետք(Իրաք)ի պատմութեան տարբեր դարաշրջաններ, ամենապայծառ եւ ամենածաղկուն շրջաններէն (Ապպասեան տիրապետութեան ժամանակ) մինչէւ Կեղրոնական Ասիայէն ներխուժող բարբարոս ցեղերուն կողմէ երբեմնի այս շէն ու բարգաւաճ երկիրը աւերակներու վերածուած խաւար շրջանները: Նաեւ ժանտախտի յաճախակի համաճարակները եւ իբր հետեւանք՝ յառաջացած սովերը ճակատագրական եղած են Իրաքի տարածքին ապրող ողջ բնակչութեան համար:

Օգտագործուած են մեր մատենագիրներուն աշխատութիւնները հայ հոգետր դասին պատկանող պատանդներուն եւ գերեվարութեան ենթարկուած հայորդիներուն գոյութեան մասին Միջազգետքի մէջ: Նմանապէս լայնօրէն օգտագործուած են Օրմանեան պատրիարքի «Ազգապատում»ը, որ իր պատմագիտական մեթոդով Հայոց եկեղեցւոյ եւ յարակից ազգային պարագաներուն ընդարձակ եւ համապարփակ պատմութեան ազգային-մշակութային գանձարան մըն է: Նուազ կարելոր չեն օտար ուղեւորներուն յիշատակութիւնները այս երկրի տարածքին բնակութիւն հաստատած հայորդիներուն գործունէութեան եւ գրաւած դիրքին մասին:

Միջազգետք(Իրաք)ի հայաշատ կեղրոններուն մասին այս ուսումնաւիրութիւնը Միջին Դարերէն մինչէւ XX դար հիմնուած է գլխաւորաբար տուեալ ժամանակաշրջանին գրուած ձեռագիրներու յիշատակարաններուն վրայ, որոնց պատմական վկայութիւններուն ստուգութիւնը եւ հաւաստիութիւնը անվիճելի են:

Գիրքը նախատեսուած է սփիւրքագետ-պատմաբաններուն եւ ընթերցող լայն հասարակայնութեան համար:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՎԵՐԱՊՐԱԾ

ԾՆՈՂՆԵՐՈՒՄ՝ ՏԱՃԱՏ ԵՒ ՏԻՐՈՒՇԻ

ՕՀԱՆՆԷՍԵԱՆՆԵՐՈՒՆ

ԽՆԿԵԼԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Միջազգետք(Իրաք) Պատմական Ակնարկ.....5-15

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐՈՒՆ ՅԱՌԱՋԱՑՈՒՄԸ ՄԻՋԱԳԵՏՔԻ ՄԵՋ

Ա- Հայկական Գաղութներուն Ձևաւորումը.....16-31

Բ- Միջազգետք(Իրաք) հայաշատ բնակավայրեր Միջին Դարերէն մինչեւ XX դար.....32-63

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԻՐԱՔԱՀԱՅ ԹԵՄԻՆ ԿԱԶՄԱԻՈՐՈՒՄԸ

Ա- Հայ Առաքելական Եկեղեցի.....64-88

Բ- Հայ Կաթոլիկ համայնք եւ Եկեղեցի.....89-99

Գ- Իրաքի Հայոց Գերեզմանատուները.....100-105

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Ա- Տնտեսական Գործունեութիւն.....106-124

Բ- Հասարակական Կեանք.....124-126

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԱՆՔ

1-Դպրոց/Իրաքի քրիստոնէայ համայնքներու դպրոցներ.....127-142

2-Պաղտատի Հայ Կաթոլիկ Համայնքի դպրոցներ.....142-143

3-Ձեռագիրներու յիշատակութիւններ Միջազգետքի մէջ.....144-147

4-Տպարան եւ Մամուլ.....148-149

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ.....150-153

ՅԱԻԵԼՈՒԱԾ.....154-186

SUMMARY.....187-189

الخلاصة.....190-193

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ194-202

ԱՆՈՒԱՆԱՑԱՆԿ203-213

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Միջազգետք(Իրաք) Պատմական Ակնարկ

Մարդկութեան հազարամեակներու պատմութեան խորքերուն Միջազգետքը ծնունդ տուած է հնագոյն քաղաքակրթութիւններու եւ այս առումով անկասկած աշխարհի մէջ առաջնակարգ տեղ կը գրաւէ: Այս երկրամասին վերաբերեալ առաջին գրաւոր պատմութեան ծանօթանալու համար, հարկաւոր է ետ երթալ հազարաւոր տարիներ դէպի Քարէ դար եւ այս դարաշրջանի մարդուն, որուն գոյութիւնը կը հաստատուի այդ ժամանակաշրջաններուն պատկանող հնագիտական մնացորդներով, մասնաւորաբար Միջազգետքի հիւսիսային եւ հարաւային շրջաններուն մէջ: Քրիստոսէ առաջ VI եւ V դարերուն մարդկային յառաջդիմութիւնը ակնյայտ է երկրագործութեան, պղնձագործութեան, անուաւոր կտրքերու շինութեան, մեհեաններու կառուցման եւ ինչու չէ նաեւ, բաւական յառաջացած քանդակագործութեան ճիւղերուն մէջ:

Ուրեմն, ներկայիս Իրաքի տարածքը հնագոյն ժամանակներէն եղած է մարդկային բնակութեան եւ քաղաքակրթութեանց բնօրրան: Այստեղ յառաջացաւ Շումերական հրաշալի քաղաքակրթութիւնը, որ ըստ մասնագէտներու, աշխարհիս մէջ կը գրաւէ առաջին տեղը հնագոյն դարերուն: Սակայն այս քաղաքակրթութիւնը, Քրիստոսէ 2400 տարի առաջ, կը ձուլուի հարաւէն ներխուժող Աքքատեաններու Սեմական գաղթականութեան մէջ, որ երկիրը կը դարձնէ միացեալ թագաւորութիւն մը եւ յարակից հողերու գրաւումով կ'ընդարձակէ անոր սահմանները: Այնուհետեւ, այս միութիւնը կը քայքայուի արեւելքէն ներխուժող տարբեր ցեղախումբերու կողմէն, որ յետագային, երկու հարիւր տարի ժամանակաշրջանի մը համար կը վերահաստատուի Քաղդէացիներու տիրապետութեամբ: Վերջիններուս իշխանութիւնն ալ իր հերթին կը լուծարուի երկրորդ հազարամեակի սկզբնաւորութեան Ելամացիներու եւ սեմական Ամովրացիներուն արշաւանքներով, որոնցմէ Ք.ա. XVIII դարուն կը հիմնուի Համուրապիի Բաբելոնը: Սակայն, ներքին եւ արտաքին ազդակներ կը կերպարանափոխեն Բաբելոնը, որ ի վերջոյ Ք.ա. 745 թուականին, կ'իյնայ սեմական Ասորես-

նկատուած Օմայեան խալիֆաները, Դամասկոսը դարձուցին արաբական գերիշխանութեան մայրաքաղաքը: Այնուհետեւ, 750 թ. պատմութեան թատերաբեմը կը մտնեն Օմայեաններու ազգական՝ Ապպասեանները, զորացած՝ Իրաքէն եւ աւելի հեռաւոր արեւելեան շրջաններէն իրենց ստացած ուժերով, իշխեցին Օմայեաններուն, որոնք ունէին սուրիական ծագում: Ապպասեանները 762 թ. հիմնեցին իրենց մայրաքաղաքը՝ Պաղտատ: Վերջիններս, ամբողջ 500 տարի յաջողեցան կրօնական եւ մշակութային կայելով զօրացնել արաբական միութիւնը, որուն մէջ Պաղտատ ունեցաւ շատ առաջնակարգ դիրք մը: Սակայն, հակառակ իրենց հաստատած կեդրոնացեալ իշխանութեան, Ապպասեանները, իրենց կրած իրարայաջորդ պարտութիւններուն եւ ներքին կեդրոնախոյզ ուժերու կողմէն յարուցած խռովութիւններուն հետեւանքով, կորսնցուցին իրենց հեղինակութիւնը:

Սելճուկ-մոնկոլական արշաւանքներուն հետեւանքով, 1258 թ. Պաղտատ կործանեցաւ, եւ, արդէն իսկ տկարացած Ապպասեան խալիֆայութիւնը տապալեցաւ: Այնուհետեւ, Իրաք եւ ամբողջ տարածաշրջանը յաջորդաբար թատերաբեմը կը դառնայ կատաղի բախումներու մոնկոլներու, թիւրքոմաններու, թաթարներու, ապա պարսիկներու եւ Օսմանեան կայսրութեան միջեւ: Վերջիններս, առաջին անգամ գրաւեցին Պաղտատը 1534 թուականին, իսկ 1638 թ. Իրաք վերջնականօրէն ինկաւ Թուրքիոյ տիրապետութեան տակ եւ մնաց սոսկ յետամնաց նահանգ մը՝ Օսմանեան կայսրութեան սահմաններուն մէջ, ընդհուպ մինչեւ Առաջին Համաշխարհային պատերազմի աւարտը, երբ Սելի դաշնագիրով երկիրը թրքական լուծէն փրկուեցաւ, եւ 1920 թ. Գերագոյն Խորհուրդին որոշումով անցաւ Բրիտանական հովանաւորութեան ներքոյ:

Իրաքի անկախ պետականութիւնը (թագաւորութիւնը) կը հիմնուի 1921 թ., որ իր հերթին կը կործանուի 1958 թ., տեղի տալով հանրապետական կարգերու⁴: Այնուհետեւ, 1963 թ. տեղի կ'ունենայ Պա'աս կուսակցութեան կողմէ առաջին յեղաշրջումը, որ այնուամենայնիւ, հազիւ 9 ամիսներու կեանք մը կ'ունենայ: 1968 թ.

³ Kepple G., Personal Narrative of a Journey from India to England by Bassorah, Baghdad, the Ruins of Babylon, Curdistan, the Court of Persia, the Western Shore of the Caspian Sea, Astrakhan, Nishney, Novogorod, Moscow and St.Petersburgh, in the Year 1824. Vol. 1, London, 1827, p. 69.

⁴ Գեորգեան Վ., նշ. աշխ., էջ 365-366:

Յուլիսին նոյն կուսակցությունը, ամուր, հաստատուն, կտրուկ քայլերով, եւ որ ամենակարեւորն է, համարեա անարին յեղաշրջումով երկրի դէկը դարձեալ իր ձեռքն առնելով շարունակեց երկիրը կառավարել ընդհուպ մինչեւ 2003 թ. դաշնակից զօրքերուն ներխուժումը Իրաք եւ այս գործողութիւններէն բխող յետագայ աղետալի դէպքերը, որ աւա՛ղ կը շարունակուին ցայսօր:

Ներկայ աշխատութիւնը, որ տրամաբանօրէն պիտի նախորդէր «Իրաքի Հայ Համայնքը 20-րդ դարուն» աշխատութեան,⁵ կ'ընդգրկէ Միջագետք (Իրաք)ի մէջ հայերու գոյութեան եւ գործունէութեան մասին հնագոյն ժամանակներէն մինչեւ XX դար:

Միջագետք/Իրաքի մէջ հայութեան հաւաքական կեանքի մը հաւանական գոյութեան մասին (վաղնջական ժամանակներուն) կը տեղեկանանք օտար աղբիւրներէ, ինչպէս Հերոդոտոս (V դար Ք.ա.) որ խօսելով այս շրջաններուն մասին՝ կը նկարագրէ հայերուն յարաբերութիւնները (յատկապէս առետրական) Միջագետքի հետ, Եփրատի վրայէն լաստերով Բաբելոն ներմուծելով հայկական արտադրութիւններ, որոնց գլխաւորներն էին գինի, ընկուզեղէն, ցորեն եւայլն⁶:

Իսկ VI դարուն Ք.ա., երբ Հայաստան եւ Ասորեստան կը գտնուէին Պարսկական տիրապետութեան տակ, Պէհիստունի քարածայռի պարսկական արձանագրութիւններուն մէջ կը յիշուի Արախա անունով հայորդի մը, որ կ'ապստամբէ Աքեմենեան Դարեհ արքային դէմ, սակայն կեանքով կը քաւէ իր «յանդգնութիւնը»⁷: Ուրեմն, պատմութեան այդ շրջափուլին հայեր գոյութիւն ունեցած են Միջագետքի տարածքին: Հակառակ պարագային Արախան առանց իր ազգակիցներուն օժանդակութեան, կասկածելի է, որ յանդգնէր ապստամբութեան դրօշը բարձրացնել Աքեմենեան վեհապետին դէմ:

Յայտնի է նաեւ, թէ Ասորեստանի դէկավարները ինչպէս հետեւողականօրէն պայքար մղեցին նուաճելու եւ տիրանալու համար Հայկական Բարձրավանդակին: Այս կապակցութեամբ, Իրաքցի պատմաբան Տօքթ. Ամըո Սուլեյման կը հաւաստիացնէ, որ Ասորեստանի վեհապետներուն համար, իրենց երկրին գլխաւոր

⁵ Օհանեան Ս., Իրաքի Հայ Համայնքը 20-րդ Դարուն, Երեւան, 2016:

⁶ Հերոդոտոս, Պատմութիւն, Երեւան, 1986, էջ 79-80:

⁷ Ալպօյաճեան Ա., Իրաքի Հայերը, Երեւան, 2003, էջ 16:

սպառնալիքը կու գար Միջագետքի հիւսիսային հարեւաններն (իմա՝ Վանի Արարատեան թագաւորութենէն – Ս.Օ.)⁸:

190 թ. (Ք.ա.) Հայաստան ձեռք կը բերէ իր անկախութիւնը Արտաշէսի եւ Զարեհի գլխաւորութեամբ, եւ Հայկական բարձրավանդակին վրայ կը կազմուին հայկական երկու թագաւորութիւններ: Արտաշէս Ա. ասորիներէն գրաւած երկիրներով կ'ընդարձակէ Հայաստանը դէպի հարաւ, իսկ Տիգրան Մեծ, երբ կը ձեռնարկէ իր աշխարհակալական արշաւանքներուն, աւելի կը ծաւալուի բոլոր ուղղութիւններով: Արդարեւ, Տիգրան Մեծ կը նուաճէ Ադիաբենէն (Մուսուլի շրջան)՝ հասնելով մինչեւ Նինուէ եւ Արբէլա, իրեն հպատակեցնելով ի մէջ այլոց, նշուած բնակավայրերու թագաւորը: Այս կապակցութեամբ, Պլուտարքոս⁹ կը նշէ, որ Եփրատի անցքը եւ կարաւաններուն մեծ ճանապարհը Մեծն Տիգրանի իշխանութեան տակ էին եւ այս առեւտրական կարեւոր անցքին ու ճամբուն պահպանութեան համար անապատէն տեղափոխուած արաբ ցեղախումբեր կը գործածէր: Այս Մեծ տիրակալի բանակներուն հետ, իբրեւ յետնորդներ հայեր երեւան եկած են յատկապէս Միջագետքի հիւսիսային շրջաններուն մէջ¹⁰:

Հայերուն ներկայութեան մասին աւելի ճշգրիտ եւ անվիճելի տեղեկութիւններ առկայ են Սասանեան տիրապետութեան շրջանին, երբ Տիգրոն պարսկական իշխանութիւններու մայրաքաղաքն էր: Հետեւաբար, երթեւեկութիւնը (եւ թերեւս պարբերաբար մշտական կեցութիւնը հայ պատանդներու) Հայաստան/Միջագետք անընդհատ էր: Հարկադրեալ - իբր պատանդ վար դրուած - բնակութիւն հաստատողներէն նշենք Վասակի երկու որդիները (թերեւս Վասակի «դաւաճանութեան» դրոշմապատճառը հենց այս էր...) եւ Վահան Մամիկոնեանի Վարդ եղբայրը եւ այլն: Տիգրոնի մէջ հայերու գոյութեան մասին իբր ապացոյց կարելի է յիշել Գիւտ կաթողիկոսի պարագան, որ Տիգրոն կանչուեցաւ 475 թ. եւ պաշտօնէ գրկուեցաւ: Կաթողիկոսը ժամանակ մը մնաց Տիգրոն «Բագում համար-

⁸ .153-152 صفحة بغداد 1983، الدكتور عامر سليمان، العراق في التاريخ، بغداد 1983، էջ 152-153):

⁹ Ալպոյաճեան, նշ. աշխ., էջ 18:

¹⁰ Ալպոյաճեան, Իրաքի Հայ Գաղութը. Գարագաշ Հ., Պարսկահայ Տարեցոյց 1930, Թեհրան, 1930, էջ 71-94:

ձակութեամբ պատուեալ, ոչ միայն ի քահանայիցն եւ ի քրիստոնէիցն, այլեւ առաւել ի հեթանոսացն»¹¹:

Մեր պատմիչներէն՝ Փաւստոս Բուզանդ¹², Եղիշէ¹³, Ղազար Փարպեցի¹⁴, Յովհաննէս Դրասխանակերտցի,¹⁵ Թովմա Արծրունի եւ Անանուն¹⁶, Սեբեոս¹⁷ եւ այլն, լայնօրէն անդրադարձեր են հայ իշխանական եւ հոգեւոր դասին պատկանող պատանդներուն եւ գերեվարութեան ենթարկուած հայորդիներու գոյութեան մասին Միջագետքի մէջ:

Ամենայն Հայոց կաթողիկոսներուն այցելութիւնները այս երկրամաս կ'ապացուցանեն, որ պատկառելի թիւով հայեր պարբերաբար ներկայութիւն ունեցած են Միջագետքի մէջ: Հակառակ պարագային, հայ բարձրաստիճան հոգեւոր պաշտօնեան անհրաժեշտ պիտի չհամարէր այցելել այս հեռաւոր վայրերը, զգուշացնելու համար իր հօտը (որ սկիզբէն իվեր «տէրունի» էր), այլադասաններուն հետ խառնուիլ, յատկապէս նեստորականներուն, որոնք տուեալ շրջանին (իմա՝ Սասանեաններու տիրապետութեան շրջան –Ս.Օ) մեծ ազդեցութիւն ունէին պարսկական արքունիքին մէջ: Նոյն նպատակով Պաղտատ կ'այցելէ Ամենայն Հայոց կաթողիկոս Քրիստափոր Ա. Տիրառիջցի, որ բուն պայքարող մըն էր նեստորական, ինչպէս նաեւ քաղկեդոնական վարդապետութիւններուն դէմ:

Իրաքի հայաշատ կեդրոններուն մասին այս ուսումնասիրութիւնը միջին դարերէն սկսեալ մինչեւ XX դար հիմնուած է զլիաւորաբար տուեալ ժամանակաշրջանին գրուած ձեռագիրներուն յիշատակարաններուն վրայ, վասնզի գաղթավայրէն ստացուած տեղեկութիւնները այս շրջանին անհամեմատ սուղ են եւ աննշան: «Հայերէն ձեռագրերը գրուել են հասարակական քաղաքական որոշակի ժամանակաշրջանում, ուստի դրանց չափազանց հարուստ յիշատակարաններում պահպանուած պատմական

¹¹ Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան, Վենետիկ, 1875, էջ 351-352:

¹² Փաւստոս Բուզանդ, Հայոց Պատմութիւն, Գահիրէ, 1954:

¹³ Եղիշէ, Վարդանանց Պատմութիւն, Գահիրէ, 1950:

¹⁴ Ղազար Փարպեցի, նշ. աշխ.:

¹⁵ Յովհաննէս Դրասխանակերտցի, Հայոց Պատմութիւն, Երեւան 1996:

¹⁶ Թովմա Արծրունի եւ Անանուն, Արծրունեաց Տան Պատմութիւն, Երեւան, 1978:

¹⁷ Սեբեոս, Պատմութիւն Հայոց, Կ.Պոլիս, 1951:

վկայությունների ստոյգությունը եւ հաւաստիությունը անվիճելի են»¹⁸:

VII–XVII դարերուն Հայաստան եւ ամբողջ տարածաշրջանին երկիրները ենթարկուած են օտար նուաճողներու կողմէն կոտորածներու, ասպատակություններու եւ կողոպուտի: Կեդրոնական Ասիոյ կողմէն այս երկրամաս ներխուժող հրոսակներու՝ սելճուքներու, մոնկոլներու, թաթար էոգրեկներու եւ այլեայլ ցեղերու կամայականությունները, անտարակոյս իրենց դաժան հետքը թողած պիտի ըլլային ինչպէս Միջագետքի, նաեւ ամբողջ տարածաշրջանի ժողովուրդներուն վրայ: Բնականաբար, այս երկրամասին (կամայ թէ ակամայ) բնակություն հաստատած հայերն ալ գերծ պիտի չմնային կոտորածներէ եւ հետեւաբար անշքացում՝ իրենց հետ տանելով նաեւ թանկագին գրաւոր վկայություններ:

Մաղաքիա արք. Օրմանեանի «Ազգապատում»ը¹⁹ ազգային-մշակութային գանձարան է, որ իր պատմագիտական մեթոդով Հայոց եկեղեցւոյ եւ յարակից ազգային պարագաներուն ընդարձակ եւ համապարփակ պատմութեան (ներառեալ Միջագետքի պատմութեան) նուիրուած նշանաւոր երկերէն մէկն է, որմէ բնականաբար օգտուած ենք լիարժէքօրէն:

Օտար (երոպացի եւ արաբ) ուղեւորներուն յիշատակությունները իւրաքանչիւր հայաշատ կեդրոնին մէջ, նոյնպէս օգնութեան կը հասնին՝ փաստելու համար հայերու գոյությունը այս երկրին մէջ, ինչպէս նաեւ անոնց մասնագիտությունները, արհեստները եւ փոխ-յարաբերությունները եւայլն:

Այս աշխատութեան երկրորդ գլուխը կը բովանդակէ նիւթեր Իրաքահայ Թեմի կազմաւորման – Հայ Առաքելական եկեղեցւոյ, ինչպէս նաեւ Հայ Կաթողիկէ համայնքի սկզբնաւորման եւ եկեղեցիի հիմնադրման մասին: Բողոքականությունը աւելի ուշ մուտք գործեց Իրաք, եւ հայ հետեւորդներուն թիւը այս դաւանանքին շատ ցանցաւ էր: Հետեւաբար, առանձին ո՛չ եկեղեցի ունէին եւ ո՛չ ալ մասնաւոր կեդրոնատեղի: Այս իրավիճակը կը շարունակուի

¹⁸ Հայերէն Ձեռագրերի ԺԴ Դարի Յիշատակարաններ, Մասն Ա., 1301–1325 թթ., Կազմողներ՝ Լ. Խաչիկեան, Ա. Մաթեոսեան, Ա. Ղազարեան, Երեւան 2018, էջ III):

¹⁹ Օրմանեան Մ. Արք., Ազգապատում, Հայ Ուղղափառ Եկեղեցւոյ Անցքերը Սկիզբէն Մինչեւ Մեր Օրերը Յարակից Ազգային Պարագաներով Պատմուած, Ա. Հատոր, Կ. Պոլիս, 1912:

մինչեւ 2003 թուականի դեպքերը: Այս թուականէն ետքն է, որ պատերազմական թոհուրոհին մէջ, Հայ Բողոքական-Աւետարանական համայնքը կը կազմակերպուի եւ կ'ունենայ իր ուրոյն կեդրոնը, երիտասարդական կազմակերպութիւնները եւ այլն:

Ինչպէս յայտնի է, քրիստոնէութիւնը մուտք գործած է Միջազգէտ դեռեւս երկրորդ դարուն, յատկապէս երկրի հիւսիսային կողմը: Այնուհետեւ, տարածուած եւ ընդգրկած է ողջ տարածաշրջանը: Թէեւ Իրաքահայ թեմի պատմութեան նոր շրջանը կը սկսի 1638 թուականին,²⁰ այնուամենայնիւ, մինչեւ XVIII դարու կեսերը Պաղտատի եւ Պասրայի հայոց հոգեւոր տեսչութեան գործը կանոնաւոր ձեւ մը չունէր եւ պատահական կարգադրութիւններ եղած են միայն²¹: Այս ենթագլուխի մէջ նշած ենք կաթողիկոսական կոնդակները, Թեմի կողմէն Կ. Պոլսոյ պատրիարքութեան, այնուհետեւ Էջմիածնին յղած համարատուութիւնները, համայնքի հոգեւոր այրերու գործունէութեան, իրաքահայութեան ենթադրեալ թուաքանակը եւ իրենց յուզող հարցերը...եւ այլն: Այս առնչութեամբ, XVII դարուն Միջազգէտքի մէջ գրուած ձեռագիրներուն յիշատակարանները²² արժեքաւոր եւ գրեթէ միակ վկայութիւններն են թեմի գոյութեան մասին տուեալ ժամանակահատուածին:

Այս հատուածին երկրորդ ենթագլուխին մէջ, կը ներկայացնենք հայ կաթողիկէ համայնքի կազմաւորման նախադրեալները եւ յետագայ գործունէութիւնը: Մանրամասն կերպով ներկայացուած է XVII դարու առաջին կեսին Կարմէղեան լատին վարդապետներու քարոզչութիւնը Պասրայի մէջ, ուր Եւրոպական գաղութ մը արդէն գոյութիւն ունէր եւ հետեւաբար, կաթոլիկ համայնքի նախակարապետները շատ հեշտութեամբ եւ առանց խոչընդոտի առաջ կը տանէին իրենց գործունէութիւնը, վայելելով ֆրանսական ուժի եւ ուրիշ եւրոպական կազմակերպութիւններուն պաշտպանութիւնը, ինչպէս նաեւ հոգեւոր ու նիւթական օժանդակութիւնը:

Իսկ Պաղտատի մէջ Քաբուչին հայրերն էին այս դաւանանքը տա-

²⁰ Պաղտատի գրաւումի թուականը Օսմանցիներուն կողմէ եւ Ս.Աստուածածին եկեղեցոյ հիմնադրումը՝ 1639 թուականին կը համարուի Իրաքահայ Թեմի վերակազմաւորման տարի:

²¹ Ալպոյաճեան, Իրաքի Հայ Գաղութը. Գարագաշ Հ., Պարսկահայ Տարեցոյց 1930, էջ 86-87:

²² Արրահամեան Ա., Համառոտ Ուրուագիծ Հայ Գաղթավայրերի, Բ. Հատոր, էջ 43 եւ Աճառեան Հ., Աճառեան Յուցակ Հայ Ձեռագրաց Թաւրիզի, էջ 53:

րածողները, եւ քանի որ վերոյիշեալ վարդապետները կը զբաղէին նաեւ բժշկութեամբ, ուստի մեծ տպաւորութիւն գործած են այդ ժամանակուան թուրք կուսակալին վրայ եւ հետեւաբար արժանացած յատուկ առանձնաշնորհումներու:

Ահա այս փոքրիկ հատուածը Պասրայի եւ Պաղտատի մէջ կորիզը կը դառնայ Իրաքի մէջ կաթոլիկութեան տարածման, որ կ'աճի տարիներու ընթացքին: 1769 թուականին, երբ Ս. Ղազար Միաբանութեան կողմէ Հայր Միքայէլ Չամչեան կ'առաքուի Պասրա, որպէս հոգեւոր առաջնորդ, այստեղ արդէ՛ն կազմաւորուած հայ կաթոլիկ համայնք մը գոյութիւն ունէր: Վերջինս նոյնպէս ջանք ու եռանդ չի ինչայեր իր համայնքը գօտեպնդելու եւ նոր հետեւորդներ սիրաշահելու²³:

Ներկայ աշխատութեան երրորդ գլուխը կ'անդրադառնայ Իրաքահայութեան տնտեսական եւ հասարակական գործունէութեան: Իրաքահայոց տնտեսական աշխոյժ գործունէութիւնը սկսած է XVII դարուն եւ շարունակուած է մինչեւ XIX դար, որ պայմանաւորուած էր Նոր Ջուղայէն Պասրա եւ Պաղտատ ապաստան գտած հայ վաճառականներու կամ իրենց գործակալներուն աշխոյժ եւ ծաւալուն գործունէութեամբ: Մասնաւորապէս, 1722 թուականին Պարսկաստանի մէջ ծաւալուող քաղաքական անպաստ պայմաններուն պատճառով, Նոր Ջուղայէն հեռացողներէն մաս մը կ'անցնի Պասրա, եւ հակառակ Պարսկաստանի նոր տիրակալ Քերիմ Խանի սպառնալիքներուն՝ Ջուղայեցիները անյողդողդ մնացին իրենց որոշումին մէջ, եւ շարունակեցին ապրիլ իրենց նոր բնակավայր Իրաքի մէջ՝ լուրջ ներդրումներ ունենալով երկրի առեւտրատնտեսական վերելքին²⁴:

Իսկ գալով հասարակական գործունէութեան, հարկ է նշել, որ նկատի ունենալով հայերուն աննշան թուաքանակը Միջագետք (Իրաք)ի տարածքին, երկրի քաղաքական անկայուն իրավիճակը, ինչպէս նաեւ այս երկրամասը հարուածող ժանտախտի յաճախակի համաճարակները մինչեւ XIX դարու առաջին կէտը, հասարակական գործունէութիւն համարեա կը բացակայէր այս համայնքին մէջ: Համայնքը իր ուշադրութիւնը կ'եղրոնացուցած էր առաւելապէս եկեղեցիները բարեկարգելու եւ բարեզարդելու աստուածա-

²³ Լէօ, Երկերու Ժողովածու, Հատոր 3, Երեւան, 1973, էջ 515:

²⁴ Յովհաննէանց Յ. Տէր, Պատմութիւն Նոր Ջուղայու, Նոր Ջուղա, 1980, էջ 317:

հաճոյ գործունէութեան վրայ: Մակայն, այս իրավիճակը հիմնովին կը փոխուի, երբ Պաղտատ կը ժամանէ (1876 թ.) բազմավաստակ մանկավարժ եւ լեզուագէտ Միհրան Սվաճեանը, որ յանձն կ'առնէ ազգային դպրոցի մակարդակին բարձրացման՝ հիմք ունենալով եւ կիրարկելով նոր եւ գիտական մեթոտներ, ինչպէս նաեւ հիմը կը դնէ Ասքանազեան Ընկերութեան: Այս Ընկերութիւնը Պաղտատի հայ գաղութին մէջ կատարած է նշանակալի դեր, եւ անդամները հանդիսացած են գաղութին ղեկավար տարրը մինչեւ Համաշխարհային Առաջին պատերազմը: Ասքանազեանը՝ հիմնուած 1878 թուականին, իր շատ արժէքաւոր մատենադարանով եւ ակումբով, մեծ դեր ունեցած է երիտասարդութեան ազգային ինքնագիտակցութեան զարթնումին մէջ: Միայն արեւմտահայ գաղթականութեան ժամանումով է, որ համայնքը կը համալրուի նոր, թարմ, ազգային անխաթար նկարագիրով օժտուած ուժերով եւ այնուհետեւ, թափ կ'առնէ աշխոյժ, հայրենանուէր եւ ազգապահպան հասարակական գործունէութիւն, որ հակառակ քաղաքական աննպաստ պայմաններուն, կը շարունակուի ցայսօր:

Կրթամշակութային ոլորտը մինչեւ XX դար, նոյնպէս եղած է շատ սահմանափակ: Պաշտօնապէս ճանչցուած, ազգային կանոնաւոր դպրոցներ հիմնադրուած են միայն Պաղտատի մէջ՝ Ս. Մեսրոպ, Ս. Թարգմանչաց տղայոց եւ Զապէլեան աղջկանց վարժարանները: Թէեւ հայկական աղբիւրներուն համաձայն, առաջին ազգային դպրոցը հիմնուած է 1852 թ., այնուամենայնիւ ըստ պետական պաշտօնական «սպլնամէներուն», 1790 թ. հայկական դպրոց մը գոյութիւն ունեցած է Պաղտատի Ս.Աստուածածին եկեղեցոյ շրջափակէն ներս: Մեսրոպ վարդապետի ժամանումով (1848 թ.), շէնքը կ'ընդարձակուի եւ դասաւանդումը կը կարգաւորուի: Այս դպրոցը գոյատեւած է, ինչպէս միշտ, տեղական ազգայիններու նուիրատուութիւններով եւ ոչ մէկ օժանդակութիւն ստացած է օրուան իշխանութիւններու կողմէն:

Իրաքի հնադարեայ այս գաղթօճախի պատմութեան մասին մինչեւ XX դար ցարդ չունինք լուրջ եւ համակողմանի ուսումնասիրութիւն, քանզի, ինչպէս յայտնի է, բարբարոս ցեղերու ասպատակութիւնները, քաղաքական վերիվայրումները, ժանտախտի յաճախակի համաճարակները երկիրը համարեա ամայացուցած են, որմէ բնականաբար տուժած է նաեւ հայ բնակչութիւնը եւ զրկը-

լած իր տարիներու տքնաջան աշխատանքով ձեռք բերած կարողութիւններէն:

Արդարեւ, Միջին եւ Նոր դարերուն, այս երկրին մէջ կամայ թէ ակամայ բնակութիւն հաստատած հայորդիները, ապրելով շատ դժնդակ պայմաններուն մէջ, զիրենք զօդող միակ փրկարար կապը եղած է Հայ Առաքելական Սայր եկեղեցին, որուն հոգեւոր գործունէութիւնը XX դարուն կը համալրուի ազգային-հասարակական, մարզական եւ եկեղեցիին առընթեր կազմուած տարաբնոյթ միութիւններով եւ կազմակերպութիւններով, պայմանաւորւած Արեւմտեան Հայաստանի եւ Կիլիկիոյ տարբեր շրջաններէն Իրաք ապաստան գտած հայորդիներուն ջանքերով:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐՈՒ ՅԱՌԱՋԱՅՈՒՄԸ ՄԻՋԱԳԵՏՔԻ ՄԷՋ

Ա- Հայկական Գաղութներուն Ձեւաւորումը

Մետփոթամիա-Միջագետք, Հայկական Բարձրավանդակի լեռներէն բխող երկու գետերու՝ Եփրատի եւ Տիգրիսի միջեւ գտնուող այս տարածքը, որն այժմ կը կոչուի Իրաք, բնօրրանը եղած է հնօրեայ քանի մը հրաշալի քաղաքակրթութեանց եւ աշխարհագրօրէն սահմանակից էր Հայաստանին: Հետեւաբար, անհնարին էր, որ սերտ յարաբերութիւններ չունենար եւ հայեր գոյութիւն չունենային Իրաքի մէջ: «Վերջին 25 տարիներու հետախուզութիւններն ու պեղումները կատարեալ յեղաշրջութիւն մը առաջ բերած են մեր գաղափարներուն մէջ՝ Միջագետքի (ու թերեւս համայն աշխարհի) քաղաքակրթութեան ծագման ու զարգացման վերաբերեալ: Հիմա որոշապէս կը տեսնուի թէ Միջագետքի ամենահին քաղաքակրթութեան կեդրոնը ոչ թէ անոր ամենէն հարաւային ստորնագոյն մարզին մէջ էր, հապա հիւսիսային եւ աւելի բարձր մարզերուն մէջ. որով քաղաքակրթութեան օրրանը մեր կարծածէն աւելի մօտ էր Հայաստանին»²⁵:

Այսպէս, պատմութեան հեռաւոր խորքերուն մէջ, Միջագետքը Հայաստանի հարաւը գտնուող հարեւան երկիրներէն մէկն էր: Այն ատեն, երբ մարդկային մշակոյթի առաջին հիմնաքարերը կը դրուէին Միջագետքի եւ հայկական լեռնաշխարհի տարածքին բնակութեան հաստատած ժողովուրդներուն կողմէ, հայ ժողովուրդը, իբրեւ առեւտրական կենսունակ ազգ, մշակութային եւ քաղաքական սերտ յարաբերութիւններ ունեցած է իր հարաւային դրացիներուն հետ: Բայց եւ այնպէս, հին Բաբելական սեպագիր արձանագրութիւններուն մէջ, նախապատմական Հայաստանի բնակչութեան մասին չկայ արձանագրութիւն մը, որուն մէջ մանրամասն տեղեկութիւն տրուած ըլլայ: Ըստ երեւոյթին, Բաբելացոց եւ յետագային Միջագետքի մէջ բնակութիւն հաստատած տարբեր ժողո-

المدر، مروان – الارمن عبر التاريخ – منشورات دار مكتبة الحياة – بيروت لبنان 1982 – ص 82-25.
.94 (Մըրուան Էլ-Մըղաուր, Հայերը, Պատմութեան Ընթացքին, Պէյրութ, Լիբանան, 1982, էջ 82-94):

վորդներուն համար, բուն հայկական բարձրականդակը միշտ առասպելի, դիցաբանութեան ու գաղտնիքի երկիր մըն էր²⁶:

Գտնուած հին բարեկական աղիսի մը վրայ նկարուած է ուրուագիծ աշխարհագրական քարտեզ մը, որ Աքքադեան Սարկոնի օրերէն, ցոյց կու տայ Եփրատ ու Տիգրիս գետերու աղբիւրներու լեռներկիր, եւ կ'որակէ զայն որպէս «Աստուծոյ Ժողովի Լեռ»²⁷:

Միջագետքի կարգ մը շրջաններուն մէջ աւելի քան 3000 տարիներ առաջ հայկական բնակավայրեր ստեղծուած ըլլալու փաստեր գոյութիւն ունին: Սակայն, այդ գաղթօճախները երկարատեւ եւ շարունակուող պատմութիւն չեն ունեցած: Դէպքերու իբրեւ հետեւանք, տեղէ տեղ փոխադրուած եւ երբեմն ալ լուծուած ու դարձեալ վերակենդանացած են²⁸:

Ասորեստանի աշխարհակալ տերութիւնը, իր իշխանութեան ժամանակ տարատեսակ յարաբերութիւններ ունէր իր երկրի հիւսիսը գտնուող Վանի թագաւորութեան հետ, որոնք մերթ բարեկամական էին, սակայն յաճախ թշնամական: Այս տերութեան իշխանաւորներուն սպառնացող գլխաւոր վտանգը կու գար Ուրարտուէն (Վանի թագաւորութիւն) եւ Վանայ լիճի արեւելքը գտնուող Զագարթու թագաւորութիւններէն²⁹:

Սեպագիր արձանագրութիւնները եւս յայտնաբերած են Միջագետքի եւ Հայաստանի միջեւ եղած յարաբերութիւնները³⁰: Հայեր հնագոյն ժամանակներէ սկսեալ կը նաւարկէին Եփրատի եւ Տիգրիսի վրայ լաստերով, ինչպէս կը պատմէ Հերոդոտոս, որ Բաբելոնի մասին խօսած ատեն կ'ըսէ թէ «...պիտի խօսիմ ուրիշ հրաշքի մը մասին, որ քաղաքէն (Բաբելոնէն) յետոյ այդ երկրին զարմանալիքներուն ամենամեծն է: Այն լաստերը, որ հոսանքն ի վար գետով (Տիգրիս) կ'երթան դէպի Բաբելոն, կլոր ձեւ ունին եւ շինուած են կաշիէ: Հայաստանի մէջ, որ Ասորեստանի հիւսիսակողմը կը գտնուի, մարդիկ կը կտրտեն ուռիի ճպոտներ եւ անոնցմով կը շի-

²⁶ Sopp, الدكتور جواد كاظم البيضاوي، ارمينية في المصائر العربية الاسلامية، بغداد 2018 ص 18-19. Ջուադ Էլ-Բէյզաւի, Հայաստանը Արաբական-Իսլամական սկզբնաղբիւրներուն մէջ, Պաղտատ, 2018, էջ 18-19):

²⁷ Նոյն, էջ 30:

²⁸ Գաւորճեան Մ., «Արմենիա, Սուրբարտու եւ Սումեր», Պէյրութ էջ 28-29:

²⁹ Sopp, الدكتور عامر سليمان، العراق في التاريخ، بغداد 1983، صفحة 152-153. Ամրո Սուլէյման, Իրաք Պատմութեան մէջ, Պաղտատ 1983, էջ 152-153):

³⁰ Աբրահամեան, նշ. աշխ., էջ 34:

նեն լաստերու կմախքները: Ասյա, դուրսի կողմէն կը պատեն կաշիով, որ ջուրը ներս չթափանցէ: Լաստը ոչ ցոռկ ունի, եւ ոչ խելք, այլ բոլորովին կլոր է, վահանի նման: Նաւը կը լեցնեն յարողով, կը բեռնաւորեն ապրանքներով եւ յետոյ հոսանքն ի վար կը քշեն: Բեռը բաղկացած կ'ըլլայ մեծ մասամբ գինիով, լեցուած կարմիր կաւէ շինուած կարասներու մէջ:

Երկու մարդ կը վարէին նաւը՝ երկու ձողերու օգնութեամբ: Նաւավարները ուղիղ կանգնած կ'ըլլային լաստին մէջ՝ մէկը ձողը կը ձգէր դէպի ինքը, իսկ միւսը կը հրէր: Այս նաւերը զանազան մեծութեամբ կ'ըլլային: Ամենամեծերը կը կրէին մինչեւ հինգ հազար տաղանդ (մօտաւորապէս 10000 քիլոկրամ) ապրանք: Ամէն մէկ նաւու վրայ կը գտնուէր էշ մը, իսկ մեծերուն վրայ աւելի: Երբ անոնք բեռը Բաբելոն կը հասցնեն եւ ըստ պատկանելոյն կը յանձնեն, կը ծախեն նաեւ նաւին կմախքը ու մէջի յարողը: Իսկ կաշին կը բեռցնեն էշին վրայ եւ այսպէս նորէն Հայաստան կը դառնան: Վասնզի անկարելի է այլեւս հոսանքն ի վեր երթալ (նաւով), քանի որ գետը շատ արագահոս է: Այդ պատճառով է որ լաստերը կաշիէ կը շինեն եւ ոչ թէ փայտէ: Երբ անոնք իրենց էշով կրկին Հայաստան կը հասնին, կը սկսին նորէն նաւ մը շինել: Ահա այսպէս են պատրաստուած անոնց նաւերը»³¹:

Յակոբ Աթիկեան եւս կը նշէ Հայաստան-Միջագետք յարաբերութիւններու մասին. «Տիգրիս եւ Եփրատ գետերը, իբրեւ մայր երակներ, Հայաստանը յարաբերութեան մէջ կը դնէին հարաւային եւ արեւելեան կողմը գտնուող երկիրներուն հետ, շատ հին ժամանակներէ ի վեր: Ըստ տրուած տեղեկութեանց, հայերը Տիգրիսի վրայով լաստերով ապրանք կը հասցնէին Բաբելոն: Անոնք, որ մասնաւորապէս Ծայրագոյն Արեւելքի արտադրութիւնները դէպի արեւմուտք փոխադրելու աշխատած են, աւելի Եփրատ գետը կ'օգտագործէին: Հայերը, որոնք այս երկու գետերը օգտագործած են իրենց առեւտուրին համար, շարժած են երբեմն ակամայ երբեմն կամաւոր, ապրուստի համար»³²:

³¹ Ալպոյաճեան, Պատմութիւն Հայ Գաղթականութեան, Ա. հատոր, Գահիրէ 1941, էջ 47-48:

³² Աթիկեան Յ., Համառօտ Պատմութիւն Հայ Գաղթավայրերու, Անթիլիաս-Լիբանան, 1985, էջ 67:

Միջազգետքի հիւսիսային շրջանին մէջ հայկական փոքր բնակավայրեր գոյութիւն ունեցած են: Ինչպէս վերը նշեցինք, Արտաշէսեան հարստութեան ժամանակաշրջանին, Մեծն Տիգրան 89-84 (Ք.ա.) նուաճած է Ադիաբենէն³³ (այժմ՝ Մուսուլի շրջան) եւ միացուցած զայն Հայաստանին:³⁴ Որով, հաւանական է, որ Միջազգետքի հիւսիսային շրջանին մէջ որոշ թիւով հայեր հաստատուած են: Ինչպէս նշեցինք, ըստ Պլուտարքոսի (Վարք Լուկուլլոսի, 21), Եփրատի անցքը եւ կարաւաններու մեծ ճանապարհը Տիգրանի իշխանութեան տակ կը գտնուէին եւ այս անցքին ու ճամբայի պաշտպանութեան համար անապատէն տեղափոխուած արաբ ցեղախումբեր կը գործածուէին³⁵:

Ըստ հռոմէական պատմիչներու՝ 53 թ. (Ք.ա.) հռոմէացի զօրավար՝ Մարկոս Կրասոսի արշաւանքներու ժամանակ Խառանի մօտերը հայկական բնակավայրերու գոյութիւնը կը հաստատէ³⁶:

Ուրիշ հեղինակ մը՝ Ապպոդոնիոս Տիանացին, 44 թ. Միջազգետք կատարած ճամբորդութեան ընթացքին հիւսիսային շրջաններու արաբական վայրերու մէջ հայկական գիւղեր տեսած ըլլալը կը հաստատէ³⁷:

Թէեւ հնագոյն ժամանակներուն Միջազգետքի մէջ հայերու գոյութեան մասին փաստերը քիչ են, այնուամենայնիւ, 520 թ. (Ք.ա.), ինչպէս վերը նշեցինք, Պեհիսթունի քարածայրին վրայ պարսիկ Դարեհ թագաւորի թողած արձանագրութիւն մը կը վկայէ, որ Արախս անունով հայ զօրական մը իբր ստանուն Նաբուգոթոնոսոր ապստամբութիւն կը բարձրացնէ Բաբելոնի մէջ Աքեմենեան Պարսկաստանի դէմ, եւ տեղացիներու օժանդակութեամբ կը յաջողի Բաբելոնի թագաւոր հռչակուիլ: Սակայն այս յանդուգն քայլի հետեւանքով Արախսան «խաչի մահուամբ կը պատժուի»³⁸:

31 Մանանդեան Յ., Տիգրան Երկրորդ եւ Հռոմը, Երեւան 1972, էջ 48: Նաեւ Հայկական Սովետական Հանրագիտարան, Ա. հատոր, Երեւան, 1974, էջ 73 («Ադիաբենէն հնագոյն երկիր Տիգրիս եւ Փոքր Զապ գետերու միջեւ»):

³⁴ Seda Ohanian, "Armenians of Iraq, Beyond ISIS: History and Future of Religious Minorities in Iraq," London, 2019, pp. 151-164.

³⁵ Ալպոյաճեան, Իրաքի Հայերը, Երեւան 2003, էջ 18:

³⁶ Տիշոյեան Ե., Հեթանոս Արշակունեաց Օրով Հասարակական Կեանքը, «Հայաստանի Կոչնակ», Նիւ Եօքք, ԼԸ տարի, 1939, թիւ 31, էջ 737:

³⁷ Ալպոյաճեան, Իրաքի Հայ Գաղութը. Գարագաշ Հ., Պարսկահայ Տարեցոյց, Թեհրան 1930, էջ 71-94:

³⁸ Նոյն էջ 76-77:

Սոյն դրուագը Արախայի մասին, պատմագետ եւ վաղնջական Իրաքի պատմութեան մասնագետ ժորժ Ռու այսպէս կը նկարագրէ.

«...Բաբելացիներ, թէեւ հնագանդ ժողովուրդ մը ճանչցուած էին, սակայն ազատութեան տենչը կը բոցավառէր իրենց երակներուն մէջ:

Դարեհ՝ Պարսից արքան, կը լսէ թէ բաբելացի մը Նաբոնիդոսի որդին, Նաբուգոթոնոսոր հոչակած է ինքզինքը, ասիկա «Հայ» (Ուրարտացի) մըն է, եւ կը կոչուի Արախա: Արախա բանակ մը զինուորագրելով գրաւած է Բաբելոնի թագաւորութիւնը: Դարեհ, իսկոյն կը հրամայէ իր զօրավարներէն Վինդաֆարնային, երթալ Բաբելոն, պարսկական բանակով, եւ Ահուրամագոյայի օգնութեամբ կռուիլ եւ գերի բռնել ըմբոստները: Մարկագանա³⁹ ամսուան ընթացքին 22 օր կռուելէ ետք, Արախան եւ իր աւագանին կը ձերբակալուին: Այն ատեն, Դարեհ կը հրամայէ «այս Արախան եւ իր աւագանին ցցահարել Բաբելոնի մէջ»⁴⁰: Դատավճիռը կը գործադրուի 27 Նոյեմբեր 521 Ք.ա.: Արախան իշխեց միայն չորս ամիս⁴¹:

³⁹Մարկագանա (Markazana), հրէական Marchesvan ամիսը, որ կը համապատասխանէ Հոկտեմբեր կամ Նոյեմբեր ամսուն, Norris E., Behistun Inscription, The Journal of the Royal Asiatic Society of Great Britain and Ireland, Vol. 55 London p. 126.

⁴⁰ Roux G., Ancient Iraq, Penguin Books, London 1976, pp. 407-408. (ժորժ Ռու ֆրանսացի գրող, ծնած է Սալոն-դէ-Փրովէնսի – Salon-de-Provence – մէջ, սպայի որդի, ծնողներու հետ ապրած է Սիւրիայի եւ Լիբանանի մէջ 12 տարի, Փարիզ վերադարձած է Փարիզի բժշկական համալսարանին մէջ, զոր աւարտած է 1941 թ.: Բժիշկի մասնագիտութեամբ զբաղուելուն զուգահեռ, ան հետեւած է նաեւ արեւելագիտութեան Ecole des Hautes Etudes-ի մէջ: 1950 թ. ստանձնած է բժիշկ-սպայի պաշտօնը Iraq Petroleum Company (Իրաքի Նաւթային Ընկերութիւն) մէջ ապրելով 2 տարի Քաթարի եւ 7 տարի Իրաքի մէջ: 1956-1960 թթ. թղթակցած է սոյն ընկերութեան կողմէ հրատարակուող եւ լայնօրէն ընթերցուած IPC տեղեկատու թերթին: Այս թերթին էջերուն հրապարակուած յօդուածները հետագային լոյս կը տեսնեն առանձին հատորով (Ancient Iraq - Վաղնջական Իրաք), որ կը պարփակէ հնադարեան Իրաքի քաղաքական, մշակութային, ընկերային-տնտեսական պատմութիւնը նախապատնական ժամանակաշրջաններէն մինչեւ Քրիստոսի ժամանակները: Առաջին անգամ լոյս տեսած է 1964 թ. անգլերէն: Թարգմանուած է ֆրանսերէնի, արաբերէնի, սպաներէնի եւ լեհերէնի:

⁴¹ Roux, Ibid, p. 408.

Միջագետքի մեջ Սասանեան տիրապետութեան ժամանակաշրջանին (224-652 թթ.) հայերու գոյութեան մասին աւելի որոշակի տուեալներ կան.

Սասանեան պետութեան մայրաքաղաքն էր Տիգրն, ուր հայկական մեծ գաղթօճախ մը գոյութիւն ունեցած էր բաղկացած գլխաւորապէս առետրականներէ, պետական պաշտօնեաներէ եւ պատանդներէ⁴²: 387 թ. Հայաստանի առաջին բաժանումի հետեւանքով, Արեւելեան Հայաստանը ինկաւ Սասանեան վեհապետութեան տակ, հետեւաբար, հայ նախարարներ՝ ի պաշտօնէ հարկադրուած էին երթեւեկել Տիգրն գերիշխանութեան պետերուն մօտ: Իսկ երբ Հայաստան քրիստոնէութիւնն ընդունեց իբրեւ պետական կրօն, պատկերը բոլորովին փոխուեցաւ: Սասանեան Պարսկաստանի եւ քրիստոնէայ Հայաստանի միջեւ կրօնական ատելութիւնը արծարծուեցաւ եւ սաստկացաւ: Սասանեանները, Հայաստանը իր բնակչութենէն պարսլելու քաղաքականութեան հետեւելով, մեծ թիւով հայեր գերեվարելով, զանոնք բռնի կերպով պետութեան զանազան մասերը տեղափոխեցին: Ըստ հայ պատմիչներու տուած տեղեկութեանց՝ IV-V դարերու ընթացքին քանի մը անգամներ մեծ թիւով գերիներ տարուած են Միջագետք⁴³: Փաւստոս Բուզանդ կը վկայէ. «...Շապուհը 369 թ. մեծ թիւով գերի է տարել Հայաստանից եւ մի մասն բնակեցրել Ասորեստանում, միւս մասը Խուժաստան երկրում»⁴⁴: Իսկ 451 թ. ազատագրական շարժումներուն մասնակցողներէն ոմանց, Պարսից Շապուհ թագաւորը պատժել է տք հրամայած է. «...դուք պէտք է զնաք Ասորեստան եւ մշակութիւն անէք արքունի գործերում»⁴⁵: Իսկ այլուր Եղիշէ կ'ըսէ. «...նրանց տարան հասցրին Բաբելացոց երկիրը մի գաւառ, Շահուղ է կոչում»⁴⁶: Հետեւաբար, V դարու երրորդ քառորդին Տիգրն զանաւոր հայ գաղթօճախը կը պահէ գոյութիւնը, այս կամ այն կերպով: Մինչեւ արաբական տիրապետութեան սկիզբները (VII դար), հայեր գոյութիւն ունէին այդ կողմերը, որոնք Պաղտատի խալիֆայութեան հարստութեան տապալումէն ետք անհետ կ'ըլլան կամ չեն յիշուիր: Հայ բնակչութիւնը կա՛մ բռնի դաւանա-

⁴² Փարպեցի, նշ. աշխ., էջ 320-321, 351-352:

⁴³ Աբրահամեան, նշ. աշխ., էջ 36:

⁴⁴ Փաւստոս Բուզանդ, նշ. աշխ., էջ 297:

⁴⁵ Եղիշէ, նշ. աշխ., էջ 245:

⁴⁶ Նոյն:

փոխ եղած, կա՛մ փախստական դարձած ցրուած, կա՛մ նեստորականութեան ապաւինած են, եւ միայն ցանցառ թիւով հայութիւն մը թերեւս քաշքշած է ինքզինքը⁴⁷:

Միջին դարերուն (IV դար - XVII դարու առաջին կես), Միջագետքի մէջ հայ գաղթավայրի մը գոյութեան մասին անատարկելի փաստեր առկայ են տուեալ ժամանակաշրջանին քանի մը կաթողիկոսներու գործունէութեանց ընդմէջէն, որոնցմէ թուենք հետեւեալները միայն եւ իրենց ունեցած կապերը Միջագետքի հետ.

- Այսպէս, V դարուն բաւականաչափ թիւով հայերու գոյութիւնը Միջագետքի մէջ կը փաստուի այն իրողութեամբ, որ 410 թ. Մահակ Պարթևի հրաւիրած եկեղեցական ընդհանուր ժողովին կը յիշուին նաեւ Սծբինի ներկայացուցիչները⁴⁸: Իսկ սոյն դարու վերջին քառորդին, Տ.Ս. Գիւտ Ա. Արաքեզացի կաթողիկոսը,⁴⁹ 471 թ.

⁴⁷ Ալպոյաճեան, Պատմութիւն Հայ Գաղթականութեան, Բ. Հատոր, Գահիրէ 1955, էջ 393:

⁴⁸ Սծբինի թեմին մաս կը կազմէին Աղձնիքը, Մոկքը, Ծաղէքը, Բեմինէն, Կորդուրը եւ Միջագետքի քանի մը վայրեր: Աբրահամեան, նշ. աշխ., էջ 37:

⁴⁹ Գիւտ Արաքեզացի, Հայոց կաթողիկոս 461 թուականէն: Յաջորդած է Մովսէս Ա. Մանազկերտցիին: Ծնած է մօտ 400 թուականին Տայք նահանգի Արաքեզ գիւղին մէջ: Մահացած է 478 թուականին Վանանդ գաւառի Ռթմուս գիւղին մէջ, աճինը ամփոփուած է Ռթմուսի եկեղեցիի բակին մէջ: Եղած է Մահակ-Մեսրոպեան դպրոցի կրտսեր աշակերտներէն: Ստացած է նաեւ յունական կրթութիւն: Մինչեւ կաթողիկոս ընտրուիլը եղած է Վանանդի եպիսկոպոսը՝ Գաղ անունով եւ նստած է Ռթմուս գիւղին մէջ: Մասնակցած է Շահապիւանի՝ 444 թուականի եւ Արտաշատի՝ 449 թուականի ժողովներուն: Յարած է Վարդանանց շարժումին: Աղուանքին մէջ քրիստոնէութեան հռչակումին հետ կապուած, նամակ մը գրած է Աղուանից Վաչէ թագաւորին ամրապնդելու համար անոր քրիստոնէական հաւատքը: 461 թ. կաթողիկոսական գահ բարձրացած է Պարսից արքայ Պերոզի եւ Հայաստանի մարզպան Ատորոմիդոյ Արշակունիի համաձայնութեամբ: 462 թ. Վաղարշապատի Կաթողիկէ եկեղեցիի մէջ հայրենասիրական քարոզներով եւ սրտազին փառաբանութիւններով դիմատրած է 452 թ.ի Տիգրանի դատավարութեան ժամանակ ձեռքակալուած Աւարայրի ճակատամարտի մասնակից 37 հայ նախարարները: Գիւտ կաթողիկոսը հաստատած եւ եկեղեցական Տօնացոյցի մէջ մտցուցած է Աւարայրի նահատակներուն յիշատակի օր եւ բազում ուրիշ եկեղեցական բարեկարգութիւններ: Դասուած է Հայ եկեղեցոյ սուրբերուն կարգը: Գիւտ կաթողիկոսի կեանքը՝ իր ազգաշէն գործունէութեամբ, եկեղեցական բարեկարգութեամբ, հովուական արդիւնքներով նման է Մահակ Ա. Պարթևի կաթողիկոսութեանը (Օրմանեան, Ազգապատում, Ա. հատոր, պարբերութիւն 284):

Տիգրան կանչուելով պաշտօնէ կը զրկուի եւ հոն կը մնայ «...բազում համարձակութեամբ պատուեալ, ոչ միայն ի քահանայիցն եւ ի քրիստոնէիցն, այլեւ առաւել հեթանոսացն: Ան հոն կատարած է շատ մը ձեռնադրութիւններ, ոմանք եպիսկոպոսութեան եւ շատեր քահանայութեան կոչելով: Այդ քրիստոնէաները ապահովաբար հայեր եւ ասորիներ կրնային ըլլալ, որովհետեւ նեստորականներու հետ հայոց կաթողիկոսին յարաբերիլը բնաւ հաւանական չէ»⁵⁰:

- VI դարու քառասունական թուականներուն Պարսկաստանի քրիստոնէայ համայնքներուն մէջ շփոթութիւն մը կը տիրէր⁵¹: Օրուան ամենայն հայոց կաթողիկոս Քրիստափոր Ա Տիրառիջցի⁵² (539-545 թթ.), որ բուռն պայքարող մըն էր նեստորականութեան եւ քաղկեդոնական վարդապետութեան դէմ Հայաստանէն ներս եւ շրջակայ երկիրներուն մէջ, նախ նամակով մը կը զգուշացնէ Ասորեստանի եւ Խուժաստանի⁵³ քրիստոնէաները «...մի խառնիլ ընդ նեստորականսն»: Սակայն, որոշ արդիւնք մը չտալուն, Քրիստափոր կաթողիկոսը չի գոհանար գրաւոր զգուշացումներէ եւ անձամբ կը ժամանէ Պարսկաստան, կը հանդիպի նաեւ Միջա-

⁵⁰ Նոյն, պարբերութիւն 290:

⁵¹ Նոյն, պարբերութիւն 357:

⁵² Քրիստափոր Տիրառիջցի ծնած է Բագրեւանդ գաւառի Տիրառիջ գիւղին մէջ: Հովուապետած է Սահակ Բ. Ուղեկիցէն յետոյ: Իր որոշակի արժանիքներուն համար վայելած է համընդհանուր սէր, իսկ Ասողիկի խօսքերով՝ եղած է փիլիսոփայ: Իսկ Թովմա Արծրունիին անոր կաթողիկոսութեան շրջանը կը համարէ «պանծալի աթոռակալութիւն» տեղեկութիւններ հաղորդելով ասորիներուն հետ ունեցած յարաբերութիւններու մասին: Իր հովուապետութեան շրջանը եղած է շատ խառն, պատերազմ բռնկուած էր Պարսկաստանի եւ Բիզանդիայի միջեւ, օրըստօրէ խորացած էին դաւանաբանական վեճերը միաբնակներու եւ երկաբնակներու միջեւ: Այս խառնակ ժամանակներուն Պարսկաստանի՝ գրեթէ անտէրուչ մնացած քրիստոնէաները կ'ապաւինին հայոց եկեղեցիին: Քրիստափոր կաթողիկոսը, համաձայն Թովմա Արծրունիին, առանձին թուղթով կը դիմէ Ասորեստանի եւ Խուժաստանի քրիստոնէաներուն՝ զգուշացնելով նեստորականներու վտանգէն եւ անձամբ ներկայանալով Պարսկական արքունիք կը փորձէ իր հովանաւորութեան տակ վերցնել ուղղափառներուն: Այդ ժամանակ է, որ կը ձեռնարկէ վերոյիշեալ քրիստոնէայ Մեթրոպոլիտ Քարմային եւ ուրիշներուն ձեռնադրութիւնը: Իր գործունէութիւնը ասորական բնակչութեան մէջ այնպիսի արձագանգներ գտած էր, որ անոր անգամ ասորական ծագում է վերագրուած, որն անշուշտ, թիրիմացութեան արդիւնք է: Կը վախճանի 545 թ. (Օրմանեան, նշ. աշխ., պարբերութիւն 355, 356 եւ 357):

⁵³ Ներկայիս Պասարայի կողմերը:

գետք ուղղափառ քրիստոնեաները յանձանձելու եւ մխիթարելու նպատակով⁵⁴: Կը հանդիպի հիւսիսային Միջագետք ասորական նշանաւոր Մառ Մաթթա վանքը⁵⁵:

Մառ Մաթթայի մէջ Քրիստափոր կաթողիկոսէ ձեռնադրութիւն ստացողներուն մէջ կը յիշուին տեղւոյն Մերթոպոլիտ Քարմայ եւ Բէթ Արաբի եպիսկոպոս Ախուղիմմէ, որոնց յաջորդները եւս շարունակաբար հայ եկեղեցիէն ընդունեցան իրենց ձեռնադրութիւնները:

Սակայն, Քրիստափոր կաթողիկոսի գլխաւոր նպատակն էր անմիջական յարաբերութիւններու մէջ մտնել իր ազգակիցներուն հետ: Ուրեմն, այս աստուածահաճոյ գործին ձեռնարկած ըլլալով, զայն աւարտին հասցնելէն առաջ ետ չէր դառնար: Հայոց կաթողիկոսը Միջագետք, Ասորեստան ու Պարսկաստան շրջագայած ատեն, այն տեղերը գտնուող հայերուն վրայ պիտի տարածէր իր հոգածութիւնը, քանի որ յայտնի է, թէ հայ գործիչներ պակաս չէին այն կողմերը ուղղափառութեան պաշտպանութեան համար, մինչեւ իսկ մարտիրոսական վկայութիւն յանձն առնելով, «ինչպէս հայազգի Սարգիս մը եւ հայաստանցի մեծ Թովմաս»⁵⁶:

Երբ իսլամութիւնը մոնկոլներու մէջ կը տարածուի եւ կ'արմատանայ, նախկին «բարեացակամ» տրամադրութիւնները քրիստոնեաներուն հանդէպ կը փոխուին: Իրենց տիրապետութեան տակ ինկած բոլոր քրիստոնեայ ժողովուրդները կ'ենթարկուին տարատեսակ դժուարութիւններու, հարկապահանջութեան խստացման եւ կեղեքումի: Արդարեւ, Խարբանտայի (կամ Ղարբանդա) (1304-1316) եւ Ալի փաշային (1336 թ.) վեցամսեայ իշխանութեան շրջաններուն հայերը անօրինակ հալածանքներու ենթարկուեցան⁵⁷: Այս կապակցութեամբ Մուսուլէն մինչեւ Խլաթ եւ

⁵⁴ Տէր Մինասեան Ե. վ., Հայոց եկեղեցու յարաբերութիւնները ասորաց եկեղեցիների հետ, 1908 էջ 120-124:

⁵⁵ Մառ Մաթթա կամ Ս.Մատթեոս վանքը հիմնուած 4-րդ դարուն սկիզբը, կը գտնուի Մուսուլէն 20 քիլոմէթր հիւսիս արեւելք, Էլֆաֆ լեռան վրայ: Հոս կան մեծարժէք գանձեր ու հարուստ մատենադարան: Այս վանքը մեծ սրբատեղի եւ ուխտատեղի է ոչ միայն ասորիներուն, այլ նաեւ շրջանի բոլոր քրիստոնեաներուն եւ այլադաւաններուն համար:

⁵⁶ Օրմանեան, նշ. աշխ., պարբերութիւն 357:

⁵⁷ «...Յայտնի է, օրինակ, որ մոնկոլները, Ղազան խանի (1295-1304) ժամանակ, ընդունելով իսլամը, ծանրացնում են հարկային լուծն ու կրօնական հալածանքները Հայաստանում, սակայն յիշատակարաններն են միայն, որ

Սալմաստ եկեղեցիներու քանդումը տեսնելով, Աղթամարի երախտաշատ կաթողիկոսներէն **Զաքարիա կաթողիկոս Մէֆէնտիներէն**⁵⁸ (1296-1336 թթ.) 1335 թուականին անձամբ կ'այցելէ Պաղտատ եւ դիմելով Պաղտատի իշխան Մուսին՝ շատ դժուարութեամբ կը յաջողի հայերուն դէմ սաստկացած հալածանքները դադրեցնել եւ եկեղեցիներու քանդումի որոշումը խափանել⁵⁹:

- Մովսէս եպսկ. բնիկ սինեցի է: Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրուած է եւ օծուած 1629 թ.: Կաթողիկոսական գահակալութիւնը կարճ տեւած, սակայն խիստ բեղմնաւոր շրջան մը ունեցած է 1629-1632 թթ.: Ան դասուած է եկեղեցոյ սուրբերու շարքին⁶⁰:

Մովսէս եպիսկոպոսի պաշտօնավարութեան ընթացքին՝ «...սահուղողի ու բռնութեանց օրեր էին գաւառներու մէջ, զի կուսակալներ եւ դատաւորներ ուզածնին ընելու ազատութիւն գտած էին: Յատուկ զրկումներու առիթ կ'ընծայէր եւս այն հրամանը, որով արգիլուած էր իսլամ չեղողներուն խոյր կամ թակեղ գործածել, եւ պարտադրեալ սեւա գոյակ պիտի դնէին զլուխնին...»⁶¹:

Իսկ Տ. Մովսէս եպիսկոպոսի Պաղտատ այցելութեան մասին «Ազգապատում»ին մէջ կը կարդանք հետեւեալ տողերը:

«...«Մովսէսի ձեռնակներ»ի մէջ կը կարդանք. Մովսէս կը շարունակէր իր առանձնական բայց միանգամայն գործունեայ կեանքը վարել Ս.Անանիայի վանքին մէջ: 1625 թ. օր մը այնտեղ իրեն կը հանդիպին, Բայինդուր բէկ անուն պալատական մը (Շահ Ապպասի պալատէն), որ Երեւան եկած էր պաշտօնով, եւ Երեւանի կուսակալ Ամիրզունայի հետ, ի զբօսանս ելեալ շրջէին: Հանդիպե-

հարուստ տունակներով պարզում են աշխատաւոր ժողովրդի կրած տառապանքների ծանրութիւնը այդ ժամանակ...»: Իսկ Խարպաւնդըի ժամանակ մէկ այլ յիշատակագիր կը նշէ. «... Առաքեաց դանն Ղարբաւնդա ընդ ամենայն երիւր իշխանութեան իւրոյ դնել նշան խայտառակութեան քրիստոնէից եւ հարկ առնուլ ըստ մարդարուի Խ. (40) արծաթո մինչ ի Ժ. (10) ըստ կարի... եւայլն»: (Հայերէն Ձեռագրերի Յիշատակարաններ ԺԴ Դար, Մասն Ա, 1301-1325 թթ. Կազմողներ՝ Լ. Խաչիկեան, Ա. Մաթեոսեան, Ա. Ղազարեան, Երեւան 2018, էջ XVI - XVII):

⁵⁸ Զաքարիա Մէֆէնտիներէն Հայաստանեայց Առաքելական եկեղեցիին հակաթոռ Աղթամարի կաթողիկոսութեան վեցերորդ կաթողիկոսը:

⁵⁹ Սլլօյաձեան, Պատմութիւն Հայ Գաղթականութեան, Բ. Հատոր, էջ 399:

⁶⁰ www.gahana.am Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցի, Արարատեան Հայրապետական Թեմ: Այցելութիւն կայքին՝ 03-02-2020:

⁶¹ Օրմանեան, նշ. աշխ., պարբերութիւն 1651:

ցան Մովսէսին, որ հիւրերը պատուելու համար եօթնական հատ սպիտակ մոմ նուէր ներկայացուց: Բայինդուր հիացած մնաց մոմերու ճերմակութեան վրայ, որ անծանօթ էր այն կողմերը, եւ որուն արհեստը Մովսէս սորված էր Երուսաղէմ եղած ատենը:

Բայինդուր իր պաշտօնը լրացնելով, Շահ Ապպասին դարձած ատեն մոմերը անոր ներկայացուց... Շահ Ապպաս իսկոյն Ամիրգունային կը գրէ, որ Մովսէս եպիսկոպոսը իրեն դրկէ, ինչ որ գործադրուեցաւ, եւ Մովսէս մինչեւ Պաղտատ կ'առաքուի, ուր կը գտնուէր Շահ Ապպաս»:⁶²

Թագաւորի հրամանով Մովսէս եպիսկոպոսը Սպահան կը դրկուի, որպէսզի արհեստը սորվեցնէ տեղացիներուն: «...Ժամանակ մը մնալէ եւ արհեստը սորվեցնելէն ետք, Ազգապատում կը շարունակէ. Խօջայ Նազարի միջնորդութեամբ ներկայացան Շահ Ապպասի... Շահ Ապպաս յոյժ գուարճացաւ եւ մոմերը ի ձեռս առեալ զբօսնոյր, եւ որովհետեւ Աստուածայայտնութեան տօնը մօտ էր, Խօջայ Նազարի յանձնարարեց, որ Մովսէս մեծաւ հանդիսի պատրաստէ Ֆահրապատի⁶³ եկեղեցին, ուր ինքն ալ ներկայ պիտի ըլլայ...»:⁶⁴ Իրօք ալ Ծննդեան օրը Շահը կ'երթայ եկեղեցի, Մովսէս եպիսկոպոսի յատկապէս պատրաստած մարդաչափ երկու մոմերը տեսնելով կը զարմանայ: Ազգապատում կը շարունակէ. «...Շահ Ապպաս չափազանց գոհ մնաց, երբ կ'ուզէր դրամով կամ կալուածով վարձատրել, Խօջայ Նազար⁶⁵ դիտել տուաւ, որ Մովսէս զաշխարհաւ եւ զընչիւք նորա արարեալ է, եւ թելադրեց անոր տալ զլուսարարութիւն Մուրբ Էջմիածնի թագաւորական նոմոսի»:⁶⁶ Մովսէս եպիսկոպոս լուսարարապետ նշանակուեցաւ 1627 թ.: Մեծ աշխատանք տարաւ Էջմիածինը բարուք վիճակի մը բերելու:

Վերջ ի վերջոյ Մովսէս «գիչու ընդհանուր թախանձանքին եւ 1629 թ. Յունուար 13-ին, Ծննդեան ութօրեքին, երեքշաբթի օր, օծ-

⁶² Օրմանեան, նշ. աշխ., պարբերութիւն 1644:

⁶³ Ֆահրապատ Շահ Ապպասի ձմերոցի վայրը, կը գտնուի համանուն գետի ափին, Թեհրանէն 400 քիլոմէթր դէպի հիւսիս եւ Ասթրաբադէն (ներկայիս Գորգան) արեւմուտք քանի մը մղոն հեռաւորութեան վրայ:

⁶⁴ Օրմանեան, նշ. աշխ., պարբերութիւն 1644:

⁶⁵ Խոջա Նազար Ջուղայի մեծ եւ առաջին իշխանապետ (Նոր Ջուղա Ազգային Առաջնորդարան, Սպահանի Հայոց թեմ, 25 Հոկտեմբեր 2012, տե՛ս www.norjughai.ir: Այցելութիւն կայքին՝ 03-02-2020:

⁶⁶ Օրմանեան, նշ. աշխ., պարբերութիւն 1644:

մամբ ամենասուրբ Հոգւոյն Աստուծոյ օծաւ Հայրապետ Ամենայն ազինս Հայոց»:⁶⁷

Պատմութեան մէջ ծանօթ է որպէս Մովսէս Գ. Տաթեւացի կաթողիկոս ամենայն Հայոց:

VII դարուն Մերձաւոր Արեւելքի մէջ այնպիսի աշխարհացունց դէպք մը պատահեցաւ, որ պիտի սարսէր տարածաշրջանի մէջ բնակող բոլոր ժողովուրդներուն կեանքը եւ խորապէս ազդէր անոնց վրայ. ասիկա իսլամութեան ծնունդն էր եւ արաբական հսկայածաւալ կայսրութեան ստեղծումը:

Երբ Մուհամմետ մարգարէն մահացաւ (632 թ.) արաբները տակաւին Արաբիոյ սահմաններէն դուրս չէին եկած: Իր յաջորդները՝ Աբու Պէքիր Էլ-Սըդդիկ, առաջին խալիֆան եւ Օմար իբն Էլ-Խատտաբ՝ երկրորդ խալիֆան, «նոր կրօնը» տարածելու եւ արտահանելու իրական, անմիջական կազմակերպիչները եւ կայծակնային յաջողութիւններն իրականացողները եղան: Այս երկու խալիֆաներուն ժամանակաշրջանին, օգտուելով արտաքին քաղաքական բարենպաստ պայմաններէն, արաբները յաջողեցան տիրել ամբողջ Արեւելքին: Այսպէս, Բիւզանդիոնը եւ Մասանեանները տկարացած էին՝ երկարատեւ կռիւներու ընթացքին. Իսկ Սուրիոյ եւ Եգիպտոսի միաբնակ քրիստոնէաները դժգոհ էին Բիւզանդիոնի դաւանական հալածանքներէն: Իրանի մէջ նոյնիսկ «ամենագոր» մազդէական կրօնն ալ տկարացած էր Մանիի դաւանանքին տարածումով⁶⁸: Հետեւաբար, քաղաքական եւ ռազմական ասպա-

⁶⁷ Օրմանեան, պարբերութիւն 1646:

⁶⁸ Մասանեաններու արքունիքին մէջ կը գործէին կրօնական երկու նշանաւոր գործիչներ՝ Կարտիրը եւ Մանին: Վերջինս հիմնադիրն է «տիեզերական կրօնի» մանիքեականութեան: Մակայն, ան հալածուեցաւ Կարտիրի եւ անոր հովանաւորող Շապուհ Ա.ի ու Հորմիզդ Ա.ի կողմէն: Այս աղանդը կը ներկայացնէր զրադաշտական եւ քրիստոնէութեան սկզբունքներէն շաղախուած վարդապետութիւն մը, որ հիմնուած է 4-րդ դարուն եւ այն ժամանակ ալ մուտք գործեց Հայաստան, ուր անոր համար կար նպաստաւոր հող, քանի որ հայութիւնը դեռ բոլորովին չէր լքած հեթանոսական կրօնը: Մանիքեականութիւնը կը մերժէր եկեղեցական խորհուրդները, ազատութիւն կու տար սեռական յարաբերութիւններու վերաբերմամբ եւ առհասարակ կը ներկայացնէր ազատ մտածողութիւնը իբրեւ հակադրութիւն չափազանց զարգացող եկեղեցական կանոնագրուած հայեացքներ (Տե՛ս Լեօ, Երկերի Ժողովածու, հատոր 2, Երեւան 1967, էջ 61: Տե՛ս նաեւ Հայ Ժողովրդի Պատմութիւն II հատոր, Երեւան 1984, էջ 53):

րեզը բաց էր եւ նպատակայարմար այն մոլեռանդութեան առջեւ, որ կը ներկայացնէր արաբական միացեալ ուժերը: 634 թուականին տեղի ունեցաւ Եարմուրի ճակատամարտը, որուն հետեւանքով բիզանդական կայսրութիւնը կորսնցուց Սուրիան, Պաղեստինը եւ Եգիպտոսը: Իսկ 637 թ. Կադիսիէի⁶⁹ ճակատամարտին Սասանեաններու լաւագոյն զօրավար Ռուստամը ջախջախելէն ետք, արաբական իշխանութիւնը փաստացիօրէն տէրը դարձաւ ամբողջ տարածաշրջանին:

661 թուականէն մինչեւ 750 թուական, արաբական եւ իսլամական աշխարհի կեդրոնը Մէքէն տեղափոխուեցաւ Դամասկոս, ուր հաստատուած էր Օմայեան խալիֆայութիւնը: Իսկ 750 թուականին իսլամութեան եւ արաբական աշխարհի կեդրոնը Պաղեստատ փոխադրուեցաւ, ուր հաստատուեցաւ խալիֆաներու նոր հարստութիւն մը՝ Ապպասեաններու խալիֆայութիւնը,⁷⁰ որոնք Օմայաներու ազգականներն էին: Այս թուականէն ետք, արաբական կայսրութիւնը հասաւ իր ծաղկումի գագաթնակէտին բոլոր առումներով թէ՛ քաղաքականապէս եւ թէ՛ գիտական ու մշակութային ոլորտներուն մէջ⁷¹:

Այսպէս, Ապպասեան խալիֆայութիւնը Միջագետքի մէջ հիմնուեցաւ 750 թ. եւ գոյատեւեց մինչեւ 1065 թ., երբ այս շրջանը նուաճուեցաւ սելճուկներուն կողմէ, իսկ վերջնականապէս տապալեցաւ մոնկոլներու արշաւանքներուն հետեւանքով 1258 թուականին: Մոնկոլներու արշաւանքը անսահման եւ անդարձ հետեւանքներ ունեցաւ ոչ միայն Պաղեստատի դարաւոր մշակութային գանձարանի կողոպուտով, այլ իր ջրաբաշխական սքանչելի համակարգի քանդումով, որ Միջագետքը պարտէզի էր վերածած. աղէտ մը, որ երբեք չդարմանուեցաւ⁷²:

⁶⁹ Կադիսիէը քաղաքը կը գտնուի Պաղեստատի հարաւը, Եփրատ գետի հովիտին մէջ:

⁷⁰ Այս խալիֆայութեան հիմնադիր Ապու Ապպաս Էլ-Մաֆֆահի անունով:

⁷¹ Այս քաղաքակրթութիւնը ի յայտ եկաւ Պաղեստատի մէջ, որուն փայլը թէեւ աննման եղաւ, բայց եւ այնպէս պէտք չէ մոռնալ ասոր աղբիւրները: Այսպէս, Օմայաները Դամասկոսի մէջ ժառանգեցին բիզանդական եւ սուրիական հին քաղաքակրթութիւնը: Իսկ Ապպասեանները մեծապէս ազդուած էին պարսկական հին քաղաքակրթութենէն (տե՛ս Պաստրմաճեան 2., Հայոց Պատմութիւն, Ա. Հատոր, Պէրուք 1954, էջ 154-155. ֆրանսերէնէ թարգմանեց Սուշէղ Իշխան):

⁷² محمد ابن عبد الله ابن بطوطة ، رحلات ابن بطوطة – تحفة الانتظار في غرائب الامصار وعجائب الاسفار.

Այս խալիֆայութեան շրջանին Իրաք, հայրենի երկրէն գաղթականական նոր հոսանքներ չեկան եւ աստիճանաբար նուազեցան, քանզի արաբական այս շրջաններուն մէջ ապրող հայերը մասնաւորապէս վաճառականներ էին, եթէ սոսկ փերեզակներ չէին: Շատ հազուադիւտ կերպով եւ պատահաբար ասոնցմէ ոմանց յիշատակութիւնը կայ, միւսները բոլորովին մոռցուած են⁷³: Կարգ մը պատմաբաններ կը տարակուսին, որ Ապպասեան խալիֆայութեան շրջանին, քրիստոնէայ հայերը Միջագետքի հողին վրայ, խալիֆաներու անմիջական տիրապետութեան շրջանին կրցած ըլլան ապրիլ, բացի անոնցմէ՝ որոնք պաշտօնի բերումով եւ կալանաւորի հանգամանքով գտնուած են Սամառա ու Պաղտատ: Ասոնք, բնականաբար, մնայուն բնակութիւն չեն հաստատած: Հետեւաբար, հնարաւոր չէր, որ հայերը այս շրջանին կրօնա-եկեղեցական կազմակերպութիւն ունենային: Սակայն սխալ է ըսել, թէ բացարձակապէս հայեր չկային արաբական երկիրներուն մէջ: Արաբները (յիշեալ ժամանակաշրջանին) իրենց հպատակներու կրօնքին, նիստուկացին եւ մանաւանդ տնտեսական մարզերուն մէջ ձեռք բերած յաջողութիւններուն հակառակ չէին, միայն չէին վստահիր ոչ-իսլամներուն, զինուորական եւ վարչական պաշտօններ, զանոնք իսլամներու մենաշնորհը նկատելով:

Այս պատճառով պատմութիւնը այնքան քիչ յիշատակութիւնը ունի արաբական նուաճման տակ եղած երկիրներուն մէջ

Յայտնի մարդկացի արաբ գիտնական-ճանապարհորդ՝ Մուհամմդ Իբն-Աբդըլլահ Իբն-Բատուտա (1304-1368 կամ 1369) իր յայտնի աշխատութեան մէջ (Իբն Բատուտայի ուղեւորութիւնները) կը նկարագրէ իր բազմաթիւ ուղեւորութիւններուն մասին աշխարհի գանազան երկիրներ, Աերառեալ Միջագետքի տարբեր բնակավայրերուն աւերակներու վերածուած վիճակը: Մոնկոլները արեցին Միջագետքի ռոռզման համակարգը, որ պատճառ դարձաւ հողերու աղակալման, այրեցին Մա'մուն խալիֆայի հիմնած (830 թ.) «Իմաստութեան Տուն» دار الحکمة (Դառ էլ-հիքմա) գրադարանը, ուր կը պահուէին անգին գիտական ձեռագիրներ: Այրուեցան շքեղաշուք պալատները, մզկիթները (քանզի մոնկոլները տակաւին իսլամութեան չէին յարած), ինչպէս նաեւ գրադարաններն ու հիւանդանոցները: Շուլաուի 150 հազարանոց մոնկոլական զօրքին միացան նաեւ 50 հազարէն աւելի հայկական ուժեր: (Հէթում Ա. Կիլիկիոյ թագաւորի մոնկոլներուն հետ կնքած դաշինքի համաձայն 1254 թ. Քարակորումի մէջ):

⁷³ Ալպոյաճեան, Պատմութիւն Հայ Գաղթականութեան, հատոր Բ., Գահիրէ 1955, էջ 392-393:

ակնառու հայ դեմքերու, թէեւ կան կարճ ակնարկութիւններ հայերու վերաբերեալ. «...Հայեր կարեւոր դերակատարութիւն ստանձնեցին Պաղտատի մէջ եւ ընդհանուր առմամբ, խալիֆայութեան կազմին մէջ՝ տալով բժիշկներ, դեղագործներ, վաճառականներ եւ արհեստաւորներ: Միւս կողմէ տեղացի հարուստներ եւ ազնուականներ, հայեր ունէին իրենց տրամադրութեան տակ իբրեւ սեղանաւորներ եւ մատակարարներ»⁷⁴: (Յետագային, օսմանցիներն ալ ունեցած են): Այդ հայերու հետքը կորսուած է դարերու խաւարին մէջ⁷⁵:

Արաբական մատենագրութեան մէջ կը հանդիպինք կցկտուր տեղեկութիւններու մաս մը հայերու մասին, որոնք տարբեր նպատակներ հետապնդելով՝ եկած են Միջագետք, ընդունած կրօնը, որոնցմէ ոմանք մտած են արաբական բանակին մէջ, իսկ ուրիշներ կարեւոր պետական պաշտօններու տիրացած⁷⁶: Ասոնք, Միջագետքի հայ գաղութին հետ առնչութիւն չունին⁷⁷:

⁷⁴ Մանճիկեան Յ., Իրաքի Հայ Գաղութը, «Ազդակ», Պէյրութ, 23 Յունիս 1998:

⁷⁵ Գեորգեան, նշ. աշխ.. Էջ 403:

⁷⁶ Ինչպէս օրինակ՝ հայագգի իշխան Եահիա Աբու Էլ-Հասան Ալի Իբն Եահիա Էլ-Էրմընի (841-861 թթ.) Ապպասեաններու ժամանակաշրջանին: Յովհաննէս Կաթողիկոս Դրասխանակերտցի կը նշէ, որ «...Ալի Արմանի անունով մի ոստիկան՝ ամիրապետի հրամանով նրան (Աշոտին) կը կարգէ հայոց իշխանաց իշխան՝ զարդարելով բազում զգեստներով եւ արքունական պատուով...» (Յովհաննէս Դրասխանակերտցի, նշ. աշխ., էջ 137):

⁷⁷ Աբրահամեան, նշ. աշխ., էջ 38: Այս կապակցութեամբ, թերեւս եզակի դէպքերէն է Բըղըր Էլ-Դին Լուլու (Արաբական աղբիւրներու մէջ կը յիշուի որպէս Ողորմած թագաւոր Սուլթան Բըղըր Էլ-Դին Լուլու Էլ-Էրմընի, որ վաղ տարիքէն գերեվարուած էր Հայաստանէն դերձակի մը կողմէն: Այնուհետեւ, իր ճարպիկութեան եւ արտաքին գեղեցկութեան համար զայն կը գնէ Նուր Էլ-Դին Արսլան շահը: Իր արտակարգ իմաստութեամբ եւ խելամտութեամբ կը գրաւէ շահին համակրանքը, որ զինք կը կարգէ նախ իր պալատին վերակացու, ապա իր մահէն ետք՝ Սուսուլի սուլթան: Կը մահանայ 1259 թ.:

Երկրորդ պատմական դեմքը Բետր Էլ-Ճեմալի ստրուկն է, որու մասին կը նշենք հետեւեալ տեղեկութիւնները: Նշուած անձնաւորութիւնը իբր ստրուկ կը վաճառուի Դամասկոսի մէջ իշխան Ճեմալ Էտ-Տաուկի: Վերջինիս հովանիին տակ կը մեծնայ ու զարգացում ստանալէ յետոյ, պալատին մէջ իրեն վստահուած պաշտօնները հմտութեամբ կը կատարէ, բացառիկ տաղանդ յայտնաբերելով: Պատերազմական գետնի վրայ զուտ հայերէ բաղկացած զօրաբաժին մը կազմակերպելով Ֆաթիմեաններուն դէմ ասպարէզ կարդացող՝ Մելիք Շահի (Մելճուկեան Իրանի Պաղտատի ճիւղ) բանակը յաղթութեան կ'առաջնորդէ: Յետագային, նաեւ, սելճուկներու Գահիրէի վրայ յարձակումը,

Այս կապակցութեամբ հայ մատենագրութեան մէջ բազմաթիւ տեղեկութիւններ կան հայերու գոյութեան մասին Միջագետքի մէջ: Այսպէս, 640 թ., երբ արաբները գրաւեցին Դուինը, այնտեղի բնակչութենէն 35000 հոգի գերի տարին Ասորեստան⁷⁸: Իսկ Աբուսեթ ոստիկանը 850 թ. ձերբակալելով իշխան Բագրատը, Տարօնի բնակչութիւնը գերի տարած եւ վաճառքի հանած է զանոնք Սուրիոյ մէջ⁷⁹:

Հայ բնակչութեան ուրիշ մաս մը, ազգութեամբ թուրք Բուղա ոստիկանը 852 թ. գերի տարած է Պաղտատ⁸⁰: Վերջինս, որ չորս տարիէ ի վեր Հայաստանը աւերելու եւ քանդելու գործին կը հետեւեր, նենգութեամբ ձերբակալած է հայ մեծամեծ իշխանները եւ զանոնք կալանատը դրկած է Սամատա⁸¹: Այս գերեվարութեան մասին հայ պատմիչներ կը նշեն, որ ասոնք Միջագետք կը տարուէին ոչ թէ զաղթօճախ ստեղծելու, ինչպէս պիտի ընէր Շահ Ապպաս յետագային, այլ «վաճառակոտ անելու», այսինքն՝ շուկաներուն մէջ որպէս ստրուկ վաճառելու նպատակով: Կը յիշուի նաեւ, որ Բուղա, Արծրունեաց Յովհաննէս էպիսկոպոսը բանտարկած եւ այնուհետեւ գերի տարած է Պաղտատ հաւատքը չուրանալուն պատճառով: Յետագային, Աշոտ Ա.ի ժամանակ ազատուելով՝ վերադարձած է Հայաստան⁸²:

դարձեալ Բետր Էլ-Ճեմալի՝ հայկական զօրագունդերով պարտութեան կը մատնէ: Կը նշանակուի բանակի ընդհանուր հրամանատար, 1094 թ., 85 տարեկանին կը կնքէ մահկանացուն, եւ իր կտակին համաձայն մարմինը կ'ամփոփուի հայոց եկեղեցոյ մէջ (տե՛ս Աստարճեան Գ. Տօթթ., Ընդարձակ Ընդհանուր Արաբական Պատմութիւն, էջ 423-425):

⁷⁸ Մեբէոս, նշ. աշխ., էջ 10:

⁷⁹ Թովմա Արծրունի եւ Անանուն, նշ. աշխ., էջ 135:

⁸⁰ Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից, Երեւան 1988, էջ 333:

⁸¹ Օրմանեան, նշ. աշխ., պարբերութիւն 645:

⁸² Աճառեան Հ., Անձնանուններու Բառարան, հատոր Գ., էջ 557, թիւ 86:

Բ- Միջագետք (Իրաք). Հայաշատ Բնակավայրեր

(Միջին դարերն մինչև XX դար)

Պաղտատ Իրաքի ամենահայաշատ քաղաքն է,⁸³ եւ հանդիսանալով պետութեան մայրաքաղաքը, տարբեր ժամանակաշրջաններուն պատմական եւ քաղաքական վերիվայրումներով լի, յոյժ կարեւոր անցեալ մը ունի: Այս քաղաքը կը գտնուի ջրառատ Տիգրիս գետի երկու ափերուն, անապատային ընդարձակ տարածութեան վրայ սփռուած: Հիմնադրուած է 762 թ. խալիֆա Աբու Ջա'աֆըռ Էլ-Մանսուրի⁸⁴ կողմէն եւ իր ժամանակին այս հիասքանչ քաղաքին շինութեան համար, վերջինս դիմած է տարբեր ազգութեան պատկանող մասնագետներուն մայրաքաղաքի համար ամենայարմար տեղը ճշդորոշելու համար⁸⁵: Միջնադարեան ժամանակաշրջանին, Ապպասեան խալիֆայութեան ժամանակ, Պաղտատ կը դառնայ իսլամութեան կեդրոն եւ աշխարհի մեծագոյն քաղաքը 1,200,000 բնակչութեամբ⁸⁶:

Թէեւ Պաղտատի մէջ խոր անցեալին կազմակերպուած հայ գաղութի մը մասին հաւաստի տեղեկութիւններ գոյութիւն չունին, այնուամենայնիւ, իրաքցի պատմագետ Ռուֆայէլ Պապու Ըսհակ⁸⁷ կը գրէ, թէ խալիֆա Մահտաի որդին իշխան Հարուն Էլ-Ռաշիտ 779 թ. Հայաստանի սահմանակից Իսքէնտերունի ծոցի հիւսիս արեւելեան կողմը գտնուող Սմալու քաղաքէն, գերեվարած է մեծ թիւով հայեր եւ զանոնք բնակեցուցած է Պաղտատի արեւելեան մասի Ռըսաֆայի Շամմասիլէի թաղը (այժմեան Սլէխ թաղամասը):

Ասոնք ի յիշատակ իրենց հայրենի երկրին, Շամմասիլէի մէջ հիմնադրեցին վանք մը, զոր կոչեցին Սմալու վանք, որ նշանաւոր էր իր ընդարձակ բակով, բարձր գմբէթներով եւ գեղեցիկ զարդարանդակներով: Կը յիշուի նաեւ, թէ Ապա Եէշու անունով հոգեւո-

⁸³ Երբեմն Պասրա քաղաքը աւելի հայաշատ եղած է, ինչպէս XVII-XVIII դարերուն:

⁸⁴ Ապպասեան խալիֆայութեան հիմնադիր՝ Ապու Էլ-Ապպաս Էլ-Մաֆֆահի եղբայրն ու յաջորդը:

⁸⁵ Soppe. الدكتور جواد كاظم البيضاوي، نفس المصدر صفحة 28. 28: 28:

⁸⁶ Melkonian.V., An Historical Glimpse of The Armenians in Iraq from Ancient Times to Present Days, Times Press, 1957 Basra.

⁸⁷ 129-128 صفحة - تاريخ نصارى بغداد - روفائيل بابو اسحاق - (Ռուֆայէլ Բաբու Բսհակ, Պաղտատի քրիստոնէաներու պատմութիւն, Պաղտատ 1948, էջ 128-129):

րական մը, մահացած 987 թ., վանքի կառուցումէն մօտ երկու դար ետք, վերանորոգած է գայն: Պապու Ըսհակ կը շարունակէ. արաբ պատմագետ Իպն Ապտուլ Հակ (մահացած 1338 թ.) կը վկայէ՝ XIV դարու սկիզբները այս վանքը քանդուած եւ հետքն իսկ չէր մնացած⁸⁸:

Ըստ երեւոյթին, այս հայերը երկու դար վերջ ցրուած, ձուլուած տեղացիներուն հետ կամ գաղթած են այլ երկիրներ, քանզի այսօր այդ հայերէն որեւէ հետք չէ մնացած: Թերեւս, արաբ խալիֆայութեան շրջանին քրիստոնէայ կրօնքը արգելք հանդիսացած էր անոնց պետութեան մէջ ծառայելու, ըլլայ իբրեւ քաղաքացի կամ իբրեւ զինուորական: Այս խալիֆայութեան ատեն, ինչպէս վերը նշեցինք, տարակուսելի է, որ հայերը իբրեւ քրիստոնէայ կրցած ըլլան ապրիլ:⁸⁹

Արիաւիրքներու նոր ալիք մը կը հարուածէ այս պատմական քաղաքը, երբ մոնկոլներ 1258 թ. կը գրաւեն գայն եւ կ'ենթարկեն աննկարագրելի կործանումի: Անապատի կը վերածուի այս շքեղ քաղաքը, ուր դարերու ընթացքին ծաղկած էր արաբական զիտութիւնն ու լեզուն եւ վերջապէս արաբական մշակոյթը իր տարբեր ճիւղերով:

Այնուամենայնիւ, հայ մատենագրութեան մէջ յիշուած տեղեկութիւններէն ի յայտ կու գայ, որ մոնկոլական արշաւանքի ընթացքին Պաղտատի «գաղթօճախը» համեմատաբար քիչ տուժած է: Կիրակոս Գանձակեցին կը պատմէ «...Բայց կիսն Հուլաուին՝ ասագ խաթունն, քրիստոնէայ էր, որում անունն էր Տօղուգ խաթուն: Սա խնայեայց ի քրիստոնէայսն, որք էին ի Բաղդատ, նեստորական աղանդով, եւ թէ այլ ազգաց, եւ խնդրեաց յառնէ իւրմէ ոչ սպանանել զնոսա: Եւ եթող զնոսա ընչիւք եւ ստացուածովք...»:⁹⁰

Պաղտատի հայ գաղութը օգտուած է այս պարագայէն եւ փայլուն դիրք ունեցող հայ վաճառականներ յայտնուած են: Հայերը 1354 թ. «...ի մայրաքաղաք Բաղդադու...» ունէին եպիսկոպոսու-

⁸⁸ Նոյն:

⁸⁹ Խալաթեանց Բ., Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին, Վիեննա, 1919, էջ 69: Ըստ արաբ մատենագիր Բելազուրիի՝ իսլամ զօրավարները որեւէ (քրիստոնէայ) երկիր նուաճելէն ետք, պայման կը դնէին «Էլ-Դիմմա» բնակչութեան հետ նոր եկեղեցիներ չկառուցել, տախտակներ չ'օգտագործել քրիստոնէայ հաւատացեալները աղօթքի հրաւիրելու եւայլն:

⁹⁰ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երեւան 1961, էջ 382:

թին՝ իրեն հետ ունենալով քահանաներ: Այս նպաստաւոր պայմաններուն տակ Իրաքի մէջ նոր գաղթօճախներ կը սկսին յառաջանալ Պաղտատի եւ Պասրայի մէջ:⁹¹

Պատմական իրողութիւն է, որ մոնկոլներ մինչ իսլամութեան յարիւր, իրենց տիրապետութիւնը հաստատելէն ետք, մեղմութեամբ կը վարուէին իրենց հպատակներուն հետ եւ կրօնական հալածանք գրեթէ չէին գործածեր: Ասկէ օգտուած են քրիստոնէաներ, որոնք տուեալ տիրապետութեան տակ շնորհ գտած եւ տարածուած են: Մոնկոլ խաներուն մօտ կ'ապրէին նեստորական քահանաներ, ինչպէս նաեւ հայ, ասորի եւ յոյն եկեղեցականներ: Վերջիններս ազատօրէն կը քարոզէին եւ նոյնիսկ կը յաջողէին որոշ թիւով հաւատացեալներ շահիլ մոնկոլներէն:

XIV դարուն (1354 թ.) Սուլթանիյէի մէջ (քաղաք Պարսկաստանի մէջ) գրուած ձեռագիր յիշատակարանին մէջ յիշուած է, որ Պաղտատի համայնքի հոգեւոր առաջնորդն էր՝ Սարգիս, որպէս քորեպիսկոպոս Պաղտատի: Կը կարծուի որ Իրաքի մէջ այդ ժամանակահատուածին երկու զուգահեռ թեմեր գոյութիւն ունեցած են Պաղտատի եւ Պասրայի մէջ: («...Արդ, յամի ծննդեան Փրկչին մերոյ՝ (ՌՅՄԴ)-ի եւ ի թուականութեանս Հայոց ՊԳ.(1354), եւ յամսեանն Սեպտեմբերի ԻԵ. (25) եւ ի մարերի Է. (7), ի մայրաքաղաքս Բաղտատ, ի յաշխարհակալ բռնաւորութեան մեծ Շէխ Հասանի, եւ ի հայրապետութեան ամենայն Հայոց տէր Մխիթարի, եւ ի բորեպիսկոպոսութիւն այսմ նահանգի տէր Սարգսի, Եփրեմ քահանայ որդի հարազատ Գրիգոր քահանայի՝ ստացողի գրոցս, պարգեւեաց զգիրքս Աստուածաշունչ ինքնայօժար կամօք սուրբ Նշանին Վարազայ եւ նորին եկեղեցոյն՝ տուրք մշտնջենաւոր եւ յաւիտենական...»)⁹²:

Նոյն դարաշրջանին Մուսուլ քաղաքի եւ յարակից շրջաններուն մէջ հայ բնակչութեան մասին գոյութիւն ունին որոշ տուեալներ: 1352 թ. այս քաղաքին մէջ գրուած հայկական ձեռագիր մը կը փաստէ հայկական համայնքի մը գոյութեան մասին: Սամուէլ Անեցիի ժամանակագրութեան շարունակողը իր դժգոհութիւնն է

⁹¹ Ալլոյաճեան, Պատմութիւն Հայ Գաղթականութեան, հատոր 2, էջ 312 եւ 397:

⁹² ԺԴ դարի Հայերէն Ձեռագրերի Յիշատակարաններ, կազմեց Լ.Ա. Խաչիկեան, էջ 406 (Աստուածաշունչ, Մատենադարան Հայկ. Թարգմ., էջ 145-146: Ստացող Եփրեմ, վայր՝ Սուլտանիա:)

յայտնած, որ 1336 թ. քանդած են Մուսուլի քրիստոնեական եկեղեցիները, որոնց մէջ, անկասկած, եղած է նաեւ հայկական եկեղեցի, ուր շատ հաւանական է, որ գրուած ըլլար վերոյիշեալ հայկական ձեռագիրը:

Այս դարուն (XIV դար) կը յիշուին նաեւ հայ համայնքներու գոյութեան մասին Մուսուլի մօտերը գտնուող Արբելա քաղաքի եւ Քարամլէ գիւղաքաղաքի մէջ⁹³:

Թաթար կամ մոնկոլ հսկայածաւալ պետութիւնը XIV դարուն կը տրոհուի եւ աւատական պզտիկ իշխանութիւններու բաժնուելով, առաւել կամ պակաս կ'ենթարկուի կեդրոնական իշխանութեան: Այս շրջանին Միջագետք ալ կը բաժնուի մէկէ աւելի իշխանութիւններու միջեւ: Հարաւային Հայաստանը եւ հիւսիսային Միջագետքը Գարա Գոյունլուններու տիրապետութեան տակ էր, որ իրականութեան մէջ բազմաթիւ իշխանութիւններու համամիութիւններ էին, առաւել զօրաւոր պետի մը գլխաւորութեամբ: Իսկ Պաղտատի մէջ տակաւին կ'իշխէր Հուլաւուի ընտանիքին ժառանգը:

Այս էր իրավիճակը Միջագետքի մէջ, երբ 1370 թ. պատմութեան թատերաբեմ իջաւ Էօզբէր թաթարներու առաջնորդը՝ Լէնկ Թիմուր, որ վայրենի հրոսակախումբի գլուխն անցած Ճենկիզ խանի պետութիւնը վերակազմելու նպատակով՝ գրաւեց Ատրպատականը, Հայաստանը, ինչպէս նաեւ Միջագետքը: 1392 թ. Պաղտատ ինկաւ Լէնկ Թիմուրի տիրապետութեան տակ: Ան գրաւեց նաեւ Պասրան, Մուսուլը, Մերտինը եւայլն: Իրաքի «հայ գաղթավայրը» բնականաբար, զերծ պիտի չմնար այս արհաւիրքներէն եւ հերթական անգամ ջախջախիչ հարուած մը ստացած է Լէնկ Թիմուրի արշաւանքներուն ժամանակ: Ըստ տեղեկութիւններու, Լէնկ Թիմուր Իրաք արշաւած է երկու անգամ՝ 1392 եւ 1401 թուականներուն:

Ռստակէտ գրիչը, 1397 թ. ընդօրինակած ձեռագիր յիշատակարանին մէջ, Լէնկ Թիմուրի առաջին արշաւանքի մասին կը յիշէ, որ Բաբելոնը, Մերդինը, Եդեսիան եւ Ամիդը գրաւելուն «...Չամենեսեան ի սուր սուսերի մաշեաց եւ հրո(վ այր)եաց եւ գոր գերի վարեաց, եւ յորում է արդարութիւն յամենայն ուրեք նուագեալ եւ

⁹³ Տէր Սայէդեան Ն., Պատմական Ակնարկ մը Հայ Կաթողիկէ Հասարակութեան Վրայ յԻրաք, «Աւետիք», Պէյրութ, 1945, էջ 55-61:

անիրաւութիւն յամենայն կողմանց զարացեալ, որ եւ յայս՝ առ ի բազում նեղութիւն եւ չարչարանք կրեցին եկեղեցիք եւ մանկունք նոցին ի հնարից այլասեռոց. գոր Տէր Աստուած յետս ընդդէմ դարձուցանէ եւ կործանեցէ գնոսա եւ զչարութիւն նոցա...»⁹⁴:

Լենկ Թիմուրի երկրորդ՝ 1401 թ. արշաւանքի մասին Ուտանցի գրիչ մը կը կաղորդէ. «Լենկ Թիմուր մեծ կատաղութիւնով եկաւ Մերդին, քարուքանդ ըրաւ, քաղաքը կրկնավար հող դարձուց, բայց բերդը չկարողացաւ առնել»: Այնուհետեւ, քրիստոնէաներէն «շատ գերի եբեր»⁹⁵:

Լենկ Թիմուրի Միջագետք-Իրաք կատարած արշաւանքներու ընթացքին հայկական գաղթօճախները այնքան ոչնչացուած են, որ XV դարի առաջին քառորդին սլաւոնական աղբիւրներու մէջ այս գաղթավայրի գոյութեան մասին որեւէ վկայութիւն չկայ: Սակայն, տեղեկութիւններ կան հայ բնակչութեան գերեվարուելու մասին: Այսպէս, Գրիգոր Ծերենցը, իր 1416 թուակիր չափածոյ յիշատակարանին մէջ կը հաղորդէ, որ Ղարա Եուսուֆը ասպատակած է Ախալցխայի շրջանը եւ 10000 հոգի տեղի հայ բնակիչներէն գերի բերած է Պաղտատ, Մըսըր (Եգիպտոս) եւ Խորասան⁹⁶: Այս գերիները տարած է արեւելեան շուկաներուն մէջ վաճառքի հանելու, ուր ասոնք ձուլուած եւ անյայտացած են:

Թովմա Մեծոփեցին կը յիշատակէ, որ Լենկ Թիմուրի մահէն ետք 1405 թ. իր կողմէն ընկճուած բոլոր իշխանութիւնները կը վերակազմուին: Ասոնցմէ ամենագլխաւորն էր Գարա-Գոյունլուններու պետը Եուսուֆ, որ վերականգնեց իր պետութիւնը եւ զրաւեց նաեւ Միջագետքի մէկ կարեւոր մասը: Ազ-Գոյունլու Ուզուն Հասանը (1467-1478 թթ.) կը միացնէ Գարա-Գոյունլուններու եւ Ազ-Գոյունլուններու երկու իշխանութիւնները եւ բոլոր Պարսկաստանն ալ հպատակեցնելով՝ կը վերակազմէ մեծ կայսրութիւնը⁹⁷:

Մօտաւորապէս հարիւրամեայ այս շրջանին, երբ բոլոր Միջագետքը պատերազմական թատերաբեմի վերածուած էր, չի գիտ-

⁹⁴ ԺԴ Դարի Հայերէն Ձեռագիր Յիշատակարաններ, Նիւթեր Հայ Ժողովուրդի Պատմութեան, հատոր 2., կազմ. Լ.Ս. Խաչիկեան, Երեւան, 1950, էջ 618:

⁹⁵ Նոյն:

⁹⁶ ԺԵ Դարի Հայերէն Ձեռագրերի Յիշատակարաններ, Մ. I (1401-1450 թթ.) Լեւոն Ս. Խաչիկեանի յառաջաբանով, էջ 282-285:

⁹⁷ Թովմա Մեծոփեցի, Պատմագրութիւն, աշխատասիրութեամբ Լեւոն Խաչիկեանի, Երեւան, 1999, էջ 127-130:

ցուիր, թէ այս տարածքին գտնուող հայ բնակչութիւնը ինչ եղած է: Ամէն պարագայի ակնյայտ է, որ կարգ մը վայրերու մէջ անոնք անհետացած են, իսկ կարգ մը վայրերուն մէջ ալ այնքան նօսրացած, որ իրենց գոյութիւնն անգամ չեն կրցած պահել:

Պաղտատի հայ գաղթօճախը, Օսմանեան տիրապետութեան ենթարկուելէն ետք կը սկսի կազմակերպուիլ, որուն առաջին արմատները փնտռելու համար հարկ է արձանագրել հետեւեալ պատմական տուեալները.

Ըստ Ա. Դավրիժեցիի⁹⁸ հայեր տարբեր ժամանակներուն քանի մը ալիքներով անցած կամ բռնի գաղթահան եղած են Հայաստանէն Պարսկաստան, ապա մաս մըն ալ անցած են Միջագետք: Յիշատակութեան արժանի է, որ 1604 թ. Շահ Ապպասի կողմէն Նախիջեւանը, Երեւանը, նաև Շիրակը եւ Արեւմտեան Հայաստանի տարածքները (Կարին-Էրզրում, Տարօն, Վասպուրական) ամայացնելէ ետք, գնահատելով հայուն կենսունակութիւնը եւ աշխատասիրութիւնը, բռնի կերպով աւելի քան 300.000 հազար հայեր, հրեաներ եւ այլ դաւանանքի պատկանողներ տեղահան կ'ընէ եւ կը փոխադրէ Սպահան, Պարսկաստան: Բռնագաղթուած հայերու որոշ հատուած մը Ջուղայէն ըլլալով, Սպահանի մօտերը Նոր Ջուղա անունով քաղաք մը կը հիմնեն, ի յիշատակ իրենց հայրենի քաղաքին: Ժամանակի ընթացքին, Շահ Ապպասի օրով, Նոր Ջուղա կ'օժտուի եկեղեցիներով, դպրեւանքով եւ հասարակական կազմակերպութիւններու գործունէութեան համար յարմարաւէտ շինութիւններով:

Շահ Ապպասի յաջորդներուն օրով, Նոր Ջուղայի եւ Համատանի հայ բնակչութիւնը հարստահարութեանց եւ հալածանքներու ենթարկուելուն պատճառով մեծ մասը կը գաղթէ Հնդկաստան, Եւրոպա եւ այլուր Պասրայի վրայով եւ մաս մըն ալ՝ Պաղտատ: Փոքր մաս մըն ալ առ այսօր կը մնայ Նոր Ջուղա՝ պահելով հին Ջուղայի բարբառը եւ սովորոյթները:

Ուրեմն, Միջագետք-Իրաքի բնակչութեան կարեւոր մէկ մասը Պարսկաստանէն գաղթած ըլլալով, մէկ բեկորն է այն զանգուածային բռնագաղթուած ժողովուրդին, զոր պարսից Շահ Ապպաս Հայաստանէն բերած եւ տեղաւորած էր Պարսկաստանի զանազան կողմերը: Հետեւաբար, Համատանի հայութեան այս մասը Պաղ-

⁹⁸ Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, Երեւան 1988, էջ 51-53:

տատ գաղթելով հետը բերած է Հայաստանի բարբառը եւ հայրենի սովորութիւններն ու արանդոյթները: Ապա եկած են Արեւմտահայերը Տիգրանակերտէն, Մղերդէն, Ուրֆայէն, Ատանայէն եւ Իզմիրէն, որոնց գաւառաբարբառները ժամանակի հոլովոյթին ի մի ձուլուելով կազմուած է պաղտատցիներու «բնիկ» բարբառը (պաղտատցիի բարբառը), որ թէեւ միջավայրի ազդեցութեան տակ ենթարկուած է աղաւաղման, այնուամենայնիւ, կը պահէ իր նախկին հնչիւնաբանութիւնը եւ կը համարուի մէկ մասը հայերէնի արեւելեան բարբառին:

Հակառակ գաղութի փոքրաթիւ ըլլալուն, նաեւ հասարակական կազմակերպութիւններու բացակայութեան, «բնիկները», յաջողած են պահել մայրենի լեզուն եւ ազգային ինքնութիւնը այդ կղզիացած վիճակին մէջ:

Գալով բարբառին, լեզուագիտութեան մէջ ան յայտնի է «իրաքահայ բարբառ» անունով, եւ տակաւին սակաւ թիւով «բնիկ» պաղտատցիներ եւ պասրացիներ կը գործածեն զայն: Իսկ Իրաքի մէջ բնակչութիւն հաստատած սղերդցիները, իրենց արաբախօս հանգամանքով կարելի է նկատել որպէս «բնիկներ»⁹⁹:

Ուրիշ յիշատակարան մը եւս շատ հին ձեռագիրի մը կից գրուած, որ է. «Դէպ եղեւ մեզ սրբոյ տառիս/ արեւտաբեր կենաց ճառիս/Պաղտատ եկած անարժանիս/Յովհանիս ծառայիս/ՌՃ հայոց թուիս ԼԷ արելի/ որք պահտահիքդ գմեզ յիշեսջիք/...»¹⁰⁰: Ուրեմն, 1688 թուականին, Պաղտատի մէջ ոչ միայն հայեր կային, այլ եկեղեցական կազմակերպութիւն մըն ալ ունէին, քանզի կար հոն Աւետարան մը, որուն հանդիպած էր Յովհաննէս, որ հաւանաբար եկեղեցական մըն էր¹⁰¹:

Ինչպէս վերը նշուեցաւ, Իրաքի հայ գաղթօճախները կը սկսին բազմանալ XVII դարէն սկսեալ. այս մասին կը նշենք հետեւեալ եւրոպացի ուղեւորներու յիշատակութիւնները:

Անգլիացի ճօրճ Մանուարիսկ XVII դարուն կատարած իր ուղեւորութեան նօթերուն մէջ կը յիշատակէ, որ Պաղտատ քաղա-

⁹⁹ Աճառեան, Հայ Բարբառագիտութիւն, Մոսկուա, 1911, էջ 27:

¹⁰⁰ Թօփճեան Յ. Յակոբ, Յուցակ ձեռագրաց Խաչիկ վարդապետի Դաղեան, Վաղարշապատ, 1898, Ժողովածու Յիշատակարանաց, նկարուց եւ օտարալեզով մագաղաթեայ գրութեանց, էջ 28բ:

¹⁰¹ Ալլայօյաճեան, Իրաքի Հայերը, Երեւան, 2003, էջ 36-37: Տե՛ս նաեւ ներկայ աշխատութեան՝ Ս.Աստուածածին եկեղեցւոյ հիմնադրման պատմականը, էջ 71:

քը մեծ առեւտուրի կեդրոն մըն էր եւ հոն այլ ժողովուրդներուն մէջ կ'ապրէին նաեւ հայեր առանց թուելու անոնց քանակը¹⁰²:

Փետրո թէյշէրա անունով փոքրուկալացի մը, որ Պաղտատ այցելած է 1604 թ., կը գրէ թէ, հայեր կ'ապրէին Պաղտատի մէջ, թէւ արուարձաններուն եւ մօտիկ գիւղերուն մէջն ալ փոքր թիւով հայեր կային¹⁰³:

Իտալացի ուղեւոր մը Փիէթրօ Ղեյլա Վալէ, 1616 թ. եկած է Պաղտատ, հոն ամուսնացած քաղղէացի աղջկայ մը հետ Մաանի անունով, որուն մայրը հայուհի էր եւ մօտէն ծանօթացած հայկական համայնքին: Ան կը վկայէ, որ «...Դիարբէքիրէն եւ Մերդինէն հայ ընտանիքներ եկած են Պաղտատ խոյս տալով Ջալալիներու վտանգէն: Այս հայերը սակայն, ո՛չ եկեղեցի ունէին եւ ո՛չ ալ եկեղեցականներ¹⁰⁴:

Յակոբ Վիլօ լատին վարդապետ մը,¹⁰⁵ կը պատմէ թէ 1723 թ. Օսմանցիներ Համատանը գրաւած են եւ անկէ բաւականաչափ հայեր բերած Պաղտատ: Պաղտատցիներու մէջ այսօր կան ընտանիքներ, որոնք աւանդօրէն գիտեն, թէ իրենց նախնիները եկած են Համատանէն: Պաղտատի հայ գաղութը XVIII դարուն, ընդունելով իր մէջ ստուար թիւով այս համատանցի գաղթականները, կ'ենթարկուէր ժողովրդագրական մեծ փոփոխութիւններու:¹⁰⁶ Այս դարու ութսունական թուականներուն Պաղտատը պատմական Բաբելոնը, որպէս առեւտրական կեդրոն, յաճախ կը յիշուի հայկական յիշատակարաններուն մէջ:

Անգլիացի ճանապարհորդ Ջ.Բ. Վիլսթըտ իր ուղեւորութեան ընթացքին կը նկարագրէ իր տպաւորութիւնները. «...Պաղտատ հանդիպեցայ 1840 թ., որ 120.000 բնակչութիւն ունի, երկու երրորդը խառն ցեղ մը բաղկացած պարսիկներէ, թիւրքերէ եւ արաբներէ՝

¹⁰² Manwaring G., *The Three Brothers or The Travels and Adventures of Sir Anthony and Sir Thomas Sherely, in Persia, Russia, Turkey, Spain etc., with portraits.* London, Printed for Hurst, Robinson, & Co., 90, Cheapside, & S, Pall Mall, and A. Constable & Co. Edinburgh. 1825. pp. 31, 47, 48, 50 and 51. www.wikipedia.George.Manwaring Այցելութիւն կայքին՝ 29-02-2020:

¹⁰³ Գեորգեան Կ., նշ. աշխ., էջ 403:

¹⁰⁴ دير نرسيس صاتيغان البغدادي، تاريخ الارمن الكاثوليك في العراق، المطبعة الكاثوليكية، بيروت 1944، صفحة 4 (Տէր Մայդէան Ն., Իրաքի Հայ Կաթօլիկ Համայնքը, Պէրոսթ, 1944, էջ 4):

¹⁰⁵ Ալպօյաճեան, Իրաքի Հայ Գաղութը. Գարագաշ Հ., Պարսկահայ Տարեցոյց 1930, Թեհրան, 1930, էջ 85:

¹⁰⁶ Նոյն տեղը:

բոլորն ալ «սիննիններ», մնացեալները հրեաներ եւ քրիստոնէաներ... ՀԱՅԵՐ կը կազմէին ամենանկատարելի մասը, յարգուած ամէնքէն, բարգաւաճ եւ հարուստ ցեղ մը իրենց յատկութիւններով եւ ստացուածքով: Մեծամասնութիւնը տնտեսական պաշտօնեաներ էին, որոնց մէջ ամենաբարձր դիրքերու հասածներ կային... թիրքերը չունին այդ ատակութիւնը: Հայեր ունին եպիսկոպոս մը¹⁰⁷ եւ փոքր եկեղեցի մը»¹⁰⁸:

Նոյն հեղինակը 1840 թ. հանդիպած է նաեւ Հիլլա քաղաքը,¹⁰⁹ եւ նոյն աշխատութեան մէջ կը նշէ հետեւեալը. «...Հիլլա քաղաքը ունի 25.000 բնակչութիւն, մեծամասնութիւնը՝ արաբներ: Կային նաեւ հայեր (առանց նշելու թիւ մը – Ս.Օ.), հրեաներ, քրիստոնէաներ, վրացիներ եւ ալպանացիներ, ...վաճառականութիւնը հայերուն եւ հրեաներուն ձեռքն էր...»¹¹⁰:

Վերոյիշեալ քաղաքի (Հիլլա քաղաք) հայերուն ծագումին մասին որոշ տեղեկութիւններ չունինք, սակայն մինչեւ 2000 թ. «բնիկ պաղտատցի» կոչուող ընտանիքներ կային, որոնք այսօր տակաւին մեծ կալուածներ ունին Հիլլայի շրջանին մէջ: Այս ընտանիքներէն էին հետեւեալները. Թաղէտեան,¹¹¹ Մարգարեան, Իսթնտէրեան, Մինասեան¹¹² եւ ուրշներ:

¹⁰⁷ Նշուած անձը Օհանէս արքեպիսկոպոսն էր, որ Նոր Ջուղայի կողմէն նշանակուած էր առաջնորդ Պաղտատի եւ Պասրայի, քանզի Իրաքի թեմը մինչեւ 1847 թ. Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի իրաւասութեան տակ կը գտնուէր: Իսկ ակնարկած եկեղեցին՝ 1639 թ. հիմնուած Ս.Աստուածածին եկեղեցին է, որ բազմիցս վերանորոգուած եւ կանգուն է ցայսօր:

¹⁰⁸ Wellsted J. R., *Travels To The City of Caliphs Along The Shores Of The Persian Gulf And The Mediterranean*, Volume 1, pp. 274-275: Ուրեմն այս շրջանի հայերը, 1831-1835 թթ. ստեղծելի ժանտախտէն ետք, այդքան կարճ ժամանակուայ ընթացքին, 1840 թուականին արդէն վերագտած էին իրենց նախկին բարեկեցիկ վիճակը ըստ վերոյիշեալ օտար ճանապարհորդին:

¹⁰⁹ Հիլլա քաղաք պատմական Բաբելոն քաղաքը, հիմնադրուած է 7000 տարի առաջ վերածնեալ Բաբելոնի արքայ Համուրապիի կողմէն, կը գտնուի Եփրատ գետի արեւմտեան ափին, Պաղտատէն հարաւ 100 քիլոմէթր հեռավորութեան վրայ եւ Բաբելոն նահանգի վարչական կեդրոնն է: Պատմական հոյակապ Բաբելոնի ատերակները կը գտնուին նոր քաղաքին հարեւանութեամբ:

¹¹⁰ J.R. Wellsted, նշ. աշխ., էջ 220:

¹¹¹ Թաղէտեան գերդաստանը ծագումով Ջուղայեցի է: Նախահայրը՝ Տէր Դաւիթ տէր Գաբրիէլեանը, Նոր Ջուղայի Ս. Ամենափրկչեան վանքի քահանայներէն, 1762 թ. Ջուղայի մէջ տեղի ունեցած հարստահարութիւններէն եւ հալածանքներէն փախչելով, իր երկու որդիներով միասին, Տէր Յովհաննէս

Անգլիացի ճանապարհորդ Գրաթան Գիրի Պաղտատ այցելած է 1870-ական թուականներուն, իր տպատրուբիւնները գրի առած եւ հրատարակած է 1878 թ., «Պոմպէյէն Լոնտոն Ճամբորդութեան մը նկարագրութիւնը» անուան տակ: Այլ կրօններու, ազգերու եւ յարանուանութեանց յիշատակութեան ատեն հեղինակը կը յիշէ, որ հայերը մեծ համայնք մըն էին, ինչքի տէր՝ ազդեցիկ անձնաւորութիւններով: Միջին կարողութեան տէր հայու մը փափաքն էր գրագիր կամ գրող դառնալ: Պաղտատաբնակ հայերու մէջ կային նաեւ երկրաչափներ, որոնք կ'աշխատէին Տիգրիսի վրայ նաւարկող շոգենաւակներու մեքենաներու նորոգութեան գործարանին եւ կամ նման աշխատանքներուն մէջ¹¹³:

Յիշատակութիւններ կան նաեւ հայ հարուստ եւ նախաձեռնութիւններ ունեցող վաճառականներուն մասին, սակայն անոնք աւելի մտաւորականներ էին: Կառավարական բոլոր գրասենեակ-

վարդապետ եւ Գէորգ, կ'ապաստանին Բուշիր քաղաքի դիմաց Պարսից ծոցին մէջ գտնուող Խարկ կղզին, ուր կային բաւական թիւով հայեր: Վերջիններս երկար տարիներ է ի վեր նոյնպէս փախած էին Ջուղայէն եւ ունէին իրենց ուրոյն եկեղեցին: (Եկեղեցոյ աւերակները տակաւին կը մնան:) Այստեղ մնալով քանի մը տարի՝ Տէր հայրը իր զաւակներով Պասրա կ'անցնի, ուր 1770 թ. կը վախճանի: Բսկ իր որդին՝ Տէր Յովհաննէս վարդապետը, կը մահանայ յաջորդ տարին 1776 թ.:

Գէորգ վաճառականութեամբ կը զբաղէր, իր գործառնութիւնները զլիսաւորաբար Հնդկաստանի հետ էր, ինչպէս իր ժամանակին բոլոր վաճառականները: Կը վայելէր East India Co.-ի (Արեւելա-հնդկական ընկերութիւն) բարոյական աջակցութիւնը, որու շնորհիւ մեծ հարստութիւն եւ պատուաբեր դիրք շահած էր: Գէորգ նաեւ ազգասէր եւ առաքինի համբաւ ուներ, չէր զլանար իր աջակցութիւնն եւ նիւթական օժանդակութիւնը ցուցաբերել հայկական հոգեւոր կառոյցներուն, ինչպէս Էջմիածնի, Երուսաղէմի, Վարազայ Խաչի եւ Աղթամարի վանքերուն, ինչպէս որ կը վկայեն նոյն գերդաստանի շառաւիղներուն թով գտնուած եւ իրենց ուղղուած 70-ի չափ հայրապետական կոնդակները, որոնցմէ մին 180 տարուայ հետութիւն ունի (տես ս Իրաքահայ Թեմի Համառօտ Պատմութիւն, 2005 Պաղտատ (անտիպ), էջ 386):

¹¹² Ադա Միքայէլ Մինասեան ծնած է Պասրա 22 Նոյեմբեր 1809 թ.: Եղած է Պաղտատի Անգլիական հիւպատոսարանի թարգման եւ ազդեցիկ դիրք ունեցած է: Երբ նեստորականները փորձած են գրաւել Մէլտանի Ս. Աստուածածին եկեղեցին, ան դիմած է կառավարութեան եւ նեստորականներու պահանջը կատարուցած է: Կը մահանայ 1882 թ. եւ կը թաղուի Ս. Երրորդութիւն եկեղեցոյ բակը (նոյն, էջ 386):

¹¹³ Grattan G., Narrative of a Journey from Bombay to the Bosphorus, London 1878, pp. 222-224.

ներուն մէջ կային հայ գրագիրներ, ազդեցիկ դիրքերու հասած, որոնք մեծ ազդեցութիւն ունէին բոլոր պետական բաժանմունքներուն մէջ¹¹⁴:

Վերոյիշեալ գրօսաշրջիկը կը շեշտէ, որ իր ճամբորդութեան ընթացքին կամ Պաղտատի մէջ հայերու ընդունակութեան մասին կասկած արտայայտող որեւէ կարծիք չէ լսած: Անոնք հաւանաբար, ամենաընդունակ եւ մտային կարողութիւններով օժտուած միակ ժողովուրդն էին բոլոր Ասիական Թուրքիոյ տարածքին, եւ այս պատճառով է, որ ընդհանուր վստահութիւն մը կայ իրենց հանդէպ¹¹⁵: Շարունակելով իր գրառումները հայերու մասին, հեղինակը կ'եզրակացնէ. «...ամենադոյզն կասկած չկայ, որ հայեր կրնան քաղաքակրթութեան ամենաբարձր աստիճանին հասնիլ: Անոնք կը յառաջդիմեն կրթութեան եւ ընկերային գիտութիւններու ասպարեզին մէջ: Իբրեւ ժողովուրդ, հաւատարիմ են Օսմանեան գահին: Եթէ պատեհութիւնը ստեղծուի զինուորական մարզին մէջ ալ, առանց կասկածի պիտի ցուցաբերեն արժանիքներ տուեալ ոլորտին մէջ»¹¹⁶:

Այնուհետեւ, Պարսկաստանի վերակազմութենէն ետքն ալ Միջագետք խաղաղ չի մնար: Սկիզբ կ'առնեն թուրք-պարսկական պատերազմները, որոնք ինչպէս Հայաստանի, նոյնպէս Միջագետքի եւ ամբողջ տարածաշրջանի տիրապետութեան համար կը կատարուէին:

Օսմանցիները առաջին անգամ կը տիրեն Պաղտատին 1534 թ. եւ ինչպէս այլուր, նոյնպէս հոս, բանակներուն իբրեւ յետնորդ հայերը երեւան եկան եւ Պաղտատ հաստատուեցան:

1623 թ. Շահ Ապպասի օրով, պարսիկներ՝ օսմանցիներէն կը գրաւեն Պաղտատը եւ հոն կը մնան 15 տարիներ: Պատմութեան մէջ կը յիշուի թէ, այդ շրջանին՝ 1626 թ., ինչպէս նշուեցաւ, Պաղտատ այցելած է Մովսէս եպիսկոպոս,¹¹⁷ որ 1629 թ. ընտրուած է կաթողիկոս ամենայն հայոց:

Իրաքի գաղթավայրի սկզբնական շրջաններուն ներքին կեանքի վերաբերեալ եւ հայ համայնքի տեղացի տարրին հետ

¹¹⁴ Աւելի մանրամասն տե՛ս այս աշխատութեան «Տնտեսական գործունէութեան» բաժինը:

¹¹⁵ Grattan G., նշ. աշխ., էջ 223:

¹¹⁶ Նոյն տեղը:

¹¹⁷ Գեորգեան, նշ. աշխ., էջ 404 եւ Օրմանեան, նշ. աշխ., պարբ. 1644:

ունեցած յարաբերութիւններուն մասին, դժբախտաբար տեղեկութիւններ կը պակսին Պաղտատի, ինչպէս նաեւ հայկական այլ կեդրոններուն մէջ: Պաղտատի բնակչութեան թուաքանակը 1847 թուականին հետեւեալն էր.¹¹⁸

7500 տուն իսլամ որոնցմէ 6000 տուն արաբ
6000 տուն հրեայ *104 տուն հայ*
180 տուն քաղղէացի 176 տուն ասորի
40 տուն եւրոպացի

Պասրան Իրաքի երկրորդ հայաշատ քաղաքն է Պաղտատէն ետք,¹¹⁹ եւ երկրի կարելոր ու միակ նաւահանգիստը, շնչափողը: Հիմնուած է մահմետականութիւնը Միջագետք մուտք գործելէն ետք, Օմար Էլ-Խատտայ իսալիֆայի օրով 637 թուականին¹²⁰: Քաղաքը կը գտնուի Պարսից Ծոցէն 67 քիլոմէթր դէպի հիւսիս եւ Պաղտատ մայրաքաղաքէն 550 քիլոմէթր հարաւ-արեւելք հեռավորութեան վրայ:

Թաթարներու տիրապետութեան շրջանին, երբ նոյն կրօնը կը տարածուէր անոնց մէջ, նոյն կրօնը մուտք կը գործէ նաեւ Պասրա, եւ XIII դարուն հոգեւորական գրագետներ Պասրան կը կոչէին «Պրէյթ Մէշան», որ արամայերէն կը նշանակէ «անտառի քաղաք» կամ ալ «քաղաք փայտի»: Իսկ Եա'կուպ Սարգիս թէեւ կը հաստատէ արամայերէն արմատ ունենալը (Պասրայիթա կամ Պասրիյի).

¹¹⁸ Ֆերուհիաս Բ. պէյ, Ճանապարհորդութիւն Ի Բաբելոն Ընդ Էջմիածին, Արմաշ 1876, էջ 91:

¹¹⁹ Երբեմն աւելի հայաշատ, քան մայրաքաղաք Պաղտատը, որ պայմանաւորուած էր Պասրայի մէջ ծաւալուող հայ վաճառականներու շատ աշխոյժ առեւտրական գործունէութեամբ 17-19-րդ դարերուն:

¹²⁰ Կաղըսիյէի ճակատամարտէն ետք, արաբական զօրքերը տարածուեցան մինչեւ Պասրա, ուր զինուորներուն համար յատուկ կայան մը կառուցուեցաւ Օպպոլա անունով: Այդ նպատակով Իսալիֆա Օմար Իբն Խատտաբ Պասրա կ'առաքէ Բնի Մազըն ցեղապետի (մարգարէի ընկերներէն մին) որդին: Կատ կլիմայական պատճառներով, զօրակայանը կը փոխադրուի 12 մղոն դէպի արեւմուտք, անապատը ուր 637 թուականին կը կառուցուի ներկայ Պասրան, որ այն ատենները կը կոչուէր Էլ-Խուտէյսը (փոքր աւերակ):

բայց կը բացատրէ իբր «հիւղակներու տեղ» կամ պարզապէս «բնակավայր»¹²¹:

Յայտնի է, որ քրիստոնէաները մոնկոլ իշխանութեան օրօք շնորհ գտած եւ տարածուած են նոյնիսկ մոնկոլ խաներուն մօտ:¹²² Անոնց արքունիքին մէջ կ'ապրէին նեստորական քահանաներ, ինչպէս նաեւ հայ, ասորի եւ յոյն եկեղեցականներ: Անոնք ազատօրէն կը քարոզէին եւ նոյնիսկ կը յաջողէին որոշ թիւով հաւատացեալներ շահիլ մոնկոլներէն»¹²³:

Իսկ Վարդան Մելքոնեան, առանց աղբիւրը տալու, կը նշէ. «...Այսպէս, օրինակի համար կը յիշուի թէ քրիստոնէութիւնը շատոնց մուտք գործած է Պասրա, որ եպիսկոպոսանիստ քաղաք էր, եւ 1222 թուականին Պասրայի թեմակալն էր Հայաստանցի Սողոմոն եպիսկոպոս»:¹²⁴

Հայկական Սովետական Հանրագիտարանին մէջ (թերեւս հիմնուելով Վարդան Մելքոնեանի վերոյիշեալ աշխատութեան վրայ), հետեւեալը կը կարդանք «...Բասրայում հայ համայնքի գոյութեան մասին գրաւոր տեղեկութիւնը վերաբերում է 1222 թուականին, երբ քաղաքում եւ նրա շրջակայքում բնակուող հայերի թիւը հաշուի առնելով՝ այնտեղ հիմնուել է հոգեւոր թեմ...»¹²⁵:

Նկատի ունենալով վերոյիշեալ փաստերը եւ քաղաքի հիմնադրման թուականը՝ տրամաբանօրէն պէտք է հանգիլ այն եզրակացութեան, որ Պասրայի հայութեան պատմութիւնը աւելի հին է, քան մեզ հասած գրաւոր տեղեկութիւնները: Պէտք է ենթադրել, որ Իրաք այլ գաղութներու նման, Պասրահայ օճախը նոյնպէս քայքայուէր, հասէր է ոչնչացման եզրին եւ նորէն վերակենդանացեր այս երկիրը նուաճող պարսիկներու, սելճուկներու եւ մոնկոլներու արշաւանքներէն ետք¹²⁶:

¹²¹ 111 - ص 122 سرکيس، يعقوب، مباحث عراقية ، الجزء الثالث، بغداد 1981، ص 111-122: (Սարգիս, Ես'կուր, Մըբահիթ Իրակիյը, հատոր 3, Պաղտատ, 1981, էջ 111-122:

¹²² Հոլաւուի քրիստոնէայ կնոջ Տողուզ խաթունի միջամտութեան շնորհիւ (Կիրակոս Գանձակեցի):

¹²³ Ալպոյաճեան, Պատմութիւն Հայ Գաղթականութեան, հատոր Բ., էջ 396:

¹²⁴ Մելքոնեան Վ., Պասրայի Անցեալը եւ Հայերը, «Հայրենիք» ամսագիր, Պօստոն, Ապրիլ, 1940, էջ 107:

¹²⁵ Մարտիրոսեան Ռ., Բասրա, «Հայկական Սովետական Հանրագիտարան», Երեւան, հատոր 2, 1975, էջ 305:

¹²⁶ Պատալեան Ա., Տեղեկանք Իրաքի Հայոց, 1974, էջ 15:

1604 թուականին Շահ Ապպասի բռնագաղթով, Հայաստանի Արարատեան դաշտավայրէն, Շիրակէն, Պիթլիսէն, Բագրեւանդէն եւ այլ բնակավայրերէն տեղահանուած բազմահազար հայերէն մաս մը կը վերաբնակին Իրանի Մաղ-Ազուիւն եւ Սպահան շրջաններուն մէջ¹²⁷:

Շահ Ապպասի յաջորդներու օրով հարստահարութիւններու եւ հալածանքներու հետեւանքով, հայեր փախուստ տալով Նոր Ջուղայէն անցան Պասրա եւ մաս մըն ալ Հնդկաստան: Պարսից թագաւոր Քէրիմ Խան Չանդ, Նոր Ջուղայի դատարկուիլը եւ Պասրայի շէննալը տեսնելով, Ջուղայեցի Քալանթար Սարգիսը կ'առաքէ Պասրա՝ համոզելու հայերը, որ վերադառնան՝ խոստանալով վերջիններուս վրայէն անպակաս ընել իր շնորհները: Սակայն հայեր անդրդուելի կը մնան եւ կը մերժեն Քէրիմ Խանի առաջարկը¹²⁸: Խանը զայրացած, իր եղբօր Սադրդ խանի գլխաւորութեամբ լաւ կազմակերպուած ուժերով (30,000 միաւոր) 1776 թուականին կը պաշարէ Պասրան, որու բնակչութիւնը յայտնուելով սովի ճիրաններուն մէջ՝ անձնատուր կ'ըլլայ տասներեք ամիս ետք: Այս ժամանակ Պասրայի հայոց «իշխանն» էր Յարութիւն Խալտարեանը, որ ջուղայեցիներէն գումարներ հանգանակելով՝ բաշխեց հայ ժողովուրդին, փրկելով զանոնք սովի ճիրաններէն: Սադրդ խանը քաղաքի հայ, հրեայ եւ այլ ազգի համայնքներուն վրայ մեծ տուգանքներ սահմանեց: Սակայն, այդ շրջանին Պասրայի երեւելիներէն Ադա Յարութիւն յանձն առաւ հայոց վերապահուած ամբողջ տուգանքը վճարել, պայմանաւ վերջը ազգը վարձահատոյց ըլլայ իրեն¹²⁹:

Այսպէս, առաջին անգամ Պարսկաստանէն, ապա Արեւմտեան Հայաստանէն հայեր Պասրա ժամանեցին եւ խառնըւելով՝ կազմեցին Պասրահայ գաղութը: Պասրայի հայերու հնագոյն յիշատակարանը կը կազմէ խաչքար մը 1691 թուականով, որ դժբախտաբար անհետացած է եւ կը կազմէ գաղութի հայոց հին պատմութեան թանկագին փշրանք մը:¹³⁰

¹²⁷ Նոյն տեղը:

¹²⁸ Աճառեան Հր., Հայ Գաղթականներու Պատմութիւն, էջ 201:

¹²⁹ Չամչեան Մ., Հայոց Պատմութիւն, հատոր 3, Վենետիկ, 1786, էջ 856:

¹³⁰ Մելքոնեան Վ., Քսանհինգամեակ Մարգիլի Հայ Ազգային Վարժարանի, Պէյրութ, 1955, էջ 63:

Նոր Ջուղայի աներումեն ետք Պասրա հանգրուանած հայերուն մէջ կը յիշուին Յովսէփ քահանայ, Մովսէս վարդապետ ուսումնական անձը, Տէր Յովհաննէս Սպահանի Մուղաղբիւր գիւղէն եւայլն: Յովսէփ քահանայ Պասրայի մէջ կը մնայ 7 տարի եւ կը գրէ «Քրոնիկոնը»:

XVII դարուն վերջերը հայերու Պասրա գտնուիլը կը փաստուի Կ. Պոլսոյ նախկին պատրիարք Յովհաննէս եպիսկոպոսի՝ 1684 թուականին այդ քաղաքը գտնուելուն եւ այնտեղ վախճանելուն 1684 թուականի Յուլիս 13-ին¹³¹:

Ըստ Կարմեղեան Կարգերու¹³², Միջագետքի, Պասրայի մէջ 1680 թուականին, Տէր Առաքել անունով քահանայ մը տուն մը վարձած էր եւ հոն պաշտամունք կը կատարէր: Նոյն շրջանին Պաղտատի մէջ կը յիշուի Աղագար (Եղիագար) անունով վարդապետ մը նոյն պաշտօնով¹³³:

Յիշատակութիւնը կայ նաեւ 1750-ական թուականներուն Խաչատուր եպիսկոպոս Ջուղայեցիի՝ Հնդկաստան մեկնելու ճանապարհին Պասրա վախճանած ըլլալուն: Ջուղայեցի ծնած է Նոր Ջուղա, ուսումը ստացած է Ս. Ամենափրկիչ վանքին մէջ, կրօնական ասպարէզ մտած եւ եպիսկոպոս ձեռնադրուած:¹³⁴ Իսկ ըստ Հայկական Մովետական Հանրագիտարանին՝ Ջուղայեցին ունի հրատարակութիւններ Պարսկաստանի պատմութեան հետ առնչուած¹³⁵:

Պասրայի մէջ հայ բնակչութեան թիւը պարբերաբար նուազած է երկիրը ալեկոծող ժանտախտի համաճարակի հետեւանքով: 1690 թուականին այս մահաբեր հիւանդութեան հետեւանքով Պասրան կը դառնայ համարեա անմարդաբնակ: Օրական 500 մարդ կը մահանար այս համաճարակէն: Շատեր կը լքեն քաղաքը,

..

¹³¹ Ալլայօյաճեան, Իրաքի Հայ Գաղութը. Գարագաշ Հ., Պարսկահայ Տարեցոյց, էջ 82-83:

¹³² Կարմեղեան կամ Կարմեղեան Միաբանութիւն (Կաթողիկէ) հիմնուած է Իւրայէլի մէջ Կարմել լեռան վրայ XIII դարուն:

¹³³ Collancz H. Sir, Chronicle of Events, Oxford University, London, 1927. Թարգմանութիւն լատիներէնէ անգլերէնի:

¹³⁴ Օրմանեան, նշ. աշխ., պարբերութիւն 2038:

¹³⁵ Մարտիրոսեան Ռ., Բասրա, Հայկական Մովետական Հանրագիտարան, նոյն տեղում:

ունեցուածքը եւ կը փախին քաղաքէն դուրս, հեռուները, մինչեւ որ համաճարակը կ'անցնի¹³⁶:

Այս աղետէն ետք Պասրան անգամ մըն ալ իր նախկին բարգաւաճ վիճակը կը ստանայ: Այս բարգաւաճումը պայմանաւորուած էր, ինչպէս վերը նշեցինք, քաղաքը ապաստանած Նոր Ջուղայեցիներու գործունէութեամբ, որոնք փախուստ տուած էին իրենց քաղաքէն աֆղաններու արշաւանքին հետեւանօք:

1773 թուականին, Պասրայի մէջ հերթական ահռելի ժանտախտի մը պատճառաւ, որ կը հնձէ հազարաւոր կէանքեր, հայեր կը ձգեն իրենց տունն ու տեղը եւ կ'ապաստանին հեռու վայրեր: Շատեր, սակայն, կը մահանան,¹³⁷ եւ իրենց հետ կ'անհետանան իրենց տարիներու ընթացքին վաստակած հարստութիւնները:

1787 թուականին Մուլէման փաշան (Պասրայի առաջին մեմլուք կառավարիչը)¹³⁸ վերստին կը գրաւէ Պասրան, որ կը մնայ Օսմանեան տիրապետութեան տակ մինչեւ Առաջին Համաշխարհային պատերազմը, երբ 1914 թուականի Նոյեմբերի սկիզբը, սոյն քաղաքը կը գրաւուի բրիտանացիներու կողմէն՝ սկիզբ դնելով Իրաքի մէջ քառամեայ պատերազմին ընդդէմ արդէն իրենց մայրամուտը ապրող Օսմանեան իշխանութիւններու մնացորդներուն:

¹³⁶ Ալպոյաճեան, Իրաքի Հայերը, Երեւան 2003, էջ 90:

¹³⁷ Այս թուականներուն պատահած ժանտախտը այնքան ահաւոր եղած է, որ զայն կ'որակեն աւելի ծանր եւ մահաբեր, քան միջնադարեան ժամանակաշրջանին Միջագետքի համար սովորական դարձած կոտորածներու որեւէ մէկուն պատճառած մարդկային զոհերուն: Մ. Չամչեան (որ կը գտնուէր Պասրա 1769-1774 թթ.), իր Սեպտեմբեր 1771 թուակիր նամակով առ Ստեփանոս Մելքոնեան Աբբահօր կը գրէ, թէ ինքը տեղեկացած է, որ Պասրայի մէջ այս մահաբեր համաճարակէն մահացած են 55000 հոգի, որոնցմէ 4000ը հայեր են: 1772-ին, Մխիթարեան Միաբանութենէն Աթանաս եպս. Պաղտատ եղած միջոցին, իր նամակներէն մէկուն խօսելով կ'ըսէ. «Ի Նինուէ, Մուսուլ եւ ի Մերտին եւ ի Տիարբէրի եւ ի Էնկիւրի այնքան ուժգին եւ սաստիկ է մահը, որ շիջեցայց զբազում տունս, մինչ չկարել միմիանս օգնել թաղունս» (Օհանեան Ս., Հայր Միքայէլ Չամչեանի գործունէութիւնը Պասրայի մէջ 1769-1774 թթ., Մխիթարեան Միաբանութեան 300-ամեակ, զեկուցումներու ժողովածու, Երեւան, 2018, էջ 116):

¹³⁸ Մեմլուքները փաստացիօրէն իրական տէրերն էին Իրաքի կառավարութեան: Այս քաղաքական իրավիճակը կը շարունակուի մինչեւ 1831, երբ Օսմանեան կեդրոնական իշխանութիւնները վերջնականապէս դուրս կը մղեն զանոնք եւ կը վերստանան երկրի կառավարման ղեկը:

Պասրա, Օսմանեան տիրապետութեան շրջանին, երկար ատեն ենթակայ եղած է Պաղտատի կուսակալութեան մինչեւ 1870-ական թուականները, երբ նոր վարչական փոփոխութիւններու հետեանքով վերածուած է առանձին կուսակալութեան (վիլայէթ) եւ ինչպէս այս կայսրութեան տակ գտնուող բոլոր հեռաւոր գաւառները, Պասրան նոյնպէս մնացեր է յետամնաց եւ առանձնապէս յառաջդիմութիւն չէ ունեցած:

XVIII դարու առաջին կէսին Պասրա բնակող հայերու թիւն էր 120 անձ, 1879 թուականին՝ 55 բնակիչ՝ 10 տուն: 1888 թուականին՝ Կ.Պոլսոյ Պատրիարքարանի վիճակագրական տուեալներուն համաձայն՝ 242 պարսկահայ¹³⁹:

Համաշխարհային Առաջին պատերազմին եւ Նահր Օմարի գաղթակայանի ցրուելէն ետք, կարելոր թիւով հայ գաղթականներ հաստատուեցան Պասրայի այլ եւ այլ շրջաններուն մէջ՝ ստուարացնելով քաղաքի մինչ այդ նօսրացած հայ գաղութը, նոր կեանք եւ աշխուժութիւն տալով անոր:

Իրաքի երրորդ հայաշատ քաղաքը Մուսուլն է:

Նինուէ՝ հիւսիսային Իրաքի չորս նահանգներէն մէկն է: Սահմաններն են՝ հիւսիսէն Թուրքիան եւ արեւմուտքէն՝ Սուրիան: Նահանգի վարչական կեդրոնն է Մուսուլ:

Մուսուլ՝ պատմական հին ասորական Նինուէ քաղաքի դիմացի կողմը՝ Տիգրիս գետի աջ ափին է, հիմնուած հին ժամանակներէ մնացած փոքր գաղթավայրերու միացումով: VIII դարուն հիւսիսային Իրաքի կարելորագոյն քաղաքն էր արդէն, եւ մնաց այդպէս մինչեւ 1258 թ., երբ մոնկոլներու իշխան Հուլաուն գրաւեց եւ կործանեց զայն: Անկէ ետք մինչեւ 1508 թ. նշանակալի կառավարութիւն մը չկար: Կարճ ժամանակ մը Պարսիկներ գրաւեցին այն, ապա սկսաւ Օսմանեան տիրապետութեան ժամանակաշրջանը սկսած 1638 թուականէն, որ տեւեց չորս դարեր:

Օսմանեան տիրապետութեան շրջանին, Մուսուլ վաճառականական կարելոր կեդրոն մը դարձաւ: Յետ առաջին ընդհանուր պատերազմին՝ կորսնցուց իր կարելորութիւնը՝ անջատուած ըլլալով դրացի երկիրներէն:

¹³⁹ Տեղեկանք Իրաքի Հայոց, 1974, էջ 16, նաեւ «Ալիք» օրաթերթ, Թեհրան, 17-10-1968:

Պատմութեան մէջ Մուսուլի աշխարհագրական դիրքի կարևորութեան մասին արաբ աշխարհագիր Եաքուֆ Էլ-Համաուի հետեւեալ վկայութիւնը կ'ընէ. «...Իրաքի դարպասը, Խորասանի բանալին եւ Ատրպատականի հաղորդակցութեան ճամբան կը կազմէր, եւ մեծ քաղաք մըն էր, Տիգրիսի վրայ կառուցուած...»¹⁴⁰:

Մուսուլի բնակչութիւնը կը բաղկանայ մեծաւ մասամբ՝ իսլամ արաբներէ. կան քրիստոնէաներ, որոնց մէջ ասորի ուղղափառներ (Յակոբիկեան) եւ քաղղէացիները մեծամասնութիւն կը կազմեն: Կան նաեւ նեստորականներ: Մուսուլին յարակից որոշ գիւղերու բնակչութիւնը ամբողջովին քրիստոնէաներէ կը բաղկանար մինչեւ 2014 թուականի աղէտալի դէպքերը¹⁴¹:

Մուսուլի արուարձաններէն՝ Նէպի Եունուս¹⁴² թաղի բնակչութիւնը թիրքմէններ են, որոնք մինչեւ օրս պահած են իրենց լեզուն:

Օտար ուղեւորներու վկայութիւններէն. Դարեր առաջ հիւսիսային Իրաքի այս պատմական քաղաքը յաճախ այցելած են օտար ճանապարհորդներ: Հաւանաբար ասոր առիթ տուող պատճառներէն են պատմական Նինուէն եւ վերջին ժամանակներու Տօմիսիկեան հայրերու կեդրոնատեղի վանքին հոն ըլլալը: Ինչպէս նաեւ այն փաստը, որ ժամանակ մը Իրաքի Պապական դեսպանի կեդրոնը Մուսուլ էր:

Ստորեւ քանի մը ուղեւորներու վկայութիւնները.

- Առաջին ուղեւորը, որուն կը հանդիպինք հոլանտացի տոքթօ. Լեոնարդ Ռաուլֆն է, որ 1573-1576 թթ. Արեւելք ուղեւորութեան մասին իր գրառումներուն մէջ կը յիշատակէ, թէ Մուսուլի մօտ՝ Գարազօշ գիւղին մէջ հանդիպած է հայերու: Գիրքը գրուած է գերմաներէն եւ անգլերէնի թարգմանուած 1693 թ.:

الشيخ الامام شهاب الدين ابي عبد الله ياقوت بن عبد الله الحموي الرومي البغدادي – معجم البلدان¹⁴⁰

¹⁴¹ 2014 թ. Յուլիս ամսուն, Մուսուլ կը գրաւուի Իրաքի եւ Շամի (Սուրիոյ) իսլամական պետութիւն կոչուած խմբաւորումի կողմէն եւ իր վերահսկողութեան տակ գտնուող Սուրիոյ եւ Իրաքի տարածքին մէջ Իսլամական խալիֆայութեան պետութեան հաստատումը կը յայտարարէ, որ կը շարունակուի մինչեւ 2017 թ. Դեկտեմբեր ամիսը: 2019 թ. Հոկտեմբեր 27-ին այս խմբաւորումի ղեկավարը կը սպաննուի Ամերիկեան բանակի կողմէն:

¹⁴² Նէպի Եունուս – Յովնան մարգարէն, ըստ Ս. Գիրքի, կէտ ձուկը ցամաք նետած տեղն է: Գերեզմանը եկեղեցիի մը մէջ էր, որ այժմ մզկիթի վերածուած է եւ 2014-2015 թթ. ականապատուած եւ պայթեցուած իսլամական ծայրայեղականներուն կողմէն:

- Դանիացի ուղևոր մը, Քարսթեն Նիփտը¹⁴³, Իրաք այցելած է 1760-ական թուականներուն կը գրէ թէ, Մուսուլի հիւսիսային կողմը, Տիգրիս գետի արեւելեան ափին Պէյսան անունով գիւղ մը հանդիպած է, ուր քանի մը ընտանիք հայեր կ'ապրէին, մնացեալները իսլամներ էին:

- Իսկ Օլիւիէ «Ուղևորութիւն դէպի Իրաք 1794-1796 թթ.» գիրքի էջ 50-51 մէջ կը յիշէ թէ Մուսուլի փաշան Մոհամմետ Էմին Ճալիլին մեծ ջանք թափած է, որպէսզի Մինճարի Եգիտիները, Քիւրտերը Հայերը եւ Արաբները բերէ եւ բնակեցնէ Մուսուլի շրջանը՝ նպատակ ունենալով հողագործութիւնը զարգացնել:

- Արաբ ուղևոր՝ Մոհամմետ Ամետ Հիւսէյնի «Մունշի Պաղտատի» ուղեգրութեան մէջ կը յիշէ, որ Պաղտատ գտնուած միջոցին անգլիական հիւսիստոս Քլոտիուս Րիչի եւ Աղա Մինասի հետ այցելած են Մուսուլ 1820 թ., ուր հանդիպած են հայերու եւ քրիստոնէաներու, որոնց մասին դրական գնահատական մը տրւած է¹⁴⁴:

Միջազգետրի հիւսիսային սահմանին վրայ հայկական բնակավայրեր կը սկսին ստեղծուիլ X դարուն, երբ բիզանդական կայսրութիւնը յաջողեցաւ նուաճել Մուրիոյ եւ Միջազգետրի հիւսիսային շրջանները, որ արաբական խալիֆայութեան տիրապետութեան տակ կը գտնուէին: Այս շրջաններու մահմետական բնակչութիւնը, ձգելով իրենց բնակավայրերը, կը հեռանային նահանջող բանակի ետեւէն: Բիզանդացիները իրենց գրաւած վայրերուն մէջ կը վերաբնակեցնէին հայեր, յոյներ եւ ասորիներ¹⁴⁵:

Տեղեկութիւններ կան, որ X դարուն վերջերը Իրաքի հիւսիսային շրջաններուն մէջ այնքան հայ բնակչութիւն կ'էդրոնացած էր, որ անհրաժեշտ տեսնուած էր առանձին թեմ ստեղծել: Այս թեմը, որուն հարաւային մասը մինչեւ Մուսուլ հասած էր, ենթարկուած էր Աղթամարի կաթողիկոսութեան¹⁴⁶:

¹⁴³ Niebuhr C., Voyage en Arabie & en Autre Pays Circonvoisins, Amsterdam, 1780, p. 118:

¹⁴⁴ Մոհամմէդ իբն Ամետ Մունշի Էլ-Բաղդադի, Ուղևորութիւն, 1237 հիշրէթի (1822 թ.), ուր կը պատմէ իր այցելած բնակավայրերը Իրաքի տարածքին (Պարսկերէն արաբերէնի թարգմանեց Ապպաս Էլ-Ազգաուի), Պաղտատ, 1948:

¹⁴⁵ Աբրահամեան Ա., նշ. աշխ., էջ 39:

¹⁴⁶ Տէր Յովսէփեան Գ., Յիշատակարանք Ձեռագրաց, էջ 192:

Սակայն, այս գաղթօճախները կոչուած չէին երկար գոյատևելու: XI դարու կեսերուն, երբ սելճուկներ նուաճեցին Իրաքը, անոնց վայրագութիւններէն մեծ չափով տուժեցին առաջին հերթին հայերը: Իսկ յետագային Իրաքի հիւսիսային շրջանի այս գաղթօճախները նոր հարուած կրեցին մոնկոլներու արշաւանքէն 1250-ական թուականներուն, երբ վերջիններս նուաճեցին այս եւ Իրաքի այլ շրջաններ:

XIV դարուն, երբ քիչ թէ շատ նպաստաւոր պայմաններ կը ստեղծուին, Մուսուլի եւ մօտակայ շրջաններուն մէջ հայկական նոր գաղթօճախներ ստեղծուած ըլլալու պատմական հետեւեալ փաստերը կը նշենք.

Ըստ Էջմիածնի մէջ պահուած Ձեռագիր թիւ 2206-ի, Կարինեան ցուցակ, 1352 թուականին Մուսուլի մէջ հայկական ձեռագիր Քարոզգիրք մը «գրեալ ի քաղաք Մուսուլի, ի Մանուէլ քահանայէ»: Ասիկա կ'ապացուցէ, որ XIV դարուն Մուսուլի մէջ ոչ միայն հայեր կային, այլ անոնք ունէին քահանայ, հոգեւոր հովիւ եւ հետեւաբար եկեղեցի, ինչպէս միւս քրիստոնէայ համայնքները: 1336 թ. Ալի փաշա փորձած է քանդել այս եկեղեցիները, սակայն, ապահովաբար Լենկ Թիմուրի 1397 թուականի արշաւանքէն վերջ է, որ անհետացած էին այս եկեղեցիները, ինչպէս տեսնուեցաւ 1352 թուականին հայեր այս քաղաքին մէջ ունէին եկեղեցի եւ բնականաբար համայնք:

XVI դարու սկիզբները փոքր թիւով հայեր եկած են Մուսուլ որպէս Օսմանեան պետական պաշտօնեաներ, ոմանք ալ առետուրի բերումով, իսկ մաս մըն ալ՝ հալածանքներէ ազատելու համար, մասնաւորապէս Սդերդէն, նաեւ Թոքաթէն, Տիգրանակերտէն եւ այլ տեղերէ:

Փոքրաթիւ գաղթավայրի երիտասարդները մերթընդմերթ ինամիական կապեր հաստատած են տեղացի քրիստոնէաներուն հետ: Նաեւ հայ հոգեւոր հովիւ մը չունենալուն պատճառով եկեղեցական ծէսերուն համար ստիպուած էին այլ քրիստոնէայ կղերին դիմել: Ասոնց մեծ մասը ձուլուած են տեղացի քրիստոնէաներուն մէջ: Մուսուլի մէջ քրիստոնէայ առաջնակարգ դիրքի վրայ գտնուողներէն մաս մը ծագումով հայեր եղած են:

Այնուամենայնիւ, յիշատակութեան արժանի է, որ Սդերդէն գաղթողներ պահած են իրենց ինքնութիւնը հակառակ ոչ-հայախօս ըլլալնուն, հաւանաբար այս բնակավայրի (Սդերդի)՝ Իրաքի

սահմանամերձ ըլլալուն պատճառով: Ասոնցմէ կարելի է յիշել Չաքմաքճեանները, Կարապետեանները, Քուլոյեանները, Քէնտերճեանները եւ ուրիշներ:

Մուսուլի հայ կեանքի սկզբնաւորութեան մասին փաստացի տեղեկութիւններ կը պակսին. կը մնայ յենուիլ Ս. Էջմիածին եկեղեցոյ կառուցման թուականին վրայ 1857-ին, նաեւ աւելի առաջ 1830-1840ական թուականներուն հայ եկուորներ եղած են՝ 20 ընտանիքներ սահմանակից Մղերղէն, Տիգրանակերտէն եւ այլ քաղաքներ¹⁴⁷:

Այսպէտով, նշանակալի համայնքային կեանք մը գոյութիւն ունեցած չէ Մուսուլի մէջ մինչեւ 1900ական թուականները, երբ կը կազմուի թաղական խորհուրդ մը հետեւեալ ազգայիններէ բաղկացած. Ալեքսան աղա Գոյումճեան, Խօճա Միրզա Կարապետեան, Սարգիս Չաքմաքճեան, Պօղոս Եմէնիճեան եւ Տիգրան Քիւլաիեան, նախագահութեամբ Տ. Դաւիթ քինյ. Դաւիթեանի: Այնուհետեւ, Առաջին աշխարհամարտի ընթացքին, արեւմտահայ գաղթականներով կը համալրուին գաղութին շարքերը, եւ ազգային-հասարակական կեանքը նոր թափ ու եռանդ կը ստանայ¹⁴⁸:

Քերթուկ ներկայ Իրաքի հիւսիսային չորս նահանգներէն մէկն է, բլուրներով շրջապատուած պատմական քաղաք մը: Ք.ա. 770-ական թուականներուն իբրեւ Արրաֆայի յիշատակութիւնը կայ Աշուր-տան Գ.ի իշխանութեան շրջանին¹⁴⁹:

Քրիստոնէութեան ծագումէն ետք, Եղեպիոյ եկեղեցիէն առաքուած քարոզիչներ եռանդով տարածած են նոր կրօնը, եւ 12-16 հազար քրիստոնէաներ «վասն հաւատոյ» նահատակուած են Արրաֆայի մէջ:¹⁵⁰ 470 թուականին այս նահատակներուն ի յիշատակ վանք մը կը կառուցուի Մար Թահմազկերտ անունով: Դարերու ընթացքին այս բլուրի վրայի եկեղեցին հողին տակ կը թաղուի, հաւանաբար երկրաշարժի մը հետեւանքով: Յետագային նոյն տեղը նոր եկեղեցի մը կը կառուցուի:

¹⁴⁷Ապթարճեան Գ., Յետադարձ Ակնարկ Կեանքի մը Իննսուն Տարիներուն Վրայ, Պէրլուք, 1975, էջ 48-49: Նաեւ՝ Ալպօյաճեան Ա., Իրաքի հայերը, Երեւան 2003, էջ 119-124:

¹⁴⁸ Օհանեան, Իրաքի Հայ Համայնքը 20-րդ Դարուն, Երեւան 2016, էջ 131- 159:

¹⁴⁹ Georges Roux, Ibid, p. 302.

¹⁵⁰ Մելքոնեան Վ., Գաղութահայ Տարեգիրք, Բ. դարի, 1940, էջ 64-72:

Լենկ Թիմուրի արշաանքներուն ատեն (1336-1405 թթ.) շրջանը հրոյ ճարակ եղած է, ներառեալ եկեղեցին: Դարձեալ նոր մը կառուցուած է տեղը, որը ժամանակի ընթացքին զանազան նորոգութիւններու ենթարկուած է, եւ ցայսօր կանգուն կը մնայ. կը գտնուի Քերքուկի հիւսիսային կողմը մօտաւորապէս հինգ քիլոմէթր հեռաւորութեան վրայ: Շրջանը կը կոչուի «Ղըրմըզը Քիլիսէ» (Կարմիր Եկեղեցի), ի յիշատակ այդտեղ նահատակուած քրիստոնէաներուն: Քաղղէացիներու գերեզմանատունը այս եկեղեցւոյ շրջափակէն ներս կը գտնուի:

Յիշատակութեան արժանի է, որ Առաջին Համաշխարհային պատերազմին Հայկական Յեղասպանութիւնը վերապրած գաղթականներէն ոմանք թաղուած են ա՛յս գերեզմանատան մէջ:

Քերքուկ քաղաքը բաժնուած է երկու մասերու՝ Գալ՝ա (բերդ) եւ Ղօրիա՝ (ղաշտային) թաղամաս մը: Աւանդութեան մը համաձայն, Դանիէլ մարգարէի գերեզմանը կը գտնուի Գալ՝այի մէջ գտնուող մզկիթի մը մէջ, որ տեղացիներու կողմէն բացառիկ յարգանքի առարկայ եւ ուխտատեղի է: Իսկ ըստ Հրաչեայ Աճառեանին՝ XIX դարու կէսերուն «Քերքուկ գեղեցիկ եւ պտղաւետ գիւղաքաղաք է, 15000 բնակչութեամբ՝ քիւրտ, տաճիկ, հայ, ասորի, քաղղէացի, հրեայ եւ արաբ: Կայ 10 մզկիթ եւ ամէն մէկ քրիստոնէայ համայնքի համար մէկ եկեղեցի: Հայոց թիւը հարիւր չի հասնիր»:¹⁵¹

Թիւրքմէններ: Ասոնք Լենկ Թիմուրի շառաւիղի յետնորդներն են, որոնք չորս դարեր առաջ Օսմանեան կառավարութեան կողմէ բերուած եւ վերաբնակուած Քերքուկ եւ ուրիշ գիւղաքաղաքներ, ուր տակաւին կը մնան: Կը պահեն իրենց իւրայատուկ լեզուն:

Քաղղէացիներ: Ասոնք վերոյիշեալ քրիստոնէաներու մնացորդներն են: Ինչպէս վերը նշեցինք, Լենկ Թիմուր Միջագետքը զբաւած ատեն վերոյիշեալ քրիստոնէաներու վանքն ու թաղամասը հրոյ ճարակի կ'ենթարկէ: Փրկուածները կ'ապաստանին Քերքուկ, նախ կայք կը հաստատեն Ղօրիայի զաշտային մասին մէջ, ապա կը տեղաւորուին Գալ՝ա, ուր եկեղեցի եւ եպիսկոպոսական աթոռ կ'ունենան մինչեւ 1950-ական թուականները: Ժամանակի ընթացքին Ղօրիայի մասը յառաջընթաց կ'արձանագրէ, եւ քաղղէացիները այստեղ նոր եկեղեցի մը կը կառուցեն եւ եպիսկոպոսական աթոռը այնտեղ կը փոխադրեն:

¹⁵¹ Աճառեան, նշ. աշխ., էջ 203:

Հայեր: Հին ժամանակներէ ի վեր Քերքուկի մէջ հայ գաղութը գոյութիւն ունեցած ըլլալը հաստատող աղբիւրներ կամ տրեւալներ գրեթէ չկան, բացառութեամբ 1847 թուականին, երբ Սուլթան Ապտիւլ Մեհմետ իր սենեկապետը Պաղտատ առաքած ատեն իրեն կ'ընկերանայ հայ բժիշկ Բարունակ պէյ Ֆերուհիսան, որպէսզի ճամբու վրայի քաղաքներու եւ գիւղերու հիւանդները դարմանէ եւ պատուաստէ: Բարունակ պէյ այս առթիւ գրի առած է «Ճանապարհորդութիւն Ի Բաբելոն ընդ Էջմիածին» շահեկան աշխատութիւն մը, հրատարակուած Արմաշ, 1876 թուականին¹⁵²: Այս աշխատութեան մէջ հեղինակը կը յիշէ, թէ 1847 թուականին Քերքուկ ունէր մօտաւորապէս 8000 տուն բնակիչ՝ քիւրտ, թուրք, հայ, քաղղեացի, հրեայ եւ արաբ: Քաղաքը ունէր 10 մզկիթներ եւ իւրաքանչիւր ազգ ունէր մեկական եկեղեցի, որով հայերն ալ ունէին եկեղեցի, թէւ Բարունակ պէյ բացորոշ չէ յիշած, սակայն հայոց եկեղեցին կա՛մ լքուած, կա՛մ գրաւուած պէտք է ըլլայ 1847 թուականէն վերջը:

Հետեւեալ երեք անգլիացի ուղեւորներու հրատարակութիւններու մէջ կան ներքոգրեալ յիշատակութիւնները.

Ջ.Ս.Բաքինգըմ կը յիշատակէ թէ 9 Յուլիս 1816ին Քերքուկ հասած է, որ մօտ 15 հազար բնակչութիւն ունէր: Բերդէն ներս կ'ապրէին մօտաւորապէս 5-6 հազար իսլամներ, իսկ անկէ դուրս տափարակ դաշտային մասին մէջ կային 10 հազար, որոնց մեծամասնութիւնը բաղկացած էր իսլամներէ, կային նաեւ հայեր, նեստորականներ եւ ասորիներ (սիրիան)¹⁵³:

Ա.Լօքըր կը նշէ թէ հանդիպած է Քերքուկ, որուն բնակչութիւնը 15-20 հազար էր: Ասոնց երեք քառորդը իսլամներ էին մեծամասնութիւնը թիւրքմեններ, պարսիկներ եւ արաբներ, մնացեալներու մէջ կային հայեր, քրիստոնէաներ եւ հրեաներ: Հեղինակը կը յիշէ նաեւ թէ հանդիպած է երեք հայ քահանաներու, որոնք եկած էին Պաղտատէն զինքը դիմաւորելու¹⁵⁴:

Մըր Ըօքըրթ Ջ. Փօթթըր (1775-1841)՝ յայտնի անգլիացի նկարիչ եւ հնագէտ, XIX դարու սկիզբը նշանաւոր է իր կատարած ճա-

¹⁵² Ֆերուհիսան Բ. Պէյ, Ճանապարհորդութիւն Ի Բաբելոն ընդ Հայաստան, Արմաշ, 1876, էջ 75:

¹⁵³ Buckingham J. S., Travels in Assyria, Media and Persia, London, 1830, p. 141.

¹⁵⁴ Locker, A., With Star and Crescent, Journey from Bombay to Constantinople, London, 1868, p. 368.

նապարհորդութիւններով: Ան 1817-1820 թթ. այցելած է Անդրկովկաս, Պարսկաստան, Միջագետք եւ Թուրքիա, իր ուղեւորութիւնը հրատարակած է Լոնտոն 1822 թուականին երկու ստուար հատորներով: Երկրորդ հատորի մէջ Քերքուկ քաղաքի բնակչութեան մասին խօսելով կը գրէ. «...Քերքուկ... բնակիչները կը ներկայացնեն զվաւորապէս թուրք, հայ, քիւրտ, արաբ եւ քանի մը հրեայ եւ անոնց թիւը տասէն տասներկու հազար կարելի է հաշուել...»¹⁵⁵:

Իսկ ըստ մեր ուսումնասիրութիւններուն, Օսմանեան տիրապետութեան շրջանին XIX դարու կեսերէն սկսեալ հայ երիտասարդներ, որպէս պետական կարեւոր պաշտօնեաներ, դրկուած են Քերքուկ Կեսարիայէն, Անգարայէն եւ այլ վայրերէ իբրեւ դրամատան եւ նամակատան տնօրէններ, նաեւ հաշուապահական պաշտօնեաներ: Վերջիններս, սակայն, կտրուած ըլլալով հայկական միջավայրէ, Քերքուկ մնալով ամուսնացած են տեղացի քրիստոնեայ (ոչ-հայ) աղջիկներուն հետ, հաստատուած հոն ու ձուլուած: Ասոնց շատաիդներէն մինչեւ այսօր կը յիշուին Սարաֆեան, Մինաս եւ փոսթաճի Եուսուֆ ընտանիքները, սակայն որպէս սոսկ տեղացի քրիստոնեաներ, որոնք գիտեն, թէ ծագումով հայ են:

Բարունակ պէյ Ֆերուհիանի այցելութեան ընթացքին, 150 տարիներ առաջ, Քերքուկէն անցած ատեն կը գրէ.

«...Մուսուլէն Քերքուկ ճամբորդած ատեն, Քերքուկի մօտերը տեսայ շատ մը հորեր որոնք մինչեւ բերանը տեսակ մը կուպրով (հաւանօրէն մագուտ) լեցուած էին: Այս կուպրը գետնին տակէն կը բխի եւ հորերուն մէջ կը պարպուի, ուրկէ ուզողը կ'առնէր, տիկերու մէջ լեցնելով կը տանէր ու վառելու կը գործածէր: ...Բլուրի մը վրայ երբ մօտենաս ծծումբի հոտ կը բուրէ, եւ տեղ-տեղ բոցեր կան: Երբ փայտով մը հողը խառնուի իսկոյն գետինը կը սկսի բոցավառիլ»¹⁵⁶:

Երկար տարիներէ ի վեր, գիտնականներուն եւ պատմագետներուն ծանօթ էր նաւթի (քարիւղի) գոյութեան մասին Քերքուկի եւ Իրաքի այլ շրջաններուն մէջ, տեղ-տեղ եղած նաւթի ընդմրդումներէն: Իսկ Քերքուկի մօտակայ Պապա-Կուրկուր կոչուած

¹⁵⁵ Sir Robert K. Porter, "Travels in Georgia, Persia, Armenia, Ancient Babylonia, 1817-1820", Longman, Hurst, Rees, Orme and Brown, London, 1822, Volume 2, p. 439.

¹⁵⁶ Ֆերուհիան Բ. պէյ, Ճանապարհորդութիւն ի Բաբելոն ընդ Հայաստան, էջ 74-75:

բլուրին վրայ գազային նիւթ մը ժայռերու ստորերկրեայ ծերպերէն ժայթքելով կը բոցավառի: Տեղացիները վայրը կը կոչեն «մշտնջենական կրակներ», որ տիւ եւ գիշեր, տարուան բոլոր եղանակներուն կը բոցավառին¹⁵⁷:

Այնուհետեւ, 20-րդ դարու 20ական թուականներուն նաւթահորեր պեղելու գործողութիւնները կը մեկնարկեն, եւ այս քաղաքը կը դառնայ կարելոր բնակութեան կեդրոններէն մէկը: Առաջին նաւթահորի պեղումի ընթացքին, նաւթը կը ժայթքէ ծրագրուած խորութեան հասնելէն առաջ, որուն հետեւանքով քանի մը օտար մասնագետներ ժայթքած գազէն թունաւորուելով խեղդամահ կ'ըլլան: Նաւթի առկայութիւնը Քերքուկի մէջ, այն ալ ահռելի չափերով, մեծ աղմուկ կը բարձրացնէ քարիւղի աշխարհին մէջ եւ «սեռակիով» հետաքրքրուող ընկերութիւններու շրջանակէն ներս:

Ընկերութիւնը իր կեդրոնատեղին կը հաստատէ Քերքուկի մէջ: Աստիճանաբար ստուարացող պաշտօնեաներու եւ որակեալ արհեստաւորներու մէջ զգալի թիւով հայեր կային: Յետագային զանազան ճիւղերու մէջ կարելոր եւ պատասխանատու պաշտօններու տիրացող շատ մը հայեր եղան, որոնք մնացին այդտեղ մինչեւ նաւթի պետականացումը Իրաքի կառավարութեան կողմէ 1972 թուականին, եւ մաս մը՝ անկէ վերջ ալ:

Համաշխարհային Առաջին պատերազմի մեկնարկէն ետքն է, որ հայ արքորեալներ կը սկսին հասնիլ այս քաղաքը: «... Տէր Զօրի ճամբով, նախ քան այնտեղի կոտորածը, Մուսուլ հասած երկու խումբեր քիչ կորուստով հասած էին: Ասոնք վերջը Քերքուկ դրկը-

¹⁵⁷ Առաջին Համաշխարհային պատերազմէն առաջ, քանի մը ընկերութիւններ նաւթի մասնագետ Գալուստ Կիլլպէնկեանի միջնորդութեամբ Turkish Petroleum Company անուան տակ, Իրաքի որոշ շրջաններուն մէջ, նաւթահորեր պեղելու մենաշնորհը ստացած էին: Յետ պատերազմեան շրջանին քաղաքական առկայ պայմաններու հետեւանքով այս ընկերութիւնը վերակազմուեցաւ հետեւեալ ձևով, որուն բաժնետէրերը եղան.

Բրիթիշ Փէթրօլիում	23.75%
Ռօյըլ Դաշ Շէլ	23.75%
Նիւ Զըրզի Սթանդարդ Օյլ եւ Սորնի Վարքում Օյլ	23.75%
Քօմփանի Ֆրանսէզ Դէ Փէթրօլ	23.75%
Փարթիսիփէշըն Էքսփլօրէշըն Քօրփօրէշըն (Կիլպէնկեան Հիմնարկութիւն)	5.00%

Այնուհետեւ, ընկերութեան անունը փոխուեցաւ Iraq Petroleum Company Ltd.ի:

լած էին»¹⁵⁸։ Այս խումբը եւ անելի ուշ, սահմանափակ թիւով հայ ընտանիքներ կը մնան Քերթուկ պատերազմի տետղութեան։ Տեղացի քաղղեացիներէն մաս մը ընտանիքներ այս հայերուն օգտակար կ'ըլլան, երբ Օսմանեան ոստիկաններ (ժանտարմաներ) տունէ-տուն հայեր փնտռելով ձերբակալել փորձած են։

Էրպիլ՝ պարսպապատ քաղաք մըն է, կը գտնուի Մուսուլէն 84 քիլոմէթր հարաւ-արեւելք, ունի հսկայ բերդ մը։ Մեծն Աղէքսանդր Մակեդոնացիին, Արեմենեան Արքայից Արքայ, Դարեհի վրայ տարած յաղթանակի վայրն է։ Ասորական կայսրութեան շրջանին չորս աստուածներու մայրաքաղաք ըլլալուն կոչուած է Էրպիլ, այսինքն «Էրպա՛ իլահ» չորս աստուածներու նշանակութիւնով¹⁵⁹։

XIV դարուն Էրպիլի մէջ կը յիշուի հայկական եկեղեցիի մը գոյութեան մասին քաղաքի պարիսպէն դուրս, զոր նոյն դարուն սկիզբները քանդած են այլազգեր, 1336 թուականի «Հիւբն»ի¹⁶⁰ հետեւանքով, նեստորականներու երկու եւ յակոբիկեան Ասորիներու մէկ եկեղեցիին հետ։ Այս եկեղեցիներու «աւարառութեան եւ կործանումի ենթարկուած»¹⁶¹ ըլլալը յիշուած է օտար հեղինակներուն կողմէն։

Դարձեալ յիշատակութիւնը կայ Քարամլէս անունով, քրիստոնէայ բնակչութեամբ գիղաքաղաքի մը մէջ, Պարթիլլայի մօտ, Մուսուլէն 35 քիլոմէթր հարաւ արեւելքը, հայ համայնք մը գոյութիւն ունեցած է XIV դարուն, քահանաներով եւ տիրացուներով։ Ի վերջոյ ինչպէս եւ երբ հայերը լքած են այս բնակավայրը՝ յայտնի չէ։¹⁶²

Հիւսիսային Իրաքի քրիստոնէայ ոչ-հայ վանքերուն մէջ նշանաւոր է Մար Պէհնամի պատմական վանքը հիմնուած XII դարուն, որ կը գտնուի Մուսուլէն 35 քիլոմէթր հարաւ-արեւելք Փոքր-Չապ գետի մօտերը, ասորական կայսրութեան մայրաքաղաք Նիւրուդի ներկայ Խըտըր գիւղին մօտ։ Մար Պէհնամ վանքը

¹⁵⁸ Եղիայեան Չ. Տէր, նշ. աշխ., էջ 237։

¹⁵⁹ Ասթարճեան, նշ. աշխ., էջ 28։

¹⁶⁰ Դատավճիռ։

¹⁶¹ Wallis Budge E.A. Sir, *The Monks of Kublai Khan, Emperor of China*, 1928, p. 270.

¹⁶² Տէր Սայեղեան Ն., Պատմական Ակնարկ մը Հայ-Կաթողիկէ Հասարակութեան վրայ յԻրաք, «Աւետիք», Պէյրութ, 1945, էջ 55-56։

ճանչուած է նաեւ «Տէր Էլ-Ճուպ» անունով, որ կը նշանակէ «Ջրամբարի վանք»:

Բնակչութիւնը ասորի եւ իսլամ խառն է: Վանքը յայտնի ուխտատեղի է շրջանի բոլոր քրիստոնէաներուն եւ իսլամներուն անխտիր:

Այս վանքի ներսի կողմի որմերէն մէկուն վրայ, հայատառ տապանագիր մը կայ, որուն տառերը իրարու քով բերելով բառեր չեն կազմուիր: Տեղացի վանականներ արանդութեամբ գիտեն, թէ բարձրաստիճան հայ կղերական մը վանքը այցելութեան ընթացքին վախճանած է եւ հոն թաղուած:

Կրօնական օտար գործիչ մը (Ճորճ Փերսի Պաճըր), որ 1842-1844 եւ 1850 թթ. ճամբորդած է Միջագետք, կը յիշէ նաեւ իր այցը վերոյիշեալ Մար Պէհնամ վանքը: Սոյն վանքին մեջէն անցք մը կ'առաջնորդէ ստորերկեայ մատուռ մը, որ կը պարունակէ 8 գմբէթապատ որմնախորշեր, որոնք ակնյայտօրէն գերեզմաններու յատկացուած են: Այստեղ նկատած է հայատառ մեծ գիրերով դամբան մը՝ առանց յաւելեալ տեղեկութիւններ տալու¹⁶³:

Չախօ քաղաքը կը գտնուի Իրաքի հիւսիսային շրջանին մէջ՝ թրքական սահմանէն 10 քիլոմէթր հեռու, Խապուր գետի երկու ափերուն: Խապուր, Տիգրիսին միացող օժանդակ գետերէն մէկն է: Քաղաքը սփռուած է դաշտային ցած հողի վրայ, ունի վատառողջ եւ խոնար կլիմայ: Չախօ, խոր անցեալին մէջ՝ Քրիստոսէ առաջ գոյութիւն ունեցած է: Անունը հին քաղղիներէն առնուած է, որ կը նշանակէ «յաջող» կամ «յաղթական»:

Չախօյի մէջ հայ գաղութի ամենավաղ գոյութեան մասին յիշուած է աշխարհաշրջիկ Ճօն Աշըրի կողմէն, որ այցելած է Չախօ 1865 թուականին. «...Չախօյի բնակչութիւնը բաղկացած էր քիւրտերէ, քաղղեացիներէ եւ հայերէ: Վերջինները այսինքն հայերը, ընդհանրապէս խանութպաններ էին»¹⁶⁴: Քանի հայ ընտանիք ըլլալը չի յիշեր: Իսկ մեր ձեռքի տակ ունեցած հայկական աղբիւրներուն մէջ, այդ թուականին, հայերու գոյութեան մասին ոչ մի յիշատակութիւն գտանք: Մեր ունեցած տեղեկութեանց համաձայն Չախօյի մէջ

¹⁶³ Badger G. P., The Nestorians and Their Rituals, Volume 1, London, 1852, p. 95.

¹⁶⁴ Usher J., Journey from London to Persepolis; Wanderings in Daghestan, Georgia, Armenia, Kurdistan, Mesopotamia and Persia with illustrations, London 1865, p. 389:

1895-1896 թուականներու կոտորածէն առաջ 4-5 տուն հայեր կային միայն¹⁶⁵:

1915 թ. Հայոց Յեղասպանութենէն ետք, հայ բնակչութեան թիւը կը ստուարանայ եւ կը հաշուէր մօտաւորապէս 100 ընտանիք, պայմանաւորուած Տրիէ եւ Շարնախ գիւղաքաղաքներէն այստեղ ապաստանած քրտախօս հայերով: Թէեւ Շարնախ Տիգրանակերտի ենթակայ գաւառ մըն է, սակայն Չախօյի հետ առեւտրական մշտատեւ յարաբերութիւններ ունենալուն հետեւանքով՝ երթեւեկը անընդհատ էր:¹⁶⁶ Ունէր մօտաւորապէս 30 քրտախօս հայ բնակչութիւն: Չախօ կուգան նաեւ Սղերդէն արաբախօս հայեր: Բոլորն ալ առաջին հերթին կը հաւաքուին Չախօյի Քէսթա կոչուած վայրը, որ աստիճանաբար կը դառնայ հայկական թաղամաս: Սղերդի արաբախօս հայերուն մեծամասնութիւնը կը վերաբնակին Մուսուլ, որոնք մինչեւ օրս կը խօսին արաբախաոն հայերէն:

Իրաքի հիւսիսային չորս քաղաքներէն մէկն է Միւլէմանիյէ, Չագրոս լեռնաշղթաներուն միջեւ քաղաք մը, շրջապատուած անտառներով եւ պտղատու ծառերով: Ամառը կանաչազարդ իսկ ձմեռը ձիւնապատ, կը գտնուի Քէրքուկէն 110 քիլոմէթր հեռու հիւսիս-արեւելեան կողմը: Հիմնուած է Պաղտատի Օսմանցի կառավարիչ (վալի) Մեծն Միւլէման փաշայի օրով 1780 թուականին: Ժամանակի ընթացքին քաղաքը ընդարձակուած եւ զարգացած է:

Միւլէմանիյէի մէջ 1800-ական թուականներուն փոքր հայ գաղթօճախ մը գոյութիւն ունեցած է: Սերովբէ Կարնեցի եւ վանահայր Վրթանէս վարդապետ 3 Ապրիլ 1812-ին մեկնելով Պաղտատէն, երկար ու արկածալից ճամբորդութենէ մը ետք 25 լիտր ոսկին կը հասցնեն Էջմիածին 28 Մայիս 1812-ին:

Այս արկածալից ճամբորդութեան ընթացքին ուղեւորները կը հանդիպին Միւլէմանիյէ 23 Ապրիլ 1812-ին: Սերովբէ Կարնեցի

¹⁶⁵ Մուսուլի հոգեւոր հովիւ Տ. Գարեգին քինյ. Յովսէփեանը (այժմ հանգուցեալ) ծնած է Չախօ 1928 թուականին, եւ մկրտուած՝ ձեռամբ Տ. Գրիգոր քինյ. Տէր Յակոբեանի Ապրիլ 1-ին Չախօյի մէջ: Տէր հայրը կը վկայէ, թէ մօրմէ լսած է, որ 1895 թուականէն առաջ Չախօյի մէջ հայ ընտանիքներ կային որոնք հրեաներու թաղը կը բնակէին: Ասոնցմէ մէկը, Չախօյի յայտնի ընտանիքներէն, կը կոչուէր Կանաչեան Միսակ եւ Յովսէփ եղբայրներ, որոնց մօր անունը Կիւլիզար էր: Միսակի որդին Գեորգը ողջ էր մինչեւ 2000 թ.ը եւ կը բնակէր Պաղտատ (Կարգաթիւ 8542):

¹⁶⁶ Ասթարճեան, նշ. աշխ., էջ 125:

իր արժեքաւոր աշխատութեան մէջ կը յիշէ. «Իջեւանած են փաշայի գլխաւոր մուշտակագործ Յովհաննէս անունով հայու մը տունը:» Անոնք կը վկայեն նաեւ «հազիւ թէ Սիւլեյմանիյէն արժանի լինի քաղաք կոչուելու, որովհետեւ ոչ պարիսպներ ունի, ոչ դարպասներ, ոչ շէնքեր»: Խօսելով բնակչութեան մասին «Սիւլեյմանիյէն շուրջ 4000 բնակիչ ունի՝ բոլորն էլ քրդեր են, բացառութեամբ 12 հայ, 15 նեստորական եւ 8 հրեայ ընտանիքներ»¹⁶⁷: Այս գաղութի գոյատեւման մասին տեղեկութիւններ կը պակսին մինչեւ Առաջին Համաշխարհային պատերազմը:

Ամատիա կը գտնուի Մուսուլի հիւսիս-արեւելեան կողմը մօտաւորապէս 90 քիլոմէթր հեռու, Հեքիարիի լեռներուն մօտ: Քաղաքը հաստատուած է սարահարթի մը վրայ, որ գրեթէ 400 մէթր բարձր է: (Կը կոչուի նաեւ Սար Ամատիա):

Վանէն ուղիղ գիծով՝ միայն 150 քիլոմէթր հեռու:

Ունի հինաւորաց բերդ մը, որուն շինութիւնը արանդութեամբ կը վերագրուի Արտաշէսի ըստ Հայր Ալիշանի¹⁶⁸:

Քաղղեացիք այստեղ ունեին եպիսկոպոսութիւն մը, իսկ Մուսուլի Տոմինիկեան հայրերու տունը կը ծառայէր իբր ամառանոց: Քլոդիոս Ճէյմս Բիչ 1820-ական թուականներուն այցելած է Ամատիա եւ այսպէս կը նկարագրէ նեստորական պատրիարքը «Կը նմանի քրտական պետի մը իր բնաւորութեամբ, մտածելակերպով, հանդերձանքով եւ նիստուկացով»¹⁶⁹:

Ուղեւոր Վիլիէմ Ֆրանսիզ Այնզվուրդ այցելած է Ամատիա 1936 թուականին եւ կը գրէ թէ 5 տուն հայեր կային, որոնք կը զբաղէին ոսկերչութեամբ եւ զինագործութեամբ¹⁷⁰:

Անգլիացի զբօսաշրջիկ վերապատուելի Ճօրճ Փերսի Պաճըր, 1843 թուականին Ամատիա գտնուած միջոցին այցելած է հայոց մատուռը, որ թէեւ անելի գերադաս էր քան նեստորականներուն սրբավայրը, բայց եւ այնպէս շատ խղճալի վիճակի մէջ էր:¹⁷¹

¹⁶⁷ Մերովբէ Կարնեցի, Ուղեգրութիւն Բաղդադից Էջմիածին, Երեւան, 1968, էջ 85, 95 եւ 97:

¹⁶⁸ Ն. Ղեւոնդ Ալիշան, Տեղագիր Հայոց մեծաց, Վենետիկ, 1855, էջ 55:

¹⁶⁹ Rich C. J., Baghdad in Bygone days, London, 1928, p. 294.

¹⁷⁰ Ainsworth W. F., Travels and Researches in Asia Minor, Mesopotamia, Chaldea and Armenia, Volume 2, London 1842, p. 197.

¹⁷¹ Badger G. P., Ibid.

Ամատիայի մէջ, XX դարու սկիզբները երկու հայ ընտանիքներ կը բնակէին, ունէին հոգեւոր հովիւ մը Վանի եպիսկոպոսին կողմէ նշանակուած իրենց հոգեւոր կարիքներուն համար, որ այնուամենայնիւ, հրահանգուած էր վերադառնալ Վան:

Ամատիայի մէջ կան 22 նեստորական եւ 10 քաղղէացի ընտանիքներ:

Ըստ Զաւէն պատրիարքի յուշերուն, XVIII դարուն բաւական մեծ թիւով հայեր կը բնակէին Ամատիա եւ ունէին իրենց սեփական եկեղեցին: Իսկ 1850-ական թուականներուն անոնք շատ ցանցատ թիւ մը կը կազմէին եւ եկեղեցի չունէին:

1900-ական թուականներուն սկիզբները Ամատիա այցելող մը կը վկայէ, որ հայոց եկեղեցին (տեղացիներու կողմէն ճանչցուած էր իբր Տէր Էլ-Էրմըն անունով – հայերու վանք), բոլորովին քայքայուած վիճակի մէջ էր: Զաւէն պատրիարք իր 1940 թուականի այցելութեան ժամանակ տեսած է հիմնայատակ եկեղեցին:

Ներկայիս ոչ մէկ հայ կայ Ամատիայի մէջ: Եկեղեցին կը կոչւեր Ս. Աստուածածին, որ հիմնադրուած է XVI դարուն վերջերը կամ XVII դարուն սկիզբները: Եկեղեցիին հիմնադիրներուն գլխաւորները եղած են ժամանակի երեւելի վաճառական Մագսի (մահտեսի) Գասպար եւ Մագսի Շահէն: Զաւէն պատրիարք կը հաւաստէ, թէ այս եկեղեցիին ամբողջ կահ-կարասին Մուսուլի Ս. Էջմիածին եկեղեցին փոխադրուած է ժամանակին ու ցաւ կը յայտնէ, ինչպէս ամէն տեղ, հոս ալ անխնամ պահուած են կարգ մը թանկագին եկեղեցական հնութիւններ:

«Մանգումէ»ի թղթակիցն ալ կը գրէ, թէ հին ձեռագիրներ կային, որոնց մէկ մասը կորսուած է: Միայն քանի մը Մաշտոց եւ Սկրտութեան կանոն կը գտնուի, որոնք գրուած են 1590-ական թուականներուն:

Մուսուլի եկեղեցոյ մէջ կը պահուի քահանայի գեղեցիկ սահաւարտ մը, որուն վրայ գրուած «իշատակ Մահտեսի Աշիկէն եղբօր Աբրահամին ծնողաց Տարեգին Մահտեսի Սուսամբարի որդի Պետրոսին Գրիգորի կողակից Մարիամին, որ էտուն ի դուռն Եկբատանայ որ է Ամէտու Սուրբ Աստուածածնայ, թուին ՌՄԽԳ (1794)»:¹⁷²

¹⁷² Ալպոյաճեան, Իրաքի Հայերը, էջ 139:

Զաւեն պատրիարք իր Մուսուլ այցելութեան առթիւ 1940 թուականին ընդօրինակած է այս սաղաւարտի արձանագրութիւնը, որ կը տարբերի Մանգումէի մէջ հրատարակուածէն. «Թուակս. Ի յիշատակ Մէհտէսի Աշէկին եղբօրն Աբրահամին ծնողացն Տարեղին Մէհտէսի Սումային որդի Պետրոսին Գրիգորին կողակից Սառային որ է Տեառն ի դուռն Էկբատանա, որ է Սար Ամէտի սուրբ Աստուածածնայ ի թւին ՌՄԽԳ»:

Մինճար կը գտնուի Մուսուլէն 100 քիլոմէթր արեւմուտք, իսկ Սծբինի (Նիսիպիս) Ճէզիրէի հարաւակողմը, լերան ստորոտը, պարսպապատ քաղաք մըն է: Բնակչութեան մեծամասնութիւնը Եզիտիներ են: «...այս տոհմը IX դարուն գոյացաւ եւ տարածուեցաւ Մինճարէն մինչեւ Հայաստան»¹⁷³: Ծագումով հաւանաբար Պարսկական-Զրադաշտական ըլլան, սակայն ըստ Եզիտիներու՝ Արաբ էյ Տէյ¹⁷⁴ ցեղէն սերած են: Այստեղ նախապէս հայ գաղթօճախ մը գոյութիւն ունեցած չէ:

Առաջին ընդհանուր պատերազմին, Տէր Զօրի արհաւիրքներէն մազապուրծ եւ Մինճար հասած են բազմաթիւ հայ գաղթականներ՝ մեծամասնութիւնը Մէրտիներն, որոնց Եզիտիները ապաստան տուած են:

Յետ զինադադարի 1918 թուականին Մինճարի մէջ կային շուրջ 100 ընտանիք, մեծամասնութեամբ հայ կաթոլիկներ եւ քանի մը հայ առաքելական եկեղեցւոյ պատկանող ընտանիքներ:

Հայեր առհասարակ կը զբաղէին ազատ արհեստով, փոխադրական միջոցներով (մեթենավարութեամբ, արծաթագործութեամբ, անագագօգութեամբ (պղինձներ կլայելկելով), կօշկակարութեամբ, հողագործութեամբ եւ կարպետագործութեամբ: Հայ կաթոլիկներու մեծամասնութեան անունները հայկական չէին: Օրինակ, Ռազգուք Ղանիմա՝ (1885-1950) «Էլ-Իրաք» օրաթերթի սեփականատէրն էր, միեւնոյն ժամանակ երեսփոխանական ժողովի անդամ: Մինճարի առաջին հայ բժշկուհին եղած է անոր դուստրը՝ Մէլէք, որ աւարտած է բժշկական համալսարանը 1939 թուականին:

¹⁷³ Մելքոնեան Վ., Իրաքի Եզիտիները, «Հայաստանի Կոչնակ», Նիւ Եօրք, թիւ 29, Յուլիս 22, 1939 էջ 693-694:

¹⁷⁴ Էլ-Տէյ արաբ ցեղի բնակավայրը կը գտնուի Արաբական կղզիի հիւսիսային կողմը, Եփրատեան կղզիի հիւսիսը, Մուրիական Հասաբը նահանգը եւ կը տարածուի մինչեւ Մուսուլի արեւելեան շրջանները:

Սինճարահայեր՝ 1947 թուականին Հայաստան ներգաղթելու բռուն փափաք կը յայտնեն, սակայն այլեւայլ պատճառներով հնարաւոր չէ եղած կեանքի կոչելու այդ փափաքը:

Համայնքի անդամները ժամանակի ընթացքին ցրուած են Մուսուլ, ինչպէս նաեւ Իրաքի այլ քաղաքներ եւ Սուրիա (Կամըշլի): 2000 թուականին հազիւ քանի մը տուն հայութիւն մնացած էր: 2014 թուականին ուժգին մարտեր ընթացան Իրաքի եւ Լեւանթի իսլամական պետութեան եւ տեղաբնակ եզտիներու միջեւ, որուն պատճառով, բնակավայրը եւ բնակիչները մեծապէս տուժած են: Հայ Կաթոլիկներու Ս.Գեորգ Նահատակ եկեղեցին նոյնպէս պայթեցուած է ահաբեկիչներուն կողմէն:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԻՐԱՔԱՀԱՅ ԹԵՄԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Ա-Հայ Առաքելական Եկեղեցի

Քրիստոնեությունը մուտք գործած է հիւսիսային Միջագետք II դարուն, երբ այդ տարածաշրջանը մաս կը կազմէր Հռոմեական Կայսրութեան, իսկ հարաւային Միջագետքը կը գտնուէր պարսկական տիրապետութեան ներքոյ:

V դարու առաջին կիսուն, այսպէս կոչուած Պարսկաստանի Եկեղեցին, կ'անջատուի ուղղափառ քրիստոնեաներուն ընտանիքէն եւ ինքզինք կը հռչակէ ինքնավար: Իսկ Եփեսոսի Ժողովին (431 թ.) կ'ընդունի Նեստորական Վարդապետութիւնը¹⁷⁵: Յետագային, 451 թ. Քաղկեդոնի Ժողովին որոշումներուն հակառակ, Միաբնակներու երկու խմբաւորումներ՝ Ասորական ազգային կամ Յակոբիկեան Եկեղեցին եւ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին, հաստատուեցան Միջագետքի մէջ եւ ունեցան իրենց ուրոյն նուիրապետութիւնները: Յետագային, սակայն, վերոյիշեալ երեք եկեղեցիներուն պատկանող որոշ թիւով խումբեր նոյնպէս կ'անջատուին իրենց ազգային եկեղեցիներէն՝ ընդունելով Վատիկանի գերիշխանութիւնը, պահելով հանդերձ իրենց ազգային ծեսերն ու սովորութիւնները:¹⁷⁶ Ասոնք են Քաղդէական, Ասորի Կաթոլիկ եւ Հայ Կաթոլիկ Եկեղեցիները:

Իրաքի քրիստոնեայ համայնքներու մեծամասնութիւնը քաղաքաբնակ են եւ կը զբաղին առեւտուրով եւ արհեստներով, բացառութեամբ Մուսուլի շրջանին մէջ գտնուող գիւղական կարէւոր

¹⁷⁵ XIII դարուն Նեստորական Եկեղեցին, ինչպէս միւս եկեղեցիները ենթարկուած էր Լենկ Թիմուրի եւ իր յաջորդներու հալածանքներուն եւ քանդուած: Իրաքի Նեստորականներէն կարէւոր հատուած մը միացած էր Քաղդէական Եկեղեցիին: Իսկ պատերազմէն ետք, այս եկեղեցւոյն անդամներէն շուրջ 25.000 հոգի, քրիստանական իշխանութիւններու կողմէն 1920 թ. Պարսկաստանի գաղթականներէն փոխադրուեցան Իրաքի հիւսիսային շրջանը: Իսկ 1933 թ. Սումելի (հիւսիսային Իրաք - Դըհօք նահանգի գիւղերէն մէկը) մէջ ասորիներու կոտորածներէն ետք, անոնցմէ 6000 հոգի անցան Սուրիա եւ հոն ալ հաստատուեցան (Գեորգեան Կ., նշ. աշխ., էջ 379-380):

¹⁷⁶ Նոյն:

համայնքներու՝ քաղղեական, հայ, ասորի ազգային եւ կաթոլիկ,¹⁷⁷ որոնք կը զբաղին անասնաբուծութեամբ եւ հողամշակութեամբ:

Դարերու ընթացքին Մուսուլի, Պաղտատի եւ Պասրայի մէջ քրիստոնէաները կազմած են այս քաղաքներուն բնակչութեան կարեւոր տոկոս մը: Այսպէս, XIX դարուն Իրաքի քրիստոնէաներու մեծամասնութիւնը կեդրոնացած էր Մուսուլի մէջ՝ 75.3%, Պաղտատի մէջ 17.5% եւ Պասրայի մէջ՝ 7.2%¹⁷⁸:

Ըստ 1890 թ. մարդահամարին՝ Իրաքի երեք վիլայիթներու բնակչութեան թուաքանակը հետեւեալն էր.

Պաղտատի վիլայէթ՝ 850.000 շունչ, որմէ 7.000 քրիստոնէայ,

Մուսուլի վիլայէթ՝ 300.000 շունչ, որմէ 30.000 քրիստոնէայ,

Պասրայի վիլայէթ՝ 680.000 շունչ, որմէ 2.850 քրիստոնէայ¹⁷⁹:

Ներկայիս Իրաքի մէջ պաշտօնապէս ընդունուած եւ ճանչցուած քրիստոնէայ համայնքներն են՝ Քաղղեացիներ, Ասորիներ, Սիրեաք, Հայեր (Առաքելական եւ Կաթոլիկ), Բողոքականներ իրենց տարբեր ճիւղաւորումներով (Աւետարանականներ, Ասորական Ազգային-Աւետարանական եւ Շաքաթապահ Աղեւնթիստներ): Սակաւաթիւ համայնքներ են Յունածէս Օրթոդոքս, Յունածէս Կաթոլիկ, Լատիններ եւ Ղայտի ուղղափառ եկեղեցիներուն հետեւողները¹⁸⁰:

Թէեւ Իրաքահայ թեմի պատմութեան նոր շրջանը, ինչպէս վերը նշեցինք, կը սկսի 1638 թուականին, այնուամենայնիւ, մինչեւ XVIII դարու կէտերը Պաղտատի եւ Պասրայի հայոց հոգեւոր տեսչութեան գործը կանոնաւոր ձեւ մը ունեցած չէ եւ պատահական կարգադրութիւններ եղած են միայն¹⁸¹:

Պասրայի հայերը, մեծամասնութեամբ Ջուղայեցի էին, եւ հետեւաբար, հոգեւոր տեսչութեան համար կապուած էին Նոր Ջու-

¹⁷⁷ Ա. Համաշխարհային Պատերազմէն ետք, 1929 թուականին այստեղ կը հիմնադրուի մի քանի զուտ հայաբնակ գիւղեր ղեկավարութեամբ՝ Լեւոն Շաղոյեանի, ուր բնակութիւն պիտի հաստատէին որոշ թիւով վանեցի հայ գաղթականներ, մեծամասնութեամբ հողամշակներ (տե՛ս Օհանեան Ա., Իրաքի Հայկական Համայնքը 20-րդ Դարուն, Երեւան, 2016, էջ 50)

¹⁷⁸ Cuinet V., La Turquie d'Asia, Paris 1894, pp. 17, 220.

¹⁷⁹ Ibid:

¹⁸⁰ 307-306 صفحة 2014 بغداد – العراق – المسيحيون في العراق – الدكتور سعد سلوم (Sopp. Մա՛ղ Սալլում, Իրաքի Քրիստոնէաները, Պաղտատ, 2014, էջ 306-307):

¹⁸¹ Ալպոյաճեան, Իրաքի Հայ Գաղութը. Գարագաշ Հ., Պարսկահայ Տարեցոյց 1930, էջ 86-87:

դայի առաջնորդութեան: Իսկ Պաղտատի հայերը, որոնց մեծ մասը ծագումով Համատանցի էին, ուղղակի կապուած էին Էջմիածնին եւ Տէրունի Վիճակ մը կազմած էին: «...Պաղտատ երբեմն Նոր Ջուդայէն կառավարուած է սակայն, ի բնուստ Տէրունի էր եւ Պասրա միայն Նոր Ջուդայի վիճակ էր ...»¹⁸²:

Հոգեւոր տեսչութեան վերաբերեալ XIX դարու սկզբնական թուականները կրող հետեւեալ կոնդակները առկայ են Պաղտատի առաջնորդարանի արխիւներուն մէջ¹⁸³:

1- 1811 թուակիր կոնդակ մը՝ շնորհակալութեան գիր, գրուած օրուան Երուսաղէմի պատրիարք Տ. Թիոդորոս վրդ.ի կողմէ, ուղղուած Պաղտատի Ս. Աստուածածին եկեղեցոյ Աւագերէցին եւ Մահտեսի Դուկաս աղային մասնաւորաբար, որոնք եկեղեցոյ մէջ յատուկ գանձանակին մէջ գոյացած հազար հարիւր (1100) օսմ. դրուշը դրկած են Ս. Աթոռ իբր նուէր: Համաձայն այս կոնդակին, եղած օժանդակութիւնը փոխանցուած է Կ.Պոլսոյ պատրիարքութեան միջոցով¹⁸⁴:

2- 1814 թուակիր կոնդակը, խմբագրուած Ն.Ս.Օ.Տ.Տ. Եփրեմ Ս. Ջորագեղցի Ամենայն Հայոց Կաթողիկոսի (1809-1830) կողմէ, ուղղուած Սպահանի թեմին (Նոր Ջուդա): Կաթողիկոսը Օհաննէս արքեպիսկոպոսը ցկեանս առաջնորդ կը նշանակէ Սպահանի եւ Հնդկաստանի թեմերուն: Քաղաքներու շարքին յիշուած է Պասրան: Ուրեմն, ինչպէս վերը նշեցինք, 1814 թ. Պասրա կը մնար Նոր Ջուդայի Ս.Ամենափրկիչ վանքին իրաւասութեան ներքոյ¹⁸⁵:

XVIII դարուն Պաղտատի հայ բնակչութեան մասին ըստ Էջմիածնի կաթողիկոսական դիւանի գրութիւններուն, Պաղտատ ունէր երեք ծխատէր քահանաներ, որոնց գոյութիւնը ենթադրել կուտայ, որ Պաղտատի մէջ 200-300 տուն հայ բնակչութիւն եղած ըլլալու է¹⁸⁶:

XIX դարի վերջերը՝ Օսմանեան տիրապետութեան օրոք, Իրաքի հայ գաղթօճախները սկսած են նուազիլ այդ պետութեան Իրաքի բնակչութեան դէմ կիրառած կեղեքիչ քաղաքականութեան

¹⁸² Յովհաննէանց, Յ. Տէր, Պատմութիւն Նոր Ջուդայոյ, Նոր Ջուդա, 1980 Բ. հատոր, էջ 104:

¹⁸³ Իրաքահայ Թեմի Համառօտ Պատմութիւն, Պաղտատ, 2005 (անտիպ):

¹⁸⁴ Նոյն:

¹⁸⁵ Նոյն:

¹⁸⁶ Աբրահամեան, նշ. աշխ., Բ հատոր, էջ 46-47:

պատճառով: Տեղացի արաբ ժողովուրդին հետ տուժած է նաև հայ բնակչութիւնը: Իրաքահայերէն ոմանք մեկնած են Հնդկաստան, Պարսկաստան, եւրոպական երկիրներ եւ այլ վայրեր:

1870-ական թուականներուն Իրաքի հայերու թուաքանակի մասին վաւերական գաղափար մը տալու համար կը յիշատակենք հետեւեալ տեղեկութիւնները.

Համարատուութիւն Ազգ. Կեդրոնական Վարչութեան 1872-1873 Ամի, Պոլսոյ Պատրիարքութեան Մահմանադրութեան գործադրութիւն ի Գաւառացս, Մասն Գ., էջ 49, պարբ. 15-ի բովանդակութիւնը հետեւեալն է.

«Պաղտատ՝ առաջարկելով թէ Թաղական խորհուրդ մը միայն իրեն կը բաւէ, եւ վիճակ մը կազմելու չափ ոչ ժողովուրդ ունի եւ ոչ թեմ, ինչպէս որ իր դրկած վիճակագիրն ալ կը ցուցնէր, իրաւացի դատուելով ընդունուեցաւ առաջարկութիւնը եւ Թաղական խորհուրդը վաւերացուեցաւ»¹⁸⁷:

Իսկ Համարատուութիւն Ազգային Պատրիարքարանի 1872-1873 Ամի Գաւառական Վիճակագրութեան մասն Դ., էջ 47ի համաձայն.

Պաղտատ քաղաք՝

Բնկ. 175 տուն Քաղդէացի Հռոմ. (1 եկեղ. եւ 1 վարժ.) 70 տուն Լատին՝ (1 եկեղեցի եւ 1 վարժ.) 30 անձ Բողոքական յորոց մինն է Հայոց: Արհեստաւորք, Վաճառական զանազան արհեստաւորք, եւ տէրութեանց ծառայողք: Եկեղ. 2, Ս. Աստուածածին՝ փլատակ, եւ Ս. Երրորդութիւն: Վարժ. 1 Ս.Մեսրոպեան, մանուկ 50, աղջիկ 11, Ուսմ. Քերականութիւն, ընթերց.: (Ասոնցմէ զատ կան նաև 18 Հայ մանկտիք, որոնք Լատինացոց դպրոցը կը յաճախեն գաղղիերէն եւ արապերէն ուսանելու եւ 40 մանուկ եւս տաճկաց մզկիթները՝ տաճկերէն ուսանելու): Ծախք տարեկան 4200 դրշ. Ծնողներէն եւ ժողովուրդէն¹⁸⁸:

Մուսուլ քաղաք՝ Բնկ. Պանդուխտ Հայք: Արհ. Վաճառական եւ զանազան արհեստաւոր: Եկեղ. 1 Ս. Էջմիածին¹⁸⁹:

¹⁸⁷ Իրաքահայ Թեմի Համաժողով... նշ. աշխ., էջ 35:

¹⁸⁸ Հայ Առաքելականներու առանձին յիշատակութիւն չկայ: Հաւանաբար, «բնիկ 175 տուն» ասոնց կ'ակնարկէ, որով լռելեայն կը հասկցուի, թէ այս թիւը վիճակ կազմելու չափ ժողովուրդ չէ:

¹⁸⁹ Իրաքահայ Թեմի նշ. աշխ., էջ 36:

Պասրա քաղաք՝ Բնկ. 2 Հայք պանդուխտ, 70 անձ Հոռմէա-
դաւան ազգք քրիստոնէայք (1 եկեղեցի): Արհ. Վաճառական եւ գա-
նազան արհեստաւոր: Եկեղ. 1 Ս. Աստուածածին¹⁹⁰:

Յիշատակութեան արժանի է Պօղոս պատիարք Գրիգորեա-
նի՝ Պաղտատ այցի մասին հետեւեալ կցկտուր տեղեկութիւնները,
զոր քաղած ենք «Ազգապատում»ի էջերէն. Պատրիարք Գրիգորեա-
նը Կ. Պոլսոյ պատրիարք ընտրուելէ առաջ (1815-1823 թթ.) այցե-
լած է Պաղտատ պարսկերէն սորվելու համար: Հետաքրքրական
տեղեկութիւններ կան վերոյիշեալ անձնատրութեան մասին,
որոնք կը փափաքինք յիշատակել ստորեւ, քանի որ կեանքի որոշ
շրջան մը անցուցած է Պաղտատ եւ յարաբերութեան մէջ մտած է
տեղւոյն համայնքին հետ.

Ան ծնած է 1763 թուականին Ատրիանապոլիս, համեստ ըն-
տանիքէ: Մինչեւ 28 տարին բոլորելը, ապրուստը հոգալու համար
հետեւած է դերձակութեան, նոյնիսկ մայրենին շիմանալով մինչեւ
այդ տարիքը: Ապա ուսման փափաքը արթնցած է մէջը եւ հետե-
ւած է հայերէն սորվելու: Արաբերէնը զարգացնելու համար կը մեկ-
նէ Եգիպտոս, իսկ պարսկերէն սորվելու փափաքով կու գայ Պաղ-
տատ, ուր երկու տարի մահմետական դերձակի մը մօտ կ'աշխա-
տի՝ շահելով իր հանապազօրեայ հացը, սակայն առանց հայ ինք-
նութեան մասին յայտնելու:

Մահմետական վարպետը՝ Եուսուֆ անունով, կ'ուզէ ուրբա-
թօրեայ աղօթքներուն տանիլ զինք, սակայն Պօղոս կը խուսափի: Ի
վերջոյ կը հարկադրուի Պաղտատի հայոց եկեղեցին (Ս.Աստուա-
ծածին – Ս.Օ.) դիմել, ինքզինք ճանչցնել ու անոնց պաշտպանու-
թեամբ Երուսաղէմ վերադառնալ: Կը մտնէ կրօնական ասպարէզ,
կը փաստուի կարողութիւնը: Աբեղայ կը ձեռնադրուի 1807 թ., ե-
պիսկոպոս՝ 1814 թ., եւ Պոլսոյ Պատիարք՝ 1815 թ.: Պատրիարքու-
թեան շրջանն է 1815-1823 թթ.¹⁹¹:

Ուշադրութեան արժանի է, որ Պաղտատի հայութեան
թուաքանակը այս ժամանակաշրջանին բնական աճ մը չէ ունե-
ցած: Ըստ Դ. Թաղէտսեանի՝ այս քաղաքին մէջ բնակութիւն հաս-

¹⁹⁰ Նոյն, էջ 37:

¹⁹¹Օրմանեան, Ազգապատում, պարք. 2351-2352: Նա՛եւ Պատիարքի XIX դարու
առաջին քառորդին հեղինակած «Խրատի Թանգարան» աշխատութիւնը՝ գրուած
իրմ: վերջ եկողներուն համար (Ս. Էջմիածին 1999):

տատած հայորդիներու թիւը 90 կամ 100 տունը անցած չէ երբեք, 1915 թուականէն նորեկ գաղթականներուն Իրաք ապաստանելէն առաջ¹⁹²: Այս կապակցութեամբ նշենք հետեւեալ գրառումները:

1- Պաղտատէն Էջմիածին կաթողիկոսին ուղղուած է համախօսական գրութիւն մը, որով կը խնդրուի թոյլատրել եւ օրինական համարել ամուրիներուն ամուսնանալ «կոյսերուն»¹⁹³ հետ՝ պատճառաբանելով, որ տեղի հայ բնակչութիւնը փոքրաթիւ է, եւ միշտ չէ, որ հնարաւոր է կոյսերէն զոյգեր կազմել: Յիշատակուած այլ պատճառներուն մէջ կան նաեւ երկրի իսլամական դիմագիծը եւ ժանտախտի համաճարակի¹⁹⁴ հետեւանքով զոհ գացողներուն ահռելի թիւերը»¹⁹⁵:

2- Իսկ Ա. Ալպոյաճեան կը նշէ. «...Սօտաւորապէս երեք դարեայ այդ ժամանակամիջոցին աճումի այս անբնական չափը ըստ ոմանց, արդիւնք է հետզհետէ սովորական դարձած ամուրի կեանքին նախասիրութեան՝ որով վարակուած է ընդհանրապէս պաղտատահայ երիտասարդութիւնը»¹⁹⁶:

Միջագետքի մէջ առաջին անգամ եկեղեցական բարեկարգութեան շրջան մը կը սկսի Միմէոն Երեւանցի, Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալութեան շրջանին (1763-1780 թթ.): Ան, հոն ապրող հայերուն հովուութիւնը կը կազմակերպէ, Պաղտատին տալով «Տերունի», այսինքն՝ Էջմիածինին անմիջապէս ենթակայ թեմ եւ առանձին վիճակ թեմ ունենալով «...Ղարաչօրան-Միւլէմանիյէ, Պարա, Բանդարպուշիր, Խարկ, Բանդարաբաս եւ շրջակայս նոցին»¹⁹⁷: Այս առնչութեամբ կ'ակնարկուի նաեւ Միմէոն կաթողիկոսի՝ 26 Մայիս 1775 թուակիր կոնդակին ուղղուած Իրաքի հայա-

¹⁹² Գոյամարտ, Նիւթեր Իրաքահայ Պատմութեան համար, Բ. տարի, թիւ 15-67, Պաղտատ, 16 Փետրուար 1950:

¹⁹³ Կոյս բառը գրաբարի մէջ «կողմ» կը նշանակէ: Ուստի, հոս «մօտիկ ազգական» իմաստը ունի:

¹⁹⁴ Ժանտախտ համաճարակի մոլեգնումը Իրաքի ամբողջ տարածքին մինչեւ 1832 թուականը, երկրի ընկերա-տնտեսական իրավիճակը եւ յաճախ ժողովրդագրական դիմագիծը էապէս փոխած է:

¹⁹⁵ Աբրահամեան, նշ. աշխ., էջ 47 (Դիւան Հայոց Պատմութեան հատոր 8, էջ 41):

¹⁹⁶ Ալպոյաճեան, Իրաքի Հայ Գաղութը. Գարագաշ Հ., Պարսկահայ Տարեցոյց 1930, էջ 90:

¹⁹⁷ Նոյն էջ 87 (Դիւան Գ., էջ 797-806, Երեմիա Օշականցիի ցուցակը):

շատ կեդրոններ «ի Բաղդադ, ի Ղարաչօրան, ի Բասրա, ի Բանդար Բուշիր եւ շրջակայս նոցին»¹⁹⁸:

Միմեոն կաթողիկոսի՝ Միջագետքին վերաբերեալ իր գործունէութեան մասին կը նշենք հետեւեալ տեղեկութիւնները.

«...Ուրիշ յիշատակութեան մը համաձայն Միմեոն կաթողիկոս 1765 թուականին Պաղտատի Տէրունի վիճակի առաջնորդներուն, որոնք միայն Պասրան ունէին իրենց տեսչութեան տակ, կու տայ պաշտօն նաեւ իբր նուիրակ շրջելու Հնդկաստանի բազմաթիւ հայաբնակ քաղաքները:

Այս նուիրակները կը կրէին Նուիրակ երկրին Հնդկանց, Բաբելացոց եւ ամենայն ծովերացն Ովկիանու տիտղոսը»:

Այս դրութիւնը կը պահպանուի մինչեւ XIX դարու սկիզբները, կամ աւելի ճշգրիտ, մինչեւ 1828 թ., երբ Ռուս-Թուրք պատերազմին պատճառով կ'արգիլուի Էջմիածնի նուիրակներուն մուտքը ի Թուրքիա:

Ասոր գլխաւոր ապացոյցը 1808ին Դանիէլ Սուրմառեցի կաթողիկոսին գրած հետեւեալ տողերն են. «Բաղտատ է Տէրունի, եւ նուիրակն Հնտու է միանգամայն եւ նուիրակ Բաղտատու, եւ կոնդակն մի է» - Տես Դիւան Ե., էջ 576»¹⁹⁹:

Դանիէլ Սուրմառեցի եղած է պատրիարք Կ.Պոլսոյ 1799-1800 թթ., ապա Կաթողիկոս Ամենայն Հայոց 1807-1808 թթ.: Սուրմառուի վերաբերեալ կան որոշ ակնարկութիւններ որպէս թէ Իրաքի մէջ քաղաք մըն է: «Դանիէլ Սուրմառեցին էր բնիկ համանուն գաւառին մէջ Սուրմառի կամ Սուրմալու կամ Միւմէլի ասանէն որ սահմանակից է Պայազիտի, եւ թերեւս ասկէ կամ Պայազիտ վերաբնակեալ ըլլալէն Պայազիտցի ալ կոչուած»²⁰⁰:

1828-էն ետք այլեւս անկարելի էր դառնալ հին դրութեան, վասնզի ի սպառ կը ջնջուէր նուիրակ դրկելու դրութիւնը, եւ Օսմանեան կայսրութեան սահմանին մէջ գտնուող «Տէրունի» վիճակներէն վերջին երկուքը, Իզմիր եւ Պաղտատ կ'ենթարկուին Կ. Պոլսոյ պատրիարքութեան իրաւասութեան 1844 թ.ի կարգադրու-

¹⁹⁸ Աբրահամեան, նշ. աշխ., էջ 45:

¹⁹⁹ Ալպօյաճեան, Իրաքի Հայ Գաղութը. Գարագաշ Հ., Պարսկահայ Տարեցոյց 1930, էջ 87-89:

²⁰⁰ Օրմանեան, Ազգապատում, պարբերութիւն 2189:

թեամբ, որով կը ճշդուէին Էջմիածնայ կաթողիկոսին եւ Պոլսոյ Պատրիարքարանին յարաբերութիւնները:

Կ. Պոլսոյ Պատրիարքարանը 1847 թ. Պաղտատ կը դրկէր առաջին անգամ իր կողմէն եկեղեցական մը իբր առաջնորդ՝ անոր հոգեւոր իրաւասութեան ենթարկելով Պասրան եւ Մուսուլը, ուր Սղերդի եւ Տիարպէթիի հայեր հաստատուած էին XIV դարուն:

Միջագետքի հայոց հոգեւոր տեսչութիւնը երկու շրջաններ կ'ունենայ.

- Ա. XVIII դարէն մինչեւ 1828 թ. նուիրակներուն շրջան:
- Բ. 1828 թ.էն մինչեւ XX դար²⁰¹:

Ինչպէս յիշուեցաւ, թեմը կապուած էր Նոր Ջուղայի եւ մասնաւորապէս Ս. Ամենափրկչեան վանքին մինչեւ 1840-ական թուականները: Այնուամենայնիւ, ելլելով քաղաքական իրադրութենէն, Պաղտատի ազգային իշխանութիւնը աւելի յարմար կը նկատէ թեմը կցելու Կ.Պոլսոյ պատրիարքութեան: Այս ուղղութեամբ կապուած դիմումին՝ կ'ընդառաջէ Նոր Ջուղա: Որով Պաղտատի վերջին Նոր Ջուղայէն նշանակուած առաջնորդը կ'ըլլայ Տ. Սուքիաս վրդ. Յովնանեանը 1845 թ.:²⁰²

Պոլսոյ պատրիարք Տ. Մատթէոս արք., 1847 թ. Սեպտեմբեր թուակիր կոնդակով, ուղղուած Պաղտատի հայութեան, Տ. Սեպրոպ ծ. վրդ. Պոլսեցին (Բերիացի) իրեն փոխանորդ կը նշանակէ «ի հովութիւն հօտին եւ ի տեսչութիւն Ս. Եկեղեցոյն:» Կը թելադրէ Պաղտատի հայ ազգայիններուն գործակցիլ անոր հետ, որպէսզի անիկա կարենայ իր վրայ դրուած պարտականութիւնները արդարացնել:

Սեպրոպ ծ.վրդ. 1847 թ.ին Պաղտատ հասնելուն պէս կը ձեռնարկէ եկեղեցոյ եւ ազգի միւս գործերուն բարեկարգութեան, իբր քահանայ իրեն օգնականներ ունենալով Տ. Օհան քինյ. Սերովբեան Համատանցին եւ Տ. Յարութիւն քինյ. Սիրականեան Տիգրանակերտցին:

Իսկ 1-4-1850 թուակիր կոնդակով, օրուայ Կ.Պոլսոյ պատրիարք Ամենապատիւ Տ. Յակոբ արք. ուղղուած Պաղտատի ազգա-

²⁰¹ Միջագետքի Հայոց առաջնորդներու, տեղապահներու եւ կաթողիկոսական նուիրակներու ցանկը մինչեւ 20-րդ դար, տե՛ս Յաւելուածներու բաժինին մէջ:

²⁰² Իրաքահայ Թեմի..., նշ. աշխ. (Թաղեւսեան Դ., Նօթեր, տետր 2, էջ 17):

յին իշխանութեան պատրիարքական փոխանորդ Տէր Մեսրոպ ծ.վրդ.ը կը նշանակէ Տեսուչ Եկեղեցւոյ եւ Առաջնորդ Իրաքի Հայոց:

Ստորեւ կը նշենք Իրաքի մէջ XIX դարուն գոյութիւն ունեցող հայ առաքելական եկեղեցիները.

1-Ս. Աստուածածին եկեղեցի: Ինչպէս վերը նշեցինք, Պաղտատ առաջին անգամ նուաճուեցաւ Օսմանցի թուրքերուն կողմէն 1534 թուականին: Այստեղ, հայեր երեւան եկան Օսմանեան բանակներուն իբրեւ հետնորդ, հաւանաբար ոչ այնքան մեծ թիւով: Իսկ 1638 թուականին Օսմանցիներու վերջնական գրաւումէն եւ Շահ Ապպասի՝ Արարատեան նահանգը ասպատակելէն եւ ամալացնելէն տարիներ առաջ, մասնաւորապէս Պաղտատի մէջ հայերուն գոյութիւնը կը հաստատուի, ինչ որ հերքում մըն է, թէ հայեր հոն հաստատուած են վերոյիշեալ թուականէն վերջ միայն: Օսմանեան բանակի մէջ գտնուող Կեօք Նազար, որ արժանացած էր Օսմանցի Սուլթան Մուրատի երախտապարտութեան, խնդրած էր սուլթանէն իր ազգակիցներուն համար հող՝ եկեղեցւոյ եւ գերեզմանատան կառուցման հրաման ստանալ: Այսպիսով, Պաղտատի հիւսիսային կողմը, 1639 թուականին, կը կառուցուի Ս.Աստուածածին եկեղեցին եւ Պապ Էլ Մուա՛ղղըմին կից հայկական գերեզմանատունը: Այս եկեղեցւոյ կառուցումը կը համարուի նաեւ իրաքահայ զաղութի վերակազմութեան թուականը²⁰³: Սակայն, եկեղեցւոյ պատկանելիութիւնը բազմիցս կռուի առարկայ եղած է հայերուն եւ ուրիշ քրիստոնէայ համայնքներուն միջեւ:

Յիշենք ասոնցմէ մէկը. 1802 թուականին նեստորականներ հերքական անգամ դատ կը բանան հայ համայնքին դէմ՝ վերոյիշեալ եկեղեցին իրենց սեփականութիւնը համարելով: Դատավարութեան ընթացքին իրենց՝ նեստորականներուն պատկանելիութեան ցուցաբերած հրովարտակ-արտօնագիրը, յետ քննութեան դատարանը կը հաստատէ զեղծ ըլլալը: Իսկ հայոց սեփականութեան հրովարտակը (Ֆէրմանը)²⁰⁴ վաւերական գտնելով՝ եկեղեցին կը մնայ հայոց սեփականութիւն:

²⁰³ 1988 թուականին Իրաքահայ զաղութի վերակազմութեան 350-ամեակը մեծ շուրջով նշուեցաւ ազգային եւ կրօնական տարբեր կառոյցներու կողմէն:

²⁰⁴ Ֆէրմանը իր համառօտ թարգմանութեամբ՝ տե՛ս յաւելումներու բաժին: Սոյն Ֆէրմանի թարգմանութիւնը կատարած է 22 Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի Պատմութեան ինստիտուտի Մամուլի բաժնի աշխատակից Գայիանէ Նալբանդեանը, որուն համար անչափ երախտապարտ ենք:

Տեղացի կարգ մը քրիստոնեայ համայնքներ, որոնք կը յաւակնէին ըսելու, թէ սոյն եկեղեցին օսմանցիներուն՝ Պաղտատը գրաւելէն առաջ գոյութիւն ունէր, անարդարօրէն եւ անհիմն կերպով կ'ամբաստանէին Կեօք Նազարը, որ իբր նեստորականերուն պատկանող փլատակ եկեղեցիին հողամասը գնած եւ անոր վրայ կառուցած է Ս. Աստուածածին եկեղեցին: Յետագային, 1922 թուականին (Իրաքի անկախ կառավարութեան կազմուելէն ետք), պետութիւնը անգամ մը եւս, պիտի հաստատէր կալուածի իրաքահայ համայնքին պատկանելիութեան մասին եւ պատկան գերատեսչութենէն պիտի ստանար եկեղեցոյ կալուածագիրը՝ «Թափուի Մենէտ»ը:

Զաւէն արք. Տէր Եղիայեան եւս կը հաստատէ Ս. Աստուածածին եկեղեցոյ հայոց սեփականութիւնն ըլլալը: Ան կը պատմէ թէ, իր պատանելութեան քահանայ հօր հետ հոն ապրելով, առիթը ունեցած է կարդալու Աւետեան անուն բնիկի մը ձեռագիր տետրը, որ կը բովանդակէր Պաղտատի հայ գաղութին կեանքէն հին ու նոր յուշեր: Ըստ Աւետեանի տեղեկութեան՝ Սուլթան Մուրատը իր բանակին մէջ ունէր ԿԷՕԲ ՆԱԶԱՐ անունով զօրապետ մը, որ պաշարման տազնապալից օրերուն կը ձուլէ հսկայ թնդանօթ մը, որուն միջոցաւ կը քանդէ պարիսպը եւ կ'ապահովէ քաղաքի արագ գրաւումը: Ոչ մէկ հայ կար հոն երբ թուրք բանակը կը խուժէ ներս, սուրէ անցնելով նեստորական քաղղեացիները՝ իբր պարսկահպատակ:²⁰⁵

Գալով հայակերտ պատմական հրետանիին, որ քաղաքին առումը փութացուցած էր, այն դարերէ ի վեր զետեղուած կը մնար Պաղտատէն դուրս, Պապ Էլ Մուա'դդմի առաջ, իբր պաշտամունքի առարկայ տեղացի արաբներու²⁰⁶:

Այնուամենայնիւ, ականաւոր երկու հայ պատմագիրներ՝ Առաքել Դարիժեցի եւ Գրիգոր Դարանաղցի, որոնք ժամանակակիցներն էին օսմանցիներու կողմէն Պաղտատի գրաւումին, հայ զինուորականի (իմա՝ Կեօք Նազար)ի մասին զարմանալիօրէն

²⁰⁵ Ալպոյաճեան, Իրաքի Հայ Գաղութը, Պարսկահայ Տարեցոյց, 1930, Թեհրան, էջ 80:

²⁰⁶ Պաղտատ քաղաքը հիմնուած է Աբու Ջա'աֆրո Էլ-Մանսուր խալիֆայի կողմէն 762-766 թթ., պարսպապատ կլորածէ եր եւ ունէր 4 դարպաս, որոնք կը բացուէին դէպի Պասրա, Սուրիա, Քուֆա եւ Խուրասան տանող ճանապարհներուն վրայ:

ոչինչ կը յիշատակեն: Դարանաղցի կը նշէ թէ «ի վերանալ թուին հայոց ՌՁԵ (1636 թ.) գնաց այս խրոխտ եւ ահարկու արինարբու Սուլթան Մուրատսբազում եւ անհուն զօրօք ի վերայ Պաղտատուն փութանակի էառ զնա զմին պատերազմող զօրացն պարսից ոչ ապրեցոյց, այլ հասարակ բնաջինջ արար, բայց ի կանանց եւ ի մանկտիցն, որ զօրաց յաւարի եւ յափշտակութիւն հրամայեաց, եւ յարանց ոչ զոք ապրեցոյց եւ ոչ մի, բայց ի գոեհկաց եւ շինականացն, որ ի մի կողմ լինելով դղեկին, այսինքն բերդին, շատ ոք ի նոցանէ զհրեանց կանայս եւ զտղայս իրեանց ձեռօք մորթեցին որպէս զարջառս եւ զոչխարս եւ ապա զհրեանք եւս»²⁰⁷:

Իսկ Դարիժեցի՝ թէ «ՌՁԵ (1638 թ.) Ապրիլ 28-ին Սուլթան Մուրատն գնաց ի վերայ Բաղտատայ եւ ի Նոյեմբերի 6 էհաս ի Պաղտատ եւ ծեծեաց զբերդ հզօր զօրութեամբ 38 օր, եւ ի Դեկտեմբեր 4-ին այլուր 14 եւ Ուրբաթ օր ըլլալը գրած է- էառ զբերդն եւ զզօրսն պարսից որ անդ էին, իսպառ կոտորեաց քինախնդրութիւն արարեալ վասն իւրոյ զօրացն, զորս կոտորեցին պարսիկք յԵրեւան, եւ զփառաւոր իշխանն պարսից, որ էր ի մէջ բերդին, ուրում անունն էր Խալաֆ բէկ, բազում իշխանօք առաքեաց ի Ստամբօլ, եւ անդ մեռան, եւ յիւրոց իշխանացն կարգեաց իշխան ի Բաղտատ, եւ զամենայն աշխարհն յանձն արա նմա»²⁰⁸:

Իսկ անգլիացի նշանաւոր արեւելագետ Լօնգրիջ²⁰⁹ կը գրէ թէ պարսիկներ վերջին անգամ Պաղտատը գրաւեցին 1623 թուականին եւ իրենց տիրապետութեան տակ պահեցին 15 տարի մինչեւ 1638 թուականը: Այս միջոցին Շահ Սաֆի, Պաղտատի փոխարքայ (կառավարիչ) նշանակեց Պաքթաշ Խան անունով սպայ մը, ծնունդով հայ:

Սուլթան Մուրատի՝ 1638 թուականի 40 օրերու Պաղտատի պաշարման շրջանին Պաքթաշ Խանն էր բերդը պաշտպանողը: Պաշարման վերջին օրերը Լօնգրիջ կը նշէ «նոր թնդանօթ հասաւ Մուրատի բանակատեղին Տիգրիսի վրայով»: Յաջորդող ոմբակո-

²⁰⁷ Գրիգոր Դարանաղցի, Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցոյ կամ Դարանաղցոյ, հրատարակեց Մեսրոպ վարդապետ Նշանեան, Երուսաղէմ, 1915, էջ 579:

²⁰⁸ Առաքել Դարիժեցի, Պատմութիւն, աշխարհաբար թարգմանութիւնը, յառաջարանը եւ ծանօթագրութիւնները՝ Վարազ Առաքելեանի, Երեւան, 1988, էջ 446):

²⁰⁹ Longrigg H. S., Four Centuries of Modern Iraq, London, 1925, pp. 75-98.

ծումներու ընթացքին քաղաքի ամրութիւնները մի առ մի տեղի տուին: Պաքթաշ խան անձնատուր եղաւ: Սուլթան Մուրատ ասպետօրէն կ'ընդունի եւ կը պարգևատրէ Պաքթաշ խանը 1638 թըւականի Ծննդեան Տօնին օրը 25 Դեկտեմբերին: Մինչ այդ օսմանցի սպաներ եւ զինուորներ կը տոչորէին վրէժ լուծելու: Մաս մը պարսիկ բերդապահներ կը մերժեն յանձնուիլ, եւ յաջորդող սպանդի ընթացքին զոհ կ'երթայ ամբողջ 20,000 պարսիկ պահակագօրքը»²¹⁰:

Իսկ Հրաչեայ Աճառեան կը յիշատակէ, թէ 1624-ին, պարսիկներ Պաղտատը վերագրաւելէն ետք, վերաշինեցին այն, պարիսպները բարձրացուցին եւ 8 մեծ եւ ամուր աշտարակներ կանգնեցին. Պաղտատի վրայ իբր մարգպան եւ ոստիկան նշանակեցին հայազգի Սէֆի Ղուլի խանը: «...Սուլթան Մուրատ Դ. առաւ Պաղտատը Պարսից ձեռքէն՝ երկար պաշարումէ ետք 1636 թուին: Նոյն ժամանակ Պաղտատի կուսակալն էր հայազգի Բէկտաշ Խան, որ քաջութեամբ խիզախեցաւ Մուրատի դէմ, բայց յաղթեց սուլթանը եւ Պաղտատը առաւ, մեծապէս պատուելով զհայ իշխանը: Սուլթան Մուրատի շրջանին հայերուն առիթ տրուեցաւ գաղթելու Պաղտատ»:²¹¹

Իրաքահայ գաղութի երէց անդամներէն Դաւիթ Յակոբ Թաղէտսեան²¹² եւս իր յուշերուն մէջ կ'անդրադառնայ Ս. Աստուածածին եկեղեցւոյ հիմնադրման պատմութեան եւ կը հաստատէ եկեղեցիին հայոց պատկանելիութեան փաստերը²¹³:

²¹⁰ Այս հեղինակի նկարագրութեան մէջ ալ թնդանօթի հեղինակին ով ըլլալու մասին յիշատակութիւն չկայ:

²¹¹ Աճառեան, Հայ Գաղթականութեան Պատմութիւն, Երեւան 2002, էջ 198:

²¹² Դաւիթ Թաղէտսեան ծնած է Պաղտատ, 14 Հոկտեմբեր 1877 թ. եւ մահկանացուն կնքած 11 Հոկտեմբեր 1978 թ. Պէյրութ, Լիբանան, 101 տարեկանին: Իր կէտանքի տետղութեան զանազան շրջաններուն գրի առած է իր յուշերը, իր լսած ու ականատես եղած դէպքերը, որոնք կարելոր աղբիւրներ են գաղութի պատմութիւնը գրելու համար: Իր յուշերուն լուսատիպ օրինակները կը գտնուին Պաղտատի Առաջնորդարանի արխիւներուն մէջ, որոնցմէ մեծապէս օգտուած են «Իրաքահայ Թեմի Համառօտ Պատմութիւնը» գրելու համար ստեղծուած յանձնախումբի անդամները:

²¹³ Իրաքահայ Թեմի....., նշ. աշխ. (Դաւիթ Թաղէտսեանի յուշերու տետր 1, էջ 102-103):

Մարտիրոս Եպիսկոպոս,²¹⁴ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ խառնակ վիճակին վերաբերեալ տեղի ունեցած եղելութիւնները ստուգելէ ետք, թէ Եկեղեցին հայոց սեփականութիւնը եղած է, դատ կը բանայ նեստորականներուն դէմ: Դատական որոշումով կը փորուին Եկեղեցւոյ ներսն ու դուրսը, երբ երեւան կ'ելլեն Եկեղեցւոյ հայոց սեփականութիւնը հաստատող արձանագրութիւններ, դատարանը սրբավայրը հայերուն կը վերադարձնէ:

Այս Եկեղեցին հրդեհի մը հետեւանքով լուրջ վնասներ կը կրէ եւ անյապաղ նորոգութիւններու կարիքը կը զգացուի: Ուստի դիմումնագիր մը կը ներկայացուի պետական պատկան գրասենեակին՝ թոյլտուութիւն խնդրելով հարկաւոր նորոգութիւնները կատարելու: Դիմումնագիրի գրելառճը, որ աւելի աղերսագիրի նման է, ցոյց կուտայ Օսմանեան տիրապետութեան ձգած ահուդողի եւ սարսափի ազդեցութիւնը փոքրամասնութիւններուն վրայ: Դիմումնագիր-աղերսագիրը ուղղուած էր «Նորին Վսեմութիւն Սուլթանին»,²¹⁵ ստորագրուած է «Ձեր խոնարի ծառաները, համեստ հայ համայնքի, քրիստոնէայ զաւակներէն», անուններու յիշատակութիւնը չկայ, որուն բնագիր օսմաներէն լուսանկարը, հայերէն թարգմանութիւնը կը հրատարակենք յաւելուածներու բաժինին մէջ: Դիմումնագիրի մէջ կը յիշուի թէ՛ հրդեհի մը հետեւանքով ամբողջ շէնքը սւեցած է ծուխ ու մուխէն, նաեւ կրկնատանիքի փայտեայ կառոյցը երդիքին վրայ իյնալով ճեղքեր յառաջացած էին: շէտեաբար, կառոյցը վտանգաւոր կը համարուի, ընդգծելով, որ թէեւ համայնքը ունի ի ձեռին սեփականութեան փաստաթուղթեր եւ նորոգութեան իրաւասութիւն²¹⁶ սակայն վերստին կը դիմէ թոյլատրութեան: Յետ երկարատեւ քննութեանց փոխ-կառավարիչի, այլ գրասենեակներու, նաեւ ճարտարապետի մը կողմէ կը հաստատուի նորոգութեանց ստիպողականութիւնը եւ անյապաղ գործադրումը: Եկեղեցւոյ զանազան մասերուն տարածութիւններն ու չափերը կ'արձանագրուին: Արտօնագիրը կը շնորհուի, 4 Սէֆեր 1215 Հիճ-

²¹⁴ Մարտիրոս Եպիսկոպոս Պոլսոյ Հայոց պատրիարքութեան նուիրակ էր Պաղտատի մէջ 1750ական թուականներուն: (Տես Յաւելուածներու բաժին՝ Միջագետք(Իրաք)ի առաջնորդներու, կաթողիկոսական նուիրակներու եւ տեղապահներու ցանկ):

²¹⁵ Հաւանաբար, ժամանակի ձեւական սովորութիւնը ըլլալու է բոլոր դիմումնագիրները ուղղել Սուլթանի անուն:

²¹⁶ Նորոգութեան արտօնութեան թուականը 1215 Սէֆեր - 28 Յուլիս 1800:

րի, հաւասար 28 Յունիս 1800ի Փրկչական, պայմանաւ, որ շէնքի քարձրութիւնը նախկինէն մէկ աղիւսի չափ պակաս ըլլայ, ըստ օրւան ի զօրու եղող պայմաններուն: Նեստորականներ տեսնելով, որ հայ համայնքը Ս. Աստուածածին եկեղեցին նորոգելու սկսած է, անգամ մը եւս Շարիայի դատարան կը դիմեն, որպէս թէ այս եկեղեցին իրենց մասնաւոր աղօթատեղին եւ կալուածը եղած է: Բնականաբար, այս հերթական անհիմն դիմումն ալ կը խափանուի վերոյիշեալ դատարանին կողմէ:

Ինչպէս վերը յիշեցինք, Էջմիածնի միաբան Մարտիրոս Եպիսկոպոսի ջանքերով, 1750-ական թուականներուն, Մէլտան թաղամասի, Ս.Աստուածածին եկեղեցին հայերու սեփականութիւնը ըլլալը հաստատուած էր:

1800-ական թուականներուն Էջմիածնի Յակոբ արք. կ'առարուի, որպէս նուիրակ Հնդկաստանի հայկական գաղթօճախը հանգանակութեան համար, ուղեկից ունենալով Վրթանէս վարդապետը: Հնդկաստանի մէջ, 25 լիտր ոսկի հանգանակուելէն ետք, վերադարձի ճամբուն կը ժամանէ Պաղտատ, ուր կը լսէ, թէ Էջմիածնի մէջ «տիրում է խառնաշփոթութիւն եւ կաթողիկոսական գահին տիրանալու համար պայքար է մղուում Դանիէլի եւ Դաւթի միջեւ»²¹⁷: Այս պայքարը հայոց եկեղեցական պատմութեան մէջ կը յիշուի Դաւիթ-Դանիէլեան անունով, որ քաղաքական սուր բնոյթ ունեցող պայքար մըն էր: Այս պարագաներու տակ Յակոբ արք. 25 լիտր ոսկիով Էջմիածին վերադարձը ապահով չգտնելով կը մնայ Պաղտատ, ուր կը վախճանի, 21 Հոկտեմբեր 1809ին: Օրուան Օսմանեան իշխանութեան հրամանով մարմինը կը թաղուի Պաղտատի պարիսպէն դուրս: Վեց ամիս ետքը, Անգլիական Լիազօր ներկայացուցիչ Քլաուդիոս Ջէմս Բիչի միջնորդութեամբ աճիւնները կը փոխադրուին ու կը թաղուին Մէլտանի Ս.Աստուածածին եկեղեցոյ մէջ: Աճիւններու փոխադրութիւնը կարգադրելուն առիթով Երուսաղէմի Պատրիարք Թեոդորոս վարդապետ ճոխ յառաջաբանով, շնորհակալութեան նամակ մը գրած է Քլաուդիոս Բիչին, ուր կը յիշէ՝ Յակոբ արք.ի աճիւնները քաղաքադուրսէն փոխադրութիւնը եւ քաղաքի եկեղեցիի մը մէջ թաղուիլը: Այս եկեղեցին Մէլ-

²¹⁷ Սերովբէ Կարնեցի, Ուղեգրութիւն Բաղդադից Էջմիածին, էջ 41:

տանի Ս. Աստուածածին եկեղեցին է²¹⁸: Մերովբե Կարնեցիի ուղեկից՝ Կրթանէս վարդապետ, Յակոբ արք.ի վախճանումի մասին գրած է Էջմիածնի Հոգեւոր Խորհուրդին, «...Այս մասին նոյն թուականի հոկտեմբեր 26ին նրա վշտակից եւ ուղեկից Կրթանէս վարդապետը հատուկ նամակով հանգամանօրէն լուր է հաղորդում Էջմիածնի Հոգեւոր Խորհուրդին: Այդ է հաստատում նաեւ Յակոբ արքեպիսկոպոսի տապանագիրը»²¹⁹: Շիրմաքարը ներկայիս գետեղուած է եկեղեցւոյ ձախակողմեան որմին մէջ, որուն վրայի տապանագիրը տակաւին ընթռնելի է: Մերովբե Կարնեցի եւ Վանահայր Կրթանէս վրդ. 03 Ապրիլ 1812ին մեկնելով Պաղտատէն, երկար ու արկածալից ճամբորդութենէ մը վերջ, 25 լիտր ոսկին կը հասցնեն Էջմիածին 28 Մայիս 1812ին²²⁰:

1965 թ., երբ վար առնուեցան եկեղեցիին հին ու խոնաւ պատերը, Քառասուն Մանկանց նուիրեալ անոր սրբարանին մէջ գտնուեցաւ ալապաստրէ ութանկին գեղակերտ սրբատուփ մը, որուն կափարիչին վրայ գրուած էր հետեւեալը հայերէն տառերով փորագրուած՝ *ԲԱՐԵՆՕՍՈՒԹԵԱՄԲ ՄԲ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԲ. ԱԹԱՆԱԳԻՆԷ, ՄԲ. ԳԷՈՐԳ, ՄԲ. ԿԻՐԱԿՈՍ, Թուականին Հայոց ՌՃԺԲ- 1112 Թուականի Փրկչին ՌՁՃԼԹ- 1639*:²²¹

Սրբարանը ծածկող մարմարեայ քարին երկու կողմերն ալ կային հայերէն արձանագրութիւններ, բայց մարմարը մաշած ըլլալով եւ գիրերը թափած, անկարելի եղաւ ընթռնել գրութիւնը: Եկեղեցիին հնադրոշմ ոճը պահելու նախանձախնդրութեամբ, իր հաստաբետ պատերը եւ ներքին չափերու ձեւը նոյնութեամբ պահած են, բացի ձեղունէն: Հին խաչքարերը գետեղուած են իրենց նախկին տեղերը:

²¹⁸ Rich C. J., Baghdad in Bygone Days, London, 1928: (Յաւելուածներու բաժինին մէջ կը ներկայացնենք Baghdad in Bygone Days-ի Էջմիածնի նուիրակ Յակոբ արքեպիսկոպոսի աճիւններու վերաբերեալ անգլերէն նամակի լուսատիպը եւ հայերէն թարգմանութիւնը:)

²¹⁹ Մերովբե Կարնեցի, նշ. աշխ., էջ 9:

²²⁰ Նոյն:

²²¹ Սրբատուփը կափարիչով միասին լուսանկարուած է ու տեղը վերստին դրուած: Լուսանկարները ցոյց կուտան ալապաստրէ տուփն ու կափարիչին վրայի արձանագրութիւնները, զոր կը հրատարակենք Յաւելուածներու բաժնին մէջ:

Տրուած ըլլալով, որ Իրաքահայ թեմի կազմաւորումը կը սկսի յետ Մէլտանի Ս. Աստուածածին եկեղեցոյ կառուցումով 1638-1640 թուականին, այն 1988-1989ին բոլորեց հիմնադրութեան 350-ամեակը: Առաջնորդարանը, այս շրջանը հռչակեց «Իրաքահայ Թեմի Կազմաւորման 350-րդ Տարեդարձն ու Յոբելինական Տարի»²²²:

Ս. Աստուածածին եկեղեցին ճանչցուած է որպէս Պաղտատի ամենահին եկեղեցին: Կարելոր ուխտատեղի մը նկատուած է հայերուն, քրիստոնէայ եւ այլ դուանանքներուն հետեւորդներուն կողմէն, ուր ուխտաւորներ կուգան Պաղտատի շրջակայ եւ Իրաքի հեռաւոր քաղաքներէն²²³:

2.- Պաղտատի Ս. Երրորդութիւն Եկեղեցի (Շօրճա թաղամասին մէջ)

Պաղտատի հայութեան առաջին եկեղեցին Ս. Աստուածածին՝ կառուցուած է Մէլտան թաղամասին մէջ: Հայեր՝ աստիճանաբար աճելով, մաս մը Պաղտատի հարաւային Շօրճա կոչուած աւելի բարգաւաճ ու քրիստոնէաբնակ թաղամասին մէջ կը սկսին հաստատուիլ:

Հայութեան՝ Մէլտան եւ Շօրճա թաղամասերուն մէջ հաստատուելով խիստ կարիքը կը զգացուի Շօրճա թաղամասին մէջ երկրորդ եկեղեցի մը կառուցել:

Ուրեմն, Մեսրոպ ծ. վրդ.ի Պաղտատ ժամանելէն ետք իր կարելոր եւ առաջին գործերէն մէկը կ'ըլլայ Շօրճա թաղամասին մէջ եկեղեցի մը կառուցելու ծրագիրը:

Ըստ Դաւիթ Թաղեոսեանի՝ Հայր Սուրբի առաջին քայլերէն մէկը կ'ըլլայ դիմել Պաղտատի Անգլիական Ընդհանուր Հիւպատոսի (գնդ. Ռաբըրթ Թէլըր) հայազգի տիկնոջ՝ շիրագցի Ծաղիկ Խաթունին: Վերջինս այրի կնոջ մը գրաւի դրուած տունը Շօրճա թաղամասին մէջ կ'ազատէ վճարելով փոխարժէքը: Ծաղիկ Խաթուն, Հայր Սուրբի դիմումին ընթացք տալով, այդ տունը կը նուիրէ ազգին: Այնուհետեւ, հայր սուրբը հետզհետէ հանգանակութեամբ ու

²²²Այս տարի (2019 թ.) կը նշուի Թեմի վերակազմաւորման 380-ամեակը:

²²³ Բոլորովին վերջերս, 2019 թ. Իրաքի Կեդրոնական Դրամատան ծախքով, այս եկեղեցին ամբողջութեամբ դարձեալ նորոգութեան կ'ենթարկուի ներքին եւ արտաքին բոլոր մանրամասնութիւններով:

նուիրատուութեամբ կը յաջողի շրջակայ տուներն ալ գնելով՝ հոյակապ լայն կալուած մը ունենալ: Հասարակութեան նուիրատուութեան գլխաւորապէս օժանդակած է, Համատանէն Պաղտատ հաստատուած Իսթէնտէրեան ընտանիքը:

Օսմանեան տիրապետութեան ժամանակ նոր եկեղեցի մը կառուցելու համար Պոլսէն կայսերական հրովարտակի (ֆէրման) կարիքը կար: Ուստի, 1850 թուականին Տ. Մեսրոպ ծ. վրդ. անձամբ Պոլիս կը մեկնէ՝ ձեռք բերելու պէտք եղած հրովարտակը: Պոլիս եղած ժամանակ, առիթէն օգտուելով, նուէրներ կը հաւաքէ հայ ամիրաներէն եւ ուրիշներէն յօգուտ Պաղտատի մէջ կառուցուելիք եկեղեցոյ:

Դաւիթ Թաղէտեան իր յուշերը շարունակելով կը նշէ, որ Հայր սուրբը իր առաքելութեան ընթացքին, ականջալուր կ'ըլլայ, թէ Պոլսոյ մէջ կառուցուելիք եկեղեցոյ մը համար ամիրա մը Սուրբ Սեղանի ճակատին տեղադրուելիք շատ նուրբ նկար մը պատրաստել տուած էր, որ լրանալուն սակայն, ամիրան կը մերժէ զայն՝ առաքելելով, որ Որդի Աստուծոյ պատկերը քիչ մը աւելի բարձր կ'երեւէր, քան Հայր Աստուծոյ պատկերը: Հայր Սուրբը (Մեսրոպ վարդապետ) կը յաջողի զայն իբր նուէր ստանալ ամիրայէն Պաղտատի մէջ կառուցուելիք եկեղեցոյ համար:

Եկեղեցոյ շինութիւնը արարտելէն ետք 21 Դեկտեմբեր 1852-ին Տ. Մեսրոպ ծ. Վարդապետ կը կատարէ օծումը ու եկեղեցին կը կոչուի Ս. Երրորդութիւն²²⁴:

Ս. Երրորդութիւն եկեղեցոյ շէնքը բաւական ընդարձակ էր, կոկիկ եւ անսիւն, առաստաղը թեթեւօրէն երեք կողմէն կամարակապ, պատերը խիստ լայն՝ տարածուն հիմով, երկշար պատուհաններով, իսկ դասին վերեւ՝ կամարներէն բարձր գմբէթով մը: Եկեղեցին կառուցողը եղած է ոմն Պետրոս Սաղաթէեան: Գրեթէ ոչինչ ունէր հայկական ճարտարապետութիւնը յիշեցնող: Միայն փոքր կաթողիկէներ՝ աւելի առկախ քան հաստատուած կը տեսնուէին Ս. Սեղանին երկու կողմերը:

Ս. Երրորդութիւն եկեղեցոյ կառուցումէն ետք, Մէլտանի հայ բնակչութենէն որոշ հատուածներ կը շարունակեն Ծորճա թաղամաս փոխադրուիլ, ուր աւելի քաղաքակիրթ միջավայր մը ստեղծուած էր այլ յարանուանութեանց պատկանող քրիստոնէայ,

²²⁴ Դրան վրայի հիմնաքարի պատկերը տե՛ս յաւելուածներու բաժինին մէջ:

ինչպես նաև երոպացի բնակչութեան առկայութեան շնորհիւ: Այսպես, Պաղտատի հայ գաղութը երկուքի կը բաժնուի, Շորճայի Ս. Երրորդութիւն շրջանը բնակող հայեր, եւ Մէյտանի Ս. Աստուածածին եկեղեցոյ շրջակայքը բնակողներ, եւ այսպիսով ի յայտ կու գայ «Մէյտանի» եւ «Շորճայի» յորջորջումը:

Ս. Երրորդութիւն եկեղեցոյ շրջափակէն ներս կը կառուցւի առաջնորդարանի շէնք մը յարակից բաժիններով, ինչպես նաև եկեղեցոյ արեւմտեան կողմը քանի մը տուններ կը պատրաստուին չքաւորներուն բնակութեան համար, իսկ հարաւային կողմը՝ տուն մը քահանայի բնակութեան համար:

Այս եկեղեցոյ ընդարձակ բակը ուներ երեք դուռ: Առաջին դուռը բացուած էր դէպի Շորճայի շուկան երկարող փողոցին վրայ, ուր կային քաղաքի առետրական շտեմարանները - խաները: Երկրորդը բացուած էր Ռաս Էլ Գարիա առաջին փողոցին վրայ, ուր էր նաև Քիլտանիբերու (Քաղդէացիներու) եւ Սիբիան Յակոբիկեաններու եկեղեցիներու հիւսիսային դուռերը: Երրորդ դուռը բուն «Ռուակ» թաղին վրայ էր, երբեմնի Ասքանազեան Ընկերութեան շէնքը: Առաջին եւ երկրորդ դուռերը Շորճան կը միացնեն Ռաս Էլ Գարիա թաղին հետ որպէս կարճ ճամբայ:

Տ. Մեսրոպ ծ. վրդ. 17 տարիներ անբասիր վարքով հովուեց Պաղտատի հայ համայնքը իբր առաջին առաջնորդ, Պաղտատի թեմին Ջուղայի Ամենափրկչական աթոռէն բաժնուելէն ու Պոլսոյ պատրիարքութեան կցուելէ ետք: Շինեց Պաղտատի Ս. Երրորդութիւն եւ Մուսուլի Ս. Էջմիածին եկեղեցիները, անձնուիրաբար եւ անսակարկ նուիրումով ծառայեց իր հօտին: Թաղուեցաւ Ս. Երրորդութիւն եկեղեցոյ արագ դրան առջև կամարին տակ:

Ուշագրաւ է, որ Իրաքի թագաւորութեան անկախ պետութիւնը հիմնուելէ ետք, Ֆէյսալ առաջին թագաւորը այցելած է Ս. Երրորդութիւն եկեղեցին Օգոստոս 1921-ին, ուր ի պատիւ իրեն համայնքին կողմէ կազմակերպուած հաւաքոյթի մը ընթացքին շնորհակալութիւն յայտնած է Իրաքի հայութեան զինքը միաձայն թագաւոր ընտրելուն համար հաստատելով իր Գիր-Գնահատանքը մեր ժողովուրդին, եւ շեշտելով, որ գաղթական հայերուն ամէն հոգածութիւն պիտի ընծայուի իր պետութեան կողմէ: Հանդիսութեան ներկայ եղած է նաև ի մէջ այլոց, Իրաքի հանրածանօթ քանաս-

տեղծ ճամիլ Ս. Էլ Ջահաուին, որ կանխեր է թագաւորի ճառը պատշաճ խօսքով մը²²⁵:

Այս եկեղեցւոյ կառուցման արտօնութիւնը առնուած էր կայսերական թոյլտուութեամբ 1850 թուականին: Այնուամենայնիւ, 1923 թուականին, Իրաքի պետութեան կազմուելէն (1921 թ.) ետք, առաջնորդարանի ղիմումին համաձայն Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ կալուածին սեփականաթուղթ մը (թափու) ունենալու, պատկան գրասենեակը քննութիւն մը կը բանայ եւ կը յայտնուի, որ եկեղեցւոյ թաղին կալուածական տոմարը անհետացած է: Նոյնպէս կը քննուին բոլոր ուրիշ պատկան տետրակները, ասոնք եւս եկեղեցւոյ արձանագրութեան որեւէ հետք ցոյց չեն տար:

Ըստայնմ, հարցաքննութիւններ կը կատարուին եւ իբր արդիւնք կը յայտնուի, որ «եկեղեցին *վակըֆ* է եւ պայմանաւորուած գործածելու իբր աղօթատեղի Պաղտատի հին հայ համայնքին կողմէ»:

Երկու կայսերական հրովարտակներու (ֆէրմաններու) համեմատ, մին հիճրի թուական 1216-ի Բապի Էլ-Էվվէլի վերջերը իսկ միւսը 1262-ի Շա'պանի վերջերը, Միւթէվէլլի նշանակուած է յիշեալ համայնքին հոգեւոր պետը (մուրախասար):

1923 թ.ի կալուածական քննութիւնները կ'ապացուցեն, որ յիշեալ Սուրբ Երրորդութիւն եկեղեցին հիմնուած է աւելի քան 80 տարիներ առաջ: Ուստի, Պաղտատի կալուածական գրասենեակը պետական պաշտօնաթերթի, եկեղեցւոյ ցուցատախտակին վրայ եւ այլ վայրերուն մէջ կը յայտարարէ, եթէ ոեւէ մէկը պահանջ ունի յիշեալ կալուածին վերաբերեալ ղիմէ կալուածական գրասենեակը (*թափու*): Ժամանակի վերջաւորութեան ղիմող չըլլար: Առաւել, դրացիներու վկայութեան ալ համեմատ, կալուածը իբրեւ հայոց ազգին վազըֆ «վերստին կ'արձանագրուի» 1923-ին թափուի տոմարներուն մէջ ու կը տրուի ըստ այնմ սեփականաթուղթ:

Կառուցման հարիւրամեակը լրացաւ 21 Դեկտեմբեր 1952-ին:

Հարիւր տարի այս եկեղեցին հոգեւոր մխիթարութիւն շնորհած է Պաղտատի հայութեան, որ միշտ եկեղեցասէր եւ ջերմեռանդ քրիստոնէայ ըլլալով, շատ մը ազգապատկան կալուածներ նուի-

²²⁵ 257 256-255 كتاب "فصل بن حسين في خطبه واقواله" اصدار مديرية الرعاية العامة 1945 بغداد ص 256-255
իւն-Չուսէլնի ճառերը եւ խօսքերը, Պաղտատ 1945, էջ 256-257):

բած է եկեղեցիին: Այդ կը փաստեն օրին եկեղեցւոյ բակին մէջ թաղուած ազգայիններու գերեզմանները, որոնց փափաքը եղած է եկեղեցիէն անբաժան մնալ նոյնիսկ մահուընէ ետք: (Տես յաւել - ւածներու բաժին):

Ըստ Դաւիթ Թաղեանի յուշերուն, «Ատենօք համայնքն ունեցած է տասնեակ մը պատուոյ դպրապետներ եւ տասնեակ մը սարկաւազներու տղաք, որոնք հանդիսաւոր տօնական օրերուն անոյշ երգեցողութեամբ ժողովուրդը կը հմայէին»²²⁶:

Եկեղեցւոյ կառուցման հարիւրամեակի առիթը նշող հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցուած է 25 Յունուար 1953-ին, ապա հոգեհանգստեան պաշտօն՝ նշելու յիշատակը հոգելոյս Տ. Մեսրոպ ծայրագոյն վարդապետի, եկեղեցւոյ բարերարներու եւ համայն ազգին ննջեցելոց, որոնք նոյն եկեղեցւոյ աւազանին մէջ մկրտուած, աղօթած ու ննջած են անոր հովանիին տակ:

Այս եկեղեցւոյ շէնքը ժամանակի ընթացքին սկսած էր հնութեան նշաններ ցոյց տալ, հարկ եղած նորոգութիւնները՝ առժամեայ կերպով, քանիցս կատարուած էին, իսկ 1926-ին եկեղեցիին ներքուստ նորոգելու առթիւ սրբապատկերներով համալրուեցաւ եւ ելքտրականութեամբ լուսաւորուեցաւ:

Յաջորդ քանի մը տարիներու ընթացքին շրջանի ստորերկրեայ ջուրերու մակերեսի բարձրացման պատճառով, եկեղեցւոյ բակը կ'ողողուի ջուրով: Հարկ կ'ըլլայ բակը ու եկեղեցւոյ յատակը բարձրացնել, այս կը կրկնուի յաջորդական տարիներուն: Հոն թաղուած մաս մը գերեզմաններ կ'անյայտանան ջուրերուն տակ: Այս երեւոյթը վտանգ կը սպառնայ եկեղեցւոյ կառոյցին, կամարներուն մէջ գոյացած ճեղքերը կը սկսին շատնալ եւ ամբողջ եկեղեցւոյ շէնքը վտանգաւոր վիճակի մը մէջ ըլլալուն՝ պետութիւնը պաշտօնապէս կ'արգիլէ այլեւս արարողութիւններ կատարելը եւ կը հրամայէ զայն գոցել: Հետեւապէս, 1957-ի Ս. Ծննդեան պաշտամունքը կատարելէ ետք կը գոցուի եկեղեցիին, ապա շէնքը կը խոնարհի: Ժամերգութիւնները կը կատարուին Մէլտանի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ մինչեւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ առաջնորդանիստ Էջմիածնատիպ եկեղեցւոյ կառուցումը:

²²⁶ Իրաքահայ Թեմի Համաժողով Պատմութիւն, Պաղտատ 2005, էջ 71:

3-Մուսուլի Ս. Էջմիածին Եկեղեցի

Ինչպես յիշուած է նախապէս, Մուսուլի մէջ թէև փոքրաթիւ հայ գաղութ մը գոյութիւն ունէր, սակայն եկեղեցի չունէին, իրենց հոգեւոր կարիքներուն համար կը դիմէին տեղացի ասորի {յակոբիկեան} կամ քաղդէացի կաթողիկոսներուն:

Այս դրութիւնը շարունակուած է մինչև Իրաքի թեմը Կ. Պոլսոյ պատրիարքութեան կցուիլը 1847-ին: Պոլսոյ պատրիարք Մատթէոս Չուխաճեան Կ. Պոլսեցիին՝ Ս. Մեսրոպ ծ. վրդ.ը կը նշանակէ Տեսուչ Եկեղեցոյ եւ Առաջնորդ Իրաքի Հայոց: Մեսրոպ ծ. վրդ.ի առաջին աշխատանքներուն վերաբերեալ կը յիշատակուի 1851 թ.ին իր անմիջական ջանքերով Մուսուլի մէջ առժամեայ փոքր մատուռի մը կառուցումը, որ կը կոչուի Ս. Էջմիածին: Մուսուլի առաջին հոգեւոր հովիւը կ'ըլլայ Ս. Յակոբ քինյ. Տէր Եղիաշեան:

Այս երջանկայիշատակ հոգեւորականը՝ Ս. Մեսրոպ ծ. վարդապետը, Պաղտատի Ս. Երրորդութիւն եկեղեցիին կառուցելէ ետք, ուշադրութիւնը կը դարձնէ Մուսուլի փոքրաթիւ գաղթօճախը հիմնական եկեղեցիով մը օժտելու ծրագրին: Ան՝ իր ձեռներեցութեամբ եւ Պաղտատի եկեղեցոյ համար հանգանակուած դրամի մնացածով նաեւ Մուսուլի բարեսէր ազգայիններուն նիւթական մասնակցութեամբ, 1857-ին կը կառուցէ փոքր եկեղեցի մը, քրիստոնէաբնակ բազմամարդ թաղի մը մէջ՝ զայն կոչելով Ս. Էջմիածին:

Առաջին համաշխարհային պատերազմի արհաւիրքներուն ընթացքին այս եկեղեցիին հոգացած է Մուսուլ հաւաքուած հայ գաղթականութեան հոգեւոր կարիքները եւ կանգուն մնացեր էր մէկ դար, սակայն 1950-ական թուականներէն այլեւս ներկայանալի եկեղեցի մը ըլլալէ դադրած էր, որ կը մտահոգէր թէ՛ տեղոյն ժողովուրդը եւ թէ՛ ազգային իշխանութիւնը ի Մուսուլ եւ ի Պաղտատ: Միացեալ որոշումով յարմար դատուեցաւ նոյն հողամասին վրայ աւելի ընդարձակ եկեղեցի մը կառուցանել: Այնուհետեւ, բացուած հանգանակութեամբ կը կառուցուի նոր եկեղեցի մը, որ դարձեալ կոչուեցաւ Ս. Էջմիածին²²⁷: Հոս տեղին է յիշատակել, որ 1857-ին,

²²⁷ Իրաքահայ բարեպաշտ ու եկեղեցասէր համայնքը առատօրէն մասնակցեցաւ եւ 1968-ին կանգնեցուց Մուսուլի նոր եկեղեցին: Եկեղեցիի օծումը կատարեց համայնքին առաջնորդը Ասողիկ եպս. Ղազարեան, կիրակի 16 Նոյեմբեր 1969-ին: Յետագային, Մուսուլ քաղաքը աստիճանաբար ընդարձակուելով՝ հայեր աւելի վայելուչ թաղեր փոխադրուիլ սկսած էին վերջին քսանամեակի

երբ այս եկեղեցին կառուցուեցաւ, Մուսուլի հոգեւոր հովին էր Տ. Յակոբ քինյ. Տէր Եղիայեանը: 1861-ին Տ. Յակոբ վախճանելէն ետք, եղբայրը Տ. Աւետիս քինյ. Տէր Եղիայեան կը յաջորդէ անոր:

Տ. Աւետիս ծնած է 1839 թ. Սղերդ: Քահանայ ձեռնադրուած 8 Մարտ 1861 թ. Աղթամարի մէջ՝ Մուսուլի հոգեւոր հովուութիւնը ստանձնած է նոյն տարին: Կը պաշտօնավարէ մինչեւ 1884 թ., երբ Պաղտատ կը փոխադրուի եւ կը մնայ հոն մինչեւ վախճանիլը 30 Յունուար 1908-ին:

Տէր Աւետիսի որդին Միքայէլ՝ ծնած է Մուսուլ 27 Օգոստոս 1868-ին, ապա ձեռնադրուած է որպէս Ջաւէն պատրիարք Կ.Պոլսոյ: Պատրիարքը վախճանած է Պաղտատ 4 Յունուար 1947 թ. եւ մարմինը տեղափոխուած է ամփոփուած Երուսաղէմի մէջ:

Տ. Աւետիսին Մուսուլի մէջ կը յաջորդէ Տ. Դաւիթ քինյ. Դաւիթեան, որ կը պաշտօնավարէ մինչեւ վախճանիլը՝ 1911 թուականին: Տ. Դաւիթ ըստ Առաջնորդարանի տոմար ՄԿԷ.ի ծնած է 1830 թ. Տիգրանակերտի մէջ:

1912 թ. կը հրաւիրուի Տ. Գրիգոր քինյ. Տէր Յակոբեան Մուսուլի հոգեւոր հովուութեան: Տ. Գրիգոր ծնած է 12 Սեպտ. 1884-ին Պիթլիս նահանգի, Սղերդ Սանճագի, Քիքան գիւղին մէջ: Ձեռամբ Տ. Ներսէս եպս. Խարանեանի (ընդհանուր վանահայր-առաջնորդ Տարօնի) քահանայ ձեռնադրուած 1912 թ. Մայիսին Մշոյ Ս. Կարապետ վանքին մէջ²²⁸:

Ռտուանէն 1904 թ., իբրեւ ուսուցիչ Մուսուլ կը հրաւիրուի Աբրահամ Մուրատ Թաճիրեան, ծնեալ 15 Օգոստոս 1882 թ. Ջախօ:

Ժամանակամիջոցին, որով Ս. Էջմիածին եկեղեցւոյ հայաշատ թաղամասը ամայացած էր հայութենէ: Ուստի, Առաջնորդարանի եւ տեղւոյն թաղականութեան ջանքերով ձեռնարկուեցաւ, ներկայ արդի եւ հայաշատ կեդրոնի մը մէջ, եկեղեցւոյ մը կառուցման համար հողամաս մը ապահովել: Եղած դիմումին պետութիւնը ընդառաջեց եւ յատկացուց 3022 քմ. տարածութեամբ հողամաս մը 18 Սեպտեմբեր 1993 թուակիր պաշտօնագրով մը: Հողամասը կը գտնուի Տիգրիսի ձախակողմեան (արեւելեան) ափին որոս փոխարժէքը նուիրած է օրուան թաղականութեան անդամ Յակոբ Մուրատ Յակոբեան: Հողամասին վրայ հայկական ճարտարապետական ոճով եկեղեցի մը կառուցուեցաւ, որն, աւաղ, օծումէն եւ անուանակոչումէն առաջ ականապատուեցաւ ծայրայեղականներու կողմէն եւ պայթեցուեցաւ: Տէ՛ս Օհանեան Ս., Իրաքի Հայ Համայնքը 20-րդ դարուն, էջ 100-101:

²²⁸ Տէր Յակոբեան Գ., Իրաքահայ Կեանքէն Մուսուլ հասնող գաղթականութիւնը 1915-1918 թթ., Տպ. Սեւան, Պէրուր: 1981, էջ 15-16:

Եօթը տարիներ Մուսուլ պաշտօնավարել է ետք քահանայ ձեռնադրուած է 1911 թ. Պաղտատ, ձեռամբ Մովսէս եպս. Կէօմրիքճեանի՝ պատրիարքական փոխանորդ Միջագետքի, եւ վերանուանուած Տ. Վահան քինյ. ու Պաղտատ փոխադրուած (ըստ Պաղտատէն Պոլսոյ պատրիարքութեան գրուած համար 83 եւ 11 Մայիս 1912 թուակիր նամակին): Կը վախճանի Պաղտատի մէջ 30 Սեպտեմբեր 1930 թ.:

4- ՊԱՍՐԱՅԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ

Ժամանակի ընթացքին Պասրայի հայերը հիմնած են երեք եկեղեցիներ: Ասոնցմէ Սբ. Աստուածածին եկեղեցին կառուցուած՝ 1736 թ. կը մնայ կանգուն մինչեւ այսօր: Միւս երկուքէն մէկը՝ Սբ. Յարութիւն անունով, ըստ Մաղաքիա վրդ.ի՝ Պասրայէն գրած 10 Յունուար 1880 թուակիր նամակին՝ ուղղուած Պոլսոյ պատրիարք Ներսէս արք. Վարժապետեանին (1874-1884) կը յիշէ. «...ասկից քահնի մը տարիներ առաջ հայկական մէկ հին եկեղեցւոյ գետինը Սուրբ Յարութիւն անունով, որոյ մէկ վիմաքարը այժմ ներկայ Սբ. Աստուածածնայ մէջ գտնուելով կը ցուցնէ թէ 360 տարուան եկեղեցի է եղեր»: Մաղաքիա վրդ. 10 Ապրիլ 1880 թուակիր նամակով, դարձեալ պատրիարքին ուղղուած, Սբ. Յարութիւն եկեղեցւոյ մասին կը գրէ. «350 տարուայ եկեղեցի մը ունինք, որոյ գետինը 4-5 տարիէ ի վեր է, որ օտար ազգիներէ գրաւուած՝ տուն եւ գինետուն եղած է, պէտք է դատարանի միջոցաւ վերստին ձեռք բերել»²²⁹: Յաւելեալ տեղեկութիւն չկայ: Ուրեմն, սոյն եկեղեցին հիմնադրուած էր 1520 կամ 1530 թուականին:

Իսկ երկրորդ եկեղեցւոյ մասին ունինք հետեւեալ յիշատակութիւնը միայն. «Պասրայի հայ գաղութը եղած է ատեն մը որ երեք եկեղեցիներ ունեցած է Ս. Ստեփանոս, որուն միայն տեղը յայտնի է...»²³⁰:

Պասրայի Ս. Աստուածածին եկեղեցին կառուցուած է 1736 թ. առատաձեռն ծախքով ազգասէր Աղա Պետրոս Սեթ Աղայեանի, որ մեծահարուստ եւ ականաւոր առետրական մըն էր: 1832- թ.ին

²²⁹ Մելքոնեան Վ., Պասրայի Անցեալը եւ Հայերը, «Հայրենիք» ամսագիր, Պոստոն, Ապրիլ, 1910, էջ 111:

²³⁰ Ալլօյաճեան, Իրանի Հայ Գաղութը. Գարագաշ Հ., Պարսկահայ Տարեցոյց, Թեհրան, 1930, էջ 84:

եկեղեցիին կտակուած են մեծ տարածութեամբ պարտեզներ եւ քանի մը տուներ:

1904-ին հնադարեայ այս եկեղեցին բոլորովին հիմնայատակ կ'ըլլայ, սակայն, տեղւոյն թաղական խորհուրդը կը ձեռնարկէ անոր վերաշինութեան, Կ.Պոլսոյ պատրիարքութեան արտօնութեամբ: Եկեղեցին կը կառուցուի Ադա Բարսեղ Օհաննէս Գասպարեանի կողմէն: Այդ առթիւ 1905-ի Մարտին, Երուսաղէմցի Ս. Սերովբէ վրդ. Սամուէլեան Պաղտատէն Պասրա կուգայ եւ օծումը կը կատարէ 12 խաչքարերու, որոնք խորհրդանիշն են 12 առաքեալներուն: Երբ եկեղեցւոյ կառուցումը կը լրանայ, դարձեալ Ս. Սերովբէ վրդ. կ'օծէ զայն 24 Նոյեմբեր 1907-ին:

Ստորեւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ պաշտօնավարող հոգեւորականներուն անուանացանկը մինչեւ 20-րդ դար:

1760 - 1763 Ս. Գեորգ եպս. Ջուղայեցի, ծնած եւ ուսած Պասրա

1762 Ս. Գաբրիէլ քինյ. Տէր Գաբրիէլեան

1763 Ս. Ստեփան քինյ. Ջուղայեցի

1763-1765 Ս. Յովհաննէս քինյ. Մուշաղբիւրցի Էջմիածնի «վեթիլ», որ Միսնն եւ Ղուկաս կաթողիկոսներու բարեկամը եղած է: Պասրայէն փոխադրուած Վան:

1767 Ս. Եզեկիէլ վարդապետ

1778 Ս. Դաւիթ քահանայ

1832 Ս. Յովհաննէս քինյ. Պետրոսեան, Ջուղայեցի

1841 Ս. Մեսրոպ քինյ. Յովսէփեան, Ջուղայեցի

1872 - 1874 Ս. Պօղոս քինյ. Գրիգորեան

1878 - 1878 Ս. Նիկողոս Տէր Եղիշեան

1878 - 1883 Ս. Յարութիւն քինյ. Սկրտիշեան

1880 Ս. Բարսեղ քինյ. Ջուղայեցի, Նոր Ջուղայէն նշանակուած 6 ամիս կը մնայ Պասրա:

1883 - 1891 Ս. Եղիշէ քինյ. Մուրատեան, Սղերդցի

1891-1891 Ս. Վահան քինյ. Պիւլպիւլեան, Խարբերդցի: Պասրա Ապրիլ-Դեկտ. 1891: Ընտրուած տեղապահ Պաղտատի սակայն վախճանած Պասրա 13-12-1891-ին: Հայ քահանայ չգտնուելուն, Խաչիկ Յարութիւնեան կատարած է թաղման կարգը եւ թաղուած եկեղեցւոյ բակը:

1892-1892 Ս. Խաչատուր քինյ. Հայրապետեան, Իշխեցի Գիաղեանս (Պասրա Նոյեմբեր-Դեկտեմբեր 1892):

1893-1918 Տ. Համազասպ քինյ. Աբրահամեան, կարգազուրկ հըր-
չակուած 15.11.1918ին:

Յիշատակութեան արժանի է, որ Ս. Աստուածածին եկեղե-
ցին ժամանակ մը գործածուած է Պասրայի Յակոբիկեաններու
կողմէն, որոնք (շուրջ 25 տուն), եկեղեցի չունէին եւ դաւանակից են
հայոց եկեղեցւոյ: Տաղաւար տօներուն իրենց քահանան Մուսուլէն
կը ներկայանար եւ պատարագ կը մատուցէր սոյն եկեղեցւոյ մէջ,
մինչեւ 1947-1948 թուականներուն, երբ իրենք ալ ունեցան իրենց
սեփական եկեղեցին:

5.- Եկեղեցի կամ մատուռ Սուկ Էլ-Շիուխ

XVIII դարուն Պասրայի հայերը այնքան բազմացան, որ
անոնցմէ մաս մը գաղթեց դէպի սոյն քաղաքի հիւսիսը գտնուող
Սուկ Էլ-Շիուխ: Ժամանակի ընթացքին 1770-1800 թթ. կազմեցին
փոքր համայնք մը՝ 30-35 տուն բնակչութեամբ եւ բնականաբար,
ունեցան իրենց ուրոյն եկեղեցի – մատուռը²³¹:

Իսկ 1847 թուականին, այս գիւղաքաղաքը, որ կը գտնուի
Եփրատի աջ կողմը, ունէր 400 տուն, 2000 բնակիչ արաբ, հրեայ եւ
100-ի չափ հայ մէկ եկեղեցիով²³²:

Սիջագետքի հայերը դարերու ընթացքին եղած են անաւորա-
պաշտ եւ Առաքելական Մայր Եկեղեցիին հանդէպ ունեցած են ան-
վերապահ եւ աներեր հաւատք: Թերեւս այդ էր պատճառը, որ
հայր Միքայէլ Չամչեանի նման մոլեռանդ կաթօլիկի մը գրել տը-
ւած էր իր նամակներէն մէկուն մէջ հետեւեալ տողերը. «Զի յաշնան
եւ ի ձմեռն մինչ ի գատիկ քարոզելոյ պարապիմ... պասրայածինք
ողջոյն բթամիտ են եւ անմասն յիշողութեան, մինչեւ յետ հազա-
րիցս կրկնելով զբան մի՛ հազիւ տպաւորին յուղեղն իւրեանց»²³³:

²³¹ Մելքոնեան Վ., «Պասրայի Անցեալը եւ Հայերը» «Հայրենիք» ամսագիր,
Պոստոն, ԺԸ տարի, թ. 6, էջ 112:

²³² Գէորգեան Կ., Ամէնուն Տարեգիրքը, 1957, Պէրուք, էջ 420-421: Նաեւ՝
Աճառեան, Հայ Գաղթականութեան Պատմութիւն, էջ 203 եւ Ֆերուհիսան Բ. պէյ,
նշ. աշխ., էջ 116-117:

²³³ Նամակ Մ. Չամչեանէն՝ Վենետիկ 13 Սեպտեմբեր 1771, Մայր Դիւան
Մխիթարեանց, էջ 270:

.. Բ – Հայ Կաթողիկե Համայնք եւ Եկեղեցի

Կաթոլիկ հայերնու քարոզչութիւնը Իրաքի մէջ սկսած է Պասրա նաւահանգիստ-քաղաքէն, ուր եւրոպացիներ գաղութ մը ունէին դեռեւս XVI դարու կէսերուն: 1623 թուականին Կարմէղեան լատին վարդապետներ հաստատուած են այս քաղաքը եւ վայելելով ֆրանսացիներուն պաշտպանութիւնը՝ առանց լուրջ խոչընդոտի առաջ տարած են իրենց քարոզչական գործունէութիւնը, որ անարդիւնք չէր մնացած, քանզի յաջողած էին տեղացի քրիստոնէաներէն մաս մը իրենց կողմը շահիլ²³⁴:

1628 թուականին Պաղտատ կը ժամանեն երեք քարուչին (վեղարատը) ֆրանսացի քարոզիչներ, որոնց նպատակը Սպահան երթալն էր եւ այնտեղ առաքելութիւն մը հաստատել: Սակայն, Պաղտատէն հեռանալէն առաջ, յարմար կը նկատեն նոյն քաղաքին մէջն ալ կայան մը ունենալ, ուստի իրենցմէ մին²³⁵ հոն կը մնայ, իսկ միւս երկուքը կը շարունակեն իրենց ճամբան²³⁶: Այս կրօնաւորը Պաղտատ կը մնայ տաս տարի (1628-1638), կը գործէ նեստորականներու, յակոբիկեան ասորիներու եւ հայոց մէջ եւ կը յաջողի անոնցմէ որոշ մաս մը կաթոլիկ դաւանութեան դարձնել²³⁷:

Վերոյիշեալ կաթոլիկ կրօնաւորը կը բանայ նաեւ դպրոց մը, որ ապագային աւելի կը զարգանայ: Իսկ Սուլթան Մուրատ Դ, երբ Պաղտատը կը գրաւէ 1638 թուականին, առաքելութեան գործը ծանր հարուած մը կը ստանայ: Կը բռնագրաւուին եկեղեցին, վանքն ու հիւրանոցը, որոնք մեծ դժուարութեամբ քաբուչիները կը վերստանան շնորհիւ ոմն աղա Միշէլ Թոփճը Պաշիին, որ բնիկ վենետիկցի քրիստոնէայ մըն էր եւ Սուլթանի յոյժ սիրելին: Անիկա մինչեւ վերջը իր պաշտպանութեան տակ կ'առնէ քաբուչիները, որոնք իրենց եկեղեցիին տիրանալէն ետք կը հարկադրուին թոյլ

²³⁴ Gollanz H. Sir, Chronicle of Events Between the Years 1623 and 1733 Relating to the Settlement of the Order of Carmelites in Mesopotamia, London: Oxford University Press, 1927. P. 523.

²³⁵ Juste de Beayvis անունով:

²³⁶ Տէր Սայէղեան Ն., Պատմական Ակնարկ մը Հայ Կաթողիկե Հասարակութեան Վրայ յԻրաք, «Աւետիք», Պէյրութ, 1945, էջ 56:

²³⁷ دير برسيس صانغيان البغدادي – تاريخ الارمن الكاثوليك في العراق بمناسبة مرور مئة عام على تنشيد كنيسة 237 1944-1844, المطبعة الكاثوليكية بيروت 1944, صفحة 5. Էլ Պաղտատի, Պատմութիւն Իրաքի Հայ Կաթողիկե Համայնքի, Պէյրութ, 1944, էջ 5):

տալ, որ իրենց յատուկ աղօթատեղիին մէջ պարբերաբար պաշտամունք կատարէին իրենց ծեսով ոչ-կաթոլիկ հայերը ինչպէս նաեւ արեւելեան ժողովուրդները²³⁸:

Քաբուչիները ուրիշ փորձութեան մը եւս կ'ենթարկուին, երբ 1658 թուականին Պաղտատի կուսակալը Մուհամմէտ փաշա էլ-Խասաքի, զանոնք կ'արտաքսէ իրենց եկեղեցիէն ու հիւրանոցէն, կը քանդէ շէնքերը եւ հոն կը կառուցէ մեծ մզկիթ մը, որ մինչեւ այսօր կանգուն է եւ կը կոչուի «Ճամի Էլ-Խասաքի»: Այնուամենայնիւ, ժամանակ մը ետքը կուսակալը կը հիւանդանայ, եւ քանի որ քաբուչիները քարոզչութեան զուգահեռ կը զբաղուէին նաեւ բժշկութեամբ, կուսակալը կը ստիպուի դիմել բժիշկ քաբուչիին, որուն շնորհիւ կ'ազատի ստոյգ մահէ: Առ ի երախտագիտութիւն, կուսակալը քաբուչիներուն կը շնորհէ առաջինէն աւելի գեղեցիկ ու աւելի մեծ տուն մը կառուցուած մզկիթին ճիշդ դիմացը: Քաբուչիները անմիջապէս եկեղեցիի կը վերածեն իրենց շնորհուած տան ընդարձակ նկուղը, որմէ մաս մըն ալ պատով մը բաժնելով, ոչ-կաթոլիկ հայերու²³⁹ եւ ուրիշ ազգերուն կը յատկացնեն, որպէսզի պաշտամունք կատարեն:

Ահա այս փոքրիկ հատուածը կորիզը կ'ըլլայ Իրաքի մէջ կաթոլիկութեան տարածման, որ կ'աճի տարիներու ընթացքին: Քաբուչիները եւս, ինչպէս Կարմէղեանները, կ'ապաւինէին ֆրանսական ուժին ու պաշտպանութեան, եւ իրենց քարոզչութիւնը անարգել առաջ կը տանէին:

Այսպէս, քաբուչի հայրերը 1628 թուականէն սկսեալ շատ աշխուժ քարոզչութեամբ յաջողեցան իրենց կողմը շահիլ ի մէջ այլոց հայեր եւ կազմել փոքրիկ համայնք մը: 1701 թուականին ֆրանսացի ուղեւոր Փօլ Լուրաս կը հասնի Պաղտատ եւ կ'իջեւանէ քաբուչիներուն հիւրանոցը: «Նկատելով, որ ասոնք միակ միսիոնարներն են, որ Պաղտատ կը բնակին, կրնանք ըսել, թէ այս կրօնաւորները մեծ համայնք մը առաջ կը բերեն հայերէ, յակոբիկեաններէ եւ

²³⁸ Տէր Սայէղեան Ն., Պատմութիւն Իրաքի Հայ Կաթողիկէ Համայնքի, «Աւետիք», Պէրուք, 1946, էջ 57-58: Այս տեղեկութեան ճշդութիւնը հայերու մասով խիստ կասկածելի է, քանի որ հայերը ունէին իրենց ուրոյն եկեղեցին՝ Ս. Աստուածածինը, կառուցուած 1639 թուականին նոյն ինքը Մուլթան Մուրատի ֆէրմանով հայերուն յատկացուած հողակտորին վրայ, եւ բնականաբար նախապատուութիւնը պիտի տային իրենց եկեղեցին յաճախելու:

²³⁹ Ալպոյաճեան Ա., Իրաքի Հայերը, Երեւան 2003, էջ 44:

նեստորականներէ, որոնց կրօնափոխ կ'ընեն ամէն օր: Ութերորդը (Սեպտեմբերի), տօն Սուրբ Աստուածածնի, անակնկալը ունեցայ եկեղեցիին մէջ տեսնելու աւելի քան երկու հարիւր անձեր, իրենց մեծ պատարագին»²⁴⁰:

Քանի մը օր ետք, նոյն ֆրանսացի ուղեւորը ականատեսը կ'ըլլայ անմարդկային արարքի մը, երբ 12 Սեպտեմբեր 1701-ի առաւօտ ժամը 10-ին զօրքերու գումարտակ մը կը յարձակի քաբու-չիներու եկեղեցիին եւ հիւրանոցին վրայ, եւ զանոնք կը թալանէ: Գործը կը լրացնէ կուսակալ Տալթապան Մուսթաֆա փաշան, որ քանդել կու տայ հիւրանոցին մէկ մասը եւ դուրս կը վտարէ ամբողջ բնակիչները:

Քաբուչիները կը դիմեն Կ.Պոլսոյ ֆրանսական դեսպանին, որ կը դիմէ Բ. Դրան: Սակայն, ոչ մէկ դրական արդիւնքի կը հասնին: Հետեւաբար, քաբուչիները յուսահատած կը լքեն Պաղտատի կայանը եւ անվերադարձ կը հեռանան անկէ 1708 թուականին²⁴¹:

Այս դէպքին հետեւանքով Պաղտատի կաթօլիկները, ներառեալ հայ կաթօլիկները, մնալով առանց եկեղեցիի եւ քահանայի, իրենցմէ մաս մը կը ստիպուի անցնիլ Պասրա կամ այլուր, մինչեւ որ 1721 թուականին Պաղտատ կը ժամանէ Կարմէղեան կրօնաւոր մը՝ իբր Առաքելական փոխանորդ²⁴²: Վերջինս եօթը տարի թափառական ապրելէ վերջ հրաժարեցաւ եւ մեկնեցաւ Պաղտատէն:

1728 Մարտ ամսուն Պաղտատ կը ժամանէ ուրիշ ֆրանսացի Կարմէղեան կրօնաւոր մը՝ հայր Էմանուէլ տը Սէնթ Ալպըրթ, եւ հոն կը գտնէ միայն 30 ընտանիք ամէն ազգէ կաթօլիկներ: Այս կրօնաւորը կը յաջողի տուն մը գնել եւ անոր մէջ հաստատել աղօթավայր մը՝ նուիրուած Ս. Թովմաս Առաքեալին: Կը բանայ նաեւ փոքրիկ դպրոց մը եւ իր նախորդներուն պէս կը ծաւալէ աշխոյժ քարոզչական գործունէութիւն: Կարմէղեաններու թափած ջանքերը ապարդիւն չեն անցնիր, եւ 1753 թուականին Պաղտատի կաթօլիկներուն թիւը կը հասնէր 84 ընտանիքի, որոնց 15-16ը միայն՝ հայ²⁴³:

²⁴⁰ Տէր Սայէղեան Ն., Պատմական Ակնարկ մը Հայ Կաթօղիկէ Հասարակութեան Վրայ յԻրաք, էջ 59:

²⁴¹ St' u دیر نرسیس صانغیان - نفس المصدر، صفحة، էջ 10-11:

²⁴² P. Joseph-Marie de Jesus, Vicaire Apostolique. Ալպոյաճեան Ա., Իրաքի Հայերը, էջ 45:

²⁴³ St' u دیر نرسیس صانغیان - نفس المصدر، صفحة، էջ 11:

Ուշադրութեան արժանի է, որ այս թուականներուն, հայ կաթողիկները տակաւին անջատ հասարակութիւն մը չէին կազմած: Ուստի, Պաղտատի մէջ, ինչպէս այլուր, շարունակեցին մկրտուիլ, պսակուիլ եւ թաղուիլ ընդհանրապէս հայ հոգեւորականներուն ձեռքով եւ կը յաճախէին անոնց եկեղեցին (Հայ Առաքելական Ս. Աստուածածին եկեղեցի կառուցուած 1639 թ.) միայն եւ երբեմն ալ եկեղեցոյ խորհուրդները անոնցմէ կ'ընդունէին²⁴⁴:

1758 թուականին Պաղտատ կը հասնին Անտօնեան միաբանութենէն հայր Դանիէլ Էմիրզեան եւ հայր Գաբրիէլ Տէր Մատթէոսեան Հնդկաստան անցնելու համար: Սակայն, Կարմէղեան կրօնաւոր Պայէն²⁴⁵ անոնց չի թոյլատրեր, որ Պաղտատ մնան եւ ոչ ալ Պասրա իջնելու համար արտօնութիւն կու տայ, այլ կը հարկադրէ զանոնք Մուսուլ երթալ: Հազիւ Մուսուլ հասած՝ հայր Դանիէլը կը վախճանի, իսկ հայր Գաբրիէլը կը վերադառնայ Լիբանան: Ահա այսպէս Կարմէղեան հայրերը թէեւ կ'օգտուէին հայ կաթողիկներէն, սակայն, չէին հանդուրժեր, որ վերջիններս հաստատուին Պաղտատ եւ իրենք մատակարարեն հայ կաթողիկներու հոգեւոր պահանջները:

Յետագայ տարիներուն պատկերը կը փոխուի, երբ Անտօնեան միաբանութենէն հայր Աբրահամ Փերիմեան 1766 թուականին կը ժամանէ Պաղտատ եւ սոյն թուականի Փետրուարի 5-ին իր վերադասին կը յղէ հետեւեալ նամակը. «դարձեալ յաղերս լինիմ, զի երկու թուրք գրեցէք՝ զմին ջուղայեցի Մահրատի որդի Ռափայէլ աղային, եւ միւսն առ Քիւրքճիպաշի Պետրոս աղային, զի սոքա յոյժ սիրով ընկալան զմեզ եւ ամենայն աւուր ի տան Ռափայէլ աղային հաց ուտեմք յառաւօտ եւ յերեկոյ...յոյժ բարի անձինք են, եւ մեր գնոսա փոխան մխիթարելու, իրենք ինքնեանք զմեզ մխիթարեն, կարծեմ թէ մինչեւ ի Չատիկ ոչ կարեմք անցանել Հնդկաստան: Դարձեալ ասեն բազումք, թէ զուր ջան անօգուտ վաստակ գործէք երթալովն ձեր անդր: Դարձեալ Ռափայէլ աղա ասաց, թէ ըստ Տօմինիկեանց արարողութեան երթայք ի Մանիլայ, շատ շատ

²⁴⁴ Ալայօյաճեան, Իրաքի Հայերը, էջ 46:

²⁴⁵ Վերոյիշեալ Կարմէղեան կրօնաւորը 1741 թուականին կը նշանակուի Պաղտատի ֆրանսական հիւպատոս, իսկ 21 Յունուար 1743 թուականին կը ձեռնադրուի Պաղտատի լատին թեմին վիճակաւոր՝ «Բաբելոնի եպիսկոպոս» տիտղոսով, եւ այս առթիւ կը սկսի գործածել իր արագանի անունը՝ Պայէ (Mgr Baillet):

օգուտ տեսանք, եւ թէ դուք կարեք փոխիլ, գրեցէք առ հոգեւոր տէրն, զի հրաման տայցէ, զի կարող լինիք որպէս ջահկեցիք փոխան «խաղաղութիւն ամենեցուն»ի ասել «Տէրն ընդ ձեզ» եւայլն: Դուք եւս քննեալ զբարին իմաց գործիցէք»²⁴⁶:

Ուրեմն, Անտօնեան միաբանները ոչ միայն հոգեւոր, այլ նիւթական եւ ժողովարարութեան ակնկալութիւններով կու գային այս կողմերը, որ յստակ կերպով կ'երեւի հայր Անդրեաս Ուզունեան Այնթապցիի 16 Սեպտեմբեր 1770-ին Հոռոմ գրած մէկ նամակէն, որով կ'առաջարկէ շնորհակալական գիրեր յղել այն ընտանիքներուն, որոնք նիւթապէս օժանդակած են զիրենք. «Այս են անւանքն, որ օրհնութեան եւ շնորհակալութեան գիր պիտի գրէք, որ տուած ողորմութիւն եւ աշխատ եղեն յամի Տեառն 1770 Յուլիսի 8 օրն»: Այնուհետեւ, կ'արձանագրէ անունները Պաղտատի եւ Պասրայի հայոց եւ լատինացոց, որոնց մեծ մասը Պասրայի բնակիչներ էին, ինչը կը հաստատէ թէ կաթոլիկութիւնը աւելի տարածուած էր Պասրայի մէջ քան այլուր: Հայր Ուզունեանը մասնաւորապէս կը շեշտէ. «շատ եւ շատ օրհնութեան եւ շնորհակալութեան գիր գրեցէք ի քաղաքն Պասրա հայոց ուղղափառաց, նախ եւ առաջ գերամեծար Միքայէլ վարդապետին (Չամչեան), որ մին ի միաբանից արքայոց վանքէն եւ նա բարի սիրով ջանաց եւ շատ աշխատ եղէ վասն մեր ողորմութիւն ժողովելու, վարձն Աստուծոյ առցէ»²⁴⁷:

Պասրայի մէջ եւս լատինները ունէին վանատուն եւ նոյնիսկ եպիսկոպոս մը յանձին Կուռնելիոս կամ Էմմանուէլ Պայէ եպիսկոպոսը, որ մահացած է Պաղտատ 1773 թուականին: Այստեղ ալ հայկաթոլիկները հաւանաբար իրենց առաջին տարիներուն յաճախած են Կարմեղեաններուն վանատան եկեղեցին: Հայերու մէջ թերեւս գտնուած են ջահուկեցիներ, այսինքն ունիթոռներ, որոնք հասած էին մինչեւ Նոր Ջուղա, ուր գոյութիւն ունէր հայկաթոլիկ խմբակ մը, որոնցմէ մաս մը անցած էր Պասրա: Իսկ 1708 թուականին, ինչպէս վերը նշեցինք, երբ Տալթապան կուսակալը հալածանքի ենթարկեց Պաղտատի կաթոլիկները, անոնցմէ մաս մը ապաստան գտաւ Պասրա: Ահա այսպէս խմորումը սկսաւ քաղաքին մէջ:

1769 թուականին երեք Մխիթարեան վարդապետներ՝ հայր Մանուէլ Էմիրզէ, հայր Սուքիաս Աղամալեանց եւ հայր Միքայէլ

²⁴⁶ Ալպոյաճեան, նշ. աշխ., էջ 46-47:

²⁴⁷ Նոյն, էջ 48:

Չամչեան, Վենետիկի վանքէն կը մեկնին Ադեքսանդրիա, ապա կ'անցնին Ագրի: Վերոյիշեալ հայրերը Հալէպի ճամբով կ'անցնին Միջագետք եւ կը հասնին Պասրա, ուր կը մնայ հայր Միքայէլ Չամչեան²⁴⁸:

Իսկ միւս երկու հայրերը կը շարունակեն ճամբան դէպի Հնդկաստան:

Ուրեմն հայր Միքայէլ Չամչեանի առաքելութեան առաջին վայրը կ'ըլլայ Պասրա քաղաքը, ուր կը մնայ շուրջ հինգ տարի:²⁴⁹ Այս տարիներու ընթացքին, ան ձեռք կը բերէ բաւական թանկագին ձեռագիրներ, որոնց հանդէպ Չամչեան պատմաբանը, քերականագետը, աստուածաբանը եւ հասարակական գործիչը ունէր մասնատր պաշտամունք: Լսելով, որ Նոր Ջուղայի մէջ կը գտնուին ձեռագիրներ, որոնք ի մէջ այլոց, ատաղձը պիտի հանդիսանային յետագային իր ստուարածաւալ, կոթողային աշխատութեան՝ «Հայոց Պատմութեան», 1770 թուականի Փետրուար 25ին նամակ մը կը յղէ Նոր Ջուղայի առաջնորդ Մկրտիչ վարդապետին, յայտնելով անոր իր ծրագիրը. «հարկ եղեւ մեզ որոնել զձեռագիրս Պատմութեան Հայոց, առ ի կարգել զայն ըստ պատշաճի, եւ ի լոյս ընծայել ազգիս մերոյ արժանապատում պատմագիրք մի: Եւ զի լուայ ես աստ թէ գտանին ի Ճուղայ ձեռագիր Պատմագիրք Հայոց, բազում յարգանօք աղաչեմ զարբութիւն Ձեր առնել մեզ զշնորհս այս մեծ, որոնել ի վանորայս կամ յայլ տեղիս, եւ գտեալ զայնս առաքել առ մեզ, եւ որչափ ինչ արժանի գին խնդրի պատրաստ ենք վճարել: Իսկ եթէ որք ունին ոչ կամիցին վաճառել, եթէ հնար է՝ տաջիք անսխալ օրինակել զայնս եւ զվարձս գրագրին գրեսջիք առ մեզ. իսկ զցանկ Պատմագրացն դնեմք ի թղթի աստ»²⁵⁰:

Միքայէլ Չամչեան Պասրա եղած տարիներուն կը քահանայագործէ եւ կը քարոզէ: Ան իր նամակներէն մեկուն մէջ ուղղուած Ստեփանոս Մելքոնեան Աբբահօր 1771 թուականի Մեպտեմբեր 13-ին, կը պատմէ, թէ ինչպէս կը վիճէ տարբեր անձերու հետ կաթողիկոսութեան համոզելու համար զանոնք: Կը բացատրէ նաեւ, թէ ինչպէս կաթողիկ կրօնին պաշտպանութեան համար ձեռնարկած է

²⁴⁸ Տե՛ս իրենց նամակը 3 Յուլիս 1769 թուականով «Մայր Դիւան Մխիթարեանց», էջ 258-259:

²⁴⁹ Ճեմճեմեան Ս. Հ., Հ. Միքայէլ Չամչեան եւ Իր Հայոց Պատմութիւնը, «Բազմավեպ», 1981, Վենետիկ-Ս. Ղազար, ՃԼԹ տարի, թ. 3-4, էջ 309:

²⁵⁰ Նոյն:

վեց հատոր գիրքերու խմբագրութեան, որոնց երեքը արդէն գրած է, եւ ինչ որ աւելի ուշագրաւ է, իր գրատր աշխատանքներուն վրայ խօսած ատեն կ'ըսէ, «թէ սկսանիմ յետ Զատկին, զի այժմ ի պատրաստութիւն քարոզի պարապիմ, զոր ի մօտոյ սկսանիմ»²⁵¹: Չամչեանը գանգատելով ժամանակի սղութենէն եւ անդրադառնալով Պասրայի ամառուայ անտանելի տօթին կ'աւելցնէ. «ոչ միայն վասն երթեւեկութեան, այլ յաւետ վասն այսորիկ՝ զի յաշնան եւ ի ձմեռն մինչ ի Զատիկ քարոզելոյ պարապիմ: Իսկ յամառան ջերմութիւն տօթոյն ոչ թողու»²⁵²:

Վերոգրեալ նամակէն ակնյայտ է, որ Չամչեան ջերմեռանդօրէն զբաղած էր կրօնական առաքելութեամբ հովանաւորութեամբ Պասրայի լատին եպիսկոպոս Կոռնելիոսի, որ իրեն գիրքեր կը տրամադրէր եւ ամէն կերպ կ'օժանդակէր իր առաքելութեան մէջ: Սակայն Կոռնելիոսի՝ Պաղտատ մեկնելէն ետք լատին վարդապետներ չեն շարունակեր վերջինիս բարեացակամ վերաբերմունքը Չամչեանի նկատմամբ²⁵³:

1770 թուականի Յունիս 6-ին, Անտօնեան միաբանութենէն Անդրեաս վարդապետ Ուզունեանը երկրորդ անգամ Պասրա կը ժամանէ՝ այս անգամ ընկերակցութեամբ հայր Մատթէոս վարդապետի, որոնք կը մերժուին հիւրընկալուելէ Կոռնելիոսի կողմէն՝ տեղ չունենալու պատրուակով: Հայր Միքայէլ Չամչեան յանձն կ'առնէ զանոնք հիւրընկալել, որ իր կարգին հիւր էր Ստեփաննոս անունով ջերմեռանդ կաթոլիկ հայու մը տունը, որ Չամչեանի գրութիւնները կարդալով մեծ բաւականութիւն կը ստանար²⁵⁴:

Ինչպէս ակնյայտ է արդէն, Պասրայի մէջ հայ կաթոլիկներու խմբակ մը կար: Չամչեան իր նամակներէն մեկուն մէջ կը յիշատակէ իր հիւրընկալը՝ Ստեփաննոս աղան, հէքիմ Ծատուրը, պարոն Աղասիւն եւ ուրիշներ:

1773 թուականին հերթական ժանտախտը կը հարուածէ Պասրան եւ Պաղտատը, որուն զոհ կերթայ բնակչութեան կէսէն աւելին: Հայ կաթոլիկները բնականաբար եւս կը տուժեն այս մահաբեր հիւանդութենէն, որոնց թիւը տարապայման կը պակսի:

²⁵¹ Մայր Դիան Միխիթարեանց, էջ 270:

²⁵² Նոյն:

²⁵³ Նոյն:

²⁵⁴ Նոյն, էջ 264:

1792 թուականին վերոյիշեալ հայր Ուզունեանը անգամ մը եւս Պասրա կ'անցնի Հնդկաստան երթալու ճամբուն վրայ²⁵⁵:

Իսկ 1780-1785 թուականներուն, երբ հայր Անտոն Սըճեան Պաղտատի հայ կաթողիկէ համայնքի ժողովրդապետն էր, այս շրջանին Պասրա անցնիլ եւ այնտեղ մնալ կ'ուզէ, սակայն Կարմէղեանները անոր ներկայութիւնը չեն հանդուրժեր, քանի որ իրենց շահերուն հետ չի համընկնէր: Հետեւաբար, իրենց վանատան դռները կը փակեն անոր երեսին եւ չեն թոյլատրեր, որ պաշտամունք կատարէ տեղոյն հայ կաթողիկէներուն համար: Այս պատճառաւ, հայր Անտոն կը վերադառնայ Պաղտատ, ապա Հալէպ, ուր կը մահանայ Բէշ Խշըբօ վանքին մէջ 19 Մարտ 1827 թ.²⁵⁶:

Ժանտախտի յաճախակի համաճարակները, ինչպէս նաեւ Կարմէղեաններու պարբերական ոչ-բարեկամական յարաբերութիւնները հայ կաթողիկէներուն հետ անշքացուց այս գաղութը: Այսպէսով, XIX դարու առաջին տասնամեակին, Պասրայի հայ կաթողիկէ համայնքը հազիւ 20 անձ կը հաշուէր, այնպէս որ յատուկ եկեղեցական կազմակերպութիւն ստեղծելը անհաւանական էր, յատկապէս եթէ նկատի ունենանք այն պարագան, որ տակաւին պաշտօնապէս իբր անջատ հասարակութիւն չէին ճանչցուած,²⁵⁷ թէեւ Պաղտատէն երբեմն Պասրա կու գային այցելու վարդապետնր ժամանակաւոր կերպով:

Երկար ատեն հայ կաթողիկէներ առանձին համայնք մը չեն կազմեր, իրենց կրօնական կարիքներուն համար կը դիմեն Կարմէղեան եկեղեցին: Յիշատակութիւն կայ, որ Լատինները ժամանակ մը արգելք հանդիսացած են հայ կաթողիկէ քահանաներու Պաղտատ եւ Պասրա հաստատուելուն:

1800-ական թուականներուն ինչպէս տեսանք, կազմակերպուած հայ կաթողիկէ համայնք մը սկսած է Պաղտատի մէջ: Տ. Ղուկաս վարդապետ Աստուածատուրեան, Կարնեցի, Պաղտատ կ'առաքուի 1805 թ.: Ան կը յաջողի երկու տուներ գնել 1806-ին մին քահանայի բնակութեան, եւ միւսը՝ 1808 թ., աղօթատեղի, պաշտա-

²⁵⁵ Օհանեան, Հայր Միքայէլ Չամչեանն ու իւր գործունէութիւնը Պասրայի մէջ 1769-1774 թթ., Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան 300-ամեակ, Միջազգային Գիտաժողով, Ձեկնցումներու Ժողովածու, Երեւան 2018, էջ 108-121:

²⁵⁶ St' u صفة نفس المصير – دير ترسيب صانتيان – էջ 13-14:

²⁵⁷ Նոյն, էջ 25: Նաեւ Ալպօյաճեան, Իրաքի Հայերը, էջ 111:

մունքի համար: Հաւանօրէն Տ. Ղուկասի ժողովրդապետութեան աստէն Պաղտատի հայ կաթոլիկ հայերու թիւն էր 33 տուն կամ 130 անձ, իսկ Պասրայի հայ կաթոլիկ համայնքի թիւը՝ 20 անձ:

Կաթոլիկ համայնքի գոյութիւնը պաշտօնապէս կը հաստատուի Պոլտոյ Բ. Դրան 3 Փետրուար 1833 թ. սուլթանական հրովարտակով մը: Այս թուականներուն է, որ Պաղտատ կուգայ Տ. Սահակ վրդ. Ստեփանեան (Միքայէլեան)՝ համայնքը կազմակերպելու: Ըստ Ներսէս Ծ. վրդ. Սայեղեանի՝ Պաղտատի հայ կաթոլիկներ բացառիկ եւ կարեւոր դիրք մը ունէին «շնորհիւ անցորդ եւ մնայուն մեծ ու փոքր վաճառականներու, որոնք 1775-էն ի վեր սկսած էին Պաղտատ երթելու եւ անկէ երթալ Հնդկաստան»²⁵⁸:

Յիշատակութեան արժանի է, որ 1821 թ. Պաղտատի մէջ կը վախճանի Նոր Ջուղայեցի Յովհաննէս վարդապետ Յարութիւնեան (1720-1821), Ուրբանեանի աշակերտներէն, որ 1790 թ.էն ի վեր Պաղտատ կը մնար եւ կ'օգնէր տեղոյն ժողովրդապետներուն: Իր 20 հայերէն ձեռագիրները կտակած է Զմմառի վանքին:

Վերոյիշեալ կաթոլիկ հայերուն նախահայրերը, Առաջին Համաշխարհային Պատերազմէն առաջ, Պաղտատ եկած եւ հաստատուած էին Պոլսէն, Արեւմտեան Հայաստանի զանազան քաղաքներէն եւ Կիլիկիայէն: Իրաք հանգրուանած հայ բնակչութենէն մաս մը կ'ընդունին կաթոլիկութիւնը ու կը մնան Պաղտատ:

Բարեկեցիկ են Պաղտատի հայ կաթոլիկ համայնքի զաւակները առհասարակ: Անոնց մէջ կային մեծ ու փոքր կալուածատէրեր, առետրականներ, պետական, դրամատնային եւ օտար ընկերութիւններու պաշտօնեաներ, լրագրողներ, բժիշկներ, ատամնաբոյժներ, արհեստաւորներ եւ այլ աշխատողներ:

Ուշադրութեան արժանի է, որ 20-րդ դարու սկիզբին, Իրաքի հայ կաթոլիկներու համայնքը կը հաշուէր 1000 շունչ²⁵⁹: 1950-ական թուականներուն Իրաքի Հայ կաթոլիկ համայնքը կը բաղկանար մօտ 2000 անձերէ, Պաղտատ՝ 1100 անձ, Մինճարի շրջան՝ 250, Մուսուլ՝ 200, Պասրա՝ 200, Քէրբուկ՝ 90, իսկ մնացեալ 150 հոգին ցրուած են այլեւայլ վայրերուն մէջ²⁶⁰: Մինճարի Հայ Կաթոլիկ համայնքը, ինչպէս վերը յիշեցինք, Տէր Զօրի արհաւիրքներէն մազա-

²⁵⁸ Նոյն, էջ 12:

²⁵⁹ Օրմանեան, Հայոց Եկեղեցին, 1952, Անթիլիաս, էջ 215:

²⁶⁰ Տէր Սայեղեան Ն., նշ. աշխ., էջ 43:

պուրծ Մինճար հաստատուած հայ զաղթականներ էին, որոնց մեծամասնութիւնը Մերդինէն էին: 1930 թուականին համայնքը ունեցած է իր եկեղեցին, որ կոչուած է Ս. Գեորգ Նահատակ եկեղեցի,²⁶¹ կը մնար կանգուն մինչեւ 2015-2016 թուականը:²⁶² Առաջին ժողովրդապետը եղած է Մելքոն վրդ. Թասպազեան: Երջանկայիշատակ կարտինալ Աղաճանեան 1940-ի աշնան այցելած է Մինճարի կաթոլիկ հօտը:

Հայ Կաթողիկէ Եկեղեցիներ

Պաղտատի հայ կաթողիկէ համայնքը ուներ երեք եկեղեցիներ: Առաջին եկեղեցին՝ Մայր Վերափոխման, ամենահինն է, կը գտնուի Պաղտատի Ռաս Էլ-Գարիա թաղին մէջ եւ կառուցուած է 1844-ին, որուն հարիւրամեայ յոբելեանը տօնուած է 1944-ին: Այս տօնակատարութեան նուիրուած է Տ. Ներսէս Մայեղեան վարդապետի արաբերէն աշխատութիւնը՝ «Իրաքի Հայ Կաթոլիկ Համայնքի Պատմութիւնը»: Եկեղեցւոյն կից կը գտնուէր կաթողիկէ համայնքի առաջնորդարանը: Ռաս Էլ-Գարիա թաղամասի հայ բնակչութիւնը նուազելուն, նաեւ եկեղեցին կիսափուլ վիճակի մէջ գտնուելուն, արքեպիսկոպոսարանը Քարբատա թաղ կը փոխադրուի եւ եկեղեցին ալ կը խոնարհի: Իբրեւ հայ կաթոլիկ համայնքի «վակըֆ» տեղւոյն վրայ այժմ կառուցուած են վաճառականական խանութներ:

Երկրորդ եկեղեցին՝ Յիսուսի Ս. Միքտ, կառուցուած է 1937 թ., կը գտնուի Քարբատա թաղին մէջ եւ օծումը կատարուած է 3 Ապրիլ 1938 թ.: Այս եկեղեցիին հողը գնուած է կառուցումն ու կահաւորումը կատարուած է ազգային բարերարուի երեք քոյրերու՝ Մինա, Թերեզա եւ Ռեճինա Անտոնի Գասպարխաններու նուիրատուութեամբ, ի յիշատակ իրենց հանգուցեալ եղբօր՝ Ռափայել Գասպարխանի (ծնած Պաղտատ 6 Նոյեմբեր 1852-ին եւ մահացած 26 Նոյեմբեր 1937-ին): Այս երկու յիշատակութիւնները արձանագրուած են եկեղեցւոյ ճակատին եւ արտաքին պատին վրայ: Վերանորոգուած է 2000-2002 թուականին:

²⁶¹ Նոյն:

²⁶² Այս թուականներուն կ'ականապատուի եւ կը պայթեցուի իսլամ ծայրայեղականներուն կողմէ:

Նոյն Քարրադա թաղամասին մեջ Հայ կաթոլիկներու գործող միւս եկեղեցին է Նարեկի Տիրամայրը, որ կառուցուած է 2000-2001 թթ.:

Վերոյիշեալ Գասպարիսան քոյրերը, իրենց եկեղեցաշինութեան եւ դպրոցաշինութեան ազգանուէր գործունէութեամբ, կը դասուին իրաքահայ գաղութի բարերարներուն շարքին: Մեծ եղած է իրենց աջակցութիւնը հայ կաթողիկէ համայնքի եկեղեցական եւ կրթական կեանքի վերելքին: Իրենց առատաձեռն նուիրատուութեամբ կառուցուած է Յիսուսի Ս. Սիրտ Եկեղեցին եւ Անարատ Յղութեան Քոյրերու աղջկանց վարժարանը Պաղտատի մեջ²⁶³:

Իրաքահայ կաթողիկ թեմի հանրայայտ դէմքերէն է Տ. Ներսէս արք. Թայրոյեանը, որ նշանակալի ծառայութիւններ մատուցած է իր թեմին: Օնսած է Սերդին, 1895 թուականին: Քահանայական կոչումը ստացած է 1919 թուականին: Արքեպիսկոպոսական փոխանորդի պաշտօնով հաստատուած է Պաղտատ 1938 թ.: Եպիսկոպոս ձեռնադրուած է 1940 թ. Պէյրութ, Քաբուշիններու եկեղեցոյ մեջ, կաթողիկոս-պատրիարք՝ Տ. Գրիգոր Պետրոս կարտինալ Աղաճանեանի կողմէն: Այնուհետեւ, նշանակուած է վիճակաւոր-առաջնորդ Իրաքի հայ կաթողիկէ համայնքին: Իր հոգեւոր պաշտօնը անձնուիրութեամբ տանելով լաւագոյնս սատարած է իր թեմի յառաջդիմութեան եւ բարգաւաճման:

Իսկ Պասրայի մեջ, 1932 թուականին հրեայ բարերար մը իր հայ կաթողիկ կնոջ սիրոյն շէնք մը նուիրած էր քահանայի բնակութեան եւ եկեղեցիի համար՝ առանց օրինական փոխանցում կատարելու: Բարերարի մահէն ետք, իր ազգականները չյարգեցին հանգուցեալին կտակը եւ շէնքը վերագրաւուեցաւ վերջիններուն կողմէն²⁶⁴:

Այսպէսով, Պասրայի հայ կաթողիկները (որոնց մեծամասնութիւնը արաբախօս էին եւ են), չունեցան իրենց եկեղեցին եւ մինչեւ օրս կը յաճախեն լատինական եկեղեցիներ:

²⁶³ Օհանեան, նշ. աշխ., էջ 116-117 եւ Գեորգեան, նշ. աշխ., էջ 436-441:

²⁶⁴ «Թեմերէ Լուրեր», «Աւետիք», թիւ 3, 1932, Պէյրութ, էջ 15:

1-Պաղտատի Հայոց Առաջին Գերեզմանատունը
Պապ Էլ-Մուադդամ

Ինչպես վերը նշեցինք, 1638 թուականին առաջ Պաղտատ շատ փոքրաթիվ հայ համայնք մը ունեցած է: Սոյն թուականին, շնորհիվ հայազգի թնդանօթածիզ Գեորգ Նազարեթեանի ձուլած թնդանօթով Պաղտատ կը գրաւուի Օսմանեան Մուլլան Մուրատ Դ-ի կողմէ եւ իբր վարձատրութիւն, եկեղեցւոյն համար հողամաս մը կը յատկացուի Պաղտատի հիւսիսային կողմը, եւ ուրիշ հողամաս մըն ալ գերեզմանատան համար մայրաքաղաքի Պապ Էլ-Մուադդամ թաղի պարիսպէն դուրս: Այս գերեզմանատունը կը գործածուի մինչեւ 1890ական թուականները: Այս առթիւ, Պաղտատի պատրիարքական փոխանորդ Արիստակէս եպս. Դերձակեանի²⁶⁵ 14 Յունիս 1899 թուակիր նամակին ուղղուած Պոլսոյ Պատրիարք Մաղաքիա Արք. Օրմանեանին, կը գրէ. «...1890ական թուականներուն այլեւս այս գերեզմանատան վայրը քրիստոնէական թաղէն հեռու կը գտնուի, հոն երթալու համար տեղւոյն մեծ շուկայէն անցնիլ հարկ ըլլալով ննջեցելոց թաղման համար անպատեհութիւնք կ'երեւէին, մանաւանդ գերեզմանատան կից զօրանցը, Տիգրիս գետը բարձրանալէն ազատ պահելու համար անոր կիսոյն վրայ թումբեր շինեց զինուորականութիւնը, որոյ վասն անվայել տեսարաններ կը պարզեր յուղարկաւորացիս աչաց առջեւ»²⁶⁶:

Վերոյիշեալ պատճառներով եւ այս գերեզմանատան գրեթէ լեցուն ըլլալուն, հոն ննջեցեալները թաղելը կը դադրի 1890ական թուականներէն: Ժամանակ մը ննջեցեալներ կը թաղուին Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ բակը եւ անոր կից հողամասի մը մէջ:

Առաջնորդարանի «Վախճանեալք Հայոց Ի Պաղտատ» տոմարի արձանագրութիւնը կը սկսի 26 Մարտ 1856 թուականէն, անկէ առաջ պատահած մահացողներուն մասին տեղեկութիւն չկայ: Այս տոմարին մէջ առաջին արձանագրուած ննջեցեալի անունն է

²⁶⁵ Տէր Արիստակէս եպս. Դերձակեան, Պատրիարքական (Կ.Պոլսոյ) փոխանորդ Պաղտատ 1892-1901 թթ., մահացած 15-01-1901 եւ թաղուած Պաղտատ Ս.Երրորդութիւն եկեղեցւոյ բակը:

²⁶⁶ Իրաքահայ Թեմի ..., նշ. աշխ., էջ 199:

Մարիամ Յովհաննէս Յակոբեան, 4 տարեկան, մահուան պատճառը «հիւծեկան ախտի»:

1856-1891, երեսուն եւ հինգ տարուան ժամանակամիջոցին արձանագրուած է 467 ննջեցեալի անուններ, միջին հաշուով՝ 13 ննջեցեալ տարին: Ուրեմն, Պապ Էլ-Մուադդամի գերեզմանատունը բացուելէն մինչեւ 1891, երկու հարիւր յիսուն տարուան ընթացքին հոն թաղուած ըլլալու է մօտաւորապէս 3000 ննջեցեալ:

Մուադդամի գերեզմանատունը 1914-1915-ին կը գրաւուի օսմանցիներուն կողմէ եւ կը քանդուի: Այժմ, նախկին արքայական պալատ տանող լայն պողոտային մասը կը կազմէ²⁶⁷:

Ուշադրութեան արժանի է, որ Ս. Աստուածածին եկեղեցոյ բակին մէջ եւս ննջեցեալներ թաղուած են դեռեւս XVIII դարու երկրորդ կէտէն սկսեալ²⁶⁸: Եկեղեցոյ մէջն ու դուրսը բազմաթիւ խաչքարեր կան, որոնց յիշատակարանները ամբողջութեամբ արտագրած է Յ. Քիւրտեանը զանոնք վերջնական կորուստէն փրկելու համար²⁶⁹: Բոլոր խաչքարերը կը պատկանին 1750-1760 թթ., որ պայմանաւորուած էր այս շրջանին Իրաքի մէջ գործող հայ վաճառականներուն ծաւալուն գործունէութեամբ:

2 - Պաղտատի Պապ Էլ-Շարկի (Պաթթաուիկի) Գերեզմանատունը

Այս գերեզմանատան հողամասի գնման մասին մեզի հասած են երկու տուեալներ՝ Արշակ Ալպոյաճեանի եւ Դաւիթ Թաղեւեանի, զորս կը նշենք ստորեւ:

- Արշակ Ալպոյաճեան, «Պատմութիւն Հայ Կեսարիոյ»²⁷⁰ աշխատութեան մէջ, յիշելով Գոյումճեան ընտանիքի, մանաւանդ Յակոբի մասին Պապ Էլ Շարկիի գերեզմանատան առնչութեամբ,

²⁶⁷ Թաղեւեան Դ., Եօթատետր 1, էջ 102, նաեւ՝ Իրաքահայ Թեմի..., էջ 201:

²⁶⁸ Կարգ մը եկեղեցիներու բակերուն մէջ թաղուած ննջեցեալները, մեծաւ մասամբ հարուստ դասակարգի պատկանող վաճառականներ կամ զաղութի վերնախաւը ներկայացնող անձինք էին, ինչպէս Պասրա քաղաքի Ս. Աստուածածին եկեղեցոյ պարագան էր: Սակայն, անցած դարու 70ականներուն վերջ գտաւ այս անցանկալի սովորութիւնը, եւ բոլոր ննջեցեալները անկախ իրենց պաշտօնէն եւ դիրքէն, կը թաղուին Պասրայի Հայոց գերեզմանատան մէջ:

²⁶⁹ Քիւրտեան Յ., Հայկական հնութիւնք ի Պաղտատ, «Սիոն», Երուսաղէմ, 1931, Փետրուար, էջ 56-58: Տե՛ս նաեւ լուսանկարներու բաժին:

²⁷⁰ Ալպոյաճեան, Պատմութիւն հայ Կեսարիոյ, Հատոր 2, Գահիրէ, 1937, էջ 214:

կը յիշէ թէ Յակոբ ծնած է Թալաս, 1842-ին եւ փոխադրուած Պաղտատ 1890-ին: Ան եղած է անդամ Գաւառական ժողովի, իսկ կառավարական շրջանակի մէջ գնահատուելով՝ եղած է անդամ Իտարէ (վարչական) ժողովի եւ կառավարական յանձնախումբերու: Իսկ գերեզմանատան մասին կը գրէ.

«...Պաղտատի հայկական գերեզմանատունը անյարմար տեղ մը գտնուելուն համար 1903-ին Յակոբի մասնակցութեամբ պաղտատահայութիւնը կարեւոր գումար մը հանգանակելով ընդարձակ հող մը գնած էր անգլիական եւ լատին գերեզմանատուներուն կից: Այս գերեզմանատունը որմնափակելու ծախսը 200 ոսկի ստանձնած էր Յակոբի եղբայրը Քերովբէ Գոյումճեան: Սակայն, Քերովբէի վաղածամ մահը գործը անկատար կը ձգէ»²⁷¹: Յետագային, Քերովբէի զաւակները յարգած են իրենց հօր խոստումը եւ կատարուած է որմնափակումը:

- Իսկ Դաւիթ Թաղէոսեան²⁷² Պապ Էլ Շարկիի գերեզմանատան մասին կը գրէ. «...Ազգակից քանի մը բարեկամներու խնդրանաց ընդառաջելով գրի կ'առնեմ Ուրֆայի հողամասին մէջ ազգային գերեզմանատան կալուածի գնման պարագաները ի զիտութիւն յետագայ սերունդին:

- 1914-ի մեծ պատերազմէն առաջ Ուրֆայի գերդաստանը, որոնք ծագումով Ուրֆա քաղաքէն են, ընդարձակ պարտեզ եւ ցանքի արտ ունէին հին Պաղտատ քաղաքի հարաւակողմը՝ անմիջապէս քաղաքի պարիսպէն դուրս, զոր տիրացած էր իրենց նախահայրը՝ Ուրֆայի Էմին պէ, որ շուրջ հարիւր տարի առաջ Պաղտատի ժանտարմայի (ոստիկանութեան) հրամանատարն էր, եւ ցայսօր իրենց կալուածն է: Այդ ընտանիքի անդամներ թէեւ կալուածատէր,բայց հնչուն դրամի միջտ պէտք կ'ունենային...եւ կը ստիպւէին մերթ ընդ մերթ փոխառութիւն ընել տեղոյս հայազգի նշանատր բնակիչներէն՝ հանգուցեալ Դաւիթ Յովհաննէս Թաղէոսեանէն, որ քաղաքին մէջ իրենց դրացին էր: Այս փոխառութիւնները բարդուելով տոկոսին հետ՝ միասին 500 թրքական ոսկիի կոկիկ գումարի մը բարձրացաւ, որուն փոխարէն Ուրֆայիներ առաջարկեցին իրենց արտէն մաս մը փոխանցել յիշեալ Դաւիթ Յովհաննէս

²⁷¹ Նոյն:

²⁷² Թաղէոսեան Դ., Յուշերու Տետր 1, էջ 309-310 (Իրաքահայ Թեմի Համաժողովի Պատմութիւն, էջ 199-204):

Թաղէտեսանի անուան ի հատուցումն իր պահանջին: Դաւիթ ազգային քաղաքական ժողովի անդամ ըլլալով՝ քաջ տեղեակ էր գերեզմանատան մը ազգի հրատապ պահանջին, որովհետեւ քաղաքի հիւսիսակողմը Մուաղղէմի դարպասի քով գտնուած գերեզմանատունը, որ Մուլթան Մուրատ շնորհած էր ազգին, փոքր էր եւ գրեթէ ամբողջովին լեցուած գերեզմաններով, եւ ննջեցեալները իրար վրայ կը թաղուէին: Դաւիթ համաձայնութիւն կը կնքէ Ուրֆալիներուն հետ ընդարձակ հողամասի մը համար, որուն տարածութիւնը մօտաւորապէս 30,000 քո. մէթր է եւ կը գտնուի Ուրֆալիներուն կալուածի հիւսիս արեւելեան սահմանին կողմ, կից այլ քրիստոնէայ յարանուանութեանց գերեզմանատան եւ Թափույի մէջ ազգի անուան արձանագրել տուաւ»: Փոխարժէքը յետոյ Դաւիթ մաս առ մաս զանձած է, այսպիսով ազգը ընդարձակ կալուածի մը տէր կը դառնայ:

- «...Այս հողամասէն 150 մէթր լայնութեամբ եւ 150 մէթր երկարութեամբ մաս մը ի սկզբան կը յատկացուի իբր ազգային գերեզմանատուն եւ 1904-ին կը շրջապատուի կէտը աղիւսէ եւ կէտը ցեխէ պատով մը արդեամբ եւ ծախիւք ազգային բարերար Քերովք աղա Գույումճեանի, եւ մնացեալ մասը մնաց իբր ազգային կալուած: Հայրիկիս արձանագրութեան համաձայն գերեզմանատան դրան ճակատը այսպէս էր գրուած.

*Ազգային գերեզմանատունս զնեալ արդեամբ բարեւելք
նուիրատուոց*

Հայոց ժողովրդեան Պաղտատու

*Պարսպեալ պատեցաւ ծախիւք առ յիշատակի
Թալասցի Քերովքէ Մարտիրոս Գույումճեանի եւ
Կողակցիս իւրոյ Մարիցայի - 30 Յուլիս 1904»:*

Իսկ 1907 թուականի Ապրիլ ամսոյն, երբ դեռ Պաղտատ քաղաքը ջուրէն եւ ողողումէն պաշտպանող Նազըմ Փաշայի թումբը չէր շինուած, արտակարգ հեղեղներու պատճառաւ դաշտերը ողողուելով գերեզմանատան պատերը փլեցան եւ քանի մը տարի այդպէս անպատսպար մնաց մինչեւ առաջին պատերազմէն ետք ազգը ստիպուեցաւ մեծ ծախքով աղիւսէ եւ կիրէ ամուր պատով մը շրջապատել ամբողջ կալուածը հանգանակուած դրամով:

Ննջեցեալներուն թաղումը Պապ Էլ Շարկի (Պաթթաուին) գերեզմանատան մէջ շարունակեցաւ 80 տարիներէ աւելի: Յատկացուած հողամասը լեցուեցաւ գերեզմաններով: Ասոնցմէ մաս մը

շինուած՝ ուրիշներ հողակոյտ միայն, պատկանելիութիւնը՝ տարիներու ընթացքին գետնի հետ հաւասար ըլլալուն, անյայտ: Ըստ կատարուած ցուցակագրութեան մօտ 3000 ննջեցեալներու աճիւնները թաղուած են այս գերեզմանատան մէջ: Ննջեցեալներուն թաղումը այս գերեզմանատան մէջ դադրեցաւ 31 Դեկտեմբեր 1986-ին, երբ բացուեցաւ Շաուրա Վէ Ում Ճըտըր գերեզմանատունը (նոր գերեզմանատուն):

Պասրայի հայերը նոյնպէս բաւական հին ժամանակներէ սկսեալ առանձին գերեզմանատուն մը ունեցած են, որ մօտ էր միւս քրիստոնէայ յարանուանութեանց յատկացուած գերեզմանատան: Ըստ Ներսէս վրդ. Սայէդեանի՝ «Յամի Տեառն 1684 յաւուրն երկոտասաներորդի ամսեանն Յուլիսի վախճանեցաւ Տէր Յովհաննէս Հայ Եպիսկոպոսն, որ էր երբեմն ժամանակի պատրիարք Կոստանդնուպոլսոյ, որ մինչ հիւանդն էր դաւանեցաւ զկաթողիկէ հաւատս եւ հաղորդեցաւ: Հուսկ ննջեաց ի Տէր ի նմին աւուր, որ յիշեցաւ վերագոյն եւ թաղեցաւ ի գերեզմանատեղւոջն որ կոչի ԻսաԲին-Մերեամ»²⁷³: Այս գերեզմանատունը, կը պատկանէր Պասրայի կաթողիկէ քրիստոնէից, կողքէն դուրս անշրջապատ եւ սակաւաթիւ արմաւենիներ պարունակող հողատարածք մըն էր եւ կը կոչւէր Իսա իբն Մարիամ: Այս անուանակոչումը յառաջ եկած էր միեւնոյն անունը կրող այն մահմետական ուխտատեղիէն, որ անոր մօտերը կը գտնուէր եւ որուն առաջին յիշատակութեանը կը հանդիպինք 1604 թ. վերջերը Փետրօ Թէլիշէիրա փորթուկալացի ճանապարհորդին յուշերուն մէջ:

²⁷³ Ն. Տէր Սայէդեան կը նշէ հետեւեալը. «Կ. Պոլսոյ Հայոց պատրիարքական աթոռը Յովհաննէս անունով միայն չորս աթոռակալ պատրիարքներ ունեցած է ամբողջ XVII դարուն տեւողութեան: Անոնք էին Յովհաննէս Խուլ Կոստանդնուպոլսեցի, Յովհաննէս Մոլդնեցի, Յովհաննէս Թիւթիւնճի. եւ Յովհաննէս Ամասիացի Թոփալ: Արդ՝ ասոնց առաջինը 1600 թ.էն սկսեալ չորս անգամ պատրիարքական պաշտօն վարելէ ետքը կը վախճանէր 1636 թ.: Երկրորդի մահուան թուականը անյայտ է, բայց հաւանական չէ, որ ան ապրած ըլլայ մինչեւ 1684 թ., քանի որ 1652-1655 թթ. արդէն պատրիարք էր: Իսկ երրորդը երկու անգամ պատրիարք ընտրուելէ յետոյ կը վախճանէր 1667 թ.ին.: Ուրեմն մեծապէս հաւանական էւ գրեթէ ստոյգ է, որ Պասրա վախճանած վերոյիշեալ հայագի պատրիարքը՝ Յովհաննէս Ամասիացին էր, որ պատրիարք էր 1674-1675 թթ. եւ որուն մահուան տեղն ու թուականը անծանօթ էր ցարդ» («Հանդէս Ամսօրեայ», Վիեննա, թիւ 6, Յունիս 1927, էջ 333-334):

1869 թուականի այս գերեզմանատունը կը լքուի, որուն հողերը կը տիրանան բնիկները եւ զանոնք այլեւայլ պետքերու համար կը գործածեն:

Այսօր, Պասրայի հայերը ուրիշ գերեզմանատուն մը ունին, ուր յետագային, գերազանցապէս բարեսէր-եկեղացասէր պասրահայ համայնքի անդամներուն սրտաբուխ նուիրատուութիւններով, նաեւ Իրաքի Կեդրոնական Վարչութեան օժանդակութեամբ եւ Պասրայի հոգեւոր հովիւ՝ Սեպուհ վրդ. Սարգիսեանի (այժմ՝ Թեհրանի առաջնորդ) հետեւողական ջանքերով 1973 թուականին մատուոտ մըն ալ կառուցուեցաւ Ս. Յովհաննէս Կարապետ անունով, որ կանգուն է առ այսօր:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՏՆՏԵՄԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

1-Տնտեսական Գործունեություն

Իր աշխարհագրական դիրքին շնորհիւ, Միջագետքը՝ անցեալին եւ ներկայիս, մշտապէս եղած է մեծ տերութիւններուն ուշադրութեան կեդրոնը: Արեւելքը արեւմուտքին կապող աշխարհի այս երկրամասը, Պարսից Օղջի հիւսիսը գտնուող Պասրա նաւահանգիստով, ինչպէս անտիկ աշխարհի, նմանապէս միջնադարեան եւ արդի առետրատնտեսական պատմութեան մէջ իր ուրոյն տեղն ունի:

Միջնադարուն, Կիլիկեան Հայաստանի տնտեսական կեանքին մէջ, մեծ դեր ունեցան նաեւ Միջագետքի նաւահանգիստները եւ գլխաւոր քաղաքները: Կիլիկեան թագաւորութեան ամենափայլուն ներկայացուցիչ Լեւոն Ա.ը, իր մեծ զինուորականի եւ ճկուն քաղաքագետի յատկութիւններուն, կը միացնէ նաեւ տնտեսական կարիքներուն եւ կարելիութիւններուն խոր հասկացողութիւն մը՝ հիմը դնելով Կիլիկիոյ թագաւորութեան տնտեսական զարգացման: Այս բազմակողմանի հմուտ քաղաքագետ գահակալը կը խորհէր, թէ կու գայ ժամանակը, երբ առետրական գործառնութիւնները պահպանելու կարիքը պիտի մղէ արեւմտեան պետութիւնները, յատկապէս ծովային տերութիւնները՝ գործօն կերպով հետաքրքրուելու Հայաստանի պաշտպանութեամբ²⁷⁴: Կիլիկիոյ խելամիտ թագաւորները խորհած էին, որ Կեդրոնական Ասիան Միջերկրականին կապող ուրիշ ճամբայ մը նմանապէս Կիլիկիա կը յանգէր Մալաթիա եւ Մարաշի ուղղութեամբ: Վերջապէս կարելոր միացման գիծ մըն էր նաեւ Հիւսիսային Սուրիոյ, Պաղտատի եւ Պասրայի վրայով Կիլիկեան Պարսից Օղջին կապող ճամբան: Հետեւաբար, տրամաբանական է, որ Կիլիկիոյ հայ վաճառականները իրենց կարաւանները անվտանգ տեղ հասցնելու համար անպայման պիտի նախընտրէին գործարքներ կնքել իրենց ցեղակից եւ կրօնակից գործակալներուն կամ ներկայացուցիչներուն հետ վերոյիշեալ քաղաքներուն մէջ, մանաւանդ, որ ըստ կարգ մը պատմաբաններու, Պասրայի մէջ դեռեւս 1222 թուականին, արդէ՛ն հայ-

²⁷⁴ Պաստրմաճեան Հրանտ, Հայոց Պատմութիւն, Ա. հատոր, Պէրյութ 1954, էջ 278:

կական գաղութ մը գոյութիւն ունէր, որուն փաստը այն էր, որ սոյն քաղաքի թեմակալն էր Հայաստանցի Սողոմոն անունով եպիսկոպոս մը²⁷⁵:

Միջագետք-Իրաքի տնտեսական ծաղկուն ժամանակաշրջանը կը սկսի XVII դարէն ետք, Շահ Ապպասի Արարատեան դաշտի 300.000-է աւելի բնակչութեան յայտնի բոնագաղթէն եւ Պարսկաստանի իր մայրաքաղաքին մօտ, Նոր Ջուղայի եւ ուրիշ համայնքներու հիմնադրումէն ետք: Այս ժողովուրդէն զգալի հատուած մը կ'անցնի Պասրա, Պաղտատ եւ այլուր: Վայելելով պետական եւ բարձրաստիճան իշխանութիւններուն կողմէ ցուցաբերած բարեացակամութիւնը՝ Նոր Ջուղայի մէջ հաստատուած հայ ժողովուրդը կը յաջողի վերակենդանանալ, իր մշակութային եւ հասարակական գործունէութեան զուգահեռ, վերակենդանացնել նաեւ իր առեւտրական բեղուն կեանքը, տարածուելով ամենուրեք Ասիայի մէջ (ներառեալ Իրաքի գլխաւոր քաղաքներ՝ Պաղտատ, Պասրա եւ Մուսուլ) եւ Միջերկրականի կարգ մը երկիրներ:

Սակայն, նկատի ունենալով, որ որեւէ հայ համայնքի տնտեսական գործունէութիւնը, մեծապէս փոխ-կապակցուած է տուեալ երկրի ընդհանուր տնտեսական եւ քաղաքական իրադրութեան հետ, հետեւաբար, անհրաժեշտ է Իրաքի քաղաքական կեանքի մասին գաղափար մը կազմել, Նոր Ջուղայի հայ վաճառականներուն ժամանումէն շատ առաջ, որ հետեւեալ պատկերը կը ներկայացնէր.

Պասրան՝ այս վաճառաշահ քաղաքը, հիմնադրուած է 638 թ.ին եւ սահմանակից է Պարսկաստանին: Գտնուելով Իրաքի հարաւը եւ Պարսից Օղջի հիւսիսը, կը հանդիսանայ Իրաքի միակ նաւահանգիստը եւ հանգուցակէտն է Հնդկաց Ովկիանոսի նաւային բեռնաթափման եւ փոխանցման դէպի կարաւանային ճանապարհները՝ Պաղտատ, Հալէպ եւ այլն: Իր աշխարհագրական կարեւոր դիրքին շնորհիւ, այստեղ կեդրոնացած է առեւտրային կեանքի աշխոյժ գործունէութիւն:

Այս քաղաքը, ինչպէս Ապպասեան Խալիֆայութեան մայրամուտին Իրաքի միւս քաղաքները, շատ անշուք պատկեր մը կը ներկայացնէր մոնկոլական արշաւանքէն (1258 թ.) դէռ շատ առաջ:

²⁷⁵ Օհանեան, Հայ Վաճառականութիւնը Իրաքի մէջ 17-19րդ դարերուն, «Հայոց Պատմութեան հարցեր», Երեւան, թ. 14, 2013, էջ 90-105:

Քաղաքի ջրանցքները եւ ջուրի ամբարտակները անտեսուելով, աստիճանաբար վատթարացած էին եւ ստեղծած տարատեսակ հիւանդութիւններու եւ համաճարակներու պարարտ միջավայր: Երբ Իբն Բատտուտան²⁷⁶ 1327 թ. կ'այցելէ Պասրա, քաղաքը կը գտնէ աւերակներուն մէջ եւ իր աննշան թիւ կազմող բնակչութիւնը, քաղաքը ներկայ դիրքին տեղափոխելու գործընթացի մէջ էր²⁷⁷: Մինչեւ XV դար, քաղաքի ջրամատակարարման խողովակները այնքան վատթարացած էին, որ խմելու ջուր հայթայթելն անգամ ամենաղծուարին գործերէն մէկն էր: Սակայն, քաղաքի տեղափոխմամբ, երկրի տնտեսական վիճակը չի բարելաւուիր մինչեւ 1508 թ., երբ երկիրը կը նուաճուի Սէֆեան Պարսկաստանի կողմէն, եւ երբեմնի աշխոյժ եւ ծաղկուն տնտեսութիւնը ժամանակաւորապէս եւ որոշ չափով մը կը վերակենդանանայ: Միայն 30-40 տարիներ ետք, երբ Օսմանեան բանակները 1534 թ. եւ այնուհետեւ 1546 թ.,²⁷⁸ կ'արշաւեն եւ կը նուաճեն երկիրը, Պասրան կը ներգրաւուի եւ կարելոր մաս կը կազմէ համաշխարհային առեւտրային ցանցին: Այնուամենայնիւ, Օսմանեան իշխանութիւնները անուանապէս միայն կը տիրէին կայսրութեան այս հեռաւոր նահանգին, հակառակ որ կեդրոնական կառավարութիւնը քանի մը անյաջող փորձեր ձեռնարկեց զօրաւոր նաւատորմիդ մը կազմել՝ փորթուկալցիներուն Պարսից Օնգէն դուրս քշելու համար²⁷⁹:

Ուշադրութեան արժանի է, որ XVII դարուն, Պասրայի Օսմանցի կառավարիչը այնքան թոյլ եւ կամագուրկ անձնաւորութիւն էր, որ չկրնալով դիմակայել արաբական անապատէն արշաւող տարբեր ցեղերուն յաճախակի յարձակումները, պարզապէս իր նահանգապետութեան պաշտօնը կը վաճառէ տեղացի պաշ-

²⁷⁶ Յայտնի արաբ ուղեւոր Սոհամնեդ Իբն Արդուլլահ Իբն Բատտուտա (1304-1368 կամ 1369): Իր շատ նշանաւոր աշխատութիւնն է «Իբն-Բատտուտայի Ուղեւորութիւնները», որուն մէջ կը նկարագրէ իր բազմաթիւ ուղեւորութիւնները աշխարհի զանազան երկիրներ:

²⁷⁷ Thabet A. J. A., Merchants, Mamluks and Murder, The Political Economy Of Trade In Eighteenth-Century Basra, State University of New York Press, 2001, p. 10.

²⁷⁸ Պաղտատ եւ Պասրա քաղաքները ձեռքէ ձեռք անցեր են Սէֆեան Պարսկաստանի եւ Օսմանեան Թուրքիոյ միջեւ մինչեւ վերջիններու կողմէ Պաղտատի վերջնական նուաճումը 1638 թուականին:

²⁷⁹ Thabet A.J. A., Ibid p.10, 112.

տօնեայի մը՝ Ալի Աֆրասեաբ անունով²⁸⁰: Այսպիսով, Պասրան գրեթէ անկախ վիճակ մը կ'ունենայ եւ, թեւ տեղեկութիւնները այս ժամանակաշրջանին վերաբերեալ շատ տարտամ են եւ հակոտնեայ, այնուամենայնիւ, առետուրը, շինարարութիւնը եւ մշակութային կեանքը, աշխոյժ զարթօնք մը կ'ապրի: Այս խաղաղ ժամանակաշրջանը կը գուգադիպէր Հնդկաց Ովկիանոսի առետրային գործունէութեան համընդհանուր վերելքին, որ կ'իրագործուէր Մուղալի, Սէֆեան եւ Օսմանեան կայսրութիւններուն հետ ընդհանուր առետրական յարաբերութիւններով, Եւրոպայի հետզհետէ աճող մասնակցութեամբ միջ-Ասիական առետրային կեանքին:

Սակայն, Պասրայի «անկախութիւնը» կարճ կը տեւէ. 1668 թ. Պաղտատի օսմանցի կուսակալը (վալին) կ'արշաւէ Պասրա, կը տապալէ աֆրասեաբեան տեղական իշխանութիւնը եւ կը վերահաստատէ Օսմանեան գերիշխող տիրապետութիւնը: Այսպիսով, նոր անորոշ ժամանակաշրջան մը կը սկսի Պասրայի պատմութեան մէջ, ընդմիջուած հերթական ժանտախտի համաճարակով, Պարսկական արշաւանքով եւ արաբ ցեղախումբերուն մերթ ընդ մերթ յարձակումներով: 1699 թ., զանազան քաղաքական իրադրութիւններուն հետեւանքով, Օսմանեան կայսրութիւնը կը յաջողի ժամանակաւորապէս հաստատել իր իշխանութիւնը այս անկառավարելի նահանգին մէջ: Հինգ տարի ետք, Պասրան պաշտօնապէս կ'ենթարկուի Պաղտատի *փաշալիքին*, որ երկիրը կառավարելուն համար յենուած էր գլխաւորապէս մամլուքներէն կազմուած իր բանակին վրայ²⁸¹:

Երկիրը կառավարելու գործընթացին, մամլուքներուն գերազանցօրէն վստահիլը հանգեցուց վերջիններուս փաստացի տիրապետումը իշխանութեան բոլոր լծակներուն: 1750 թ. Սուլէման փաշան դարձաւ Պաղտատի եւ Պասրայի առաջին մամլուք վալին²⁸²: Այնուհետեւ, յաջորդ ութսուն տարիներուն ընթացքին, այս երկու (Պաղտատ եւ Պասրա) քաղաքներուն կառավարումը անցաւ մէկ մամլուք պաշտօնեայէն միւսը, մինչեւ 1831 թ.ի ժանտախտի հերթական համաճարակը, որու հետեւանքով, Պաղտա-

²⁸¹ Տե՛ս Longrigg S. H., *Four Centuries of Modern Iraq*, London, 1925, էջ 123-276:

²⁸² Տե՛ս Thabet A. J. A., նշ. աշխ., էջ 11-13:

տի բնակչութեան մեծամասնութիւնը զոհ կերթայ կամ կը լքէ վերոյիշեալ քաղաքները: Հետեւաբար, յառաջացող Օսմանեան բանակը, շատ հանգիստ եւ առանց լուրջ խոչընդոտներու, մամլուքներուն ցիր ու ցան ընելով, կը վերահաստատէ Օսմանեան կեդրոնական իշխանութիւնը, որ կը շարունակուի մինչեւ Առաջին Համաշխարհային Պատերազմին աւարտը:

Այնուամենայնիւ, հակառակ վերոյիշեալ քաղաքական աննպաստ պայմաններուն, երկիրը հարուածող ժանտախտի սոսկալի համաճարակներուն եւ վատառողջ կլիմային, XVIII դարուն, Իրաք ընդհանրապէս եւ Պասրան յատկապէս, շարունակեց մնալ Հնդկաց Ովկիանոսի ամենակարեւոր նաւահանգիստներէն մէկը²⁸³:

Ուրեմն, Իրաքի հայ գաղթօճախը նորէն կը սկսի վերակենդանանալ եւ բազմանալ²⁸⁴ XVII դարէն սկսեալ, որ պայմանաւորուած էր Նոր Ջուղայէն Իրաք ապաստանած հայ վաճառականներուն հոսքին, որոնք փաստօրէն հիմնադիրները եղան Իրաքի վերակազմեալ նոր գաղութին: Այս թուականէն սկսեալ Իրանէն գաղթած հայերը հետզհետէ կազմած են բարգաւաճ գաղութ մը: Մասնաւորապէս 1722 թուականին Պարսկաստանի մէջ ծաւալուող քաղաքական աննպաստ պայմաններուն բերումով, Նոր Ջուղայէն հեռացողներէն մաս մը կ'անցնի Պասրա, եւ հակառակ Պարսկաստանի նոր տիրակալ Քերիմ Խան Չանդի սպառնալիքներուն՝ Ջուղայեցիները անյողողող կը մնան իրենց որոշումին մէջ, շարունակելով ապրիլ իրենց նոր բնակավայր Իրաքի մէջ եւ լուրջ

²⁸³ 1690-1800 թուականները, Պասրայի մէջ վեցը սոսկալի եւ մահացու ժանտախտի համաճարակներ պատահած են: 1773-ին, օրինակի համար, բնակչութեան մէկ երրորդը զոհ կ'երթայ այս հիւանդութեան, միւս մասն ալ կը լքէ քաղաքը եւ ամիսներ յետոյ միայն ետ կը վերադառնայ, երբ համաճարակը մարած էր արդէն (տե՛ս Thabet A. J. A., նշ. աշխ., էջ 25):

²⁸⁴ Այս մասին կան Եւրոպացի ուղեւորներու յիշատակութիւններ ինչպէս՝ Manwaring G., *The Travels and Adventures of Sir Anthony and Sir Thomas*. www.wikipedia.GeorgeManwaring4 Այցելութիւն կայքին՝ 03-02-2020:

Wellstead J. R., *Travels to the City of Caliphs Along the Shores of the Persian Gulg and the Mediterranean*, Volume 1, pp. 274-275. www.wikipedia.J.R.Wellstead Այցելութիւն կայքին՝ 03-02-2020:

Geary G., *Narrative of a Journey From Bombay to the Bosphorus*, London, 1878, pp. 222-224. www.wikipedia.GrattanGeary Այցելութիւն կայքին՝ 03-02-2020:

ներդրում կ'ունենան երկրի առևտրատնտեսական վերելքին մեջ²⁸⁵:

Պաղտատի եւ Պասրայի մէջ հաստատուած հայ վաճառականները, շատ կարճ ժամանակուայ ընթացքին, ընտելանալով նոր միջավայրին, աշխուժօրէն կը շարունակէն իրենց գործունէութիւնը եւ կը սկսին մրցիլ եւ թերեւս գերազանցել իրենց տեղը վերագտած տեղացի հրեայ վաճառականներուն²⁸⁶, որ տեղի կու տար երկու համայնքներուն միջեւ բազմաթիւ անախորժ միջադէպերու²⁸⁷:

Ըստ Վարդան Գրիգորեանի՝ պատմաբաններուն մեծամասնութիւնը համաձայն են այն փաստին հետ, որ Սէֆեան Իրանի արտաքին առևտուրը, հայ վաճառականներուն մենաշնորհն էր²⁸⁸: Սակայն, Սէֆեաններուն անկումով եւ Սպահանի անջքացումով, հայ վաճառականները կը զրկուին իրենց գլխաւոր հովանաւորներէն եւ կը սկսին գաղթել տարբեր երկիրներ ինչպէս Երոպայ, Հնդկաստան, Իրաք եւայլն: Այնուամենայնիւ, հայ վաճառականները շնորհիւ իրենց միասնութեան անգուգական ոգիին կըրցան գոյատեւել եւ պահպանել ոչ միայն իրենց ինքնուրոյնութիւնը եւ ազգային միասնականութիւնը, այլեւ ամբողջ XVIII դարու ընթացքին, իբրեւ առևտրային համայնք, շարունակեցին մնալ գլխաւոր երկու առա-

²⁸⁵ Տէր Յովնանեանց Յ., Պատմութիւն Նոր Ջուղայու, Նոր Ջուղա, 1880, էջ 317:

²⁸⁶ Մինչեւ XX դարու առաջին կէտը. Իրաքի մէջ կ'ապրէին 150,000 չափ հրեաներ, որոնք հաստատուած էին հոն տասնեակ դարեր առաջ: Այս համայնքը կ'ապրէր մեծ քաղաքներուն մէջ եւ կը զբաղէր առևտուրով, սեղանաւորութեամբ, ճարտարարուեստական ձեռնարկով եւ լումայափոխութեամբ: Իրաքի անկախութիւնէն վերջ, ելեմուտի գերատեսչութեան առաջին նախարարը հրեայ Հասկէլ Սասունն էր: Քրտախօս հրեաներ նաեւ կային Իրաքի հիւսիսակողմը: Հրեական համայնքները (ի շարս միւս փոքրամասնութիւններուն) 1931 թ.ին հրատարակուած օրէնքով մը ստացեր էին համայնական ինքնավարութիւն, իրենց ներքին գործերուն մէջ: Անոնք ունէին համայնական կազմակերպուած կեանք, բազմաթիւ դպրոցներ, հիւանդանոցներ եւ տարատեսակ բարեսիրական կազմակերպութիւններ: Այս բոլորը այսօր չկան, քանզի 140000 հրեաներ 1940-1950ական թուականներուն գաղթեցին Իրաքէն, ոմանք հարկադրաբար, ոմանք ալ՝ կամաւոր (տե՛ս Գեորգեան Կ., Ամէնուն Տարեգիրք, Պէրութ, 1957, էջ 380):

²⁸⁷ Տէ՛ս Thabet A. J. A., նշ. աշխ., էջ 10:

²⁸⁸ Grigorian V., Minorities of Isfahan: the Armenian Community of Isfahan 1587-1722. "Iranian Studies," Volume 7, 1974, p. 670.

ջատարներէն մէկը, միւսը հանդիսանալով հրեայ համայնքը,²⁸⁹ որ ձեւատրուած էր դարեր առաջ, նոյնիսկ Իսլամի Միջագետք մուտք գործելէն առաջ²⁹⁰:

Հայ վաճառականներու գործարար ոգիին մասին, տեղին է յիշել գերմանացի իմաստասէր Էմմանուէլ Կանտի խօսքերը. «...Միւս քրիստոնէայ ժողովուրդի՝ հայերի մօտ տիրապետում է առանձնայատուկ գործարար ինչ-որ ոգի: Նրանք զբաղում են փոխանակութեամբ՝ հետիոտն ճանապարհորդելով Չինաստանի սահմաններից մինչեւ Գվինեայի ափերին գտնուող Կորսո հըրւանդանը: Այդ հանգամանքը ցոյց է տալիս իւրայատուկ ծագումը խելամիտ ու աշխատասէր այդ ժողովրդի, որը շարժուելով հիւսիսարեւելքից հարաւ-արեւմուտք, կտրում անցնում է հին աշխարհի ողջ տարածքով եւ կարողանում է սիրալիք ընդունելութիւն գտնել բոլոր այն ժողովուրդների կողմից, որոնց մօտ լինում է այցելութեան»²⁹¹:

Ի լրումն այս գործարքներուն (իմա՝ Հնդկաստանի եւ Պասարայի միջեւ), Պասարայի վաճառականները շատ զորաւոր եւ ամուր առեւտրային կապեր ունէին Հալէպի մէջ ապրող իրենց ցեղակից

²⁸⁹ Հրեաներու ազդեցիկ դիրք ունենալու մասին Ն. Մ. Չամչեանը հետեւեալը կը գրէ իր վերադասին Վենետիկ. «...Տէրութիւն եւ իշխանութիւն քաղաքիս ընդ կառավարութեան է ի ձեռս հրէից, մանաւանդ ի ձեռս զվտոյ նոցա՝ որ ապի Եադուպ: Եւ թէ որչափ է իշխանութիւն սորա կարէք իմանալ ի հնգից. Նախ զի յորժամ միասելլիմն քաղաքիս իշխանութիւն առեալ ի փաշային Պաղտատայ եկն աստ, ի գնալն առ նա Եադուպին՝ ասէ ցնա միասելլիմն. Քաղաքս քոյ է, եւ իշխանութիւն իմ ի ձեռս քոյ. Այլ խնդրեմ զի ի կառավարելոյ զքաղաքս՝ հովանաւորութիւն քո մի պակասեսցէ յինէն: Երկրորդ՝ զհաճութեան սորա կախեալ է արկանել կամ նստուցանել զմիասելլիմն: Երրորդ՝ որչափ ինչ գնան ի Պաղտատ թէ դրամքն եւ թէ այլ ինչ՝ որ հաճութեամբ եւ ձեռք պարտին գնալ: Չորրորդ՝ առանց հրամանի սորա ոչ կազմի եւ ոչ գնայ կարաւան ի Հալէպ: Հինգերորդ՝ Առանց հրամանի սորա ոչ կարէ նաւ մի գնալ ի Հնդկաստան, եւ ոչ նաւն անգղիացոց: Յորժամ հարցանեն անգղիացի նաւապետաց թէ երբ գնայք պատասխանեն՝ Եադուպ զիտէ, նորա հրամանին սպասեմք եւն: Այս այր թէպէտեւ այսչափ բարձրացեալ է բայց կարի իմն խոնարհ է աշխարհօրէն» (Ն. Միքայէլ Չամչեանի նամակը 08 Փետրուար 1772 թուագրեալ, Մայր Դիւան Մխիթարեանց, էջ 277-278):

²⁹⁰ Տէ u Thabet A. J. A., նշ. աշխ., էջ 95:

²⁹¹ Յովհաննէս Տէր Դարթեան Ջուղայեցու Հաշունտումարը, աշխատասիրութեամբ Լ. Խաչիկեանի եւ Յ. Փափագեանի, Երեւան, 1984, էջ 30 (տողատակ 53):

եւ կրօնակից վաճառականներուն հետ: Ամբողջ XVII դարուն եւ XVIII դարու առաջին կիսուն, Պասրա հաստատուած Նոր Ջուղայի վաճառականները կը ներկայացնէին ամենանշանակալի ակնառու առեւտրական համայնքը²⁹²:

Ուշադրութեան արժանի է, որ Պասրայի մէջ անգլիացիներու գլխաւոր դաշնակիցները հայ վաճառականներն էին: Երբ անգլիական Արեւելա-Հնդկական Ընկերութեան մասնաճիւղ մը կը հիմնադրուի Պասրայի մէջ, վերջինիս ներկայացուցիչը Մանեսթին (որ ամուսնացած էր հայ վաճառականի մը դստեր հետ) զօրաւոր կերպով կը սլաշտպանէր հայ վաճառականները, իսկ հրեաները կը հովանաւորուէին թուրք «մութասալիւմ»ի կողմէն²⁹³:

Սակայն, XVIII դարուն պատկերը կը փոխուի: Այս թուականներուն հայ վաճառականները ամենամեծ խոչընդոտը կը հանդիսանային եւրոպացիներուն Պասրա ներթափանցման: Անոնք կատաղի մրցակիցներն էին անգլիացի, հոլանդացի վաճառականներուն եւ առեւտրային ընկերութիւններուն: Սակայն, մրցակցութիւնը աստիճանաբար տեղի կու տայ համագործակցութեան, յատկապէս Պարսկական Սէֆեաններուն անկումէն ետք: XVIII դարու սկիզբը, հայ վաճառականական համայնքը, բոլոր տունէւներով, աւելի հարուստ եւ ազդեցիկ էր, քան Միջագետքի մէջ գտնուող մնացեալ «ըլիւլ-դիմը»²⁹⁴ համայնքները: Օտար ճանապարհորդ Նիբուրը հազուադէպօրէն կը յիշէ հրեայ համայնքը, բայց բազմիցս կ'ընդգծէ հայերու ունեցած դերի կարեւորութիւնը Պասրայի վաճառական կեանքին մէջ²⁹⁵:

Յիշատակութեան արժանի է, որ Արեւելա-Հնդկական Ընկերութիւնը, Պասրայի գրասենեակի գործունէութիւնը աւելի արդիւնաւէտ դարձնելու համար, կ'որոշէ իր մօտ աշխատող երիտասարդները առաքել Սպահան, որպէսզի մնալով հայ վաճառականական տուններուն մէջ, իւրացնեն վերջիններուն ճարպիկ արհես-

²⁹² St' u Abdullah A. J. Thabet, նշ. աշխ., էջ 10:

²⁹³ القهواتي حسن محمد، دور البصرة التجاري في الخليج العربي 1869 – 1914، جامعة البصرة مطبعة الإرشاد – 40 صفحة 1980 (էլ-Կահուաթի շ.Ս., Պասրայի առեւտրական դերը Արաբական Օղոցի մէջ, 1869-1914 թթ. Պասրայի Համալսարան, Պաղտատ, 1980, էջ 40):

²⁹⁴ «Ըիլ ըլ-դիմը» համայնքները կը կոչուին այն ոչ-իսլամ փոքրամասնութիւնները, որոնք ըստ իսլամական օրէնքի (շարիյէթ) կը գտնուին սլետական հովանաւորութեան տակ:

²⁹⁵ St' u Էլ-Կահուաթի, էջ 88:

տավարժ գործելաոճը եւ սորվին հայերէն ու պարսկերէն, որոնք ամենագործածուող լեզուներն էին այդ տարածաշրջանի առեւտրական միջավայրին մէջ²⁹⁶:

Վերոյիշեալ Ընկերութիւնը գործակալական գրասենեակ մը կը հիմնէ Բանդար Աբբասին (Պարսկաստան) մէջ, ուր առեւտրատնտեսական գործունէութիւն կը ծաւալէր ամբողջ մէկուկէս դար: 1723 թուականին կը հիմնադրէ նոյնանման «ժամանակաւոր» գրասենեակ մը, որ յետագային Իրանի քաղաքական իրադրութեան վատթարանալու հետեանքով, գրասենեակը 1763 թուականին Պասրա կը տեղափոխէ եւ մնայուն կեդրոն կը դառնայ: 1822 թուականին գրասենեակը կը շարունակէ իր գործունէութիւնը, սակայն, իբր սոսկ ներկայացուցչութիւն վերոյիշեալ Ընկերութեան: Ներկայացուցիչը Բարսէղ անունով տեղացի հայ վաճառական մըն էր, որ այս գործը շարունակեց մինչեւ 1851 թուականը:

1660-1780 թուականներուն Պասրայի եւ Հնդկաստանի (յատկապէս Սուրաթի²⁹⁷) հայերը իրարու հետ փոխադարձ վաճառականութեամբ զբաղած են, որոնց սեփական նաւերը, ինչպէս «Փատրոնի», «Սանթա Քրօշէ», «Սանթա Քրուզ», «Հովուել», «Մենթ-Մայքըլ», «Արշակ» եւայլն, գործած են Պասրայի եւ Հնդկաստանի նաւահանգիստներուն միջեւ Պարսից ծոցի ուղիով: Պասրայի մէջ այդ նաւերը կը խարսխէին ուրիշ օտարերկրեայ նաւերուն կողքին ի Մէննավի, Շաթթ Էլ Արապ գետի վրայ²⁹⁸:

Այսպէս, Հնդկաստանի հարուստ հայերը յարաբերութեան մէջ էին թէ՛ Պաղտատի եւ թէ՛ Պասրայի հայոց հետ եւ կ'օժանդակէին անոնց եկեղեցաշինութեան՝ նուէրներով եւ կտակներով: Այս նուիրատուներու մէջ յատկապէս յիշատակութեան արժանի է մեծահարուստ Յարութիւն Արգարեանը, նմանապէս Աղա Պետրոս Սեթաղայեան՝ ականաւոր առեւտրականը, որուն ծախքերով, 1736 թուականին կառուցուած է Պասրայի Ս.Աստուածածին եկեղեցին, որ 1904-ին բոլորովին աներակ վիճակի մատնուած ըլլալով կը վե-

²⁹⁶ الدكتور عبد الامير محمد امين - المصالح البريطانية في الخليج العربي (1778-1747) بغداد 1977 صفحة 26.
(Sopp. Արդուլ Էմիր Սոհամըդ Էմին, Բրիտանական Շահերը Արաբական Օոցին մէջ, 1747-1778, Պաղտատ, 1977, էջ 26):

²⁹⁷ Si'u Das Gupta A., Indian Merchants and the Decline of Surat, 1700-1750, Manohar Publishers and Distributors, 1994, էջ 136:

²⁹⁸ Մելքոնեան Վ., Մարգիլի Հայ Ազգ. Վարժարանի Քսանհինգամեակ, Պէյրուք, 1955, էջ 64:

բանորոգուի մէկ ուրիշ մեծահարուստ վաճառական Ադա Բարսեղ Օհաննէս Գասպարեանի կողմէն²⁹⁹:

XVII դարու ամբողջ տեւողութեան եւ XVIII դարու սկիզբը, հայ վաճառականներուն մասնակցութիւնը Օսմանեան-Սէֆեան առեւտուրին կը կայանար մասնատրապէս Պարսկական մետաքսի առեւտուրի ղեկավարման գործընթացին, որուն կը տիրապետէին շատ հմուտ եւ արհեստավարժ կերպով: 1773 թուականէն առաջ Օսմանեան կայսրութեան եւ Պարսկաստանի առեւտրական բոլոր կեդրոններուն մէջ Պասրան կ'առանձնանար իր մեծահարուստ պարսիկ, հայ, հնդիկ, արաբ եւ հրեայ վաճառական բնակչութեամբ, որոնց առեւտրային գործունէութիւնը կը տարածուէր Հնդկաստանի, Պարսկաստանի, Օսմանեան կայսրութեան եւ Եւրոպայի միջեւ Միջերկրական ծովի ուղիով: Այս աշխոյժ առեւտրային կեանքը վերջ կը գտնէ 1773 թուականին, քաղաքը հարուածող ժանտախտի հերթական համաճարակով: Ըստ 1775 թուականի մարդահամարին՝ Պասրայի մէջ հայ վաճառականներուն թիւը նըլազած էր 30ի³⁰⁰:

Անգլիացի ուղեւոր Ճաքսօն, 1797 թուին Միջագետք կատարած իր ճամբորդութիւնը նկարագրող նօթերուն մէջ կը յիշէ, որ Մուսուլի հայերը լաստերով Տիգրիս գետի վրայով մեծ քանակութեամբ պղինձ կը փոխադրէին Պաղտատ, ապա առագաստանաւերով Պասրա բերելով, պղինձի վաճառականութեան մեծ զարկ տըլած են եւ կ'աւելցնէ. «...աչքի զարնող վաճառականութիւն ունին Բենկալի հետ, ուր 400 թոննոց նաւերով ապրանք պղինձ, դեղօրայք կը փոխադրէին Բենկալ, իսկ Պօմպէյի նաւերը՝ չոր միրգ, նաւեւ արծաթ, ոսկի, սպանական տօլար եւ վենետիկեան դահեկան կը փոխադրէին: Այս վաճառականութիւնը Հայոց մենաշնորհն էր ամբողջ Օսմանեան կայսրութեան տարածքին՝ 12 առ հարիւր շահով: Ասոնց դիմաց երկրին համար Հնդկաստանէն կը ներմուծէին շաքար, բրինձ եւ այլ ապրանքներ»³⁰¹: Միաժամանակ մարգարիտի մեծ առեւտուրն ալ Պասրահայերու տիրապետութեան տակ կը

²⁹⁹ Աճառեան, նշ. աշխ., էջ 202-203:

³⁰⁰ 108, صفحة 1969 بغداد – بعدها – البصرة في الفترة المظلمة وما بعدها – حامد البازي (Համբղ Էլ-Բազի, Իրաք Խաւար Շրջանին եւ Յետոյ, Պաղտատ, 1969, էջ 108):

³⁰¹ مشاهدات بريطاني في العراق سنة 1797 للرحالة الانكليزي جاكسون – تعريب سليم طه التكريتي – الصفحات 72 و 32

գտնուէր³⁰²: Վերապատուելի Ճէքըրայ Սամուէլ Պասրա այցելութեան մը միջոցին՝ 1835 թ., հանդիպած է Ջուպէրի³⁰³ շրջանը եւ իր յուշերուն մէջ («Քարոզիչի մը Շրջապատոյտի Օրագրութիւնը Արաբական Անապատէն դէպի Պաղտատ», 1835), կը յիշէ, թէ 50 ընտանիքէ բաղկացած հայեր կային հոն: «...Շատ յարգուած համայնք մը, բոլորն ալ սահուն անգլերէն կը խօսին: Ունին գեղեցիկ եկեղեցի մը, ուր առաւօտեան եւ երեկոյեան պաշտամունք կը կատարուի»³⁰⁴:

Քաղաքական զանազան վերիվայրումները եւ համաճարակներու յաճախակի մոլեգնումը Իրաքի կարգ մը քաղաքներուն մէջ, յատկապէս Պասրա քաղաք-նաւահանգիստին մէջ, կը տկարացնէ հայ վաճառականներուն առետրային գործունէութիւնը, որ յաջորդող տարիներուն մեծապէս կը տուժէ եւ կ'անջքանայ: Վերջին համաճարակը ըստ Դաւիթ Թաղէտսեանին, այնքան սաստիկ եղած է, որ Պասրայի եւ Պաղտատի բնակչութեանց կէսը զոհ կ'երթայ այս մահաբեր հիւանդութեան՝ երկու քաղաքներն ալ համարեա անմարդաբնակ ձգելով³⁰⁵:

1831 թուականին ժանտախտը դարձեալ կը մոլեգնէ Պաղտատի մէջ, որմէ առաջ, ըստ տեղեկութիւններու, Պաղտատի հայ բնակչութեան թիւը կը բաղկանար 130 տունէ, 673 հոգիով: Իսկ համաճարակէն ետք քաղաքի մէջ մնացած էին ընդամենը 27 հոգի հայ

³⁰² Մելքոնեան Վ., նշ. աշխ., էջ 63:

³⁰³ Պասրայի հարաւային արուարձան:

³⁰⁴ Մելքոնեան Վ., նշ. աշխ., էջ 63: Յիշուած եկեղեցին Ս. Աստուածածին եկեղեցին է, հիմնադրուած 1736 թ.:

³⁰⁵ Թաղէտսեան Դ., Նիւթեր Իրաքահայ Պատմութեան համար, Յուշերէս հատուած մը. «Գոյամարտ» Բ. Տարի, թիւ 15-67, 16 Փետրուար 1950: Իրաքի մէջ առաջին անգամ պատահած է Բ.ե. 784 թ., ապա 872 թ.: Այնուհետեւ՝ 1720թ., 1771 թ., 1773 թ., 1831-1832 թթ.: Համաճարակը առհասարակ կը պատահի գարնան ամիսներուն եւ 50-60 օրեր կը տեւէ: Ըստ հայ պատմիչներու՝ Պաղտատի եւ Պասրայի բնակչութիւնը 1771-1772ին այնքան ծանր հարուածներ ստացած է ժանտախտէն, որ զայն կ'որակէն աւելի ծանր, քան միջնադարեան շրջանին Միջագետքի համար սովորական դարձած կոտորածներու որեւէ մէկուն ընթացքին: Վենետիկի Միլիթարեան Միաբանութեան անդամ պատմաբան Միքայէլ վրդ. Չամչեան, որ Պաղտատ գտնուած է, 12 Սեպտեմբեր 1771 թուակիր նամակով կը գրէ, թէ ինքը տեղեկացած է, որ Պասրայի մէջ համաճարակէն մահացած են 55,000 հոգի, որոնցմէ 4,000ը հայ: Ի Նիւվէ, Մուսուլ եւ ի Մերտին եւ ի Դիարբէքի եւ ի Էնկիւրի այնքան ուժգին եւ սաստիկ է մահը, որ շիջեցայց զբազում տունս, մինչ չկարել միմիանս օգնել թաղումս»:

բնակչութիւն: Մէկ մասը համաճարակէն մահացած էր, ուրիշներ տեղափոխուած էին այլ վայրեր³⁰⁶:

Բարունակ պէյ Ֆերուհիան Պասրա քաղաքը (1847 թ.) իր այցելութեան առթիւ շատ մոայլ պատկերներով կը ներկայացնէ զայն. «Այս քաղաքն, որ երբեմն պարսպապատ էր եւ աւելի ընդարձակ, բարգաւաճ էր Տաճկաստանի վաճառաշահ քաղաքներուն ամենէն հոշակատրը, ուր շատ երոպացի վաճառականներ մեծ տուներ բացած էին, եւ 150,000-էն աւելի բնակչաց պատուպարան էր, այսօր անոր պարիսպը բոլորովին քայքայեալ է, տուներուն շատին տանիքներն ու որմերը փլած, դուռները կոնակի վրայ բաց, շուներու եւ անասնոց բնակարան եղած է, եւ հազիւ 10,000 ժողովուրդ կը պահէ 1000-ի չափ տուներու մէջ, վասնզի օդին գէշութիւնը, ֆէլլահներու բարբարոսութիւնը, մաքսերուն եւ *իհթիսայիէ-լի*³⁰⁷ ծանրութիւնը եւ, մանաւանդ գլխատրապէս քօլէրայի երբեմն երբեմն ըրած սարսափելի կոտորածները պատճառ եղած են բնակչաց նուազելուն եւ քաղաքին կործանմանը»³⁰⁸:

Ճանապարհորդ Ճ. Բ. Վիլսթիտ Պաղտատի 1831-ի համաճարակի մասին իր աշխատութեան էջ 280-ի մէջ կը գրէ. «... Ժանտախտը սկսաւ հրեական թաղամասէն ...Հայեր եւ ուրիշ քրիստոնեաներ պէտք եղած նախագգուշական միջոցները ձեռք առին, տուներուն մէջ պաշար ամբարելով, դռներն ու պատուհանները ապահով կերպով գոցելով: Տնեցիները ազատ ձգուեցան միատեղ արգելափակուիլ եւ կամ մեկնիլ: Դրացիներու հետ հաղորդակցութիւնը դադարեցաւ:

Ստացուած բանջարեղէնները ջուրի մէջ լուալէ ետք չուանով վեր կը քաշէին: Բայց եւ այնպէս բոլոր նախագգուշական միջոցները յաջող չէին...: Անկարելի էր սպասաւորներուն արգիլել գողունի այցելել իրենց հիւանդ ու մահամերձ ազգականները եւ այս ձեւով հիւանդութիւնը փոխանցել տնեցիներուն...»³⁰⁹:

³⁰⁶ Տէր Սայէղեան Ն., Պատմութիւն Իրաքի Հայ Կաթողիկէ Համայնքի, «Աւետիք», Պէյրութ, 1946, էջ 174:

³⁰⁷ Հարկավճար (արաբերէն):

³⁰⁸ Ֆերուհիան Բ. պէյ, Ճանապարհորդութիւն Ի Բաբելոն ընդ Հայաստան, էջ 109-113:

³⁰⁹ Wellsted J. R., Travels to the City of Caliphs Along the Shores of the Mediterranean, Volume 1, London 1840, pp. 274-275.

Իրաքի մէջ համաճարակներ կրկնուած են 1866-ին, 1889-ին, եւ 1893-ին, սակայն ոչ այնքան սաստիկ թափով:

Ըստ Առաջնորդարանի Վախճանելոց Տոմարի՝ Տ. Յարութին քինյ. Սիրական Սարգիսեան 1866-ի ժանտախտի ատեն վախճանած է «բովերայէ» 15 Ապրիլ 1866-ին ու մարմինը ամփոփուած Ս. Երրորդութին Եկեղեցոյ շրջափակը:

Առաջին Համաշխարհային Պատերազմէն առաջ, հայոց թիւը շատ չնչին էր: 1900 թուականին, Պաղտատ բնակող հայ վաճառականներուն թիւը երկու տասնեակը չէր անցներ: Իսկ Պասրայի հայազգի վաճառականներուն թիւը 1840 թուականին միայն չորսն էր: «...Պաղտատի քանի մը խաներուն մէջ տասնեակ մը աչքառու վաճառականներ կը գործէին, որոնք բարձր վարք ու համբաւ կը վայելէին առետրական շրջանակներուն մէջ...»³¹⁰:

Անցեալին պասրահայերը ոչ միայն առետուրի մէջ մեծ տեղ գրաւած են, այլ նաեւ դիւանագիտական ասպարէզին մէջ կարելոր դիրքերու տիրացած: Իբրեւ առետրական գործակալներ անոնք պաշտօնավարած են Պասրայի Բրիտանական հիւպատոսարանին մէջ: 1767 թ. Բրիտանական հիւպատոս Հէնրի Մուրի առետրական գործակալն էր Մարգար անունով հայ մը, իսկ թարգմանը՝ Շէյխ Պօղոս կը կոչուէր:

Ըստ Դաւիթ Թաղեոսեանի՝ «Յուշեր Պաղտատի», Պասրայի բրիտանական ներկայացուցիչը՝ գնդապետ Բօպըրտ Թայլըր, Պաղտատ փոխադրուելուն առթիւ Աղա Բարսեղ (Պէյզըլ) կը նշանակէ Պասրայի բրիտանական գործակատար:

1900ական թուականներուն, հիւպատոսի աւագ թարգմանը եղած է Մատթէոս Մարկոսեան անունով հայ մը³¹¹: Առաջին համաշխարհային պատերազմէն առաջ մինչեւ 1919 թ. Պէլճիքայի պատուոյ հիւպատոսի պաշտօնը վարած է Երուանդ Տէրվիշեանը, որմէ ետք՝ Սիմոն Ղարիպեանը³¹²:

Այսուհանդերձ, Պասրայի մէջ եղած են նաեւ նշանաւոր հայ արհեստաւորներ: 1840 թ.ին կը յիշուին ակնավաճառ Յարութին Իսախանը, ժամագործ Յովհաննէսը, բժիշկ Ծածանը, ուստա Մով-

³¹⁰ Նոյն:

³¹¹ Պատալեան Ս., Տեղեկանք Իրաքի Հայոց 1974-ին, «Նոր Ազդարար», Կալկաթա, 1952, թիւ 6 եւ 8:

³¹² Մելքոնեան Վ., նշ. աշխ., էջ 63:

սէսեանը, կայծքարագործ (չաքմաքչի) Կարապետը, հացագործ Ստեփանը, երկաթագործ հալէպցի Խաչօն, կարուհի-վարժուհի Աննան եւ ուրիշներ³¹³:

Յայտնի են հետեւեալ հայ առետրական տուները, որոնց անունները քաղած ենք տեղական արաբական զանազան պարբերականներէ.

- Խաչիկ Ըլ-Էրմընի, որ մեծահարուստ հայ ընտանիքներէն էր, մեծ կալուածատէր եւ նախապապն էր հոչակատր գեղեցկուհի Սառա Ջնգինին, որուն պատմութիւնը ծանօթ է Իրաքի ժողովուրդին, հայ թէ օտար, իր հայուհիի բարոյական կերպարով եւ անկոտորում կամքով՝ դիմակայելու Պաղտատի վալի (կուսակալ) Նադրմ փաշայի ոտնձգութիւններուն³¹⁴:

- Պաղտասար առետրական տուն – կը զբաղուէր հացահատիկի եւ արմաւի առետուրով: Յարաբերութեան մէջ էր Պաղտատի «Հէքթոր» անունով ընկերութեան հետ: Այս առետրական տունը տեղական բազմաթիւ առագաստանաւեր ուներ, որոնք կ'օգտագործէր ներքին գետային բեռնափոխադրութեան համար:

- Մերոպեան ընտանիք, կալուածատէր, արմաւենիներու եւ տարատեսակ մրգատու պարտէզներու տէր: Երկար ժամանակ այդ շրջանը իր անունով կը կոչուէր:

Կը յիշուի նաեւ Մկրտիչ եւ Ընկերներ անունով ընկերութեան մը մասին, որու գործունէութիւնը կը կայանար սայլերու առետուրի մէջ:

XIX դարու վերջին քառորդին եւ XX դարու առաջին կէսին, հայ յայտնի վաճառականներէն որոնք մեծ ներդրում ունեցած են համայնքի զարգացման, իրենց ազգային բարեսիրական գործունէութեամբ, արժէ յիշել հետեւեալները, որոնց յիշատակը վառ կը մնայ իրաքահայոց յիշողութեան մէջ:³¹⁵

- Միմոն Մկրտիչ Ղարիպեան – Ծնած է Պաղտատ, 17 Փետրուար 1878-ին: Պասրայի մէջ առետրական տուն մը ունեցող եւ Պելճիքայի պատուոյ հիւպատոս Երուանդ Տէրվիշեանի հետ կը գործակ-

³¹³ Նոյն, էջ 65:

³¹⁴ النصره في اخبار البصرة للقاضي احمد نور الانصاري - تقرير قتمه سنة 1277 هجرية (1857 م) الى منيب
1976 جامعة بغداد - البصرة - باشا ووالي البصرة U. Օհանեան Ս., Հայ Վաճառականութիւնն
Իրաքի Մէջ 17-19րդ Դարերուն, «Հայոց Պատմութեան Հարցեր», (14) Երեւան,
2013, էջ 90-105:

³¹⁵ Նոյն:

ցի: Վերջինս Ռուսիայէն Պասրա կը ներմուծէր տախտակ, քարիւղ եւ այլ ապրանքներ: Տէրվիշեանի Եւրոպա վերադառնալէն ետք, անոր առեւտուրի գործը եւ Պելճիքական հիւպատոսութիւնը Սիմոն Ղարիպեանին կը փոխանցուի: Այնուհետեւ իր գործունէութիւնը այնքան կը ծաւալուի, որ կը դառնայ միջազգային շուկաներու մէջ հանրածանօթ եւ փնտռուած գործընկեր:

- Յակոբ եւ Քերոբ Գոյումձեան եղբայրներ՝ մեծահարուստ կալւածատէրեր եւ առեւտրականներ, որոնք մեծ ներդրում ունեցած են իրաքահայ տնտեսական եւ հասարակական կեանքի վերելքին:

ՈՒՄ-ԻՎ-ԱՏԱՍ ԿՏԱԿ³¹⁶

Եղիշէ Վարդանեան իր «Անապատէ Անապատ» գիրքը կը սկսի 500է աւելի Վասպուրականցիներու՝ 1918 թ. Միջազգեւոր հասնելով եւ անոնց Պաղտատի արեւմտեան կողմը՝ Տիգրիս գետի եզերքին, Ում-Իվ-Ատամ (Մայր Ոսկերաց) կոչուած վայրը իջեւանելով՝ առանց տեղեակ ըլլալու, որ այս ընդարձակ հողամասը բնիկ Պաղտատցի հայ մը 1854 թ.ին պայմանագրեալ ձեւով կտակած է:

Այս կտակը անցած է զանազան փուլերէ, երբ Միջազգեւոր կը գտնուէր Օսմանեան տիրապետութեան տակ, եւ Իրաքի թեմն ալ Պոլսոյ պատրիարքութեան իրաւասութեան տակ էր:

Ում-Իվ-Ատամի կալուածը երկարատեւ տարիներու դատավարութեան առարկայ եղած է Պոլսոյ եւ Պաղտատի միջեւ: Իր կարեւորութեան համար կտակի զանազան հանգրուանները հակիրճ գրի կ'առնենք.

Մահտեսի Մարկոս որդի Մահտեսի Իսքէնտերի իր սեփականութիւնը հանդիսացող ամբողջ պարտէզը, որ կը պարունակէ արմաւենիներ, պտղատու եւ այլազան ծառեր եւ վերոյիշեալ կալւածին մաս կազմող հողերը եւ արտերը, որոնք կը գտնուին Պաղտատի արեւմտեան կողմը եւ կը կոչուին Ում-Իվ-Ատամ 1800 տէօնիւմ տարածութեամբ,³¹⁷ կը կտակէ.

«24 Սեպտեմբեր 1854 թ.ին որպէս կատարեալ եւ «շարի վազրֆ» յաւիտեան յաւիտենից յատկացուելու համար պաղտատաբնակ Հայ ինչպէս նաեւ ուրիշ երկիրներէ եկած Հայ աշխատողնե-

³¹⁶ Իրաքահայ Թեմի, նշ. աշխ., էջ 206:

³¹⁷ Մէկ տէօնըմը հաւասար է 2500 քո. մեթրի:

րու եւ դպրոցներու մէջ բնակող Հայ անհատներու, յանուն Աստուծոյ»:

Կտակի Պայմանները – Կտակարարը կը պայմանադրէ, որ եկամուտը առաջին հերթին ծախսուի նորոգութիւններու եւ «վազըֆ»ի կալուածի բարելաւումներու եւ չորցած ծառերու տեղ նորեր տնկելու: Եկամտոյ մնացորդը բաժնուի նպաստընկալներուն. Եւ իւրաքանչիւրին տրուելիք գումարը կ'որոշուի «միւթեվէլլի»ին կողմէ, նկատի առնելով ամէն մէկու կարիքները:

Սոյն «վազըֆ»ի կալուածները երկու տարիէն աւելի պայմանաժամով վարձու տրուելու չեն:

«Միւթեվէլլիութիւն»ը կը պատկանի կտակարարին, որքան որ ինք ողջ է: Իր մահէն ետք միւթեվէլլիութիւնը կը փոխանցուի միայն իր արու զաւակներու երիցագոյնին բացառելով էգերը: Յետոյ անոնց արու զաւակներուն երիցագոյնին, որքան որ սերունդը շարունակուի: Իսկ եթէ արու զաւակներու սերունդը ընդհատուի, սոյն «միւթեվէլլիութիւն» պիտի պատկանի Պաղտատի մէջ գտնուող օրուայ Հայ եկեղեցոյ «միւթեվէլլի»ին: Վերջինը պարտաւոր է կառավարելու վազըֆը՝ չորս հայ երեւելի անձերու հսկողութեամբ»: Սոյն «վազֆիյէն» վերոյիշեալ պայմաններու տակ դատարանի մէջ հաստատուել էւ վաւերացնել էտք, հետեւեալ վճիռը արձակուեցաւ եւ յանձնուեցաւ «միւթեվէլլի»ին.

Վերոյիշեալ կտակը վաւերական է իր ամբողջ՝ մասնաւոր եւ ընդհանուր տրամադրութիւններովը եւ բովանդակութեամբ, եւ որոշուեցաւ, որ սոյն «վազֆիյէն»ն ոչ փոխանակելի, ոչ փոխելի, ոչ գրաւի դնելու եւ ոչ ալ ծախելու է:

12 Րապի Իւլ Էվիլ 1271 (հաւասար 24 Սեպտեմբեր 1854ի)

Ստորագրութիւններ³¹⁸

Կտակարար մահտէսի Մարկոս Իսքէնտէրեան ծնած է Պաղտատ, 9 Հոկտ. 1783-ին, արհեստով վաճառական: Մարկոս կտակը կը կառավարէ մինչեւ իր մահը 1867-ին: «Միւթեվէլլիութիւն»ը կը փոխանցուի իր երիցագոյն որդոյն՝ Մատթէոսի, որ կը մահանայ 1906-ին, եւ «միւթեվէլլիութիւն»ը կը փոխանցուի իր երիցագոյն որդոյն՝ Սերովբի, որ կը մահանայ 14 Դեկտեմբեր 1914-ին:

Սերովբէի մահուրնէ ետք իր զաւակը՝ Հայկ, ծնեալ 1890-ին, Ազգային իշխանութենէն հաստատագիր մը կը պահանջէ Ում-Իւլ-

³¹⁸ Իրաքահայ Թեմի..., էջ 207:

Ատամի «միւթեվելլի» ըլլալու: Այստեղ երիցագոյնը հանդիսանալու հարց կը ծագի Հայկի եւ Մատթեոսի եղբօր՝ Գեորգի որդի Գրիգորի միջեւ: Գրիգոր ինքը գերդաստանի երիցագոյնը հանդիսանալու հաստատագիր կը պահանջէ Ազգային իշխանութենէն: Ասիկա կնճռոտ խնդիրի մը կը վերածուի եւ երկար տարիներու անախորժութիւն կ'առաջացնէ:

Կտակարարը եւ յաջորդական «միւթեվելլիներ» կը կառավարեն կտակը մինչեւ 1891 թ., երբ վեհապետի թիկնապահ Նուսրէթ Փաշա ապօրինի միջոցներով կը գրաւէ կալուածը եւ կը սկսի շահագործել զայն:

30 Յունուար 1895 թուակիր եւ համար 209 նամակով մը զըրւած Պաղտատի առաջնորդական փոխանորդ Արիստակէս եպս. Դերձակեանի կողմէ Պոլսոյ Պատրիարքին, կը տեղեկացուի, որ «Քաղաքիս ազգային կալուածներէն՝ Ում-Իւլ-Ատամ կոչուած պարտեզը եւ յարակից ազարակը, զորս կայսերական թիկնապահ վսեմափայլ Նուսրէթ փաշա իւրացուցած էր քանի մը տարիներէ ի վեր, տեղական Նախադատ Ատեանի վճիռով Ազգին վերադարձնել որոշուեցաւ թէեւ Արդարադատութեան նախարարին կողմէ քանիցս հրամայուեցաւ աստ, որ գործադրուի այդ վճիռը, բայց տեղական իշխանութիւնը ջամարձակեցան բռնի գործադրել զայն եւ զինու զօրութեամբ վանել այդ կալուածի մէջ գտնուող նորին վսեմութեան մարդիկը, եւ այդ մտօք գրեցին՝ ի Պոլիս»³¹⁹:

Սրբազանը կը շարունակէ. «Կալուածի «մութեվելլի» Մատթեոս էֆէնտի Մ. Աղէքսանդրեանց աղերսագիր ներկայացուցած է Պոլսոյ Վճռաբեկ Ատեանին, խնդրելով, որ Պատրիարքարանը ամէն ջանք եւ ճիգ չխնայէ վասն յաջող լուծման խնդրոյն»³²⁰:

27 Փետրուար 1895 թուակիր նամակով փաստաբան Սկըրտիչ Ասասեան պատրիարքին կը տեղեկացնէ, թէ Վերաքննիչ Ատեանը վերոյիշեալ Նախադատ Ատեանի վճիռը հաստատած է:

10 Օգոստոս 1895-ին, ըստ վերոյիշեալ վճիռին, կալուածը յանձնուած է միւթեվելլի Մատթեոս էֆէնտի Իսքէնտէրեանին: Մակայն, Նուսրէթ փաշայի մարդիկը յարձակելով վերստին կը գրաւեն եւ Նուսրէթ անձամբ իր մարդիկը զետեղելէ զատ մահու սպառնալիք ըրած է «միւթեվելլի»ին:

³¹⁹ Իրաքահայ Թեմի, նշ. աշխ., էջ 208:

³²⁰ Նոյն:

Նաեւ Ստեփան էֆէնտի Մ. Յովհաննէսեան, որ կարեւոր բաժին ունեցած է Նուսրաթի դուրս ձգուելու հարցին, կ'ենթարկուի նոյն սպառնալիքին: Ստեփան ռուսահպատակ ըլլալուն, Պաղտատի Ռուս դեսպանը տեղեկագիր կը ներկայացնէ Պոլսոյ Ռուսական դեսպանին: Արիստակէս էպս. Դերձակեան կ'եզրակացնէ նամակը. «...տեղական կառավարութիւնը անզօր է Նուսրաթ փաշայի դէմ» եւ կը վերջացնէ խնդրելով պատրիարքէն կայսերական բարձրագոյն ազդու հրաման մը³²¹:

Հարցը կը ձգձգուի եւ ըստ պատրիարքարանի նամակ համար 10846/6449 եւ 17 Դեկտեմբեր 1899-ի՝ դիմում կատարուած է Նուսրաթ փաշայի ժառանգորդներէն վնասուց հատուցում պահանջելու: Դատը կը յանձնուի Ասասեան Մկրտիչ էֆ.ին, որ Նախադատ Ատեանի՝ Վճռաբէկ դատը շահած էր, պատկան փաստաթուղթերով:

Սակայն, Ասասեան կը մերժէ դատը ստանձնել՝ պատճառաբանելով, որ Նուսրաթ դատավարութեան ընթացքին ըսած ըլլայ, թէ այս պարտէզը տաճկական վագըֆի կը պատկանի: Երկրորդ վկաները տաճիկ ըլլալու են եւ Պոլիս ներկայանան, ինչ որ անկարելի կը նկատէ Ասասեան եւ կը յանձնարարէ «...իզուր ծախսեր չընել եւ զանց առնել սոյն դատը»:

Բայց եւ այնպէս, Պոլսոյ պատրիարքարանը համար 11881 եւ 26 Յունիս 1902 թուակիր նամակով ուղղուած Գաբրիէլ վրդ. Անոյշեանին ի Պաղտատ, կը յիշէ, թէ պատրիարքարանի ձեռք առած միջոցներով Նուսրաթ փաշայի փորձերը կալուածը (Ումիլ-Ատամ) իւրացնելու ի դերեւ ելան³²²:

Կտակի «միւթէվէլլիութիւն»ը կը մնայ կտակարարի յաջորդներու ձեռքը: Ինչպէս վերը նշեցինք, միւթէվէլլիութեան մրցակցութիւնը Հայկի եւ Գրիգորի միջեւ կը շարունակուի: Ազգային իշխանութիւնը նախընտրութիւն կուտայ Գրիգորին, սակայն երկուքն ալ կը ներկայանան դատարան: Էուզաֆ (Կալուածոց Նախարարութիւն) կը յապաղի որոշում տալու: Պոլսոյ Պատրիարքարանի միջ-

³²¹ Նոյն:

³²² Պարտէզի տաճկական վագըֆ ըլլալու մասին միայն յիշատակութիւնը կայ Տօթթ. Իմատ Ապտ Ալ-Մալամ Բաուֆի «Պաղտատի Տեղանուններ վերջին դարու ընթացքին» (Մա'ալլամ Պաղտատ ֆի Ալ-Կըրուն Ալ-Մութթա'ախիւրա) գիրքին էջ 382-383-ի մէջ: معالم بغداد في القرون المتأخرة - تأليف عماد عيد السلام رؤوف - بيت الحكمة - بغداد .383-382 صفحة 1900/1/1

նորդութեամբ Հայկ կ'ընտրուի «միութեւէլլի»՝ կառավարելու կտակը: «Վագրֆ»ի վերաբերեալ պաշտօնական փաստաթուղթերը քովը կը մնան:

Ազգային իշխանութիւնը 24 Մարտ 1923-ին դատ կը բանայ Հայկի դէմ՝ ամբաստանելով որպէս զեղծարար, կալուածի եկամուտներու հաշիւը եւ բաժնուած նպաստը նկատելու անուանացանկերը չիրատարակելուն համար: Սակայն, Հայկ կը շահի դատը:

Ում-Իւլ-Ատամի Կալուածի Կալուածատութիւն (Սեփակա-նացում - Իսթիմլաք)

Ալ-Ալամ Ալ-Արապի օրաթերթի 25 Յունուար 1932 թուակիրին մէջ լոյս տեսած յայտարարութեան մը համաձայն՝ նախարարաց խորհուրդը Ում-Իւլ-Ատամի կալուածէն 130.6 տէօնիւմ տարածութեամբ մաս մը, մէջը գտնուած շէնքերով եւ ծառերով, կալուածատութեան (իսթիմլաքի) կ'ենթարկէ, ժառանգորդներու անունները եւ իւրաքանչիւրին վճարուելիք գումարները յիշուած են յայտարարութեան մէջ: Հայկ կը շարունակէ Ում-Իւլ-Ատամի «միութեւէլլիութիւն»ը:

Յեղափոխական Ղեկավարութեան Խորհուրդը (مجلس قيادة الثورة) 22 Օգոստոս 1968 թուակիր որոշումով, հրատարակուած Վէքայա Ալ-Իրաքիյէ (الوقائع العراقية) թիւ 1613-ի մէջ, կը վճռէ գրաւել Ում-Իւլ-Ատամի բոլոր կալուածը 1673.5 տէօնիւմ տարածութեամբ ($1673.5 \times 2,500 = 4,183,750$ քր.մեթր): Հողերու տէօնիւմը 6 տինարէն, որպէս հողագործական արտեր, իսկ տէօնիւմը 50 տինարէն պարտէզներու (հողամաս եւ ծառեր), եւ յատկացնել պաշտպանութեան նախարարութեան: Նաեւ գրաւուած հողամասէն 36,770 քր. մեթր տարածութեամբ յատկացնել պետական նաւթի գտարաններուն:

Որոշումը ստորագրուած է Հրամանատար Ահմէտ Հասան Ալ - Պէքըր Յեղափոխական Խորհուրդի Նախագահի կողմէն:

Այսպէտով, 1968-ին վերջ կը գտնէ Ում-Իւլ-Ատամի 1854-ին՝ կտակարար՝ մահտէսի Մարկոս Իսկէնտէրեանի ըրած կտակին:

2-ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Նախապատերազմեան (Առաջին Համաշխարհային Պատերազմ) շրջանին Իրաքահայ համայնքի հասարակական գործու-

նեւութիւն ծաւալող յիշարժան կազմակերպութիւնը Ասքանազեան Ընկերութիւնն է, որ հիմնադրուած էր Միհրան Սվաճեանի կողմէն 1878 թուականին, Պաղտատի մէջ: Վերջինս Մայր հայրենիքէն հեռու եւ մեծ մասամբ արաբախօս այս վայրին մէջ գործած է անձնըվիրաբար եւ հիմնադիրը կը հանդիսանայ Իրաքի կրթական գործին: Ինչպէս Նիկոմիդիոյ, այնպէս ալ Պաղտատի մէջ նոյն հիմունքներով կը հաստատէ վերոյիշեալ ընկերութիւնը՝ նպատակ ունենալով երիտասարդութեան մէջ վառ պահել ազգային ոգին, որ այնքան խաթարուած էր հայրենիքի հողէն հեռու այս գաղթավայրին մէջ: Ասքանազեանը ուսանողաց խնամքով, կը շարունակուի որքան ատեն որ իրենց վարժարանը բաց էր: Ունէր ներքին կանոնագիր մը, որուն համաձայն կը կառավարուէր իր գործունեութիւնը³²³:

Ընկերութեան կազմութեան շրջանին անդամակցութիւնը սահմանափակուած էր աշակերտութեան, սակայն ժամանակի ընթացքին, ընթացաւարտ աշակերտներու փափաքին գոհացում տալով՝ կ'արտօնուի արտաքին անդամներ ունենալ³²⁴:

Սկզբնական շրջանին Ընկերութեան գործունեութիւնը կը կայանար չքաւոր աշակերտներուն դասագիրք եւ գրենական պիտոյքներ հայթայթել, սակայն ընդարձակուելով եւ յոյժ ծաղկելով՝ ի վիճակի կ'ըլլայ գրադարան մը ունենալ հատընտիր գիրքերով հարուստ, որ կը գտնուէր Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ շրջափակին մէկ անկիւնը: Բաժանորդագրուած է կրթիչ պարբերաթերթերու եւ թերթերու: Այլ գործունեութեանց մաս կը կազմեն եկեղեցւոյ շրջափակէն ներս գրական-գեղարուեստական բաժինով լսարան մը բանալ, հանդէսներ, ներկայացումներ կազմակերպել եւ հանգանակութիւններ ընել եւ ազգօգուտ ձեռնարկներու մասնակցիլ:

Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ զանգակը Ասքանազեան Ընկերութեան նուէրն էր, ներածուած 1888 թուականին Լօստոնէն Յակոբեան վաճառատան միջոցաւ, որը յիշատակուած էր զանգակին վրայ այն ձուլելու ատեն:

Ասքանազեան Ընկերութեան գործունեութիւնը ընդարձակելով՝ եկեղեցւոյ կից տուներէն մէկը կը յատկացուի եւ հոն կ'ունենայ իր սրահը, թանգարան-գրադարանը եւ լսարանը: Այս շրջանին Ըն-

³²³ Օհանեան, նշ. աշխ., էջ 130-132:

³²⁴ Ալպօյաճեան, Իրաքի Հայերը, էջ 157:

կերութեան ամենէն գործօն անդամներէն մէկն էր Սվաճեանի աշակերտ Միքայէլ Տէր Եղիայեանը (ապա՝ Զաւէն Պտրք.): Ան երախտագիտութեամբ կը յիշէ իր ուսուցիչը, որմէ ստացած էր իր ազգային դաստիարակութիւնը, եւ անոր թելադրանքով իսկ յանձն առած էր նուիրուիլ ազգային գործունէութեան՝ Պաղտատի վարժարանին մէջ ծառայելու, ինչպէս նաեւ անոր խորհուրդով՝ աշակերտելու Արմաշի դպրեվանքին:

Այսպէս, Ընկերութիւնը շարունակեց բարգաւաճ շրջան մը մինչեւ Առաջին Համաշխարհային պատերազմի սկիզբը: Պարագաներու բերումով գրադարանը գոցուեցաւ, եւ պարունակած հագուագիւտ հատորները անհատներու տուններուն մէջ պահուեցան, իսկ դիւանը հարկ եղաւ ջնջել եւ ոչնչացնել:

Յետ պատերազմի, Ասքանազեանի նախկին անդամներէն ոմանք ջանացին վերակազմել Ընկերութիւնը, որ կարճ ժամանակ մը կաղնիկաղ շարունակեց իր գործունէութիւնը: Ասոնցմէ կը յիշուին Տօքթ. Փիլիպոս Քէշիշեան եւ Թաթուլ Սվաճեանը, վերջինը որդին Միհրան Սվաճեանի՝ Ասքանազեան Ընկերութեան հիմնադիրին եւ հայկական կրթարանի ուսումնապետին, որ 40 տարիներ իբր ուսուցիչ եւ դաստիարակ Պաղտատի կեանքին ղեկավարը եղած էր: Գալով գրադարանի մնացած գիրքերուն, պատերազմի չորս տարիներուն ընթացքին Առաջնորդարանի ստորերկրեայ խոնար մառաններուն մէջ պահուած ըլլալուն, մեծ մասը բոլորովին փճացած էին: Այսպէս, 1922-ին վերջնականապէս լուծուեցաւ Ասքանազեան Ընկերութիւնը, որ իր ազգանուէր եւ անշահախնդիր գործունէութեամբ սատարած էր գաղութի մտաւորական եւ ընկերային զարգացման:

Այնուհետեւ, XX դարու առաջին քսանամեակին, համայնքը կը համալրուի արեւմտահայ գաղթականութեամբ, որոնք վերագտնելով իրենց բարոյական եւ ֆիզիքական ուժերը, կը լծուին խաղաղ ու շինարար աշխատանքի՝ միեւնոյն ատեն զարկ տալով հայապահպանման աշխատանքներուն, որոնց գլխաւոր օճախները պիտի հանդիսանային արդէն գոյութիւն ունեցող մեր ազգային եկեղեցիները, ազգային դպրոցները եւ նոր հիմնադրուող հասարակական-մարզական կազմակերպութիւններն ու ակումբները:

ԳԼՈՒԽՆ ՉՈՐՐՈՐԴ
ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԱՆՔ

Դպրոց

Պատմականօրէն Իրաքի հայ գաղութի վերակազմութեան հիմը դրուեցաւ Սուլթան Մուրատ Դ-ի՝ 1638 թ. Պաղտատ վերջնականապէս գրաւելէն ետք, երբ հայերուն արտօնուեցաւ գալ եւ հաստատուիլ Միջագետք: Ահա այս թուականէն ետք Պաղտատի եւ Պասրայի մէջ արդէ՛ն գոյութիւն ունեցող գաղութը ընդգրկեց զանազան բնակավայրերէ ժամանող տարբեր բարբառներով խօսող հայեր, ինչպէս Ռուսաստանէն, Պարսկաստանէն եւ, իհարկէ, Արեւմտեան Հայաստանէն, որ տարիներու ընթացքին ի մի շաղախուելով, առաջ եկաւ Պաղտատի եւ Պասրայի իւրահաստուկ բարբառը:

Թէեւ հայկական աղբիւրներուն համաձայն, առաջին ազգային դպրոցը՝ Ս. Թարգմանչացը, Պաղտատի մէջ հիմնուած է 1852 թուականին, այնուամենայնիւ, ըստ տեղական, օտար եւ պաշտօնական աղբիւրներուն յայտնի է, որ դեռեւս XVIII դարու վերջերը Հայ Առաքելական եկեղեցւոյ կից դպրոցի մը (Ս.Մեսրոպ) մէջ ընդմիջումներով կը դասաւանդէին կղերականները: Պաղտատի մէջ 1817-էն առաջ երկու հայկական դպրոցներու գոյութիւն ունեցած ըլլալու մասին յիշատակութիւնը կայ Պաղտատի կառավարիչ (1817-1831) Տաւուտ Փաշայի կենսագրութեան հեղինակ Ապտէլ-Ազիզ Սիւլէյման Նուարի³²⁵ գիրքին մէջ, ուր գրելով օտար դպրոցներու մասին Պաղտատի մէջ՝ կը յիշէ. «... Տաւուտ Փաշայի ժամանակաշրջանէն առաջ (իմա՝ 1817-էն) երկու հայկական դպրոցներ կային Պաղտատի մէջ»՝ առանց աղբիւրը կամ ուրիշ տեղեկութիւններ տալու:

Սկզբնական շրջանին, Իրաքի բոլոր քրիստոնէայ համայնքները, ներառեալ հայերը, իրենց առաջին դպրոցները հիմնած են եկեղեցիներու շրջափակէն ներս, ուր դասաւանդուող առարկաներն էին գրաճանաչութիւնը եւ կրօնական տարրական գիտելիքներ: Մական, կարգ մը դպրոցներուն մէջ կրօնագիտութեան կողքին կ'ուսուցանուէր նաեւ Աստուածաբանութիւնը, որոշ լեզուներ

³²⁵316 صفحة (Արտիւլ Ազիզ Սուլէյման, Պաղտատի Վալին՝ Դաուդ Փաշա), էջ 316:

ու տարբեր գիտելիքներ՝ հոգեւորականներ պատրաստելու համար³²⁶: Դպրոցները աստիճանաբար զարգանալով կ'անջատուին եկեղեցիէն եւ կը հիմնադրուին անկախ կրթական օճախներ՝ կիրարկելով ուսուցման նոր եղանակներ: Այս տիպի դպրոցներ հիմնուեցան Պաղտատի եւ Մուսուլի վիլայեթներուն մէջ XIX դարուն սկիզբը: Սակայն, մինչեւ սոյն դարուն վերջերը Մուսուլի կարգ մը գիւղերուն մէջ տարրական դպրոցները տակաւին կը պահպանուէին եկեղեցիներէն ներս³²⁷: Դասաւանդուող առարկաներն էին գրաճանաչութիւն, կրօնագիտութիւն եւ հոգեւոր երգեցողութիւն: Սակայն, պատկերը հիմնովին փոխուեցաւ Օսմանեան կայսրութեան վերջին ժամանակաշրջանին, որ պայմանաւորուած էր օտարագրի դպրոցներուն ներթափանցմամբ, եւ հովանաւորութեամբ եւրոպական երկիրներու, որոնք ջանք ու եռանդ չէին խնայեր օժանդակելու վերոյիշեալ դպրոցները թէ՛ նիւթապէս եւ թէ՛ գիտարուեստականօրէն (թեքնիկապէս)³²⁸:

Ինչպէս յայտնի է, Օսմանեան կայսրութիւնը իր գրաւած տարածքներուն մէջ ստեղծեց «միլլէթներ» (համայնքներ), ուր տուեալ երկրի բնակչութիւնը կը ստանար որոշ ընկերա-քաղաքական «իրաւունքներ», ներառեալ եկեղեցիներուն կից դպրոցներ ունենալու իրաւունքը: Մինչեւ XVIII դար այս իրաւունքը վերապահուած էր հոգեւորականներուն, որոնց գլխաւոր պարտականութիւնն էր վերոյիշեալ դպրոցներուն մէջ հոգեւորականներ նախապատրաստել: Սակայն, ժամանակի ընթացքին եւ պարագաներու բերումով, անհրաժեշտ էր աշխարհիկ դպրոցներ եւս ունենալ, քանի որ երթալով արեւի կը շեշտուէր միսիոներներու գործունէութիւնը, որոնք իրենց հովանաւորութեան տակ գործող դպրոցներուն մէջ ուղղակի եւ անուղղակի կերպով կը սատարէին բողոքական եւ կաթոլիկ դաւանանքներու տարածումը քրիստոնէաներուն

..

³²⁶ 7 ص 1948 بغداد، مطبعة المنصور، تاريخ نصارى العراق، بابو اسحق روفائيل، تاريخ نصارى العراق، مطبعة المنصور، بغداد 1948، էջ 7):

³²⁷ 228 صفحة ج. م.، التعليم في العراق في العهد العثماني الاخير، بغداد 2002، صفحه 228):

³²⁸ St' u Cuinet V., նշ. աշխ., էջ 101:

մէջ, որոնցմէ գերծ չմնացին նաեւ Հայ Առաքելական եկեղեցոյն պատկանող հայերը³²⁹:

XIX դարու վաթսունականներուն վերջերը, Օսմանեան իշխանութիւնները ձեռնարկեցին տեղական սեփական ազգային դպրոցներուն «կանոնակարգումը», ներառեալ քրիստոնէական (տեղացի) եւ օտար ոչ-իրաքեան դպրոցները «Ընդհանուր Կրթական Կանոնադրութեան» միջոցաւ, որուն թիւ 129 յօդուածը կը պարտադրէր նախապէս ունենալ տուեալ «վիլայէթի» վալիի արտօնութիւնը դպրոց բանալու այդ շրջանին մէջ, ինչպէս նաեւ, դասաւանդող ուսուցիչներու վկայուածութեան աստիճանը, եւ յատկապէս դասաւանդուող առարկաներու մասին յստակ տեղեկատուութեան հաղորդումը պատկան մարմիններուն: Յետագային, սակայն, 1875 թ., Բ. Դուռը իրեն պիտի վերապահէր արտօնութիւն տալ որեւէ դպրոց բանալու եւ շատ աւելի խիստ պայմաններով³³⁰:

Հարկ է նշել, որ քրիստոնէայ դպրոցներուն ֆինանսաւորումը, մատակարարումը եւ բոլոր ծախսերը կը հոգացուէին համայնքներու կողմէն, մանաւանդ ունեւոր դասակարգի նուիրատուութիւններէն³³¹: Այնուամենայնիւ, 1885 թ. պետութեան կողմէն արգիլուեցաւ որեւէ դրամահաւաք կազմակերպել եկեղեցի կամ դպրոց կառուցանելու նպատակով առանց կեդրոնական կառավարութեան թոյլտուութեան: Կառավարութեան կողմէն այս սահմանափակումը պատճառ դարձաւ կարգ մը դպրոցներուն վերջնական փակման կամ ժամանակաւոր դադարեցման³³²:

Նիւթական նուիրատուութիւններուն կողքին, համայնքներու ազգային երեսելիները անշարժ գոյքեր եւ կալուածներ գնելով

³²⁹ Մինչեւ XIX դարու վերջը հայերու մէջ բողոքականներու թիւը կը հասնէր 70,000-ի, իսկ միսիոնէրական դպրոցներու թիւը 170 էր (տե՛ս Ուրտուճեան Կ.Ս., Ծագումն եւ Ընթացքը Աւետարանականութեան Ի Հայոց, Կ.Պոլիս 1914, էջ 250, Sarafian K., History of Education in Armenia, California, 1930, էջ 171):

³³⁰ نفس المصدر صفحة 229 Իրականութեան մէջ, Օսմանեան իշխանութիւններու նպատակը սեփական դպրոցները կանոնակարգել չէր, այլ աւելի խիստ հսկողութեան տակ վերցնել օտարազգի, ինչպէս նաեւ տեղացի քրիստոնէաներուն պատկանող դպրոցները եւ այնտեղ ուսուցանուող առարկաները:

³³¹ 352 ص 1924 كانون الأول الأول، 15 كاتون الأول 1924، ص 352):

³³² Sté u Cuinet L., նշ. աշխ., էջ 784:

և կտակելով տուեալ համայնքին, կը սատարէին դպրոցներու գոյատեւման եւ ուսումնառութեան յարատեւման առանց անհարկի ընդմիջումներու: Այս կապակցութեամբ նշենք, որ Մուսուլի մէջ տեղակայուած Տոմինիքեանները ամէն ջանք կը թափէին շրջանի կաթոլիկ դպրոցներուն ծախսերը հոգալ՝ զերծ պահելու զանոնք փակուելու վտանգէն³³³:

Քրիստոնէայ համայնքներուն դպրոցներու առանձնայատկութիւններէն մէկն էր նաեւ տարբեր լեզուներու ուսուցումը տուեալ համայնքի ազգային լեզուին առընթեր: Օրինակի համար, քաղղէական դպրոցներուն մէջ քաղղէերէնի կողքին կը դասաւանդուէր արաբերէնը՝ որպէս բնակչութեան մեծամասնութեան լեզուն: Նոյնն էր պարագան սիրիաք եւ հայկական դպրոցներուն մէջ: Արաբերէնը ընդհանրապէս կ'ուսուցանուէր տեղացի քրիստոնէայ ուսուցիչներու կողմէն³³⁴: Իսկ երկրի պետական լեզուն՝ թրքերէնը, պարտադիր էր բոլոր դպրոցներուն մէջ: Այս կապակցութեամբ պետութիւնը ուսուցիչներ կը տրամադրէր իր քաղաքացի պաշտօնեաններէն, երբեմն ալ բանակային սպաները կը ստանձնէին այս պարտականութիւնը՝ իրենց հսկողութեան տակ պահելու ընդհանրապէս բոլոր ազգային սեփական դպրոցները, յատկապէս քրիստոնէայ համայնքներուն պատկանող դպրոցները:

Պաղտատի եւ Պասրայի մէջ կաթոլիկ Քաբուշին (Վեղարատը) միսիոներական կազմակերպութիւնները, որոնք աշխոյժ քարոզչական գործունէութիւն կը ծաւալէին Իրաքի մէջ, 1628 թ. իրենց վանքին կից հիմնած են դպրոց մը, ուր կը յաճախէին հայ (առաքելական եւ կաթոլիկ) եւ սիրիաք կաթոլիկ աշակերտներ:

Օսմանեան կայսրութեան վերջին ժամանակաշրջանին Պաղտատի մէջ կը գործէին հետեւեալ քրիստոնէական տեղական ազգային դպրոցները (ներառեալ հայկական դպրոցները) հիմնադրութեան ժամանակագրական կարգով.

³³³ 144 ص المصدر نفس اسحق (նշ. աշխ., էջ 144):

³³⁴ 173. هجرية صفحة 1317 بغداد ولاية سالتامه Սալնամէ Պաղտատ Վիլայէթի 1317 հիջրէթի, էջ 173: (Սալնամէները տարեկան տեղեկագիրներ էին, որոնք կը պատրաստուէին իւրաքանչիւր վիլայէթի տեղական գերատեսչութեան պատկան իշխանութիւններու կողմէն եւ կը հասցեագրուէին Կ.Պոլիս):

1-Իրաքի քրիստոնեայ համայնքներու դպրոցներ

Ա. -Հայ Առաքելական համայնքին պատկանող «Ս.Մեսրոպ» դպրոցը հիմնադրուած 1790 թ., առաջին քրիստոնեայ դպրոցն էր Պաղտատի մէջ, որ տեղակայուած էր Ս. Աստուածածին եկեղեցւոյ շրջափակէն ներս: Այս դպրոցին մէջ, ընդմիջումներով կը դասաւանդէին գլխաւորաբար հայ հոգեւորականներ, որոնք կրթութիւն կը ջամբէին հաւաքուած մանուկներուն (մանչերուն), ուր կը դասաւանդուէր Դաւիթի Սաղմուր եւ Աւետարանը: Կը ստանային նաեւ տարրական թուաբանութիւն³³⁵: Սակայն, դասաւանդումը կը կանոնակարգուի XIX դարու երկրորդ կէսին (1853 թ.),³³⁶ երբ դպրոցի գոյատեւման եւ զարգացման համար մասնաւոր պիտոճէ մը կը յատկացուի համայնքի երեւելի ազգայիններուն կողմէն:

Յիշատակութեան արժանի է, որ Բարունակ պէյ Տէրուհիսան 1847 թ. Պաղտատ հանդիպած է եւ խօսելով Պաղտատի բնակչութեան տարբեր ազգերուն մասին. կը նշէ. «կան նախակրթարան դպրոցներ իւրաքանչիւր ազգաց»: Ուրեմն, ինչպէս վերը նշեցինք, հայերն ալ ունէին իրենց դպրոցը³³⁷:

Նոյն թուականին (1847 թ.) Իրաքի թեմը պաշտօնապէս կը կապուի Կ.Պոլսոյ պատրիարքարանին, եւ 1848 թ. Պաղտատ կը ժամանէ Տէր Մեսրոպ Ծ. վարդապետ Կ.Պոլսեցին, որուն ջանքերով կը հիմնուի Ս. Երրորդութիւն եկեղեցին 1852 թ.: Երջանկայիշատակ վարդապետի թելադրութեամբ 1848-1849 թթ. Էջմիածին կ'առաքուին երկու ուսեալ հայեր՝ Պաղտատսար Դաւիթեանը եւ Մանուէլ Տիլանեանը: Քանի մը տարի ետք կը վերադառնան, առաջինը՝ իբրեւ Մեսրոպ քահանայ Դաւիթեան եւ միւսը՝ իբրեւ ուսուցիչ: Վերջինս կը հանդիսանայ Ս. Մեսրոպ դպրոցի առաջին տնօրէնը:

Մեսրոպ Ծ. Վարդապետ Ս. Երրորդութիւն եկեղեցիի կառուցման զուգընթաց կը հիմնէ նաեւ եկեղեցւոյ հիւսիսակողմը, վարժարան մը մեծ սրահով եւ չորս դասարաններով ու մեծկակ

³³⁵ Թաղէտեան Դ., Իրաքահայ Թեմի Համառօտ Պատմութիւն (անտիպ), Նօթերու տետր 2, էջ 17:

³³⁶ 144 صفة السابق، نفس المصدر السابق، بابو اسحق، (Ռ. Բարու Իսհակ, նշ. աշխ., էջ 144):

³³⁷ Տէրուհիսան Բ. պէյ, նշ. աշխ., էջ 95:

ծաղկոցով մը փոքր տղայոց համար՝ հարիւրէ աւելի զուտ «պաղտատացի» աշակերտներով:

Դպրոցի հիմնադրութենէն 10 տարի ետք, առաջնորդ Տ. Մետրոպ վարդապետի եւ Յովհաննէս պատրիարք Աղէքսանդրեանցի եւ տեղոյն բոլոր ազգայնոց խնդրանօք, Պաղտատ կը ժամանէ Պոլսոյ Փրկիչեան որբանոցը ուսում առած, Սղերդցի Իսրայէլ Պօղոսեան-Խաչատուրեանը, որ կը պաշտօնավարէ երեք տարի³³⁸: Պարոն Իսրայէլ սիրալիբ ընդունելութիւն կը գտնէ եւ մեծ փութով կը ձեռնարկէ տեղոյն Մետրոպեան վարժարանին բարեկարգութեանը. «հիմա կը զգամ, կ'ըսէ Պ.Իսրայէլ, թէ ինչ մխիթարութիւն ունի եղեր վարժապետ մը, երբ տեղոյն հոգեւոր հովիւը իրեն աջակից ունենալու բաղդը կ'ունենայ»³³⁹:

Իսկ Մանուէլ վարժապետի ուսուցչական շրջանին տեղի ունեցած բարեփոխութեանց մասին նշենք դէպք մը գաղափար մը տալու համար կրթական մակարդակի բարձրացումին: 1871-ին երբ Նասրէտտին Շահը, Պարսից արքայից արքան, Պաղտատ ուխտի կուգայ Քերպէլա-Նէճէֆ իսլամական սրբավայրերը այցելելու, Մանուէլ վարժապետ անմիջապէս գրաբար երգ մը կը հեղինակէ, զոր կ'երգեն հայ վարժարանի աշակերտներ՝ *նորին վեհափառութիւնը* դիմաւորելու ատեն: Երբ թագաւորը կ'այցելէ Հայոց Առաջնորդարանը, հայ աշակերտներ եկեղեցւոյ բակը բարձր մակարդակով տողանցք մը կը կազմեն եւ կ'երգեն՝ *նորին վեհափառութեան* բարի գալուստ մաղթելով: Շահի փափաքին վրայ երգի բառերը կը թարգմանուին: Ան խիստ գոհ կը մնայ աշակերտներուն տողանցքին ու երգեցողութեան համար: Հայ աշակերտութիւնը միւս վարժարաններէն առաջնութիւնը շահելով՝ մեծ համբաւի կը տիրանայ: Շահը առ ի գնահատութիւն ընծաներ կը բաժնէ աշակերտութեան³⁴⁰:

Մանուէլ ծառայեց ազգին մինչեւ խոր ծերութիւն: Ան ծանօթ է պաղտատահայերուն որպէս «Մանուէլ Վարժապետ»:

1870ական թուականներուն միջավայրը աւելի զարգացած ըլլալով եւ եւրոպական լեզու մը գիտնալը անհրաժեշտ դարձած՝ հայ պատանիները օտար դպրոցներ յաճախելէ ազատելու համար,

³³⁸ Ժամանակ Հանդէս Հայրենանուէր, Պոլիս, թիւ 11, 25 Մայիս 1863, էջ 86:

³³⁹ Նոյն, էջ 87:

³⁴⁰ Գեորգեան Կ., նշ. աշխ., էջ 406:

օրուան ազգային իշխանութիւնը՝ առաջնորդ Մաղաքիա ծ. վրդ. Տէրունեանի միջոցաւ, կը դիմէ Պոլիս՝ Տ. Ներսէս Պատրիարք Վարժապետեանին, խնդրելով կարող եւ լեզուագետ ուսուցիչի մը առաքումը: Պատրիարքարանը՝ ընդառաջելով խնդրանքին, Պոլսոյ Նուպար Շահնազարեան վարժարանի շրջանաւարտներէն, եւ նախապէս Հաճընի մէջ քանի մը տարիներ պաշտօնավարած Միհրան Հրաչեայ Սվաճեանը Պաղտատի համար ուսուցիչ եւ տնօրէն նշանակելով, յատուկ հրամանագիրով մը Պաղտատ կը դրկէ: Սըվաճեան մտաւոր լայն պաշարի տէր, գրաբարի, աշխարհաբարի, ֆրանսերէնի, օսմաներէնի եւ աշխարհագրութեան հմուտ անձ մըն էր:

Բ - Ս. Թարգմանչաց վարժարան

Սվաճեան Պաղտատ կը ժամանէ 7 Դեկտեմբեր 1876-ին: Քանի մը օր ետք՝ 12 Դեկտեմբերին, կը կատարուի Ս. Թարգմանչաց վարժարանի բացման շքեղ հանդէսը, երբ Սվաճեան պերճ բանախօսութեամբ հանդիսականները կ'առնինքնէ իր ճարտասանութեամբ եւ հմայիչ լեզուով: Ան, շուրջը հաւաքելով 70ի չափ մեծ ու պզտիկ հայ ուսանողներ, անմիջապէս գործի կը սկսի մեծ թափով:

Միհրան Սվաճեանը, ընդհանրապէս Իրաքի եւ մասնաւորապէս հայ կրթական կեանքին մէջ պատուով յիշուելու արժանի դէմք մըն է: Ան անձնուիրութեամբ կը գործէ եւ հիմնադիրը կը հանդիսանայ Պաղտատի հայ գաղութին կրթական գործին: Սվաճեանը ոչ մէկ ջանք կը խնայէ անոր զարգացման համար: Իր աշակերտներուն մէջ կ'արծարծէ ազգային ինքնագիտակցութեան ոգին եւ ազգասիրական զգացումներ: 1880-ական թուականներուն դպրոցին մակարդակը այնքան կը բարձրանայ, որ պետութեան կողմէ կը դատուի Էլ-Ռուշդիյէ³⁴¹ դպրոցներուն շարքին, չորս տարի կրթաշրջանով, ուր շատ չանցած կը յաճախեն նաեւ օտար աշակերտներ: Այս դպրոցին մէջ կը դասաւանդուէր հայերէն, թրքերէն, պարսկերէն,³⁴² անգլերէն, ֆրանսերէն,³⁴³ քերականութիւն, թուա-

³⁴¹ Էլ-Ռուշդիյէ դպրոցները պետական երկրորդական (միջնակարգ) դպրոցներ էին, ուր քրիստոնէայ աշակերտներուն մուտքը արգիլուած էր: انجار ج. م. نفس 237 المصنر صفحة 237 (Էլ-Նաջջար Ջ.Ս., նշ. աշխ., էջ 237):

³⁴² շետաքրքրական երեւոյթ էր, որ միայն հայկական դպրոցին մէջ կը դասաւանդուէր պարսկերէնը, որ պայմանաւորուած էր տուեալ դարաշրջանին

բանութիւն, ընդհանուր աշխարհագրութիւն, պատմութիւն, ուղ-
ղագրութիւն, շարադրութիւն եւ գեղագրութիւն: 1905 թ. այս առար-
կաներուն կ'աւելնայ նաեւ տարրաբանութիւն առարկան: 1882-
1907 թթ. աշակերտութեան թիւը 67-92 էր, որոնց կը դասաւանդէին
6 ուսուցիչներ: Յիշատակութեան արժանի է, որ միայն հայկական
դպրոցին մէջ կ'ունուցանուէր պարսկերէնը, որ պայմանաւորուած
էր հայ վաճառականներուն առեւտրային սերտ կապերու առկա-
յութեան Պարսկաստանի իրենց գործակիցներուն հետ:

Դաւիթ Թաղէսեան, որ Սվաճեանի աշակերտներէն մէկը
եղած է, իր յուշերուն մէջ կը գրէ. «Սվաճեան հմուտ, լեզուագետ,
հայագետ եւ անձնուէր ուսուցիչ մ'էր եւ անխոնջ գործիչ, իր դասա-
խօսութիւնը հմայիչ էր եւ առինքնող գոր մենք՝ աշակերտներս, սի-
րով, հիացումով կ'ունկնդրէինք, եւ իր հայրական խրատներն ու
պատուէրները իբր պատգամ կը նկատէինք: Իր ժամանակ վարժա-
րանի ուսման մակարդակը այնքան բարձր էր, որ օտարազգի պա-
տանիներ սկսան հետզհետէ մեր դպրոցը յաճախել իր լեզուագի-
տութենէն օգտուելու համար, որոնցմէ շատեր թարմ յիշատակներ
կը պահէն Սվաճեանի մասին մինչեւ այսօր»³⁴⁴:

Ս. Թարգմանչաց վարժարանը Սվաճեանի օրով հասաւ յա-
ռաջդիմութեան ամենաբարձր մակարդակի եւ գրաւեց առաջին
տեղը Պաղտատի բոլոր համաստիճան վարժարաններուն մէջ:

Տարիներու ընթացքին Սվաճեան յաջողեցաւ հասցնել զար-
գացած-պատրաստուած երիտասարդութիւն մը: Շատեր յետագա-
յին անոր պարտական մնացին իրենց գրաւած փայլուն դիրքերուն
համար պետական, առեւտրական ու հանրային ասպարէզներուն
մէջ եւ այս պարագան միշտ ալ խոստովանեցան սրտազին երախ-
տագիտութեամբ:

Միհրան Սվաճեան, միաժամանակ 1885-ին հիմը դրաւ,
վարժարանին կից, մարգարանի մը եւ գրադարանի մը, որպէսզի

Նոր Ջուղայի հայ եւ պարսիկ վաճառականներուն հետ ծաւալած լայն
առեւտրական գործողութեամբ:

³⁴³ Ֆրանսերէնի ուսումնառութիւնը պարտադիր չէր, եւ կը դասաւանդուէր
միայն ըստ աշակերտի փափաքին (տե՛ս Diskin J. J., *The Genesis of the
Government Educational System in Iraq*, A Doctoral Dissertation Submitted to the
Graduate Faculty in the School of Education, University of Pittsburgh, 1971, *النجاح ج. م.*
239 نفس المصدر ص 239):

³⁴⁴ Դաւիթ Թաղէսեանի Յուշերու Տետր, Իրաքահայ Թեմի..., նշ. աշխ., էջ 148:

առաջինով զարկ տրուի աշակերտութեան ֆիզիքական կրթութեան եւ երկրորդով՝ երիտասարդութեան ընթերցասիրութեան: Գրադարանը կոչուեցաւ «Ասքանազեան Ընկերութիւն»:

Ինչպէս յիշեցինք, Թարգմանչաց վարժարան կը յաճախէին միայն մանչեր: Իսկ տեղական պահպանողական պայմաններուն բերումով հայ աղջիկը ստիպուած էր մնալ տունը եւ հոն մասնատր այցելու ուսուցիչէ մը սորվիլ իր մայրենի լեզուն: Ուսուցման այս եղանակը անգործնական գտնելով՝ օրուայ առաջնորդ Փիլիպոս եպս. Նաճարեան, Միհրան Սվաճեանի հետ համախորհուրդ, առաջնորդարանի սենեակներէն մէկը 1901-ին կը յատկացնէ աղջկանց դաստանդութեան: Սակայն հետզհետէ այս սենեակը նեղ գալով՝ հարկ կը տեսնուի կառուցել յատուկ վարժարան մը: Մինչ այդ, ազգային բարերար Յովհաննէս Իսքէնտէրեան, 1901-ին ազգին կը նուիրէ իր մեծ տուներէն մէկը, որպէսզի գործածուի իբրեւ աղջկանց վարժարան, կոչելով զայն «Զապէլեան Աղջկանց Վարժարան», նուիրատուին վաղամեռիկ դստեր՝ Զապէլի յիշատակին: Այս վարժարանին ալ տնօրէնութիւնը կը վարէ Սվաճեան՝ իրեն օգնական ունենալով Պաղտատցի օրդ. Աղանի Գասպարեանը: Իսկ մանկապարտէզի բաժինը կը բացուի աւելի ուշ՝ 1913-ին:

Օրուան առաջնորդին՝ Սերովբէ վրդ. Սամուէլեանի հետ ունեցած տարակարծութիւններուն պատճառով, Սվաճեան 1906-ին կը հրաժարի Ս. Թարգմանչաց եւ Զապէլեան վարժարաններուն տնօրէնութենէն: Թէեւ կարճ ժամանակ մը վերջ կը վերադառնայ Ս. Թարգմանչացի տնօրէնի պաշտօնին:

Աղջկանց վարժարանին համար Պոլիսէն վարժուիի մը կը խնդրուի: 23 Օգոստոս 1908-ին, Պաղտատ կը ժամանէ կարող ուսուցչուիի մը յանձին՝ օրդ. Թերեզա Շալճեանի: Ան մեծապէս օգտակար կը հանդիսանայ հայ աղջիկներուն դաստիարակութեան գործին: Այս արժանատր ուսուցչուիիին անունն ալ երախտագիտութեամբ յիշուած է միշտ իր սանուհիներու կողմէն: Օրդ. Շալճեան կը հեռանայ Պաղտատէն 1911 թ.ի Սեպտեմբեր ամսուն:

Այնուհետեւ Զապէլեանի տնօրէնուիի կը նշանակուի Խարբերդցի տիկ. Վիթթօրիա Ս. Փափազեանը, որուն պաշտօնավարութիւնն ալ արդիւնատր եղած է:

Գ - Ս. Թարգմանչաց Երկսեռ Վարժարան:

1917 թուականին, երբ Պաղտատ գրաւուեցաւ Բրիտանացիներուն կողմէ, Ս. Թարգմանչաց եւ Ջապէլեան վարժարանները միացան եւ հաստատութիւնը կոչուեցաւ «Թարգմանչաց Երկսեռ Վարժարան»:

Սվաճեանի պաշտօնավարութեան ընդհատումէն ետք, Թարգմանչաց վարժարանին ղեկը կը ստանձնէ Իրաքահայ թեմի առաջնորդ Սերովբէ վրդ. Սամուէլեան, որ քաջ հայագետ եւ ֆրանսագետ եկեղեցական մըն էր: Այս շրջանին, իբր աւագ ուսուցիչ պաշտօնի կը կոչուի, Փարիզի մէջ ուսումը ստացած Սեդրակ Տիլանեանը, եւ երբ Սերովբէ վրդ. Երուսաղէմ կը վերադառնայ 1907-ին, Թարգմանչացի տնօրէնութեան կը կանչուի Մշեցի Սիսակ Գոյումճեան: Ասոր կը յաջորդէ Եփրատ Գուլէճէն շրջանաւարտ, Խարբերոյցի Սարգիս Փայթոնճեան-Շիրվանեան: Քանի մը տարի ետք տնօրէնութիւնը կը ստանձնէ Սեպուհ Փափազեան իր եղբոր Գուրգէն Փափազեանին հետ (ապա՝ բժիշկ) իբրեւ աւագ ուսուցիչ: Իսկ տիկ. Փերուզ Գ. Փափազեան կը պաշտօնավարէ իբրեւ մանկապարտիզպանուհի: Երեքն ալ աշխատած են խղճմտօրէն եւ լաւ արդիւնքով, մինչեւ 1914 թուականը:

Դ- Սիրիաք Կաթոլիկներու դպրոց. հիմնուած սոյն համայնքի կողմէն 1842 թ., ուր դասաւանդումը կը շարունակուի մինչեւ 1878 թ., երբ այս համայնքին կը միանան կաթոլիկ քաղղեացիները եւ կաթոլիկ հայերը՝ հիմնադրելով «Արեւելեան Կաթոլիկ Համաձայնութեան դպրոց», որ սակայն, կը դադրի գործելէ 1893 թ.: Իսկ Սիրիաք Կաթոլիկներուն դպրոցը կը շարունակուի «Էֆրամ Համայնքային դպրոց» անուան տակ, որ պաշտօնապէս արտօնուեցաւ պետութեան կողմէն 1893-1894 թթ. եւ դպրոցն ալ համարուեցաւ ԷլՌուշիյէ (երկրորդական): Դպրոցի աշակերտութեան թիւն էր 40-75, իսկ ուսուցչութեան թիւը՝ 4-6:

Ե - Քաղղեացի Կաթոլիկներու դպրոց. հիմնուած է 1843 թ., որ սկզբնական շրջանին սոյն համայնքի եկեղեցոյն կից էր: Այնուհետեւ ընդարձակուելով՝ 1875 թ. կը դառնայ Էլ-Ռուշիյէ, որ կը փակուի 1878 թ. վերոյիջեալ «Արեւելեան Կաթոլիկ Համաձայնութեան դպրոց»ի հիմնադրմամբ: Վերջինիս գործունէութեան վերջնականապէս դադրելէ ետք, 1894 թուականի վերջերը կը վերաբացուի

Քաղղեացի Կաթոլիկներու դպրոցը աւելի ընդարձակ շէնքի մը մէջ: Յետագային (1906 թ.) այս դպրոցը կը բաժնուի երկու կրթաշրջանի՝ նախակրթարան եւ երկրորդական (Էլ-Ռուշդիյէ): Աշակերտութեան թիւը 1894 թ. 103 էր, իսկ 1907 թուականին արդէն կը գերազանցէր 180-ը, որոնց կը դասաւանդէին 8 ուսուցիչներ: Իսկ դասաւանդուող առարկաներն էին՝ աշխարհագրութիւն, պատմութիւն, թուաբանութիւն, երկրաչափութիւն, հաշուապահութիւն, քերականութիւն, ճարտասանութիւն ինչպէս նաեւ լեզուներ՝ քաղղերէն, արաբերէն, անգլերէն, ֆրանսերէն եւ այլ առարկաներ³⁴⁵:

Ձ - Հայ Առաքելական եկեղեցւոյն պատկանող Աղջկանց դպրոց:

Հիմնադրուած է 1853 թ.³⁴⁶ եւ կը համարուի աղջկանց առաջին դպրոցը ամբողջ Պաղտատ վիլայէթին մէջ: Ինչպէս վերը նշեցինք, դպրոցը նախակրթարան էր, ուր կը դասաւանդէին երկու ուսուցչուհիներ միայն մինչեւ 1898 թ.: 1899 թ. կ'աւելնայ նաեւ ֆրանսերէն լեզուի ուսուցումը, զոր կը դասաւանդէր Պաղտատի Ս.Թարգմանչաց տղայոց դպրոցի տնօրէն Միհրան Սվաճեան³⁴⁷: Իսկ 1907 թուականին երրորդ ուսուցչուհիի համալրումով՝ նաեւ գործնական ասեղնագործութիւն եւ ձեռագործ: 1892 թուականին աշակերտուհիներուն թիւը 45 էր, իսկ 1907 թուականին՝ արդէն 70-ը:

Է - Արեւելեան Կաթոլիկ Համաձայնութեան դպրոց. հիմնուած է 1878 թուականին երեք կաթոլիկ համայնքներու քաղղեացիներու, սիրիաք եւ կաթոլիկ հայերու համախմբումով³⁴⁸: Դպրոցը սկզբնական շրջանին բաւական յառաջընթաց արձանագրեց, երբ

³⁴⁵ Պաղտատ վիլայէթի սալնամէներ՝ 1312 հիջրէթի, էջ 174-175, 1325 հիջրէթի, էջ 325 (տե՛ս Էլ-Նաճճառ Ջ. Ս., նշ. աշխ., էջ 241-242):

³⁴⁶ Պաղտատ վիլայէթի սալնամէ, 1319 հիջրէթի էջ 478-479: Թէւ Ջօն Դիսքինը իր աւարտաճառին մէջ կը նշէ, որ այս դպրոցը բացուած է 1900 թ., այնուամենայնիւ, 1892 թ.ի պաշտօնական սալնամէներու մէջ արդէ՛ն կը յիշուի այս դպրոցին անունը: Տե՛ս Պաղտատ վիլայէթի սալնամէ 1312 հիջրէթի էջ 139, նաեւ ասոր յաջորդող սալնամէները (Էլ-Նաճճառ, նշ. աշխ., էջ 242):

³⁴⁷ Պաղտատ վիլայէթի սալնամէ 1317 հիջրէթի, էջ 173: Տե՛ս նաեւ Օհանեան Ս. նշ. աշխ., էջ 160-161:

³⁴⁸ Բայօ اسحق ورفائيل، نفس المصدر السابق صفحة 143.

1882 թուականին աշակերտութեան թիւը գերազանցեց 220-ը՝ 12 ուսուցիչներով:

Դպրոցի ուսումնական շրջանը չորս տարի էր, եւ թէեւ կը համարուէր Էլ-Ռուշդիէ դպրոցներուն շարքին, սակայն, դասաւանդուող առարկաները կը գերազանցէին Պաղտատի մէջ նոյն կրթական մակարդակն ունեցող միւս դպրոցները: Այստեղ, առարկաները բազմազան էին. հայերէն, թրքերէն, արաբերէն, ֆրանսերէն, անգլերէն, քաղղէրէն, սիրեանիներէն, տարրական կրօնական գիտելիքներ, քերականութիւն, աշխարհագրութիւն, թուաբանութիւն, աստղագիտութիւն, տրամաբանութիւն, բառագիտութիւն, երկրաչափութիւն, գրահաշիւ, ուղղագրութիւն եւ շարադրութիւն: Սակայն, ժամանակի ընթացքին կարգ մը առարկաներ կը կրճատուին, քանի որ XIX դարու վերջերուն այս դպրոցը որոշ թիւով աշակերտներ կ'առաքէր Մուսուլի կրօնական հաստատութիւնները՝ ապագայի հոգեւորականներ պատրաստելու համար եւ կրճատուած առարկաներու ուսուցումը աւելորդ եւ ծախսատար համարելով:

Այնուամենայնիւ, XIX դարունժ վերջերը նիւթական եւ այլ պատճառներով, դպրոցը աստիճանաբար կը կորսնցնէ երբեմնի յաջող ընթացքը, կարող ուսուցիչներուն թիւը կը պակսի, աշակերտութեան թիւն ալ կը նուազի,³⁴⁹ որ բնականաբար պատճառ պիտի հանդիսանար դպրոցի վերջնականապէս փակման՝ 1893 թուականին:

Ինչպէս վերը նշեցինք, Իրաքի մէջ բոլոր սեփական կամ ազգային դպրոցները նիւթական օժանդակութիւն կը ստանային տուեալ համայնքին կողմէն, որ բնականաբար քաղաքական վերիվայրումներով կամ աւելի յաճախ՝ նիւթական միջոցներուն սղութեան պատճառով, ազդելու էր դպրոցի շարունակականութեան, ուսուցման գործընթացի տատանման եւ ի վերջոյ պիտի յանգէր անխուսափելի տխուր վախճանին:

Վերոյիշեալ եօթ դպրոցները կը ներկայացնեն XIX դարուն Պաղտատ վիլայէթին մէջ գտնուող տեղացի ազգային քրիստոնէալ համայնքներուն պատկանող կրթօճախները, որոնց մէջ չեն մտնէր օտար միսիոներական դպրոցները: Մենք նշեցինք Պաղտատի

³⁴⁹ Աշակերտութեան թիւը 1891 թ., նուազած էր մինչեւ 60, ուսուցիչները հինգն էին, իսկ յաջորդ տարին միայն 13 աշակերտ կը յաճախէր այս դպրոցը: «بجو اسحق» نفس المصدر صفحة 143

դպրոցները միայն, քանի որ ուրիշ բնակավայրերուն մէջ (Պասրա, Մուսուլ) Առաջին համաշխարհային պատերազմէն առաջ, հայկական կանոնաւոր եւ պաշտօնապէս ճանչցուած դպրոցներ գոյութիւն չունէին, եւ ասոնց յիշատակութիւնը չենք գտներ պաշտօնական սալնամէներուն մէջ:

Վերջապէս, ուշադրութեան արժանի է, որ 1890 թուականին Պաղտատի քրիստոնէաներուն թիւն էր 7000 անձ, որմէ հայերը կը կազմէին շատ չնչին տոկոս մը³⁵⁰: Այնուամենայնիւ, ունէին տղայոց դպրոց մը, հիմնուած՝ 1790 թ., որ աստիճանաբար զարգացած եւ XIX դարուն երկրորդ կեսին հասած էր Էլ-Ռուշդիյէ մակարդակին (երկրորդական): Իսկ հայ առաքելական համայնքին պատկանող Զապէլեան դպրոցը՝ հիմնուած 1853 թ., ինչպէս վերը նշեցինք, առաջին աղջկանց դպրոցն էր ամբողջ Պաղտատ վիլայէթին մէջ: Եթէ հայկական դպրոցներուն ֆինանսատրուամբ եւ կրթական զարգացումը կը հոգացուէր միմիայն ժողովրդեան հանգանակութիւններով, նաեւ բարեկեցիկ եւ նուիրեալ ազգայիններուն նիւթական օժանդակութիւններով, ապա միւս քրիստոնէայ համայնքներուն մեծապէս կ'օժանդակէին միսիոներական հաստատութիւնները եւ տարբեր օտար կազմակերպութիւնները, ըլլան կաթոլիկ կամ բողոքական:

Պասրայի մէջ անցեալին հայեր ունեցեր են երեք վարժարաններ: Հաւանաբար Սբ. Աստուածածին եկեղեցին ունեցեր է իր վարժարանը, որու գոյութեան մասին որեւէ գրաւոր տեղեկութիւն չկայ, սակայն կը փաստուի այն իրողութեամբ, որ 1754 եւ 1760-1763 թուականներուն Պասրայի հոգեւոր առաջնորդ Տ. Գեորգ եպիսկոպոս ուսած է իր ծննդավայրին մէջ՝ Պասրա³⁵¹:

Գեորգ եպիսկոպոսի մասին Օրմանեան կը նշէ հետեւեալը. «...Նատըր կամ Նատիր պարսից շահը 1742-ին իր հետաքրքրութեան համար կը հրամայէ տարբեր կրօններուն սուրբ գիրքերը պարսկերէնի թարգմանել: Քրիստոնէութեան գիրքի թարգմանութիւնը կը յանձնուի Գեորգ եպիս. Ջուղայեցիին, որ աստուածաբան եւ հանճարապետ՝ մէկն էր: 1754-ին Գեորգ եպիսկոպոս չկարենա-

³⁵⁰ XIX դարու երկրորդ կեսին, ըստ Առաջնորդարանի տուեալներուն՝ Պաղտատի մէջ հայերու թիւն էր 174 ընտանիք միայն:

³⁵¹ Մելքոնեան Վ., Մարգիլի Հայ Ազգային Վարժարանի քսանհինգամեակ, էջ 64: Նաեւ Օրմանեան, Ազգապատում, պարբ. 2021:

լով տոկյալ Պարսկաստանի անիշխանութեան եւ տեղի ունեցած բազմապատիկ նեղութեանց եւ հարստահարութեանց բռնատրաց, Ս. Ամենափրկիչ վանքին թանկագին սպասները հաւաքելով, հանդերձ երեւելի միաբանիւքն կը քաշուի Պասրա քաղաքը, որ Պարսկաստանի թեմ էր, եւ այնտեղէն վարէ զպաշտօն առաջնորդութեան մինչեւ 1763 թուականին»³⁵²:

Մինչեւ 1847 Պասրայի հայ համայնքի մեծ մասը պարսկահայեր ըլլալով, իրենց հոգեւոր թեմը ենթարկուած էր Նոր Ջուղային: Այս թուականէն ետք Պասրայի թեմը պաշտօնապէս կը կապուի Պաղտատի առաջնորդարանին, թէւ վիճակաւոր քահանան մինչեւ 1890 թուականը երբեմն Պարսկաստանէն եկած է³⁵³:

Պասրայի գաղթօճախը յիշուած է Սիմէոն Կաթողիկոսի՝ 22 Մայիս 1775 թուակիր շրջաբերական կոնդակին մէջ: Նաեւ Ազգապատումի պարբ. 2075-ի մէջ Սիմէոն Ա. Երեւանցիի ամենայն հայոց կաթողիկոս 1763-1780 ըրած վիճակագրական կարգադրութիւններուն մէջ յիշուած են Մուսուլ, Պաղտատ եւ Պասրա:

Կը յիշուի նաեւ որ «...Ղուկաս Կարնեցի կաթողիկոս Ամենայն Հայոց (1780-1799 թթ.) ըստ գտնուած արձանագրությանց համարեա ամէն օր զբաղած էր տարբեր վայրերուն գտնուող նվիրակներին եւ առաջնորդներին աշխարհիկ ու հոգեւոր անձանց նամակներ ու կոնդակներ գրելու գործով»³⁵⁴: «...Ղուկաս Կարնեցիին նամակագրութիւն ունեցած քաղաքների շարքին յիշուած է Բասրա: Նամակագրության թեման համարեա անփոփոխ էր՝ նամակագրության հարցեր, ստացուած նամակներ, նուիրական կամ առաջնորդական գործեր...»³⁵⁵:

XVIII դարու առաջին կիսուն Պասրա բնակող հայերուն թիւն էր 120 անձ, 1879 թուին՝ 55 բնակիչ 10 տունով³⁵⁶: 1888 թուին Կ. Պոլսոյ Պատրիարքարանի վիճակագրական տուեալներուն համաձայն՝ 242 պասրահայ³⁵⁷:

³⁵² Նոյն, պարբ. 2021 եւ 2051:

³⁵³ Մելքոնեան Վ., Մարգիլի Հայ Ազգային Վարժարանի Քսանհինգամեակ, էջ 64:

³⁵⁴ Գրիգորեան Վարդան, Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի նամակագրութիւնը Շահամիր Շահամիրեանի հետ, «Էջմիածին», Էջմիածին, թիւ Ժ-ԺԱ, 1998, էջ 103:

³⁵⁵ Նոյն:

³⁵⁶ Տեղեկանք Իրաքի Հայոց, 1974, էջ 16:

³⁵⁷ Նոյն, նաեւ Լեւոն Մելքոնեան, Քանի մը Խօսք Պասրայի Գաղութի Մասին, «Ալիք», Թեհրան, 17.10.1968, էջ 4 եւ 6:

Համաշխարհային Ա. Պատերազմի նախօրեակին, Պասրայի հայ համայնքը կը պարփակեր 35-40 ընտանիք 120 անձերով, բոլորն ալ բարեկեցիկ:

Մուսուլի մէջ, ինչպէս յիշուեցաւ, 1857-ին Ս. Էջմիածին եկեղեցւոյ կառուցումէն ետք հայ մանուկներ Մայրենի լեզուն ուսանած են եկեղեցւոյ շրջափակէն ներս:

1910-ական թուականներուն այս քաղաքի 20-25 ընտանիքներէ բաղկացած հայ զաղուրը նախակրթարան մը ունեցած է, ինչպէս յիշուած է Մուսուլի թաղականութեան 1 Ապրիլ 1911 թուակիր նամակին մէջ, որ ուղղուած է Կ. Պոլսոյ պատրիարքական տեղապահ Վահան եպս. Մանկունիի: Սոյն նամակով օժանդակութիւն կը խնդրեն դպրոցին համար, նամակը՝ Թաղական խորհուրդի կողմէն, ստորագրած են Տիգրան Քիւլահեան, Սարգիս Չաքմաքճեան եւ Միրզա Կարապետեան³⁵⁸:

Պատրիարքարանը նամակը յղած է Պաղտատի Առաջնորդարանին՝ վիճակի մասին տեղեկութիւններ պահանջելով: Առաջնորդարանի արխիւներուն մէջ սոյն դպրոցի մասին յաւելեալ տեղեկութիւններ կը պակսին, թէ դպրոցը որքան ատեն գոյութիւն ունեցած է:

1914 թուականին Համաշխարհային Առաջին պատերազմին սկիզբը, զաղթականական հոսանքներ պարբերաբար կը հասնին Իրաք, այնպէս որ ամբողջ տարածութիւնը զաղթակայանի տեսարան մը կը ներկայացնէր: Հոն էին հայեր, ասորիներ, նեստորականներ, քիւրտեր եւ ուրիշներ, Փոքր Ասիոյ ամէն կողմերէն տարագրուած, տանջուած, կեանքի բոլոր դառնութիւնները ճաշակած բեկորներ³⁵⁹:

Մուսուլ 1919-1920 թուականին 3-4 հազարէ բաղկացող համայնք մըն էր: Ինչպէս վերը յիշուած է, թաղական խորհուրդի մը գոյութիւնը կը շարունակուի: Ըստ Պաղտատի Ազգ. Քաղաքական Ժողովի նիստ թիւ 41 եւ 23 Հոկտեմբեր 1922 թուակիր ատենագրութեան, ակնարկելով Մուսուլին, «...անմխիթար կացութիւն մը կը տիրէր», յիշուած է:

³⁵⁸ Պոլսէն բերուած արխիւ, թղթածրար թիւ 155: Տե՛ս Իրաքահայ Թեմի Համառօտ Պատմութիւն, Պաղտատ 2005 (անտիպ), էջ 108:

³⁵⁹ Ասթարճեան, նշ. աշխ., էջ 44:

Այնուհետև, Մուսուլի համայնքին ազգային եւ հոգեւոր մարմինները նմանապէս, ինչպէս Իրաքի միւս հայաշատ կեդրոնները, վերագտնելով իրենց ֆիզիքական եւ բարոյական ուժերը, կը լծուին դպրոցաշինութեան գործին, քաջ գիտակցելով, որ հայ աշակերտին ազգային կերտուածքն ու դիմագիծը կը կազմաւորուի ազգային դպրոցներուն մէջ: Ազգային դպրոցն է այն կառոյցը, ուր կ'ուսուցանուի Մայրենի լեզուն, եւ վերջինիս վրայ հիմնուած հայ մշակոյթը, հայ ժողովուրդի բազմադարեայ պատմութիւնը, մեր պապերուն աւանդութիւնները եւ ամենաեականը՝ օտարութեան մէջ հայ ըլլալու հպարտութիւնն ու ինքնագիտակցութիւնը:

XX դարու երկրորդ տասնամեակին, հայկական ազգային դպրոցներուն թիւը Իրաքի մէջ կը բազմապատկուի, որ պայմանաւորուած էր Մեծ Եղեռնէն մազապուրծ արեւմտահայ գաղթականութեան ժամանումով: Ժողովուրդի ֆիզիքական գոյութիւնը ապահովելէն ետք, համայնքի հոգեւոր եւ ազգային մարմինները լծուեցան դպրոցաշինութեան ազգանուէր աշխատանքին: Դպրոցներ բացուեցան բոլոր հայաշատ բնակավայրերուն մէջ, ուր մեր Ոսկեդինիկը կը ջամբուէր մատաղ սերունդին եւ ազգային դաստիարակութիւնը պարտադիր էր, որու զինումով Իրաքի հայ համայնքը յաջողեցաւ ընդառաջ երթալ օտար միջավայրի մէջ առկայ տարատեսակ մարտահրաւերներուն:

2 - Պաղտատի Հայ Կաթողիկէ համայնքի դպրոցներ

Ստեփան վարդապետ Վեցմատեան, գաղատացի, 1821, Մայիս 12-ին Պաղտատ կը հասնի: Ան երեք տունէր կը գնէ Ճամի-Է-Խուլաֆա թաղին մէջ, ուր կը գտնուէր Կարմեղեանց եկեղեցին: Ստեփան վրդ. իր բնակած տան մէջ կը բանայ պզտիկ դպրոց մը, ուր հայ եւ օտար պզտիկներուն կարդալ-գրել եւ թուաբանութիւն կը սորվեցնէր մինչեւ իր Պաղտատէն մեկնիլը եւ վանք վերադառնալը 1829 Յուլիս 18-ին: Ապա 1850 եւ 1901 թուականներուն Թովմաս վրդ. Պասմաճեան եւ Ներսէս Ժ. վրդ. Տիկտանեան յաջորդաբար, նման դպրոց մը բացած են, սակայն ասոնք երկար կեանք չեն ունեցած:

1906-ին Պաղտատի հայ կաթողիկէ համայնքը կը բաղկանար 60 տունէ, նոյն տարուայ Հոկտեմբեր 1-ին դպրոց մը կը բացուի,

ուր կ'աւանդեն հայերէն, ֆրանսերէն, թուրքերէն եւ ուրիշ առարկաներ: Վարժարանը կը ստանայ բարեկարգ վիճակ մը, շուտով կը գրաւէ հանրային վստահութիւն եւ մէկ ամսուան ընթացքին աշակերտներուն թիւը 8-էն կը բարձրանայ 40-ի գրեթէ ամէն յարանաւանութիւններէ, հաւանաբար աւելի բարձրանար, բայց դժբախտաբար այս առաջին թափը տեւական եղած չէ եւ դպրոցը փակուած է 1909-ին:

Անարատ Յղութեան Քոյրերուն դպրոցը, Քարրատա, Ասֆար թաղին մէջ հիմնուած է 1932-ին, ֆրանսացի կաթովիկ հոգեւորական՝ հայր Մանեարի (Chanoine Magnard) առատաձեռն նուիրատուութեամբ (80000 ֆրանք)³⁶⁰ կը շարունակէ մինչեւ դպրոցներուն պետականացումը 1974-ին: Ունէր մանկապարտեզի, նախակրթարանի, միջնակարգի ու երկրորդականի բաժիններ:

Անարատ Յղութեան Քոյրերուն դպրոցը մանչերուն եւս հայեցի կրթութիւնը ապահովելու համար փոքր տարիքով մանչեր ալ կ'ընդունին, եւ կը համաձայնին Կարմեղեան հայրերուն հետ, որպէսզի անոնց հաստատութեան մանչ տղաքը յետոյ անցնին իրենց վարժարանը, ուր հայերէն ալ կ'աւանդուէր³⁶¹:

1935 թուականին վարժարանի շէնքին վրայ յարկ մըն ալ կ'աւելցուի մայրապետներուն համար խցիկներ կառուցանելու, եւ վերջիններու սենեակները զիջերօթիկներու վերածուելու համար:

Աշակերտութեան ընդհանուր թիւը 425 էր, որուն 300ը հայուհիներ էին: Կը պաշտօնավարէին 10 քոյրեր եւ 21 ուսուցչուհիներ, որոնց 5ը՝ հայուհիներ:

Այս դպրոցն ալ, ի շարս ազգային միւս դպրոցներուն, 1974 թուականին կը պետականացուի, եւ հայ աշակերտուհիները կը փոխադրուին պետական Էլ-Շարկիյէ (Արեւելեան) աղջկանց վարժարանը, որ կը պարփակէր 6 դասարաններ: Իսկ մանկապարտեզի եւ նախակրթարանի բաժինը կոչուեցաւ Էլ-Չանաբէկ նախակրթարան:

³⁶⁰ Տէր Սայդեան Ն., նշ. աշխ., էջ 39:

³⁶¹ Ալպոյաճեան, նշ. աշխ., էջ 60:

3-Հայկական Ձեռագիրներու Յիշատակութիւններ

Ինչպէս յայտնի է, հայկական ձեռագիրները ստեղծուած են հայ գիրերու գիւտին հետ միասին:

Հայերէն ձեռագիրները գրուած եւ ընդօրինակուած են V-XVIII դարերուն, մեծաւ մասամբ գրչութեան կեդրոններուն մէջ: Այս ձեռագիրներուն գերակշիռ մասը ունին յիշատակարաններ, ուր յիշուած է ձեռագրի գրի առնուած վայրը, ժամանակը, հանգամանքները, ինչպէս նաեւ ընդօրինակողի մասին տեղեկութիւններ:

Հակառակ քաղաքական առկայ աննպաստ պայմաններուն, XVII դարուն վերջերը Պաղտատ կը դառնայ Մերձաւոր Արեւելքի հայ գրչութեան օճախներէն մէկը: Գրչութեան այս օճախին մէջ գրուած եւ մանրանկարուած են շարք մը ձեռագիրներ: Ակադ. Ն. Աճառեան կը նշէ հայկական ձեռագիր մը, որ, շատ հաւանական է, գրուած ըլլալու է XV կամ XVI դարու ընթացքին: Ձեռագրի պատուիրատուն է Թարիզեցի Ղուկաս անունով հոգեւորական մը, որ սոյն յիշատակարանին մէջ կը յիշուի որպէս «եպիսկոպոս քաղաքին Բաբելոնի Պարսից երկրին եւ Սագստանայ նահանգին»³⁶²:

Ուշադրութեան արժանի է, որ Օսմանցիները Պաղտատը գրաւեցին առաջին անգամ 1534 թ., երբ այս քաղաքը պարսիկ տիրապետութեան տակ էր, ինչպէս յիշուած է վերոյիշեալ ձեռագրին մէջ: Հետեւաբար՝ այն գրուած ըլլալու է 1534 թուականէն առաջ: Բնական է, որ XV կամ XVI դարերուն բարձրաստիճան հոգեւոր առաջնորդի մը յիշատակութիւնը անվիճելիօրէն կը փաստէ, որ հայ համայնք մը գոյութիւն ունեցած է հոն: Առանց «հոգեւոր հօտի» ակնյայտ է, որ հոգեւոր առաջնորդի գոյութիւնը անիմաստ կ'ըլլար:

Սինչեւ XVIII դար Մերդինը³⁶³ վարչականօրէն մաս կը կազմէր Միջագետք-Իրաքի, ուր մշակութային մարած կեանքը դարձեալ կը վերակենդանանայ: Կը յիշուի, որ այստեղ կը գրուէր եւ կ'ընդօրինակուէր հայկական ձեռագիրներ: Ուստի պէտք է ենթադրել, որ այս գաղթօճախը այն թուականներուն ստուար թիւով հայ բնակչութիւն մը ունեցած ըլլալու է: 1452 թուականին Մերդինի մէջ, Յակոբ անուն գրիչի մը կողմէն գրուած ձեռագրի մը յիշատա-

³⁶² Աբրահամեան, նշ.աշխ., էջ 43:

³⁶³ Այժմ՝ Թուրքիայի հարաւային կողմը:

կարանին մեջ կը խնդրուի ընթերցողներն յիշել Յովհաննէս «վերատեսչին քաղաքիս» եւ Տավել անունով ուրիշ հոգեւորականի մը³⁶⁴։

Պաղտատի Ս. Երբորդութիւն եկեղեցւոյ ձեռագիրները³⁶⁵

Պաղտատի Ս. Աստուածածին եկեղեցւոյն 1762 թ. նուիրուած են երկու Աւետարան (1630 թ.)՝ խորանագարդ եւ նկարէ շրջանակով եւ ասոր նման կաշեպատ Աւետարան, արծաթեայ կազմին վրայ 1822 թ. յիշատակարանով։

Ձեռագիրներ Պասրայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ

Սեզի հասած են Պասրա ընդօրինակուած հայ մատենագրութեանը վերաբերող երկու ձեռագիրներ, առաջինը կատարւած 1734 թ., Պետրոս Մինասեանի, իսկ երկրորդը՝ 1772 թ., Թիֆլիսցի Աստուածատուր Դաւիթեանի ձեռամբ։ Այս ձեռագիրները այժմ կը պահուին Մաշտոցի անուան Մատենադարանին մէջ Երեւան³⁶⁶։

Ըստ Սերովբէ վարդապետ Սամուէլեանի (Պաղտատի առաջնորդ 1904-1907 թթ.)՝ Պասրայի եկեղեցին 1905 թ. ունէր եօթ ձեռագիր.³⁶⁷

Ա.- Փոքր Մաշտոց, ունի հետեւեալ համառօտ յիշատակարանը. «Ձերումդ սրբութեանն եւ պատուականութեանն կամ պատրաստական ծառայ, ժամարար Տէր Յովհաննէս Տէր Ստեփանոսեան, Ջուղայեցի կոչեցեալ»։ Մօտատրապէս 150 տարուան հնութիւն ունի եւ հաւանաբար գրուած է ի Նոր Ջուղա։

³⁶⁴Աբրահամեան, նշ. աշխ., էջ 51-53։

³⁶⁵Ալլոյաճեան, Իրաքի հայերը... նշ. աշխ., էջ 85-86։ Յ. Բիւրտեան, Հայկական Հնութիւնք՝ յէջմիածին, ի Թարիզ, ի Պաղտատ, «Սինո», Նոյեմբեր 1932, Երուսաղէմ, էջ 346-348։

³⁶⁶Տեղեկանք Իրաքի Հայոց 1974 էջ 16։

³⁶⁷Սերովբէ վրդ. Սամուէլեան, Պասրայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ ձեռագիրները, «Լոյս», Պոլիս, 1905, թիւ 26, էջ 636-639։

Բ.- Գիրք Պատարագաց կարգաւ ըստ ցուցման Տօնացոյցին Հայոց, սկսեալ ի յաւագ տօնից: Չունի որեւէ յիշատակարան, մօտաւորապէս 120 տարուան հնութիւն մը ունենալ կը թուի եւ պատրաստուած է հայ-հռովմէականաց գործածութեան համար:

Գ.- Աւետարան. Չորս Աւետարաններ Ըստ յիշատակարանի՝ Աւետարանս գրուած է Հնդկաստանի Սուրաթ քաղաքը, ձեռամբ Տէր Դաւիթ քահանայի, «Ընդ հովհաննու Սուրբ Ամենափրկչիս, ի թրւականիս ՌՃԺԱ (= 1662) եւ Օգոստ. ԺԸ, ի Կաթողիկոսութեան Տեառն Յակոբայ, որ է Ջուղայեցի, յառաջնորդութեան Ջուղայոյ Եպս.ին որ է Ջուղայեցի. Աստուած անփորձ եւ անսասան պահեսցէ մինչեւ ի խորին ծերութիւն. Ամեն»:

Դ.- Գանձարան, Ըստ առաջին յիշատակարանի «գրեցաւ այս հոգեւոր գանձարանս ի թվականութեան Հայոց ՋԻԱ (= 1272) ձեռամբ անարուեստ գրչի Յովանիսի, ի խնդրոյ պիտականուն Յակովբի, յետինս ի բանասիրաց, որ միայն անուանս եմ եւ ոչ գործով հեռի. Վարժեալ եւ սնեալ առ ոոսս Քաջ Հռետորի Սարգիս կոչեցեալ, ի Վանս Հերմոնի, ընդ հովանեաւ Սուրբ Լուսաւորչի եւ Սուրբ Յակովբ Եշանիս, ստացաւ զսա յիշա(տա)կ հոգւոյ եւ ամենայն արեանց մերձաւորաց իմոց, եւ շնորհեցի զսա իմ սերասնունդ աշակերտացն, Յովանիսի եւ Սկըրտիչ Քահանայիցն եւն.»:

Երկրորդ յիշատակարան մըն ալ կայ ատելի նոր գիրերով, որմէ կը հասկցուի՝ թէ յետ ժամանակաց, Սարտիրոս Վրդ. Եւ Պետրոս Կրանաւորն նուիրած են «զՍուրբ Տէրունական երգարանս Ի դուռն Ս. Յովհաննէս Սկրտչին (.) յիշատակ իւրեանց հոգւոյն, ի թըւին ՌՁԱ (= 1632)»: Ունի երրորդ նորագոյն յիշատակարան մը եւս, որով կը տեղեկանանք՝ թէ ՃԽԸ փոքր թուին (142 տարի առաջ) ոմն Գրիգոր որդի Պողոսի եւ Սէրջանի, նուիրած է գանձարանս Պարայի Ս. Աստուածածին Եկեղեցւոյն, ուր կը մնայ մինչեւ հիմա:

Ե. Ծարական.- Ծարականս գրուած է «ի թուին ՉԿԳ (= 1214), ձեռամբ տխմար գրչի եւ սուտ անուն «Քահանայի, որ Սարգսարէ անուն կոչի»: Գրքիս ստացողն է «Յովհաննէս սուրբ եւ ընտիր քահանայն»: Թեպէտեւ շարականս սկիզբէն մինչեւ վերջը մաքուր եւ դիւրընթեռնելի գրով գրուած է, սակայն «խոշորութեան եւ սխալանացն – կը գրէ գրիչը – աղաչեմ չլինել մեղադիր, զի ժամանակս

չար էր եւ ատրքս ձմեռնային, եւ ես ցնորեալ ի հոգք աշխարհիս եւս առաւել ի սատանայե՛:

Ուրիշ յիշատակարան մը.- «Վերստին նորոգեալ կազմեցաւ շարակնոցս ձեռամբ անարժանիս ի գիւղն *Ալիփոլդար, ընդ հովանէտ Սուրբ Աստուածածնին*, թուին ՌՃԽԲ (= 1693) ի ամսոյն Մայիսի Թ. արն Բ2.- *Կիրակոս*»:

Զ.- Յայսմաւորք մագաղաթեայ է սակայն, դժբախտաբար որեւէ յիշատակարան չունի եւ առնուազն 500 տարուան հնութիւն մը ըլլալ կ'ենթադրուի:

Ե.- Յայսմաւորք Գրուած է ի քաղաքն Խիզան ի թուին ՌՕԱ (= 1602) «ձեռամբ տգէտ եւ անարժան գրչատրիս Խաչատուրիս. Եւ Միմաւոն պատուական քահանայի, ի Հայրապետութեան Մելիքսեղէկ Կաթողիկոսին եւ յարքեպիսկոպոսութեան աստուածապահ քաղաքիս (Հին) Ջուղայոյ Տէր Յովսէփի եւ Մեծի Բարունապետի Տեառն Անանիայի»: Յայսմաւորքս իւր ընդարձակ յիշատակարանին մէջ բաւական նիւթեր կը պարունակէ եկեղեցական պատմութեան վերաբերեալ:

Ուշադրութեան արժանի է, որ Անգլիոյ Պըրմինկիըմ քաղաքի Մէլի Օք արուարձանի քուէճներէն մէկուն կեդրոնական մատենադարանի մէջ անցեալ դարու 60-ական թուականներուն ցուցադրուած են XVII դարուն գրուած ուրջ հայկական ձեռագիրներ, որոնք կը գտնուէին Մինգանա (Mingana) հաւաքածոյին մէջ, եւ ցարդ չէին ուսումնասիրուած: Այս ձեռագիրները յիշեալ մատենադարանին նուիրուած են Ալֆօնս Մինգանայի³⁶⁸ կողմէն, որ իր ամբողջ կեանքը նուիրած է բազմալեզու ձեռագիրներ հաւաքելու գործին, եւ ի շարս բազմահազար արաբերէն, սիրիաք եւ այլ լեզուներով ձեռագիրներու, գտած ()^{օօ} է նաեւ վերոյիշեալ հայկական ձե-

³⁶⁸Alphonse Mingana (1881-1937) (Հուրմուզ Մինգանա, ծնունդով ասորի), բրիտանացի աստուածաբան, պատմաբան, գիտնական, արեւելագէտ, բանասէր, ծնած է Իրաքի Շարանըշ ասորական գիւղին մէջ, որ կը գտնուի Զայսոյի հիւսիսը: Մինգանայի հաւաքածոն կը պարփակէ 3000 ձեռագիրներ 20 լեզուներով՝ ինչպէս արաբերէն, սիրիաք, վրացերէն, եբրայերէն, յունարէն, հայերէն, եթովպերէն, եւայլն (տե՛ս Mingana collections of Oriental Manuscripts – Archives Hub. <https://archiveshub.jisc.ac.uk>, այցելութիւն՝ 29-02-2020):

ռագիրները եւ ապա զանոնք նուիրած յիշեալ մատենադարանին իր մահէն առաջ: Այս ձեռագիրներէն մէկը գրուած է Պասրա 1793 թուականին, գրիչն է Տէր Աբրահամ, վատորակ թուղթի վրայ, չափն է 17 X 12 սմ. եւ կազմուած է ժամագրքի թերթերով:

4 ՏՊԱՐԱՆ ԵՎ ՄԱՍՈՒՒԼ

Պաղտատի մէջ առաջին հայկական տպարանը բացուած է 1874 թուականին: Մինչ այդ դասագիրքերը կը պատուիրուէին Պոլիսէն կամ այլ վայրերէ: Սակայն փոխադրական անկանոնութեանց եւ յապաղումներու պատճառով շատ ուշ կը հասնէին Պաղտատ եւ հետեւաբար, չէին ծառայէր նպատակին: Ուստի, Յակոբ եւ Գաբրիէլ Թաղեոսեան եղբայրները գեղեցիկ զաղափարը կը յղանան հիմնելու տպարան մը, ուր Ս. Թարգմանչաց դպրոցի համար պիտի տպագրուին դասագիրքեր, Սաղմոսներ, Շարականներ եւ այլն: Տիգրանակերտցի Յակոբ Յովհաննէսեանի կամ աւելի ծանօթ Խալֆա Յակոբի հեղինակութեամբ լոյս կը տեսնեն այբենարան եւ քերականութեան դասագիրքեր: Յովհաննէսեանը, որ Ս. Թարգմանչաց վարժարանին մէջ ուսուցիչ էր, 1876 թուականին կը հրատարակէ նաեւ զբաբար քերականութեան գիրք մը Սամուէլ աղա Գեորգեանի մեկենասութեամբ:

Դաւիթ Թաղեոսեան իր յուշերուն մէջ կը յիշէ, թէ այս գիրքերէն քերական մը եւ Սաղմոս մը Տ. Ներսէս վրդ. Սայեղեանի (Հայ կաթողիկէ համայնքին պատկանող հոգեւորական) խնդրանքին համաձայն, իրեն յանձնած է, որոնք Վիեննայի Մխիթարեան վանքը դրկուած են իրենց թանգարանին մէջ տեղադրելու համար³⁶⁹:

1890-1892 թթ. Ս. Սվաճեան կը հրատարակէ «Փունջ» անունով տպագիր շաբաթաթերթ մը, Թաղեոսեան եղբայրներուն տպարանին մէջ, վերոյիշեալ դպրոցին յառաջադէմ աշակերտներուն խմբագրութեամբ: Նմանապէս տեղական լուրեր եւ զանազան յօդածներ եւս լոյս կը տեսնէին:

«Տիգրիս» անունով խմորատիպ պարբերաթերթ մըն ալ հրատարակուած է Պաղտատի մէջ, բժիշկ Գուրգէն Փափագեանի կողմէն, 1924 թ. իր ուսուցչական պաշտօնավարութեան ընթացքին: Լոյս կ'ընծայէ միայն 2-3 թիւեր:

³⁶⁹ Թաղեոսեան Դ., Իրարսահայ թեմի..., Պաղտատ, ևշ. աշխ., էջ 159-160:

1920-ական թուականներուն, Պաղտատի «Մուրբ Կաթողիկէ Տպարանը» հայկական բաժին մը ունեցած է, ուր ի մէջ այլոց հրատարակուած են գեղարուեստական աշխատութիւններ ինչպէս նաեւ հոգեւոր-կրօնական գրքոյկներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

- Արդեն հաստատուած իրողութիւն է, որ հայեր բնակչութիւն հաստատած են Միջագետք (Իրաք)ի տարածքին հնագոյն ժամանակներէն եւ հանգամանքներու բերումով, երբեմն շատ կենսունակ եւ երբեմն ալ գրեթէ անհետացած են այս երկրի դարաւոր պատմութեան թատերաբեմէն:

- Իր աշխարհագրական դիրքին շնորհիւ Միջագետքը դարեր շարունակ եղած է մեծ տէրութիւններուն ուշադրութեան կեդրոնը, ուր հայեր տարբեր ժամանակներուն եւ տարբեր պատճառներով, հաստատուած են այնտեղ եւ պայմաններուն ներածին չափով, ծաւալած են աշխոյժ գործունէութիւն, առաւելապէս առետրատնտեսական ասպարեզին մէջ:

- Պատմութեան հեռաւոր խորքերուն մէջ, Միջագետքը Հայաստանի հարաւը գտնուող հարեւան երկիրներէն մէկն էր, եւ հայ ժողովուրդը, իբրեւ առետրական կենսունակ ազգ, մշակութային եւ քաղաքական սերտ յարաբերութիւններ ունեցած է իր երկրի հարաւային դրացիներուն հետ, որուն վառ ասպացոյցը սեպագիր արձանագրութիւններն են, Պեհիսթունի քարածայտին վրայ Աքեմենեան Դարեհ արքայի ձգած արձանագրութիւնները (հայագի Արախայի ապստամբութիւնը եւ գայն ճնշելու պարագան): Օտար աղբիւրները նոյնպէս կը վկայեն հայերու հաւանական գոյութեան մասին այս երկրի տարածքին, ինչպէս Հերոդոտոս, Պլուտարքոս, ֆրանսացի պատմագէտ Ժօրժ Բու եւայլն: Ըստ երեւոյթին, Բաբելոնացիներու եւ դարեր ետք Իրաք նուաճած արաբներուն համար, բուն հայկական բարձրավանդակը եւ հայկական հողը (վերջիններուս պարագային) եղած է սուրբ հող եւ առասպելի, դիցաբանութեան ու գաղտնիքի երկիր մը³⁷⁰:

- Խնդրոյ առարկայ թեման կ'ընդգրկէ Միջագետքի պատմութեան տարբեր դարաշրջաններ, ամենապայծառ եւ ամենաձաղկուն շրջաններէն (Ասիպասեան տիրապետութեան ժամանակ) մինչեւ Կեդրոնական Ասիայէն ներխուժող բարբարոս ցեղերուն կողմէ երբեմնի այս շէն ու բարգաւաճ երկիրը աւերակներու վերածուած խաւար շրջանները: Բնութիւնն ալ կարծես դաշնակցած էր բարբարոսներուն հետ եւ վերջիններուս պակաս ձգածը լրացուցած բնա-

³⁷⁰ الدكتور جواد كاظم البيضاوي، ارمينيا في المصادر العربية الإسلامية – بغداد 2018. Արաբական-խալամական սկզբնաղբիւրներու մէջ, Պաղտատ, 2018):

կան աղետներով եւ պատուհասներով, ինչպէս՝ ժանտախտի համաճարակները եւ իբր հետեւանք՝ յառաջացած սովերը: Այստեղ բնակութիւն հաստատած հայորդիները, բնականաբար, գերծ պիտի չմնային հալածանքներէ, բռնութիւններէ, որոնց փաստազրուած գոյութիւնը, ինչպէս տեսանք, տարբեր ժամանակներուն նպաստած է հիւրընկալ երկրի զարգացման որոշ ոլորտներուն մէջ:

- Իրաքի գաղութի բարգաւաճումը սերտօրէն առնչուած է տեղական իշխանութիւններուն վարած բարեացակամ քաղաքականութեան, կամ հակառակը, ենթարկուած է բազմապիսի կտտանքներու, ինչպէս սելճուկ, մոնկոլ, թաթար-թուրք բռնատիրական արարքներուն, որոնցմէ անմասն պիտի չմնային նաեւ հայ համայնքի զաւակները: Այնուամենայնիւ, Իրաք ապաստանած Նոր Ջուղայի վաճառականները, իրենց գործօն եւ խիստ ակնառու մասնակցութիւնը բերած էին իրենց նոր «հայրենիքին»՝ Իրաքի տնտեսական վերելքին, յատկապէս XVII եւ XVIII դարերուն, երբ երկիրը կը հանդիսանար Օսմանեան կայսրութեան հեռաւոր եւ յետամնաց բնակավայրերէն մէկը, ուր խաւարն ու տգիտութիւնը համատարած եւ տիրապետող էր:

- Հակառակ երկրին մէջ տիրող եւ՝ քաղաքական եւ՝ քաղաքացիական աննպաստ պայմաններուն, յաճախակի դարձած հալածանքներուն եւ ճնշումներուն, որուն ենթարկուած էր տեղացի բնակչութիւնը, ինչպէս նաեւ հայ եւ ուրիշ փոքրամասնութիւնները, հայուն բեղուն եւ մշտահոս միտքը երբեւիցէ չէ դադրած ստեղծագործելէ: Միջազգետքի մէջ XVII դարու ութսունական թուականներուն Պաղտատ կը դառնայ Մերձաւոր Արեւելքի հայ գրչութեան օճախներէն մէկը: Մեզ յայտնի են այս օճախին մէջ գրուած եւ մանրանկարուած քանի մը ձեռագիրներ³⁷¹:

- Իրաքի հայ համայնքի ամենաձաղկուն եւ տնտեսապէս բարգաւաճ շրջանը XVIII դարու երկրորդ կէսն է, երբ երկրի հարաւային շրջանները, յատկապէս Պասրա քաղաք-նաւահանգիստը, կը դառնայ տարանցիկ առեւտուրի կեդրոն, ուր տեղափոխուած Նոր Ջուղայի հայ վաճառականները կամ իրենց գործակալները կը ծաւալէին աշխուժ առեւտրական գործունէութիւն: Ամենայն Հայոց կա-

³⁷¹ Աբրահամեան Ա., նշ. աշխ., էջ 42 (Չ. Վ. Տաշեան, Յուցակ Ձեռագրաց Կիեննայի Միսիթարեան Մատենադարանի, էջ 31):

թողիկոսարանի վաերագիրներն կը տեղականանք, որ Իրաքի թեմը համարուած է «տերունի», այսինքն՝ Էջմիածինին անմիջապէս ենթակայ թեմ: Այդ թեմի մէջ մտած կարելոր կեդրոններն կը յիշուին Պաղտատը, Ղարաչորան, Պասրան, Բանդար Բուշիրը, Խարկը, Բանդար Ապպասը եւ ասոնց յարակից գիւղերն ու ւանները³⁷²: Ուրեմն, Իրաքի գլխաւոր քաղաքներն բացի, հայեր բնակութիւն հաստատած են նա՛նք քաղաքամերձ բնակավայրերուն մէջ:

- Ժանտախտի յաճախակի հարուածները ճակատագրական եղած են Իրաքի տարածքին ապրող ողջ բնակչութեան համար: Համաճարակի հարուածներն յաճախ քաղաքներն ամբողջապէս կամ մասնակի ամայացած են, որ բնականաբար բացասական կերպով պիտի ազդէր տուեալ քաղաքներուն մէջ ապրող ժողովուրդներուն, ներառեալ հայերուն թուաքանակի, առողջութեան եւ տնտեսութեան վրայ եւ պիտի յանգէր իրենց ունեցուածքի կորուստին: Պասրա քաղաքը, հանդիսանալով երկրի միակ նաւահանգիստը, ուր տարբեր եկիրներէ եկած նաւեր կը խարսխէին, շատ աւելի խոցելի էր՝ համեմատած միւս մարդաշատ քաղաքներուն: Հայր Ս. Չամչեանի վկայութեամբ, 1771 թուականին Պասրայի մէջ (ուր կը գտնուէր նաեւ վարդապետը) մոլեգնող համաճարակէն մահացած են 55000 հոգի, որմէ 4000-ը հայեր եղած են: Ուրեմն Պասրայի մէջ այս թուականին, հայերու թուաքանակը կը գերազանցէր 4000-ը:

- Մինչեւ XX դար, Միջագետքի Հայ Առաքելական Սայր եկեղեցին եղած է թէ՛ հոգեւոր եւ թէ՛ ազգային միակ փրկօղակը, որ դարերու ընթացքին, զօդեր եւ համախմբեր է համայնքի գաւակները այդ սրբազան կառոյցի հովանիին ներքոյ, հակառակ երկրին մէջ տիրող երբեմն շատ աննպաստ պայմաններուն, նաեւ XVIII-XIX դարերուն տեղի ունեցած միջ-դարանական վեճերուն, որ տեղի կուտար շատ տգեղ միջադէպերու եւ կը վարկաբեկէր հայերը օտարներուն առջեւ:


- Վերջապէս, վաղնջական ժամանակներէն Իրաքի մէջ բնակութիւն հաստատած հայորդիները յատկապէս 1638 թուականէն ետք, փաստօրէն հիմնադիրները եղան այս երկիրին մէջ հայկական վերակազմեալ գաղութին: Հայերը իրենց աշխատասիրու-

³⁷² Դիւան Հայոց Պատմութեան, հատոր III, էջ 801: Աբրահամեան Ա., նշ. աշխ., էջ 45:

Թեամբ եւ քաղաքացիական դրական նկարագիրով, արժանացան տեղացի ժողովուրդին յարգանքին եւ համակրանքին, որ շատ էական դեր պիտի ունենար յետագային՝ XX դարուն այս հիւրընկալ երկիրը ապաստանած ստուարաթիւ արեւմտահայ գաղթականութեան:


Յաւելում Թի 1

Թուրքա (Ֆերման) Սուլթան Սեհմետ 4-րդի, թուական՝ 16 Սեֆեր 1058 (12 Մարտ 1648) Փաղիշահի կայսերական հրովարտակը՝ Պաղտատի Կէօք Նազար թաղամասին մէջ գտնուող Սուրբ Աստուածածին եկեղեցոյ մասին է, ուր կ'ըսուի թէ՛ հինէն ի վեր այս եկեղեցին կը պատկանի հայոց: Որոշ ժամանակէ մը ի վեր ուրիշներ ձեռք ձգած են, սակայն ինչպէս յայտնի է, եկեղեցին հայապատկան է՝ ինչպէս որ առաջ էր, սուլթանական հրովարտակով նշուած հայապատկան եկեղեցիներուն եւ վանքերուն ոչ մէկ միջամտութիւն ըլլայ ու անոնց ձեռքէն չառնուի եւայլն: Կ.Պոլսոյ եւ շրջակայքի հայոց պատրիարք Յակոբի կնքուած խնդրագիրին համաձայն՝ տրուած կայսերական հրովարտակը պահպանուած է եւ գործած է ըստ այդմ:



Յաւելուած Թիւ 2

Թուղրա՝ Ապտիւլ Համիտ Ա.ի հրովարտակը ուղղուած՝ Պասրայի կառավարիչին, Կ. Պոլսոյ եւ շրջակայքի հայոց պատրիարք Զաքարիայի կնքուած մէկ խնդրագրին համաձայն: Պատրիարքութեան պատկան վայրերուն մէջ գտնուող եկեղեցիներն ու վանքերը հինէն ի վեր կը պատկանին ու կը գտնուին հայոց հսկողութեան եւ իրաւասութեան ներքոյ: Վերոյիշեալ պատրիարքը իրաւունք ունի, արարողակարգին համաձայն՝ առաջնորդներու, վարդապետներու ու քահանաներու պաշտօնի նշանակել կամ պաշտօնանկ ընել, որուն ոչ ոք կրնայ միջամտել: Վերջինս, պատրիարքութեանը ենթակայ Պաղտատի եւ Պասրայի մէջ բնակող հայութեան համար քահանայ մը կը նշանակէ, քահանան իրեն տրամադրուած տան մէջ կը բնակի, ուսուցում, ընթերցանութիւն եւ արարողութիւն կը կատարէ: Ուրիշ մը միջամտելու իրաւունք չունի: Պէտք է գործել ըստ կայսերական հրովարտակի մէջ նշուած պայմաններուն եւ հայ համայնքի կողմէն քահանան չ'ոտնահարուի ու չհարստահարուի: (Ռաբի էլ ախրը 1195 (Մարտ-Ապրիլ 1781): Ֆերմանի լուսապատճենը յաջորդ էջին.



Յաւելուած Թիւ 3

Պաղտատի Ս. Աստուածածին եկեղեցւոյ ներսը առկայ են բազմաթիւ խաչքարեր (կամ խաչքարերու կտորտանքներ պատերուն ամրացուած): Ստորեւ ասոնց յիշատակարանները ամբողջութեամբ, որոնք արտագրուած են Յ. Քիրտեանի կողմէն 1932թ. զանոնք վերջնական կորուստէ փրկելու համար.

Եկեղեցւոյ ներքին կողմը՝ պատին մէջ՝ երկաթագիր.

Թիւ 1 «Յիշատակ է սբ. Խաչա Շոռոթցի
Մանուկի որդի Պօղոսին եւ
Ծնողացն հոգուն թիվն ՌՃՂԹ-ին (1750)

Թիւ 2 Նոյնպէս չորս տող, մեծ մասամբ ջնջուած
Սբ. խաչա պահապան ... օգնական
.... պահ
պան Գեւորգա գորավարին
.... ՌՃՂԸ (1749)

Թիւ 3 Նոյնպէս չորս տող, միայն վերջինը կը կարդացուի
«Թուին փրկչին ՌԷՃԾԱ (1751)»

Թիւ 4 Նոյնպէս.
«Յիշատակ է սբ. Խաչա Շոռոթցի հանգուցեալ Թորոսի
որդի Բարխութարին թվին ՌՄ...»

Թիւ 5 եւ 6, երկու արձանագիր մանր խաչքարեր:

Թիւ 7 նոյնպէս. Յիշատակ է խաչա Ղափանեցի Պօղոսի որդի
Յակոբին³⁷³ Թվին ՌԲԸ.ին (1751)

Թիւ 8 Խաչքար, կիսով թաղուած եւ անընթեռնելի

Թիւ 9 Խաչքար

«Յս. Քս.» - «Յշտկ. է խաչա Ղափանեցի Պօղոսի որդի Յակոբին
թուին ՌՃՂԸ ին (1749) Թիւ 10 Նոյնպէս.

Յշտկ. է խաչքարս Ագուլեցի Մովսէսի որդի Նահապետին ծնողաց
ու իւր թոռին ՌՃՂԹ (1750)

³⁷³ Ալպոյաճեան Ա., Իրաքի շայերը, էջ 81: Ղափանցի Պօղոսի որդի Յակոբ կը յիշուի Սիմեոն Երեւանցի կաթողիկոսի նամակներուն մէջ: Հաւանական է, որ ան վաճառական մըն էր եւ ընկերը Շոռոթցի Մկրտիչ աղայի («Դիւան», Գ., էջ 569):

Թիւ 11 Խաչքար, ունի միայն

«Յս. Քս.»:

Թիւ 12 նոյնպէս փճացած, կը կարդացուի «Դարթի» անունը:

Թիւ 13 Տապանաքար. կէս փճացած, հիւսուած պատին մէջ.

«Այս է տապանն

Հանգստեան Շիրազ

եցի Յովհաննէսի կող

ակից Հռիփսիմէին ...

....պանծալի դժխոյ

.....

.....

Հետաքրքրական է յաջորդը.

Թիւ 14. Վերնոյն կից կայ ուրիշ բարձրաքանդակ տապան մը լաւ վիճակի մէջ.

«Մինչ պառլարէն դու ինձ հայիս

Գիտիս զինչ կայ այս տապանիս

է մարմին Տն. Վրթանէսիս

Հնդկաց երկրի նուիրակիս

Ի վճարել եմ հասակիս

Աստ Վախճանեալ եղա ի շիրիմիս

Որ ի ծոց հորս եւ ուսուցիչիս

Տոն. Յակոբայ արհի դէտիս (պետիս?)

Մնալով կարօտ ես եղկելիս

Միածնաէջ միածնողիս

ԹՎին 1824 դեկտեմբերի 11իս»:

Թիւ 15, Տապանաքար.

«Այս է տապան նվիրակի հանգուցեալ սրբ. Էջմիածնի տեառն Յակոբայ արքեպիսկոպոսի հանգեալ ի ՔՍ. 1809 թվ.»:

Թիւ 16, Քառասուն՝ Մանկանց վիմափոր պահարանին պզտիկ վանդակապատին առջեւ կայ մեծ մոմկալ մը հետեւեալ արձանագրութեամբ.

«Իթվին ՌՊԻԳ (1829). Յիշատակ է ճաճանչս այս սբ.ածածնայ. եկեղեցոյն Պաղտատու Պոլսեցի Դաւիթին,

Ալէքսին (մենագիր մը) եւ իւր ննջեցելոցն մարտի ԻԸ (28)»:

Թիւ 17, Նոյն պահարանին մէջ մասնապահ, կիսակլոր, մարմար տապանին վրայ երկաթագիր.

«Մբ. Յովհաննէս, Մբ. Աթանազիւն եպիսկոպոսին, Մբ. Գեորգ, Մբ. Կիրակոսին ԹՎին Ռ երկու Ճ (1751)» մանրագիր «. . . երախտատրս»։ Իսկ աւելի վարը երկու տող. «Յիշատակ է Ղափանցի Պօղոսի որդի Ակոբին ՌԺՃ (1751)»։

Թիւ 18, Տապանին վրայով պատին մէջ հիւսուած խաչքար.

ԱՄ. + Է + ՅՔ.

«Յշտկ. Է սբ. Խաչա Վանեցի Մուրատի որդի Մարգիսին եւ տիրացու Աղէքսանդրին եւ Վարդանին թվն. ՌՃՂԸ (1749)»։

Թիւ 19 եւ 20, Խորանին երկու կողմերը երկու խաչքարեր անարձանագիր։

Թիւ 21, Խորանին միակ իւղաներկ Աստուածամօր նկարը.

«Յիշատակ Տէր գնուիրողին

17 օգոստոս 1914

Սահտեսի Թագուհի Սահակեան»։

Թիւ 22, եկեղեցոյն բակի պատին մէջ հիւսուած Տապան.

«27 Յունիս 1896 Տիկին Անթառամ Քերովբէ Սեթեանի»։

Թիւ 23, Վերինին մօտ ուրիշ տապանաքար մը անընթեռնելի։

Թիւ 24, եկեղեցոյն ներքին կողմը, աջ պահարանին ներսը, պատին հիւսուած կիսով թաղեալ բարձրաքանդակ տապանաքար մը.

«. . ծա շիրիմ դու գովելի

Բարելոն մեծ քաղաքի

. . . եղ կայ լուր այր բարելի

. . . ս ազնիւ եւ մահտեսի

Եղեալ ազգէն աղէքսանդրի

. . . աւորեալ դու ի մարմնի

. . . նէ սրտի . . . կրկնակի

Տեսեալ ծառայ բարի

. . . արքար յոյժ ցանկալի

. . . ական գոյ անուանի

Ամենեցուն հոգաց երկրի

. . . է քս. Քաջ տարածանի

. . . է խոնարհ առաքինի

Համայն ազգաց հայոց . . .

. . . րհասեալ կէտ վախճանի

Ի ցաւոք մահուամբ . . .

. . . վաթսուն հինգ ամի

Հանգեալ ի կենաց աստի
Ամփոփեցաւ այս դի
Դաւիթեան Աստուածատուր
Ի թվին ՌՄ . . .»:

Վերջին երկու տողերը խնդրական են:

Ասոնցմէ զատ՝ հոս ու հոն եկեղեցոյ պատերուն հիւսուած (ներքին կողմը) պատուհաններուն մէջ կ'երեւան հայերէն արձանագրութեամբ քարերու կտորներ:³⁷⁴

..

³⁷⁴ Յ. Քիրտեան, Հայկական Հնութիւնք ի Պաղտատ, «Միոն», Երուսաղէմ, 1931, էջ 56-58:

Յաւելուած Թիւ 4

Ալապաստրէ ութանկիւն այս տուփը, զետեղուած Պաղտատի Ս.Աստուածածին եկեղեցոյ ներսի ձախակողմեան որմին մէջ, վանդակապատ պատուհանի ետին (պատկերը տես Յաւելուած Թիւ 19) կը բովանդակէ Ս. Յովհաննէսի, Ս. Աթանազիսի, Ս. Գեորգի եւ Ս. Կիրակոսի մատուցներէն մաս մը եւ ըստ կափարիչի արձանագրութեան՝ տեղադրուած է 1663 թուականին: Ութանկիւն տուփին վրայի այս արձանագրութիւնը կարելոր ապացոյց մըն է, որ կը կրէ նաեւ Ս. Աստուածածին եկեղեցոյ հիմնադրութեան թուականը հայկական տառերով՝ ՌՁՃԼԹ, որ կը համապատասխանէ 1639 Փրկչական թուականին:



Հետեւեալ ոտանաւորի հեղինակն է Մարտիրոս վրդ. (ապա եպս.) միաբան Ս.Էջմիածնի, որ վերջը կ'ըլլայ միաբան Ս. Երուսաղէմի 1750-ական թուականներուն: Այս ոտանաւորը կը գտնուի Ս. Երուսաղէմի Աթոռոյ Ձեռագրաց Մարտենապարանի թիւ 273 ձեռագրին մէջ, որ կը պարունակէ օրհնութիւնք քարոզի եւ ոտանաւորք նոյն հեղինակէն: Ոտանաւորը գրուած է Պաղտատի Ս. Աստուածածին եկեղեցոյ հանդէպ նեստրականներու ոտնձգութիւններու առթիւ: Հրատարակուած է Երուսաղէմի պաշտօնաթերթ «Միոն»ի մէջ, 1948 թ. 9-10 միացեալ թիւով, էջ 257-258, հրատ. Կ.Պ.:

Հակառակութիւն Նեստրաց ընդ Հայս
ի Բաբիլոն վան. Եկեղեցոյն

Ի Բաբելոն էի նուիրակ
Տեսի գաղէդս կոյտ բոլորակ,
Սակս տաճարին հոյլքն դեգերակ,
Գոյսըս ազգաց էր ի կուտակ:
Ազգ նեստրաց ինչիւք կանգնին,
Զմովպետն եւ զիրս լիացուցին,
Զտաճարն կորզել գուն գործեցին,
Անձամբ գոյիւք ի մարտ մըտին:
Իսկ հայք հայցմամբ յած. դիմել,
Լաց եւ արտասուք իբրեւ զգետ լեալ,
Բնակք եւ օտարք յոտին յարեան,
զերկիւղն հերքեալ հոսմամբ արեան:
հաւատացեալք գումարեցան,
եկք եւ բնակք ժողովեցան,
ի մեծ խորհուրդ կապակցեցան,
ծախել զինչըս պատրաստեցան:
Արեան քրքտունս հեղեալ հոսիր,
Յամէն անձնէ յորմէ լըսիր,
Գուժըն մանկանց Բեթղէհէմի,
Աստ տեսանիր բողոքալի:

Զանձինս եւ զգանձս ոչ խնայեցին,
Սաստկաւ յարեան սուր խընդրեցին,
արք եւ կանայք խըռնեալ զնացին,
տապաստ մահուամբ սփռիլ ուխտեցին:

Յետոյ Նեստօրք յոյժ զօրացան,

Գաղտ կաշառօք դարանեցան,

Եկեղեցոյ մերկ տիրեցին,

Սակաւ աւուրք տամբ խնդացին:

Սորին պատճէն կարի երկար,

Կըռիւ եւ կազ տուցան անկար,

Երկուց ազգացմեծ խռովութիւն,

Յինչից անկեալ յաղքատութիւն:

Տերամբ փըրկչին գութ սէր իջեալ

Ճըհդէ դարձեալ քեհեան անկեալ,

Մեր հայք կըրկին բողոք բարձին

Արքայական բաղամ ցուցին:

Եկեղեցոյ հայք տիրեցին,

պայծառ զգեստիւք զարդարեցին,

պարտքն տոկոսիւք վըճարեցին,

սակաւ սակաւ տեարս հատուցին:

Կայ այժմ յազգս մեր եւ վայելեն,

Զաստուած, անդ միշտ փառօք օրինեն,

Հայոց պարգել յերկնից իմա,

Զի ես լիով յոյժ հըմտեցայ:

Եկեղեցոյ կերտօղն յուզես,

Նալբանդ Մուրադ ներքեն խընդրես,

Յայտնի ընդ քեզ խօսիլ տեսցես

Հայր սուրբ մերիւ վարձ սուրբ հանցես,

Սուլթան Մուրադն էր ի Պաղտատ,

Ի պատերազմ հինիւք հաստատ,

Գործակալ ոմն կոչիւր Մուրատ,

Յազգէն հայոց կայսերն նալբանդ:

Նեստօր դիմեալ մեծ խըլաիւք,

Առ մեր Մուրատն խիստ աղերսիւք:

Եկեղեցոյ կառուցելոյ,

Ի կայսերէն հրաման առնլոյ:

Իսկ մեր Մուրատն առեալ հրաման
 Եկեղեցոյ զիր եւ ֆարման,
 Նեստօրք շինել եկեղեցոյ,
 վասպ իւրայնոց սուտ աղանդոյ:
 Հայոց տիրեալ եկեղեցոյն,
 թէպէտ կանխաւ նեստօրական
 իսկ այժմ հաստատ քրիստոսական:
 Վասն քաջութեան ի հոգեարի
 Նալպանտ Մուրատին:
 Վախճան հասեալ մեր Մուրատին
 Հրեշտակ կանգնեալ առնուլ զհոգին,
 Խրդճահարիւր ցաւեր ներքին,
 Խորհեալ կորզել զեկեղեցին:
 Ասէր զտեարն իմ ես մատնեցի,
 Եղէ ընկե չար Յուդայի,
 Զտերն իմ ետու փետեկտողի,
 Գարշ Նեստորին պիղծ օձտօղի:
 Շինել հերձօղն եկեղեցի,
 Վայ իմ հոգւոյս տերն իմ տանջի,
 Ի նեստորաց կրկին խաչի,
 Յերկունս մասունս նա անջատի:
 Արդ նալպանդ Մուրատն հիւանդագին
 Դիմօք խօսի ընդ կայսերին:
 Իսկոյն հարեալ ի սէր փրկչի,
 Առ մեծ արքան սիրով խօսի,
 Արքայ դու կաց ողջ ի կենի,
 Վասն Աստուծոյ, հեզ զգութդ տենչի.
 Զեկեղեցին զոր շինեցի,
 Իմոյ անձին, զնա կառուցի,
 Ի Բաբիլօն հաստատեցի,
 Քո րադամովն իմոյ ազգի:
 Իսկ այժմ տիրեալ ազգն Նեստօրի,
 Գերի ի ձեռն պիղծ աղանդի,
 Վասն Աստուծոյ ես մեռանիմ,
 սուրբ քիլիսէն ջոկեա տեր իմ:
 րադամ Ֆարման ազգի շնորհեա,
 որոյ կամիս իցէ նորս,

Իսկոյն արքան ասէ ցասմամբ,
քոյոյ ազգին յինէն շինմամբ:

Կրկին խօսի Մուրատն ընդ կայսերն

Մուրատն ասէ ո՛վ գեր արքայ
Հոգիս էհաս ղիս թուլանայ,
Ֆարման արա մեզ պարգեւեա
Ազգիս կընիք ի քէն արքայ:

կայսրն, սուլթան Մուրատն հրամայեալ:

Իսկոյն գրեալ գիր եւ ֆարման,
Եկեղեցին այն ան նըման,
Ի յաւիտեան հայոց ազգին,
Խլայ ի նարդեանս մեր Մուրատին:
Իսկ իւր ազգին մինչ ի կատար
Ի յաշխարհի ոյք կան օտար,
Ի Բարխլօն աղօթարան,
Ցըրուեալ Հայոց ժողովարան:

Հոգածութիւն Մուրատին, առնուլ զֆարման:

Նալպանդ Մուրատն առիալ զֆարման,
եղ ցազգըն մեր պահեստման,
ցուպ ամրութեան եւ գաւազան
համայն տոհմիս մերոյ հայկան:
Իսկ ոմն աղջիկ նեստորական,
Ընկեր հայի յամուսնական,
Զրադամըն այն արքայական,
Ետ գաղտաբար իւրոյ տոհման:
Իսկ առ իմոյ ժամանակի
Թեպէտ ֆարման կայր ներկայի,
Սակայն գյիշեալն ալ երբէք գտի,
Զի գաղեալ գոյր ի դարանի:

Յաղագս յարմարողի բանիս

Եթէ գտըկարս որոնիցէք,
Մըրտոյ անուամբ զիս իմացէք,
Ի սուրբ սուլթան էի դըպիր,
Մոնթ եւ տղայ լաւ գըրագիր:
Մինաս անուամբ վարդապետի,
Տեղւոյն սրբոյ առաջնորդի,
Յետոյ եղեալ Գրիգորիս,
յէջմիածին կաթուղիկոս:
Յետոյ ըզկնի Աղքսանդրիս,
յէջմիածին կաթուղիկոս,
երկրաւ էր սա բուզաբդեցի
իսկ իմ տեսեալ զնա ի շիրմի:
Դեռ ի նոյնում սուրբ վեհութեան,
ի դէպ սաղիմ ի փըրկութեան,
առ փըրկչին սէր երանութեան,
ի սուրբ Յակոբ որդիութեան,
չըվել սիրով յոյժ բաղձայի,
ելանելն իմ խիստ ցանկայի
ի ռահ ի դէպ հարաւայի,
տերամբ եղեւ զոր հայցէի:
Էր անդ մեծ պետ սուրբ հրաշագործ,
Ճոխ պատրիարք Թեոդորոս,
Նահանգաւ էր քիւրտիստանցի
Մըշու երկրէն Խորենացի:
Աշակերտեալ գրիգորիսի,
Երկրորդ մերոյ լուսաւորչի,
Յետոյ ըզկնի այլ սըրբազան,
Նոցին սերունդ ըստ կըրթութեան:
Իսկ նահանգաւ արեւելեան,
Խիստ հոգեզգօն խորհըրդական,
կըրթեալ առ ոտս վերոյ պետաց,
սա կենճեցի իսկ խորիմաստ:
Անուամբ սա մեծ կարապետի,
Վարուք իսկ նմա համեմատի,
ի սբ. սաղիմ մեծ դիտապետ,


բոլոր ազանց անդ հայրապետ:
Ով քահանայք աղօթեցէք,
Եւ զարարիչն պաղատեցէք,
զերախտիս այս խորհելով
զհամայնս յիշէք հայր մեր սրբբով:
Եւ միշտ օրհնել հոգւոցն երգել,
Պատարագօք լուսաւորել,
յաղօթից սբ. փրբկանս հանել,
տր. ռդորմեայ յաւէտ ասել:
Զյիշեալ նուիրակս Էջմիածնի,
զտր. Մարտիրոս մեղօք արհի,
վս.յսի. յիշել մաղթեմ,
զի յայսմ կազի տըրբուպս եւս եմ:
Տուգանաց փողն հաւաքեցի,
յազգէս կուտեալ ժողովեցի,
ծերոյ տղայոյ ոչ խնայեցի,
առատ լիով տրբ. Խընդրեցի:
Տրն. Չայնիւն մեծ իշխանի,
որ երախտիս յովով ունի,
փողըն բոլոր տուգանս տըւաք,
եկեղեցեաւս ազգաւս զերծաք:

Հրատ... Կ.Պ.

Յաւելուած թիւ 6


Մուսուլի Ս. Էջմիածին եկեղեցւոյ ճակատին գրուած՝

«Կառուցաւ Սուրբ Տաճարս Էջմիածին Անուամբ
Արդեամբ Ազգիս Հայոց բնակելոց ի բաղդատ
եւ աստ. Աշխատասիրութեամբ Առաջնորդ
Մեսրոպ Ծ. Վրդպ.
Ի 1857 յամի յունիս 7



Յաւելուած Թի 7

Պաղտատի Ս. Երրորդութիւն Եկեղեցոյ ճակատի արձանագրութիւնը



Ողորմութն ԱՅ կառուցաւ Սբ. Տաճարն Յանուն ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ, ի Հայրապետութեան ՏՏ ՆԵՐՍԷՍԻ Է. Կաթողիկոսի ամենայն Հայոց եւ ի Պատրիարքութեան Կ. պոլսոյ Տ. ՅԱԿՈԲԱՅ Արքեպիսկոպոսի Արդեամբ եւ ծախիւք Բարեպաշտ Ազգիս Հայոց բնակեալք ի Բաղդադ ԸՆկալեալ զօծումն յԱզգասեր Առաջնորդէ տեղոյս Տր. ՄԵՍՐՈՎԸ Վարդապետէ Կ.պոլսեցի որոյ անխոնջ աշխատասիրութեամբ ի հիմանէ մինչ ի յաւարտ եւ ի լրումն ժամանեալ անթերիթեամբ պատկեցաւ: Յամի ՏՆ 1852 Դեկտեմբերի 21:

Ստորև Պաղտատի Ս. Աստուածածին եկեղեցւոյ արտաքին եւ ներքին որմերուն զետեղուած խաչքարերուն պատկերները:

Յաւելուած Թի 8





Յանդրած թիւ 10



Պաղտատի Ս. Աստուածածին եկեղեցւոյ (1639 թ.) Ս. խորանը











Յաւելուած թիւ 16

Հետեւեալ տապանագիրը կը պատկանի Հնդկաստանի նուիրակ Յակոբ Արքեպիսկոպոսին, որ Հնդկաստանի մէջ Ս.Էջմիածնի օգտին 25 լիտր ոսկի հանգանակելէ ետք, վերադարձի ճամբուն իր մահկանացուն կը կնքէ Պաղտատի մէջ եւ կը թաղուի այս քաղաքի պարիսպէն դուրս: Սակայն, Երուսաղէմի պատրիարք Թեոդորոս Վանեցիի ջանքերով եւ Պաղտատի մէջ Բրիտանիայի լիազօր ներկայացուցիչ Բլոդիոս Բիչի միջնորդութեամբ, երջանկայիշատակ Տ. Յակոբի աճիւնները կը փոխադրուին Պաղտատ եւ կը վերայուղարկուորուին Ս.Աստուածածին եկեղեցոյ մէջ:

«Իմ Յակոբայ Արհիդի	տիս
Հնդկաց երկրի նուիրա	կիս
Ի յաւարտիլ գործոյն որ	յիս
Ձեռն Տեառն մխեցաւ	յիս
Մինչ սուրբ գահիս եւ ծնո	ղիս
Եթող կարօտ ողորմէ	լիս
Ի ննջմանէս մինչ վեց	ամիս
Մնացի ի դաշտին Բաբիլօ	նիս
Ապա շնորհիս իմ որդե	կիս
Տէր Վրթանէս վարդա(պե)	տիս
Տեղափոխեալ եղայ շիր	միս
Հանգեայ ես այս ի ծոց Հար	սիս:

Յամի Տեառն 1809 Հոկտեմբերի 21 ի Բաբելոն»:³⁷⁵

..

³⁷⁵ Սերովբէ Կարնեցի, Ուղեգրութիւն Բաղդադից Էջմիածին 1812 թ., էջ 9-10:

Երուսաղէմի Պատրիարք Թեոդորոս Վանեցիի անգլերէն նամակը՝ ուղղուած Քլոդիոս Ջէմս Բիչի, քաղուած “Baghdad in Bygone Days” գիրքէն, էջ 83-84: Յակոբ արք.ի աճիւնները Պաղտատի պարիսպէն դուրս թաղուած եւ զայն Ս. Աստուածածին եկեղեցին փոխադրելու վերաբերեալ.

“Some curious letters written in Armenian still exist. There is one from the Armenian Patriarch of Jerusalem, the Reverend Theodorus Vartapet, which is addressed to H.E. Claudius James Rich, esq., the Resident Councillor of the Victorious and Most Renowned British Empire in Baghdad. After a flowery and effusive opening, he continues:-

Likewise I have heard about your sympathy and protection of the Armenian people, who are suffering and without protection. Moreover, your splendid and gallant work when Arch. Hakob, the religious delegate of St.Edjmiadzin, died there, they buried his body in a grave outside the town. On hearing this, after a few months, at once your Excellency made necessary arrangements to bring his holy body from outside the town, to be buried in a church in the town. Indeed, this is a very admirable work in a country like this and in a town like that, for we had never heard that such a thing was possible in this kingdom, and this is a work that the Armenians will be proud of. And now with this letter I send many thanks to you for the work you have done for my people, which I consider as done to myself and my Convent.

November 1810.”

Թարգմանութիւն

«...նմանապէս լսած եմ ձեր համակրանքին եւ հովանաւորութեան մասին հանդէպ հայ ժողովուրդին, որոնք կը տառապին եւ անպաշտպան են:

Իրագեկուած եմ նաեւ ձեր հոյակապ ու ասպետական արարքի մասին, երբ Յակոբ արքեպիսկոպոս՝ Էջմիածնի հոգեւոր նուիրակը վախճանեցաւ հոն, մարմինը թաղեցին քաղաքէն դուրս գերեզմանի մը մէջ: Քանի մը ամիս ետք, ձերդ վսեմութիւնը այս լսելով անմիջապէս պետք եղած կարգադրութիւնը ըրաւ անոր սուրբ

մարմինը փոխադրելու քաղաքադուրսէն եւ յուղարկատրելու քաղաքի եկեղեցիի մը մէջ:

Իրապէս ասիկա հիանալի գործ մըն է այս տեսակ երկրի մը մէջ եւ նման քաղաքի մը մէջ, առաւել եւս այսպիսի կայսրութեան մը մէջ: Ասիկա արարք մըն է, որուն համար հայեր հպարտ պիտի զգան ինքնզինքնին:

Սոյն նամակով շնորհակալութիւնս կը յայտնեմ՝ իմ եւ իմ համայնքիս կողմէն, ձեր արարքին համար, զոր ես կը նկատեմ անյատապէս իմ եւ իմ վանքիս համար կատարուած:

Նոյեմբեր 1810»:

Յաջորդ էջին պատկերուած շիրմաքարը կը պատկանի վերոյիշեալ Յակոբ արքեպիսկոպոսին:

..

..





Յաւելուած Թիւ 21

**Միջազգետքի Հայոց Առաջնորդներ, Տեղապահներ եւ
Կաթողիկոսական Պատուիրակներ
(1222 թ.էն Մինչեւ Արեւմտահայ գաղթականներու
ժամանումը 1915-1918 թթ³⁷⁶)**

ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐ

Թիւ	Անուն	Պաշտ. Շրջան	Մահուան Թուական	Ծանոթագրութիւններ
1	Սողոմոն եպս.	1222		Պասարայի թեմակալ
